

Ս ա մ վ ե լ Ն ա հ ա պ ե տ յ ա ճ

Հ Հ Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն
Օ Ր Ե Ն Ս Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Զ Ո Լ Ե Ջ

Ե Ր Ե Վ Ա Ն 2003

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն**

**Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26**

**Հեռ. (3 741) 537788
Հեռ./ֆաքս (3 741) 537767
Web-site: <http://www.fbc-edu.am>
E-mail: staff@fbc-edu.am**

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և թրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկ» խորհրդատվական ծառայություններ կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© Ֆինանսաբանկային քոլեջ, 2003

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդ

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երթ

Առաջաբան

Գրախոսվող ուսումնական նյութում համակարգված կերպով ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեությունը կարգավորող օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, դրանցով կարգավորվող հարաբերությունները, այն դրույթները, որոնք սահմանում են ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունները, խնդիրները, փոխհարաբերությունները, կառավարումը և գործառնությունները, կանոնակարգում են բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց գրանցումն ու լիցենզավորումը, բանկային գործունեության կարգավորումը և վերահսկողությունը, հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության հիմնական դրույթները, բանկերի և վարկային կազմակերպությունների վերակազմակերպման, սնանկացման և լուծարման ընթացակարգերը, բանկային ավանդների պարտադիր երաշխավորումը, բանկային գաղտնիքը, արժույթային հարաբերությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության հիմնական կանոնները, որոնք տարածվում են բանկերի վրա, օրենսդրական դրույթների հիմքում ընկած տրամաբանությունը և կիրառումը՝ կոնկրետ օրինակներով:

Ուսումնական նյութը բաղկացած է 22 թեմաներից (գլուխներից): Յուրաքանչյուր գլխում տրված են թեմայի հիմնական նպատակի, այն անցնելուց հետո ուսանողի կողմից ձեռք բերվելիք ունակությունների և հմտությունների նկարագիրը, առանձանցված են հանգուցային բառերը: Տեքստի շարադրանքը զուգորդված է գործնական կամ ուսումնական առաջադրանքներով, իսկ վերջում թվարկված են ինքնաստուգման հարցերը, որոնց պատասխանները ուսանողներին հնարավորություն կտան պարզել ստացած գիտելիքների մակարդակը: Օրենսդրական դրույթները գործնական օրինակների վրա կիրառելու՝ ուսանողների կարողությունը բացահայտելու համար յուրաքանչյուր թեմայի վերջում բերված են թեստեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև իրավիճակային խնդիրներ:

Սույն ուսումնական նյութն իրենից ներկայացնում է ՀՀ բանկային օրենսդրության վերաբերյալ ամփոփ տեղեկատվական ձեռնարկ: Դրանում արտացոլված են բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց գործունեությանն անմիջականապես վերաբերող առավել կարևոր օրենսդրական նորմերը և, բնականաբար, դասընթացի ընթացքում հնարավոր չէ ամբողջ մանրամասնությամբ տալ բոլոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի դրույթները, որոնք կազմում են մոտ հազար էջ: Ուստի, առարկայի առավել խորը տիրապետման և կայուն գիտելիքների ցանկալի մակարդակի հասնելու համար խորհուրդ ենք տալիս կարդալ այդ իրավական ակտերը, կատարել ուսումնական և գործնական առաջադրանքները, լուծել թեստերը, կազմել նման առաջադրանքներ:

Կարծում են, որ դասընթացն անցնելու արդյունքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները ունկնդիրներին հնարավորություն կտան բանկային և վարկային ոլորտում իրենց աշխատանքային գործունեության ընթացքում հետևողականորեն կիրառել օրենսդրության կոնկրետ պահանջները, լիցենզավորված անձանց զերծ պահել հնարավոր իրավախախտումներից և դրանց համար կիրառվող պատժամիջոցներից:

Ուսումնական մոդուլը, որում հեղինակը ձգտել է կիրառել իր երկարամյա գործնական աշխատանքի և դասավանդման փորձը, թեև նախատեսած է Ֆինանսաբանկային քոլեջի ուսանողների համար, այնուհանդերձ այն կարող է օգտակար լինել նաև բուհերի ուսանողների, բանկերի աշխատակիցների և շահագրգիռ այլ անձանց համար:

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՍՊԸ վարչության
նախագահի տեղակալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՄՓՈԹՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ..... 8

1.1. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ..... 8

Ինքնաստուգման հարցեր..... 15

ԹԵՍԹ..... 16

ԳԼՈՒԽ 2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍԱՄԻՆ» ՕՐԵՆՔԸ 17

2.1. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ..... 17

2.2. ՊԱՐՏԱԳԻՐ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ..... 20

2.3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 22

2.4. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 23

2.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ: ԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՄՆԵՐԸ 25

Ինքնաստուգման հարցեր..... 26

ԹԵՍԹ..... 26

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԳԻՐ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ 27

3.1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԱՆԵՐԻ ՎԵՐԱԳԱՐՁԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 27

3.2. ՊԱՐՏԱԳԻՐ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ..... 27

3.3. ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ՀԻՄՆԱԳՐԱՍԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 28

3.4. ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՍՏԱՅՄԱՆ ԴԵՊՔԸ, ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀՏՈՒՅՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ..... 30

Ինքնաստուգման հարցեր..... 32

ԹԵՍԹ..... 32

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ..... 33

4.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՍԱՄԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.. 33

4.2. ՕՐԵՆՔԻՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 33

4.3. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ 34

4.4. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ..... 35

4.5. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՏՐԱՄԱԳՐՈՒՄԸ: ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՋԵՎ 35

4.6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԵՆՔԻ ՊԱՀՆԵՋՆԵՐԸ ԽԱՆՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ..... 37

Ինքնաստուգման հարցեր..... 37

ԹԵՍԹ..... 37

ԳԼՈՒԽ 5. ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԱՄԻՆ» 38

5.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ..... 38

5.2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 39

5.3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ 41

5.4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԵԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՅՆՆԵՐԸ..... 43

Ինքնաստուգման հարցեր..... 44

ԹԵՍԹ..... 44

ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 45

6.1. ԲԱՆԿ, ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՎԱՆԴ: ԲԱՆԿԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 45

6.2. ԲԱՆԿԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ..... 46

6.2. ԲԱՆԿԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ..... 48

6.3. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ..... 50

6.4. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ..... 51

Ինքնաստուգման հարցեր..... 53

ԹԵՍԹ..... 53

ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ..... 55

7.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 55

7.2. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ..... 56

7.3. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՅՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԵՐԸ..... 63

7.4. ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄԸ..... 66

Ինքնաստուգման հարցեր..... 66

ԹԵՍԹ..... 66

ԳԼՈՒԽ 8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ 68

8.1. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒԸ: ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ..... 68

8.2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՈՒՄԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ..... 69

8.3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ..... 73

8.4. ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄԸ..... 73

Ինքնաստուգման հարցեր..... 74

ԹԵՍԹ..... 74

ԳԼՈՒԽ 9. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ: ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ..... 76

9.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ..... 76

9.2. ՕՐԵՆՔԻՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 76

9.3. ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 78

9.4. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ..... 81

9.5. ԲԱՆԿԻ ՀՆՈՒՆԿԱՐԱՐՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ..... 87

Ինքնաստուգման հարցեր..... 88

ԹԵՍԹ..... 88

ԳԼՈՒԽ 10. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ..... 90

10.1. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ..... 90

10.2. Օրենքում օգտագործվող չիտնված չվածքների և չվածքների օգտագործումը 90

10.3. Վարկառուի կազմակերպությունների ֆինանսական գործառնությունները 91

10.4. Վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 92

10.5. Վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 93

Ինքնաստուգման հարցեր 94

Թե՛ս 95

ԳԼՈՒԽ 11. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՑԱՎՈՐ ՃԵՆՁ ԲԵՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ 96

11.1. Բանկերում ել վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 96

11.2. Բանկերի ել վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 97

11.3. Բանկերի ել վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 98

11.4. Հանձնավոր ճանապարհորդ ճե՛նձ ԲԵՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՍՄԱՔԻ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 99

Ինքնաստուգման հարցեր 99

Թե՛ս 100

ԳԼՈՒԽ 12. ՀՀ ԶԱՎԱՅՈՒՄԻ ԵՎ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԵՎ ԲԱՆԿԵՐԻ ՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 101

12.1. Բանկառուի կազմակերպությունները 101

12.2. Բանկառուի կազմակերպությունները 103

12.3. Փոխանցումների ել վարկ 105

12.4. Ֆինանսավորումից հետո կազմակերպության կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 106

12.5. Ֆինանսական վարկառուի կազմակերպությունների (Լիզինգ) 108

12.6. Գործառնությունների կազմակերպությունները 109

12.7. Գործառնությունները 111

12.8. Երկրագործությունները 117

12.9. Երկրագործությունները 119

Ինքնաստուգման հարցեր 121

Թե՛ս 122

ԳԼՈՒԽ 13. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՍՄԱՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄԸ: ԲԱՆԿԵՐԻ ԱՌԻԳԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ 124

13.1. Բանկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 124

13.2. Բանկերի կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 125

13.3. Հաճախորդների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 126

13.4. Բանկերի կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 128

3.5. Բանկերում վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 128

13.6. Գնվածքների «բացարձակ» կազմակերպությունները 130

13.6. Բանկերի կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 131

Ինքնաստուգման հարցեր 131

Թե՛ս 132

ԳԼՈՒԽ 14. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՍՄԱՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄԸ: ԱՌԻԳԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ 133

14.1. Վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 133

14.2. Վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 133

Հաճախորդների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 135

14.3. Հաճախորդների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 135

14.4. Վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 136

Ինքնաստուգման հարցեր 137

Թե՛ս 137

ԳԼՈՒԽ 15. ՕՐԵՆՍԳԻՐՈՒԹՅԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՆՎՈՂ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԸ 138

15.1. Բանկերի ել վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 138

15.2. Օրենսգրքում ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ 138

15.3. Օրենսգրքում ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՍՄԱՔԻ ԿԻՐԱՆՎՈՂ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԸ 139

15.4. Օրենսգրքում ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՍՄԱՔԻ ԿԻՐԱՆՎՈՂ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԸ 140

15.5. Պատճառներով զբաղվող կազմակերպությունները կամ վարկառուի կազմակերպությունները 141

15.6. Լիզինգի ընդհանուր կարգերը կամ վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 141

15.7. Օրենսգրքում ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՍՄԱՔԻ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՆՎՈՂ ՄԱՐԿԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՅՈՒՄՆԵՐԸ 142

Ինքնաստուգման հարցեր 144

Թե՛ս 144

ԳԼՈՒԽ 16. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԶԵՎՎՈՐՈՒՄԸ 145

16.1. Ակտիվների դասակարգումը կամ վարկառուի կազմակերպությունների կողմից սղանումը կամ վարկերի ել փոխանցումների համարումը 145

16.2. ՀՀ ՏԱՐԱՃՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՈՒ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԸՀՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ... 146

16.2. ՀՀ ՏԱՐԱՃՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԱՐԺԵՎԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԸՀՈՒՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ 149

Ինքնաստուգման հարցեր..... 150

ԹեՍԹ..... 151

ԳԼՈՒԽ 17. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 152

17.1. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 152

17.2. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ... 153

17.3. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎՈՐՈՒՄ 153

17.4. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ..... 154

17.5. ՀՀ ՏԱՐԱՃՔՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ 155

Ինքնաստուգման հարցեր..... 156

ԹեՍԹ..... 156

ԳԼՈՒԽ 18. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 157

18.1. ՀՀ ԴՐԱՄԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ 157

18.2. ԲԱՆԿԵՐՈՒՄ ՀՀ ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՆԴԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 158

18.3. ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՇՎԵՄԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ..... 158

18.4. ԲԱՆԿԵՐԻՑ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԴՈՒՐՄԳՐՈՒՄԸ 159

18.5. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՆԿԱՍԱՅԻԱՆ 159

18.6. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ..... 160

Ինքնաստուգման հարցեր..... 160

ԹեՍԹ..... 160

ԳԼՈՒԽ 19. ՎԱՐԿԱՅԻՆ ՈՒԳԻՍՏՐ..... 161

19.1. ՎԱՐԿԱՅԻՆ ՈՒԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ 161

19.2. ՎԱՐԿԱՅԻՆ ՈՒԳԻՍՏՐԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 162

19.3. ՎԱՐԿԱՅԻՆ ՈՒԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ 164

19.4. ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՆՈՒՆԵՐԻ ՓՈՆԻՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 165

19.4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 166

Ինքնաստուգման հարցեր..... 166

ԹեՍԹ..... 166

ԳԼՈՒԽ 20. ԲԱՆԿԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ 167

20.1. ԲԱՆԿԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 167

20.2. ԲԱՆԿԵՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ..... 170

Ինքնաստուգման հարցեր..... 173

ԹեՍԹ..... 173

ԳԼՈՒԽ 21. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՅՈՒՄԸ..... 174

21.1. ԲԱՆԿԵՐԻ ՄԱՆԿԱՅՈՒՄԸ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 174

21.2. ԲԱՆԿԵՐԻ ՄԱՆԿԱՅՈՒՄԸ 175

21.3. ԲԱՆԿԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ..... 180

Ինքնաստուգման հարցեր..... 184

ԹեՍԹ..... 184

ԳԼՈՒԽ 22. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 185

22.1. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ 185

22.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ 186

22.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԱՐԱՃՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 187

22.3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՄ ԴՐԱՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼԸ ԿԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ՓՈՓՈԽԵԼԸ..... 187

22.4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ՆԵՐԿՐԵՐՈՒՄՆԸՎԱԾ ԳԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ..... 188

Ինքնաստուգման հարցեր..... 189

ԹեՍԹ..... 189

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 190

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ 192

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 192

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ 193

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ


Թեմայի նպատակն է՝ բացատրել ՀՀ բանկային օրենսդրությունը, թվարկել Հայաստանի Հանրապետությունում բանկերի գործունեությունը կարգավորող օրենքները և այլ իրավական ակտերը, ամփոփ ներկայացնել դրանցով կարգավորվող իրավահարաբերությունները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- բացատրել ՀՀ բանկային օրենսդրությունը
- թվարկել Հայաստանի Հանրապետությունում բանկերի գործունեությունը կարգավորող օրենքները
- ներկայացնել բանկերի գործունեությունը կարգավորող օրենքով սահմանվող իրավահարաբերությունները
- թվարկել ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերը և այլ նորմատիվ իրավական ակտերը, որոնցով կարգավորվում է բանկերի գործունեությունը
- ներկայացնել բանկերի գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանվող իրավահարաբերությունները
- թվարկել ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ հաստատված այլ նորմատիվ իրավական ակտերը, որոնցով կարգավորվում է բանկերի գործունեությունը
- ներկայացնել բանկերի գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ հաստատված յուրաքանչյուր այլ նորմատիվ իրավական ակտով սահմանվող իրավահարաբերությունները:

1.1. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանկային օրենսդրությունը բանկերի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական նորմատիվ ակտերի ամբողջությունն է: Բանկային օրենսդրությունը մշակում են ինչպես օրենսդիր իշխանությունը, այնպես էլ պետական լիազոր մարմինը և գործադիր իշխանությունը (կառավարությունը): Օրենսդրական կարգավորումն իրականացնողները, որպես կանոն, կենտրոնական բանկն է և ֆինանսների նախարարությունը՝ որպես կառավարության լիազորած մարմին: Բանկային օրենսդրության մեջ կենտրոնական բանկին հատկացվում է երկակի դեր: Մի կողմից, նա գործում է օրենսդիր մարմնի ընդունած օրենքներով, մյուս կողմից, ինքն է ընդունում նորմատիվ իրավական ակտեր, որոնք կարգավորում են բանկերի և այլ անձանց գործունեությունը: Բացի դրանից, կենտրոնական բանկի վրա է դրված բանկերի կողմից իրավական նորմերի պահանջների կատարմանը հետևելը, նրանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառելը:



Նկար 1. ՀՀ բանկային օրենսդրության կառուցվածքը

ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, օրենքներով, ՀՀ

կենտրոնական բանկի, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ հաստատված իրավական ակտերով (նկար 1): Առաջինները կանոնակարգում են բանկերի գործունեության ընդհանուր իրավական դաշտը, իսկ վերջիններս՝ ավելի կոնկրետացնում են այդ դաշտը: Հաշվի առնելով բանկերի և վարկային կազմակերպությունների նմանությունը, իսկ հաճախ էլ՝ միևնույն հիմքերը, բանկային օրենսդրության մեջ պայմանականորեն ներառել ենք նաև վարկային կազմակերպությունների գործունեության օրենսդրական դաշտը:

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է մի շարք կանոններ, որոնք անմիջապես վերաբերում են նաև (կամ միայն) բանկերին, մասնավորապես՝ առևտրային կազմակերպությունների, արժույթների, արժեթղթերի, գրավի իրավունքի, գործարքների, պայմանագրերի, ներկայացուցչության, ժամկետների, հայցային վաղեմության, [պարտավորությունների](#), փոխառության, [վարկի](#), ֆակտորինգի, ֆինանսական լիզինգի, [բանկային ավանդի](#), բանկային հաշվի, հաշվարկների վերաբերյալ սահմանված կանոնները:

2) Բանկային օրենքներ

Բանկային օրենքներին վերաբերում են՝

2.1) «*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին*» ՀՀ օրենքը (ՀՀ ԿԲՕ), որը սահմանում է ՀՀ կենտրոնական [բանկի](#) իրավական վիճակը, հիմնական խնդիրը և խնդիրները, կառավարման կարգը, իրավասությունները և գործառնությունները, դրամավարկային քաղաքականության ծրագրի բովանդակությունը, փոխհարաբերությունները պետական մարմինների, առևտրային բանկերի և այլ անձանց հետ, [եկամուտների](#) և [ծախսերի](#) կազմը, շահույթի բաշխումը, ՀՀ արժույթի թողարկումը և շրջանառության կարգավորումը, ՀՀ միջազգային պահուստների հաշվառումը, տեղաբաշխումը և պահպանումը:

2.2) «*Բանկերի և բանկային գործունեության մասին*» ՀՀ օրենքը (ՀՀ ԲՕ), որը սահմանում է ՀՀ տարածքում ստեղծվող և գործող բանկերի, նրանց և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, փոփոխությունների գրանցման, լիցենզավորման, գործունեության կարգավորման, վերակազմակերպման և լուծարման, ինչպես նաև բանկային գործունեության վերահսկողության կարգն և պայմանները:

2.3) «*Վարկային կազմակերպությունների մասին*» ՀՀ օրենքը (ՀՀ ՎԿՕ), որը կարգավորում է վարկային կազմակերպությունների, այդ թվում՝ վարկային միությունների, խնայողական միությունների, լիզինգային, ֆակտորինգային կազմակերպությունների և այլ վարկային կազմակերպությունների լիցենզավորման, գործունեության կարգավորման, գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաև ՀՀ տարածքում գործող բանկերի գործունեության տեսակի փոփոխման կարգը: Տվյալ օրենքի գործողությունը չի տարածվում բանկերի (բացառությամբ օրենքի 6-րդ գլխով նախատեսված դեպքերի), ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, կենսաթոշակային ֆոնդերի, ներդրումային ընկերությունների, գրավատների, գյուղատնտեսական վարկային ակումբների վրա, որոնց գործունեությունը կարգավորվում է այլ օրենքներով և իրավական ակտերով:

2.4) «*Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին*» ՀՀ օրենքը (ՀՀ ԲՎԿՍՕ), որով սահմանվում են ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների անվճարունակության և սնանկության հասկացություններն ու հատկանիշները, անվճարունակության և սնանկության կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաև բանկերի սնանկության հետևանքով նրանց լուծարման, տվյալ օրենքով սահմանված կարգով գրանցումից չհանված բանկերի լուծարման ընթացակարգը:

2.5) «*Բանկային գաղտնիքի մասին*» ՀՀ օրենքը (ՀՀ ԲԳՕ), որը սահմանում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այդ տեղեկությունների պահպանման, տրամադրման և հրապարակման իրավական հիմքերը և կարգը, բանկային գաղտնիքի շուրջ ծագող հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև տվյալ օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը:

2.6) «*Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին*» ՀՀ օրենքը (ՀՀ ՎՀՍՓՕ), որը սահմանում է ՀՀ-ում վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների, վճարման հանձնարարականի ուղարկման ակցեպտավորման, կատարման, չեղյալ համարելու վճարելու իրավական ռեժիմը, և վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման գործարքի մասնակիցների իրավասությունները (իրավունքներն ու պարտականությունները), ինչպես նաև նրանց պատասխանատվությունը՝ [պարտավորությունները](#) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Տվյալ օրենքն անմիջականորեն վերաբերում է հանրապետության վճարահաշվարկային համակարգին, ուստի դրա հիմնական դրույթները բացատրվում են համապատասխան առարկայի դասավանդման շրջանակներում:

3) Այլ օրենքներ, որոնց գործողությունը տարածվում է նաև բանկերի վրա

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք ամբողջությամբ կամ մասամբ տարածվում են նաև բանկերի վրա: Դրանցից են, մասնավորապես՝

3.1) «*Բաժնետիրական ընկերությունների մասին*» ՀՀ օրենքը (ՀՀ ԲԸՕ), որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան սահմանում է բաժնետիրական ընկերությունների իրավական վիճակը, նրանց ստեղծման, գործունեության իրականացման և դադարեցման կարգը, բաժնետերերի իրավունքներն ու

պարտականությունները, ընկերության կողմից արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման, դրանց դիմաց վճարման, ընկերության հիմնադրամներին շահաբաժինների վճարման կարգերը, բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները, բաժնետերերի ռեեստրի վարման, ընկերության գույքի շուկայական արժեքի որոշման,

խոշոր գործարքների կատարման կարգերը, ընկերության գործարքներում շահագրգռությունը, ընկերության կառավարման մարմինների, վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2001 թվականի սեպտեմբերի 25-ի նախկին օրենքի փոխարեն ընդունվել է նոր օրենք: Օրենքի նպատակն է նաև օրենսդրորեն ապահովել բաժնետերերի, պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային, ապահովագրական և այլ գործունեության բնագավառներում բաժնետիրական ընկերությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման կարգի ու իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են այլ օրենքներով և իրավական ակտերով (ՀՀ ԲԸՕ հոդված 1, կետ 4):

Մասնավորեցման նպատակով պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման, ընկերությունների ստեղծման, լրացուցիչ բաժնետոմսերի, պարտատոմսերի թողարկման առանձնահատկությունները սահմանվում են մասնավորեցումը (ապապետականացումը) կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով (ՀՀ ԲԸՕ հոդված 1, կետ 5):

3.2) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը (ՀՀ ՍՊԸՕ), որը կարգավորում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման առնչությամբ ծագող իրավահարաբերությունները: Այն սահմանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավական վիճակը, ինչպես նաև նրա մասնակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

Նշենք, որ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2001 թվականի հոկտեմբերի 24-ին, մինչ այդ նման օրենք չի եղել, որով, մասնավորապես պայմանավորված է այն փաստը, որ նախկինում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ձևով ստեղծված կազմակերպությունները, ի տարբերություն փակ բաժնետիրական ընկերությունների, թվով համեմատաբար քիչ էին:

Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ստեղծման և գործունեության վերակազմակերպման ու լուծարման առանձնահատկությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (ՀՀ ՍՊԸՕ հոդված 1, մաս 3):

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2-րդ կետի՝ բանկերի վրա տարածվում են բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ օրենքները և այլ իրավական ակտերը, եթե տվյալ օրենքը այլ կանոններ չի սահմանում: Այսպիսով, չի կարելի է պնդել, թե նշված օրենքները և այլ իրավական ակտերն ամբողջությամբ տարածվում են բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ձևով ստեղծված բանկերի վրա:

Այսպես, բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ օրենքներով թույլատրվում է ընկերության փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի փոքրացումը, այն դեպքում, երբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով արգելվում է բանկերին կանոնադրական հիմնադրամի փոքրացումը: Հետևապես, բանկերը, տվյալ դեպքում պետք է առաջնորդվեն ոչ թե տվյալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» կամ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», այլ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Առաջ անցնելով նշենք, որ դասաժամերի թվի սահմանափակվածության պատճառով սույն դասընթացում նախատեսված չեն «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներին վերաբերող առանձին թեմաներ: Այդ կապակցությամբ առաջարկում են ընթերցողին ինքնուրույն ուսումնասիրել նշված օրենքները, որը Ձեզ օգտակար կարող է լինել ոչ միայն բանկային օրենսդրության իմացության համար:

3.3) ՀՀ օրենքը «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», որը սահմանում է ՀՀ-ում արժույթային գործառնությունների իրականացման ընդհանուր սկզբունքները, արժույթային վերահսկողության մարմինների լիազորությունները, արժույթային արժեքների տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը արժույթային օրենսդրությունը խախտելու համար:

3.4) ՀՀ օրենքը «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին», որը կարգավորում է արժեթղթերի շուկայում գործունեության կարգավորման կապակցությամբ ծագող հարաբերությունները և սահմանում է ՀՀ տարածքում արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և հրապարակային առուվաճառքի, հաշվետու թողարկողի գործունեության, հաշվետվությունների հրապարակման, հաշվետու թողարկողի ղեկավարների և բաժնային արժեթղթերի խոշոր սեփականատերերի հաշվետվությունների ներկայացման, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության իրականացման, ինքնակարգավորվող կազմակերպությունների ստեղծման և գործունեության, ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգերը, ինչպես նաև արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնող անձանց պատասխանատվությունը՝ օրենքի և այլ իրավական ակտերի խախտման համար:

3.5) ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին», որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) կազմելու և ներկայացնելու միասնական հիմունքները, կարգավորում է հաշվապահական հաշվառման վերաբերող այլ հարաբերությունները:

3.6) ԴՅ օրենքը «Աուդիտորական գործունեության մասին», որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները: Տվյալ օրենքի գործողությունը տարածվում է ԴՅ տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության վրա:


Աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերը կազմված են նշված օրենքից, աուդիտորական գործունեությանը վերաբերող նորմեր պարունակող այլ օրենքներից, ԴՅ կառավարության որոշումներից, ինչպես նաև ԴՅ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ընդունված այլ իրավական ակտերից:

3.7) ԴՅ օրենքը «Իրավական ակտերի մասին», որը սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը, դրանց մշակման, փորձաքննության, ընդունման, հրապարակման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, գործողության դադարեցման, մեկնաբանման, պարզաբանման ու համակարգման ընդհանուր կարգը:

4) ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգեր

ԴՅ կենտրոնական բանկի կողմից ներկայումս սահմանվել և գործում են թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19 և 20 կանոնակարգերը, որոնք համակարգված ձևով կանոնակարգում են բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց զրանցման, լիցենզավորման և գործունեության հիմնական կողմերը:^{*} Այդ կանոնակարգերի բաշխվածությունն ըստ ԴՅ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող անձանց կարելի ներկայացնել նկար 2-ի միջոցով:

Ստորև թվարկվում են այն կանոնակարգերը և դրանցով կարգավորվող հարաբերությունները, որոնք վերաբերում են ԴՅ տարածքում գործող բանկերին, վարկային կազմակերպություններին և ԴՅ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց:



^{*}Նախկինում գործում էր ԴՅ կենտրոնական բանկի՝ «Բանկերի վերակազմավորման և լուծարման մասին» կանոնակարգ 6-ը, որը 2001թ. վերջերին «Բանկերի և բանկային գործունեության մասին» ԴՅ օրենքում փոփոխություններ կատարելու և «Բանկերի

Նկար 2. ՀՀ կանոնակարգերի բաշխվածությունն ըստ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորվող անձանց:

4.1) «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ը, որը սահմանում է ՀՀ տարածքում բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հիմնադրման, գրանցման և լիցենզավորման, բանկերի տարածքային ստորաբաժանումների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման ու գրանցման ընթացակարգերը, ինչպես նաև օրենքներով ՀՀ կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված վերոհիշյալ հարաբերություններին առնչվող այլ հարցեր: Տվյալ կանոնակարգը սահմանում է [բանկի ղեկավարների](#) որակավորման վկայականներ տրամադրելու ընթացակարգը:

Այն տարածվում է ՀՀ տարածքում տարածքում հիմնադրվող կամ գործող բանկերի, դրանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, ինչպես նաև տվյալ կանոնակարգով սահմանված այլ անձանց վրա:

4.2) «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը, որը սահմանված է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն և կարգավորում է ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ինվեստիցիոն և բաժանորդագրակա գործունեությունը, թղթակցային հաշիվների բացումը և վարումը, նրանց համար սահմանվող [հիմնական տնտեսական նորմատիվների](#) հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը և սահմանաչափերը:

4.3) «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը, որով սահմանված են ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց լրացման և ներկայացման կարգն ու ժամկետները, ինչպես նաև բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների և բանկի գործունեության վերաբերյալ տեղեկությունների կազմը և հրապարակման ժամկետները:

4.4) «Բանկերում վերստուգումների իրականացումը» կանոնակարգ 4-ը, որը սահմանում է բանկերում, դրանց, ինչպես նաև օտարերկրյա բանկերի տարածքային ստորաբաժանումներում ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերստուգումների իրականացման իրավական հիմքերը և կարգը, վերստուգման ընթացքում ծագող հարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները:

4.5) «Բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման մասին» կանոնակարգ 5-ը, որը կարգավորում է ՀՀ տարածքում գործող բանկերում, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող պարտադիր միջոցառումներն ու ընթացակարգերը կատարելու կարգն ու պայմանները:

4.6) «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ը, որը սահմանում է անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու պայմանները, ադմինիստրացիայի ղեկավարի թեկնածուին ներկայացվող պահանջները, սահմանափակումները, ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման վկայականների տրամադրման կարգն ու պայմանները, ինչպես նաև անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման հետ կապված այլ հարաբերություններ:

4.7) «Հայաստանի Հանրապետության տարածքում արժույթային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ը, որը սահմանված է համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքների և կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության բնագավառում ծագող իրավահարաբերությունները, ինչպես նաև ՀՀ ռեզիդենտների՝ ՀՀ տարածքից դուրս իրականացվող արժույթային գործառնություններն ու նրանց կողմից օտարերկրյա բանկերում բանկային հաշիվների բացման պայմանները:

4.8) «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը, որը կարգավորում է ՀՀ դրամի վճարունակության հատկանիշները, բանկերում ՀՀ դրամանիշների փոխանակումը, ՀՀ կենտրոնական բանկում դրանք փորձաքննության ընդունելը և փոխանակելը, ՀՀ թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը, բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների վերականգնման կանոնակարգումը, բանկերում կանխիկ դրամի և այլ արժեքների ինկասսացիան, բանկերում դրամարկային գործառնությունների իրականացումը:

4.9) «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը, որը սահմանում է արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող արտարժույթի փոխանակման կետերի լիցենզավորման և կարգավորման ընթացակարգերը:

4.10) «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ը, որը, հիմնվելով «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», «Լիցենզավորման մասին» և ՀՀ այլ օրենքներով ՀՀ կենտրոնական բանկին վերապահված իրավասությունների վրա, սահմանում է արտարժույթի առուվաճառքի սակարկությունների

սնանկացման մասին» ՀՀ օրենքի փոխարեն «Բանկերի վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել:

կազմակերպման լիցենզավորման, կարգավորման և վերահսկողության ընթացակարգերը: Կանոնակարգով նախատեսված լիցենզիաները, ՀՀ կենտրոնական բանկի սահմանած պահանջներին բավարարելու դեպքում, ամժամկետ տրամադրվում են այն ինքնակարգավորվող կազմակերպություններին, որոնք ՀՀ օրենսդրությամբ համապատասխան իրավունք ունեն իրականացնել արտարժույթի, որպես ֆոնդային ապրանքի, առուվաճառքի սակարկությունների կազմակերպում:

4.11) «Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ը, որը սահմանում է արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող արժույթային դիլերների լիցենզավորման և կարգավորման ընթացակարգերը:

4.12) «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման համար գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության պահանջները, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերումը» կանոնակարգ 13-ը, որը սահմանում է ՀՀ տարածքում վարկային կազմակերպությունների գրանցման և լիցենզավորման համար գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության պահանջները, վարկային կազմակերպությունների տարածքային ստորաբաժանումների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման ու հաշվառման, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման ընթացակարգերը, ինչպես նաև օրենքներով ՀՀ կենտրոնական բանկի իրավասությամբ վերապահված վերոհիշյալ հարաբերությունների հետ առնչվող այլ հարցեր:

4.13) «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը, որը սահմանում է ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների գործունեության սահմանափակումները, վարկային կազմակերպությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկի մեջ մտնող տարրերի կազմը:

4.14) «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը, որը սահմանված է համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի և կարգավորում է ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը ու ժամկետները:

4.15) «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը, որով սահմանված են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց ներկայացվող տարածքի և տեխնիկական պահանջները, լիցենզիաների գրանցամատյանների վարման և տեղեկատվության, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակի տրամադրման, լիցենզիայի վերաձևակերպման, գործողության ժամկետի կասեցման և դադարեցման, գործունեության վայրի փոփոխման, մասնաճյուղերի գրանցման, այդ կազմակերպությունների ղեկավարների որակավորման ստուգման ընթացակարգերը:

4.16) «Վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ը, որով սահմանված են վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց ներկայացվող տարածքի և տեխնիկական պահանջները, լիցենզիաների գրանցամատյանների վարման և տեղեկատվության, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակի տրամադրման, լիցենզիայի վերաձևակերպման, գործողության ժամկետի կասեցման և դադարեցման, գործունեության վայրի փոփոխման, մասնաճյուղերի գրանցման, այդ կազմակերպությունների ղեկավարների որակավորման ստուգման ընթացակարգերը:

4.17) «Քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 18-ը, որով սահմանված են քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց ներկայացվող տարածքի և տեխնիկական պահանջները, լիցենզիաների գրանցամատյանների վարման և տեղեկատվության, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակի տրամադրման, լիցենզիայի վերաձևակերպման, գործողության ժամկետի կասեցման և դադարեցման, գործունեության վայրի փոփոխման, մասնաճյուղերի գրանցման, այդ կազմակերպությունների ղեկավարների որակավորման ստուգման ընթացակարգերը:

4.18) «Վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 19-ը, որով սահմանված են վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց ներկայացվող տարածքի և տեխնիկական պահանջները, լիցենզիաների գրանցամատյանների վարման և տեղեկատվության տրամադրման, լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակի, լիցենզիայի վերաձևակերպման, գործողության ժամկետի կասեցման և դադարեցման, գործունեության վայրի փոփոխման, մասնաճյուղերի գրանցման, այդ կազմակերպությունների ղեկավարների որակավորման ստուգման ընթացակարգերը:

4.19) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման մասին» կանոնակարգ 20-ը, որը սահմանում է բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման չափը,

[երաշխիքային](#) վճարների չափը, ավանդների երաշխավորման հիմնադրամի միջոցների կառավարման, երաշխավորված գումարի հատուցման կարգը, պայմանները և ժամկետները:

5) ՀՀ կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտեր

Բացի վերոհիշյալ կանոնակարգերից, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել են նաև այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնցով կարգավորվում են վերոհիշյալ կանոնակարգերով չսահմանվող և ՀՀ կենտրոնական բանկի իրավասությանը ենթակա այլ հարցերը: Դրանցից են՝

5.1) «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման» կարգը, որի նպատակն է՝ բացահայտել բանկի ֆինանսական վիճակի վրա այլ կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում բանկի ներդրումների (որոնց արդյունքում ներդրման օբյեկտ հանդիսացող ընկերությունները դառնում են բանկի դուստր կամ ասոցիացված ընկերություններ), նրանց հետ գործառնությունների և գործարքների իրականացման, նրանց գործունեության կառավարմանը մասնակցելու ազդեցությունը:

5.2) «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ դեկավար պաշտոն զբաղեցնելու» ուղեցույցը, որն ընդունվել է համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 22-րդ հոդվածների 2-րդ կետի «ե» ենթակետի:

5.3) «Իրավաբանական անձանց կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու կամ որոշումների վրա էսպես ազդելու հնարավորություն ունեցող անձանց բացահայտման» մեթոդական ուղեցույցը, որի նպատակն է՝ օժանդակել ՀՀ տարածքում գործող բանկերին, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերին և ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներին՝ բացահայտելու իրավաբանական անձանց կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու կամ որոշումների վրա էսպես ազդելու հնարավորություն ունեցող անձանց՝ նշանակալից մասնակցությունը ուսումնասիրելու ժամանակ:

5.4) «Բանկերի միացման պայմանագրի կնքման մասնական համաձայնություն ստանալու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի» և «Բանկերի միացման պայմանագրի կնքման մասնական համաձայնություն ստանալու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող միացման ծրագրում ընդգրկվող տեղեկությունների» ցանկերը:

5.5) «Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի մեթոդիկան (PUSLE):

5.6) «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության» կարգը: Տվյալ կարգի և ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակը վարկային ռիսկի նվազեցումն է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ ապահովելով այնպիսի տեղեկատվական համակարգի առկայություն, որում ներառվող տվյալների հիման վրա հնարավոր կլինի խուսափել անպարտաճանաչ վարկառուներից: Կարգով սահմանված են ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի ստեղծման, վարկային ռեգիստրին վարկատուների մասնակցության կարգն ու պայմանները:

5.7) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը», որով սահմանված են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման, դրանում փոփոխությունների կատարման, փոփոխությունների կատարումը մերժելու հիմքերը և կարգը:

5.8) «Հայաստանի Հանրապետության տարածքում տեղադրված բանկումատների (ավտոմատ գանձման սարքերի) շահագործման անվտանգության պայմաններն ապահովելու վերաբերյալ» մեթոդական ուղեցույցը:

5.9) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիններիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցների կողմից հարավորման» կարգը, որով սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիններիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան տեղեկատվական համակարգերի մասնակիցների միասնական կողավորման կարգը:

5.10) «Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը», որը սահմանված է համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և կարգավորում է վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգն ու պայմանները:

5.11) «Վարկային կազմակերպությունների գործունեության օրինակելի կանոնակարգը», որը սահմանված է համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և սահմանում է վարկային կազմակերպության գործունեության տեսակը, ոլորտը, սկզբունքները, գործունեության կարգը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները, ընթացակարգերը, վարկային կազմակերպության կառավարման համակարգը, կառուցվածքը, կադրային քաղաքականությունը, վարկային կազմակերպության ներքին հսկողության և անվտանգության համակարգերը:

5.12) «Լուծարման ընթացակարգում գտնվող բանկերի և վարկային կազմակերպությունների լուծարային կառավարիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տեղեկությունների հրապարակման» կարգը, որով կանոնակարգվում է լուծարման գործընթացում գտնվող բանկերի վարկային կազմակերպությունների լուծարային

կառավարիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ մանուլում տեղեկությունների հրապարակման կարգն ու պայմանները:

5.13) «*Լուծարման ընթացակարգում գտնվող բանկերի և վարկային կազմակերպությունների լուծարային կառավարիչների կողմից լուծարային հաշվի բացման, վարման, ինչպես նաև այլ բանկերում հաշիվների փակման կարգը*, որը կանոնակարգում է լուծարման գործընթացում գտնվող բանկերի լուծարային կառավարիչների կողմից ՀՀ տարածքում գործող բանկերում լուծարային հաշվի բացման, վարման, ինչպես նաև այլ բանկերում հաշիվների փակման կարգն ու պայմանները:

5.14) «*Լուծարման ընթացակարգում գտնվող բանկերի և վարկային կազմակերպությունների լուծարային կառավարիչների կողմից բանկի, վարկային կազմակերպության գույքի իրացման կարգը*»:

5.15) «*Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին*» կարգը, որը կարգավորում է բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, դրանց համար պատժամիջոցների կիրառման և վարույթների ընթացակարգը:

5.16) ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված այլ նորմատիվ իրավական ակտեր:

6) ՀՀ կենտրոնական բանկի և Կառավարության լիազորած պետական մարմնի հետ համաձայնեցված կամ համատեղ հաստատված կարգեր

Բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի և Կառավարության լիազորած պետական մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ հաստատված հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա.

6.1) «*Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգը*, որով սահմանվում են ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը, հնարավոր կորուստների համար ընդհանուր և հատուկ պահուստավորումը, անհուսալի ճանաչված ակտիվների դուրսգրման հարցերը:

6.2) «*Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը*, որով կանոնակարգում են բանկերի կողմից ինվեստիցիոն արժեթղթերում (այդ թվում՝ այլ անձանց կանոնադրական կապիտալում) ներդրումների դասակարգման, դրանց հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ու օգտագործման հարցերը:

Սկսած 2003 թվականից, 6.1 և 6.2 կետերում նշված կարգերը տարածվում են նաև վարկային կազմակերպությունների վրա:

6.3) «*Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգը*»:

6.4) «*Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգը*»:

6.5) «*Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ակտիվների և պարտավորությունների գույքագրման կարգը*, որով սահմանվում են գույքագրման նպատակը և գույքագրման ենթակա ակտիվներն ու պարտավորությունները, պարտադիր գույքագրման դեպքերը և ժամկետները, գույքագրման անցկացման ընդհանուր կանոնները, ակտիվների և պարտավորությունների առանձին տեսակների գույքագրման կանոնները:

6.6) «*ՀՀ տարածքում գործող բանկերում բանկային հաշիվներ բացելիս ստորագրությունների մուշների քարտերը հարկային մարմիններին հաշվառման ներկայացնելու վերաբերյալ*» կարգը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչի՞ց է կազմված ՀՀ բանկային օրենսդրությունը:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ո՞ր կանոններն են անմիջապես տարածվում բանկերի վրա:
3. Որո՞նք են ՀՀ-ում բանկերի գործունեությունը կարգավորող օրենքները և դրանցից յուրաքանչյուրով սահմանվող իրավահարաբերությունները:
4. Որո՞նք են ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերը և այլ նորմատիվ իրավական ակտերը և դրանցից յուրաքանչյուրով սահմանվող իրավահարաբերությունները:
5. Որո՞նք են ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ հաստատված այլ նորմատիվ իրավական ակտերը և դրանցից յուրաքանչյուրով սահմանվող իրավահարաբերությունները:

ԹԵՍԹ

Հարց 1. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բաժնետիրական բանկերի վրա տարածվում են «Բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքի բոլոր դրույթները
- բ) ՍՊԸ-ի կազմակերպահրավական ձևով հիմնադրված բանկերի վրա տարածվում են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի բոլոր դրույթները
- գ) բանկային օրենսդրությունը կազմված է միայն ՀՀ օրենքներից
- դ) բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

Հարց 2. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկերը [ակտիվ](#)ների հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը կատարում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգով
- բ) օրենքով նախատեսված դեպքերում ՀՀ կենտրոնական բանկը կարող է ընդունել բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր
- գ) բանկեր կողմից ինվեստիցիոն արժեղթերում ներդրումների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը հաստատված է միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից
- դ) բոլոր պնդումներն էլ ճիշտ են:

Հարց 3. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) որոշ նորմատիվ իրավական ակտերի գործողությունը հավասարապես տարածվում է և բանկերի և վարկային կազմակերպությունների վրա
- բ) ՀՀ կենտրոնական բանկի կարող նորմատիվ իրավական ակտերը կարող են հակասել ՀՀ օրենքներին
- գ) ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է միայն բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր
- դ) բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

ԳԼՈՒԽ 2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունը, խնդիրները, գործառնությունները, դրամավարկային քաղաքականության ծրագրի բովանդակությունը և գործիքները, ֆինանսական դրույթները, ՀՀ կենտրոնական բանկի կառավարումը, փոխհարաբերությունները ՀՀ պետական մարմինների, բանկերի և այլ անձանց հետ:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- բնորոշել ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և խնդիրները
- ներկայացնել և հիմնավորել ՀՀ կենտրոնական բանկի ինքնուրույնությունը բնութագրող դրույթները
- բնութագրել դրամավարկային քաղաքականության ծրագրի բովանդակությունը
- թվարկել և բացատրել դրամավարկային քաղաքականության գործիքները
- ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կապիտալի, եկամուտների, [ծախսերի](#) և կապիտալ ներդրումների տարրերը
- բացատրել ՀՀ կենտրոնական բանկի շահույթի բաշխման կարգը
- ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կառավարմանը վերաբերող դրույթները
- բնութագրել ՀՀ կենտրոնական բանկի փոխհարաբերությունները
- ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից կառավարության և բանկերի վարկավորումը
- ներկայացնել ՀՀ արժույթի թողարկման, շրջանառությունից հետ կանչելու և փոխանակելու վերաբերյալ սահմանված դրույթները
- ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունը արժույթային կարգավորման և ՀՀ միջազգային պահուստների պահպանման բնագավառում:

Նախնական գիտելիքները: Ենթադրվում է, որ «Բանկային գործի հիմունքներ» առարկան անցնելուց հետո ուսանողներն արդեն տիրապետում են երկրի բանկային համակարգում կենտրոնական բանկերի ունեցած դերի, նրանց խնդիրների, գործառույթների, դրամավարկային և արժույթային քաղաքականության վերաբերյալ որոշակի գիտելիքների:

2.1. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի *իրավական վիճակը* բնութագրվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենք) 1-ին հոդվածով սահմանված հետևյալ դրույթներով՝

1) ՀՀ կենտրոնական բանկն իրավաբանական անձ է,¹ որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է: Կենտրոնական բանկը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2) Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելու նպատակով կարող է իր անունից՝
– կնքել պայմանագրեր, ձեռք բերել իրավունքներ, ստանձնել պարտավորություններ, այդ թվում՝ վերցնել վարկեր.
– հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող.
– սույն օրենքով նախատեսված դեպքերում ձեռք բերել, տիրապետել, օգտագործել և օտարել գույք, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ,

3) Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է ՀՀ պետական մարմիններից,
4) Կենտրոնական բանկը և կառավարությունը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, եթե այդպիսիք չեն ստանձնել:

Այսպիսով, ՀՀ կենտրոնական բանկը, որպես իրավաբանական անձ, բավարարում է իրավաբանական անձի բոլոր հատկանիշներին: ՀՀ կենտրոնական բանկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Պետք է նշել, որ արդյունաբերապես զարգացած երկրներում կենտրոնական բանկերի կազմակերպական իրավական հիմքերը միատեսակ չեն: Այսպես, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ֆրանսիայում, Դանիայում և Նիդեռլանդներում կենտրոնական բանկի կապիտալն ամբողջությամբ պատկանում է պետությանը, ԱՄՆ-ում՝ Դաշնային պահուստի համակարգի անդամբանկերին, Իտալիայում՝ բանկերին և ապահովագրական ընկերություններին, Ճապոնիայում՝ պետությանը (55%) և մասնավոր անձանց (45%): Տվյալ դեպքում էականը ոչ թե կենտրոնական բանկի կապիտալի ձևավորման աղբյուրներն են, այլ օրենքով նրան վերապահված իրավասությունները:

(օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին»,

¹ Իրավաբանական անձի հասկացությունը տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50 հոդվածում, համաձայն որի՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

«Վարկային կազմակերպությունների մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» օրենքներով,- Ս.Ն.) *իրեն վերապահված լիազորություններ,*

- *Կենտրոնական բանկը վարում է իր ակտերի գրանցումների մատյանը,*
- *Կենտրոնական բանկն իր իրավասության սահմաններում ընդունում է նորմատիվ և անհատական բնույթի իրավական ակտեր,²*
- *Կենտրոնական բանկի ընդունած կարգավորման ռեժիմը խստացնող, լրացուցիչ կամ ավելի խիստ պատասխանատվություն սահմանող նորմատիվ բնույթի ակտերը հետադարձ ուժ չունեն:*

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենքներին, ՀՀ կառավարության օրենքի ուժ ունեցող որոշումներին, ՀՀ սահմանադրական դատարանի, Ազգային ժողովի որոշումներին, ՀՀ նախագահի հրամանագրերին և կարգադրություններին, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներին, ՀՀ Ազգային ժողովի վավերացրած կամ ՀՀ Նախագահի վավերացրած կամ հաստատած և ՀՀ կառավարության հաստատած, ինչպես նաև ՀՀ վարչապետի վավերացրած միջազգային պայմանագրերին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահն օրենսդրությամբ կամ ՀՀ կենտրոնական բանկի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ընդունում է միայն անհատական որոշումներ կամ կարգադրություններ:

- ❖ Համաձայն Օրենքի 56-րդ հոդվածի, ՀՀ կենտրոնական բանկը կարող է կատարել հետևյալ գործարքները՝ ներդրումներ կատարել այն իրավաբանական անձանց կապիտալում, որոնց գործունեությունն ուղղակիորեն առնչվում է Կենտրոնական բանկի խնդիրների հետ
- ❖ իր խնդիրներն իրականացնելու համար ձեռք բերել կամ վարձակալել անհրաժեշտ անշարժ գույք
- ❖ իր հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց ձեռք բերել, տիրապետել, օգտագործել և օտարել գույք և գույքային իրավունքներ: Կենտրոնական բանկը օտարում է հիշյալ գույքը և գույքային իրավունքները հնարավոր կարճ ժամկետներում:
- ❖ իր կողմից սահմանված կարգով վարկեր տրամադրել Կենտրոնական բանկի նախագահին, նախագահի տեղակալին, խորհրդի մյուս անդամներին և ծառայողներին, որոնց ընդհանուր գումարը չպետք է գերազանցի Կենտրոնական բանկի կապիտալի մեկ տոկոսը:

Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերը գրանցումը, հրապարակումը, ուժի մեջ մտնելը և բողոքարկումը: «Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերը գրանցում է նորմատիվ ակտերը գրանցող պետական լիազորված մարմինը՝ դրանք ստանալու պահից 15 օրվա ընթացքում» (հոդված 3, կետ 1): Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ այդ մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է:

Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերը հրապարակվում են ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Դրանք սկսել են հրապարակվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: Համաձայն այդ օրենքի 55-րդ հոդվածի՝ գերատեսչական (տվյալ դեպքում՝ ՀՀ կենտրոնական բանկի) նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» առաջին բաժնում: Գերատեսչական (տվյալ դեպքում՝ ՀՀ կենտրոնական բանկի) նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, եթե այդ ակտերով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

Հարկ է նշել, որ 2001 թ. վերջերին բանկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում զգալիորեն նվազել են ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ և անհատական իրավական ակտերի բողոքարկման հնարավորությունները. «Կենտրոնական բանկի նորմատիվ և անհատական իրավական ակտերը կարող են բողոքարկվել դատարան՝ օրենքով նախատեսված դեպքերում: Կենտրոնական բանկի նորմատիվ և անհատական իրավական ակտերի գործողությունը գործի ամբողջ դատական քննության ընթացքում չի կասեցվում» (հոդված 57):


- Այսպես, դատական կարգով բողոքարկման ենթակա չեն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հետևյալ որոշումները.
- ⇒ բանկային գործունեության լիցենզիա ստանալուն նախնական հավանություն տալու կամ նախնական հավանությունը մերժելու մասին (ՀՀ ԲՕ, հոդված 26, կետ 3)
- ⇒ բանկի [անվճարունակությունը](#) կամ վճարունակությունը ճանաչելու մասին (ՀՀ ԲՎԿՍՕ, հոդված 2, կետ 2)
- ⇒ ադմինիստրացիա նշանակելու և բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին (ՀՀ ԲՎԿՍՕ, հոդված 13):

² Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը:

ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և խնդիրները: «Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում զանազան կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը» (հոդված 4, կետ 1):

Փաստորեն, օրենքով ՀՀ կենտրոնական բանկի վրա դրված է այնպիսի բարդ խնդիր, որի իրագործմանը երկարատև ժամանակաշրջանում շատ դժվար կլինի հասնել միայն դրամավարկային (մոնետարիստական) քաղաքականության միջոցով: Դրա համար անհրաժեշտ է նաև տնտեսության աշխուժացում և զարգացում, արդյունավետ հարկա-բյուջետային քաղաքականության իրականացում և այլն:

ՀՀ կենտրոնական բանկի խնդիրները ներկայացված են նկար 3-ում:



Նկար 3. Կենտրոնական բանկի խնդիրները՝ համաձայն ՀՀ ԿԲՕ-ի 5-րդ հոդվածի

Օրենքով ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրն տրվում է առաջնայնություն՝ հետևյալ դրույթներով՝

❖ *Եթե Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ* (հոդված 4, կետ 2):

❖ *Կենտրոնական բանկը մասնակցում է կառավարության տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև աջակցում է դրանց իրականացմանը, եթե դա չի հակասում Կենտրոնական բանկի խնդիրներին* (հոդված 7, կետ 3):

Ելնելով խնդրի կարևորությունից, օրենքը ՀՀ կենտրոնական բանկին տվել է նաև մեծ ինքնուրույնություն և արտոնություններ, որոնք ամրագրված են, մասնավորապես, հետևյալ դրույթներում՝

❖ *Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը*» (հոդված 4, կետ 1):

❖ *Կենտրոնական բանկն իր եկամուտները պլանավորում է ինքնուրույն: Կենտրոնական բանկի եկամուտները ենթակա չեն հաստատման ՀՀ պետական մարմինների կողմից* (հոդված 13, կետ 2):

❖ *Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է Կենտրոնական բանկի հաջորդ տարվա կապիտալ ներդրումների ծրագիրը և ծախսերի նախահաշիվը, որը ներառում է Կենտրոնական բանկի վարչական ծախսերը և գործառնական ծախսերի կանխատեսումը* (հոդված 14, կետ 1):

❖ *Արտաքին աուդիտորական կազմակերպությունը կամ կազմակերպությունները յուրաքանչյուր տարի ընտրվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից* (հոդված 16):

❖ *Կենտրոնական բանկը, մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում և օրենքով սահմանված կարգով ու ժամկետում հրապարակում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված՝ նախորդ ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունը* (հոդված 17, կետ 1): Կենտրոնական բանկի նախորդ ֆինանսական տարվա հաշվետվությունը ենթակա չէ ընդունման կամ հաստատման Ազգային ժողովի կողմից:

❖ *Կենտրոնական բանկի կանոնադրությունը հաստատում է Կենտրոնական բանկի խորհուրդը* (հոդված 20, ենթակետ «ա»):

❖ *Կենտրոնական բանկն առաջնահերթության իրավունք ունի իր պարտապանի՝ Կենտրոնական բանկում պահվող դրամական և այլ միջոցների հաշվին բավարարել տվյալ պարտապանի հանդեպ իր պահանջները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի* (հոդված 54):

❖ *Կենտրոնական բանկն ազատվում է բոլոր տեսակի հարկերից, տուրքերից և մաքսային վճարումներից* (հոդված 55):

իր խնդիրներն իրագործելու նպատակով, Կենտրոնական բանկը Օրենքով սահմանված կարգով (հոդված 5, կետ 2)՝

- ⇒ իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը
- ⇒ հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն
- ⇒ լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ անձանց, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը
- ⇒ որպես վերջին ատյանի վարկատու վարկեր է տրամադրում [բանկերին](#)³
- ⇒ կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն, գործունեությունը
- ⇒ տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները
- ⇒ իրականացնում է դրամավարկային և ֆինանսական վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը:

Դրամավարկային քաղաքականության ծրագիրը: Համաձայն ՀՀ ԿԲՕ-ի 6-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր տարի, պետական բյուջեն հաստատելուց հետո 10 օրվա ընթացքում, Կենտրոնական բանկն Ազգային ժողով է ներկայացնում և օրենքով սահմանված կարգով ու ժամկետում հրատարակում է առաջիկա տարվա դրամավարկային քաղաքականության ծրագիրը, որը ներառում է՝

- տնտեսական իրավիճակի վերլուծությունը և կանխատեսումը՝ կապված ՀՀ սոցիալտնտեսական զարգացման և պետական բյուջեի ցուցանիշների հետ
- շրջանառության մեջ գտնվող [դրամական զանգվածի](#) և վարկային ներդրումների առավելագույն սահմանաքանակը
- տոկոսադրույքների և փոխարժեքի մակարդակը
- դրամավարկային կարգավորման մեթոդները
- օրենքով սահմանված խնդիրների իրականացման համար Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ:

Գոյություն ունեն դրամավարկային կարգավորման երեք հիմնական մեթոդներ (գործիքներ), որոնց միջոցով կենտրոնական բանկերն ազդում են բանկային համակարգի՝ փող ստեղծելու ընդունակության, բանկերի պահուստների, հետևապես նաև դրամական զանգվածի, իսկ վերջինիս միջոցով գների մակարդակի վրա: Դրանք են՝

- ❖ բաց շուկայական գործառնությունները
- ❖ պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխությունը
- ❖ հաշվարկային փոխարժեքի փոփոխությունը:

ՀՀ կենտրոնական բանկի բաց շուկայական գործառնությունները կարգավորվում են Օրենքի 10-րդ հոդվածով, իսկ պարտադիր պահուստավորումը՝ 37 հոդվածով:

Պարտադիր պահուստավորման նորմատիվի մեծացումը հանգեցնում է դրամի նկատմամբ առաջարկի փոքրացմանը, իսկ փոքրացումը՝ բանկային համակարգի վարկավորման հնարավորությունների մեծացմանը: Պետք է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտադիր պահուստավորման նորմատիվի մեծությունը վերջին հինգ տարիների ընթացքում փոփոխվել է ընդամենը մեկ անգամ՝ 2002 թվականի երկրորդ կեսից: Այն փոքրացել է երկու տոկոսային կետով և դարձել 6%, որը, հեղինակի կարծիքով, մասամբ պայմանավորված է բանկերի՝ նույն ժամանակաշրջանից սկսած բանկային օրենսդրությանը համաձայն, քաղաքացիների ավանդների երաշխիքային հիմնադրամի հատկացումների կատարմամբ: [Պարտադիր պահուստները](#) միաժամանակ ծառայում են որպես երկրի վճարահաշվարկային համակարգի բնականոն գործունեության ապահովման միջոց:

Ուսումնական առաջադրանքներ.

1. *Բացատրել, թե դրամավարկային կարգավորման այս կամ այն մեթոդի միջոցով Կենտրոնական բանկը ի՞նչպես է ազդում դրամական զանգվածի վրա:*
2. *Ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի՝ վերջին հրապարակված հաշվեկշռի հիմնական ցուցանիշները:*
3. *Ներկայացնել վերջին դրամավարկային քաղաքականության ծրագրի հիմնական դրույթները և ցուցանիշները:*

2.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կենտրոնական բանկը, որպես իրավաբանական անձ, ունի իր կապիտալը: Համաձայն Օրենքի (հոդված 11), Կենտրոնական բանկի կապիտալը ներառում է նրա կանոնադրական կապիտալը (որը կազմում է հարյուր միլիոն հայկական դրամ), գլխավոր պահուստը, արտարժույթի, թանկարժեք մետաղների, արժեթղթերի, հիմնական միջոցների և այլ [ակտիվ](#)ների վերագնահատման պահուստները, չբաշխված շահույթը և շահույթը: Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

ՀՀ կառավարությունը չի կարող ուղղակի դրամական ներդրում կատարել ՀՀ կենտրոնական բանկի կապիտալում. նա ներդրումը կատարում է պարտատոմսերի ձևով ՀՀ կենտրոնական բանկի գործունեության ընթացքում առաջացող վնասները ծածկելու համար. «Կենտրոնական բանկի հաշվեկշռում, ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում, հաշվեկշռի

³ Կենտրոնական բանկը, որպես վերջին ատյանի վարկատու, վարկեր է տրամադրում այն բանկերին, որոնք ենթարկվում են ավանդների մեծ արտահոսքի: Այս գործառնությունը կենտրոնական բանկը պահպանում է բանկային համակարգի իրացվելիությունը, կամիսում ֆինանսական իրարանցումը:

հրապարակման պահից 30 օրվա ընթացքում ՀՀ կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին է տրամադրում շուկայական տոկոսադրույթով ամժամկետ պետական պարտատոմսեր: Այդ պարտատոմսերի մարումը կատարվում է պետական բյուջեի հաշվին կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն: Մինչև այդ պարտատոմսերի լրիվ մարումը, յուրաքանչյուր ֆինանսական տարվա ընթացքում մինչև դեկտեմբերի 15-ը, ՀՀ կառավարությունը իրականացնում է վերոհիշյալ պարտատոմսերի գծով հաշվարկված տոկոսների վճարումը Կենտրոնական բանկին, ելնելով ընթացիկ շուկայական տոկոսադրույթից (հոդված 11, կետ 4):

Կենտրոնական բանկի եկամուտների, ծախսերի և կապիտալ ներդրումների տարրերը սահմանված են Օրենքի 13 հոդվածով: Եկամուտների և ծախսերի տարրերը հեշտ հիշելու համար, դրանք ներկայացված են համեմատական աղյուսակի միջոցով (աղյուսակ 1): Բանկային իրավախախտումների համար բանկերից և նրանց ղեկավարներից զանձվող տուգանքները չեն համարվում Կենտրոնական բանկի եկամուտներ. դրանք անմիջապես զանձվում են հօգուտ պետությունից: Ինչ վերաբերում է պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման համար բանկերից զանձվող տույժին, ապա այն համարվում է Կենտրոնական բանկի եկամուտ: Հետևապես, այն կարող է ուղղվել պետություն՝ միայն շահույթի մնացորդի կազմում:

Կենտրոնական բանկի ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը հաստատում է Ազգային ժողովը՝ պետական բյուջեի մասին օրենքի առանձին հոդվածով, ՀՀ կառավարության ներկայացմամբ:

Աղյուսակ 1. ՀՀ կենտրոնական բանկի եկամուտների և ծախսերի կազմը

Եկամուտների կազմը	Ծախսերի կազմը ⁴
տրամադրված վարկերի, տեղաբաշխված դեպոզիտների, արժեթղթերի, թղթակցային հաշիվների մնացորդների դիմաց հաշվարկված տոկոսները	գործառնական ծախսեր ներգրավված դեպոզիտների, ստացված վարկերի, թողարկված արժեթղթերի, հաճախորդների հաշիվների մնացորդների դիմաց հաշվարկված տոկոսները
բանկային գործառնությունների իրականացման ընթացքում ստացված բոլոր տեսակի կոմիսիոն վճարները	թղթադրամի, մետաղադրամի և դրամագիտական արժեքների թողարկման, փոխադրման, պահպանման և ոչնչացման հետ կապված ծախսերը
հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքից բարձր գնով իրացումից և պաշարների իրացումից ստացված եկամուտները	հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և պաշարների վերագնահատման, հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքից ցածր գնով իրացումից, ինչպես նաև պաշարների իրացումից առաջացած ծախսերը
արտարժույթի, թանկարժեք մետաղների և դրամագիտական արժեքների հաշվեկշռային արժեքից բարձր գնով վաճառքից ստացված եկամուտները	արտարժույթի, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և դրամագիտական արժեքների հաշվեկշռային արժեքից ու առքի գնից ցածր գնով իրացումից առաջացած կորուստները
բանկային ծառայությունների իրականացման դիմաց ստացված վճարները	բանկային գործառնությունների իրականացման ընթացքում վճարված բոլոր տեսակի կոմիսիոն և այլ վճարները
նախկինում դուրս գրված վարկերի, դրանց տոկոսների և անհուսալի դեբիտորական պարտքերի մարման դիմաց ստացված գումարները	անհուսալի վարկերի, դեբիտորական պարտքերի, դրամագիտական արժեքների և այլ ակտիվների ապահովման պահուստների ձևավորման և հաշվեկշռից դուրսգրման հետ կապված ծախսերը
Կենտրոնական բանկի գրանցած բանկերից, այլ հաճախորդներից և պայմանագրային պարտավորություններից զանձած տույժերը (այդ թվում՝ բանկերի կողմից պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու համար) ու տուգանքները.	արտարժույթի, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և այլ ակտիվների վերագնահատումից առաջացած կորուստները հիմնական միջոցների մաշվածքի հետ կապված ծախսերը բանկի գործունեության հետ կապված բոլոր տեսակի ծառայությունների դիմաց վճարները
ստացված նվիրատվությունները	միջազգային պահուստների կառավարման հետ կապված ծախսերը
սույն օրենքով նախատեսված գործունեության ընթացքում ստացված այլ մուտքերը	վճարային համակարգերի սպասարկման հետ կապված ծախսերը պետական արտաքին պարտքի սպասարկման գծով ծախսերը Կենտրոնական բանկի այլ ակտիվների՝ շենքերի, շինությունների, հիմնական միջոցների և պաշարների պահպանման, սպասարկման, շահագործման և ապահովագրման հետ կապված ծախսերը աուդիտի և խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարները Կենտրոնական բանկի առջև դրված խնդիրների իրականացման հետ կապված այլ ծախսեր

⁴ Համաձայն ՀՀ ԿԲՕ օրենքի 55 հոդվածի ՀՀ կենտրոնական բանկն ազատված է բոլոր տեսակի հարկերից, տուրքերից և մաքսային վճարումներից:

	<p>վարչական ծախսերը ապարատի պահպանման ծախսերը (աշխատակիցների աշխատավարձ, պարգևատրում, կենսաթոշակային հիմնադրամին մուծումներ, անձնակազմի ուսուցում և վերապատրաստում, գործուղման և ներկայացուցչական ծախսեր, ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսեր, սոցիալական ապահովության այլ ծախսեր)</p> <p>լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը</p> <p>տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսերը</p> <p>ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը</p> <p>չնախատեսված ծախսերը (ծախսերի պահուստ)</p>
--	---

Կենտրոնական բանկի շահույթը: Ի տարբերություն առևտրային բանկերի, կենտրոնական բանկերը չեն հետապնդում շահույթ ստանալու նպատակ, այլ հետևում են այն քաղաքականությանը, որն ուղղված է գների, բանկային համակարգի կայունության ապահովմանը: Սակայն դա չի նշանակում, թե կենտրոնական բանկերն իրականում շահույթ չեն ստանում:

Կենտրոնական բանկի շահույթի հաշվարկման և դրա բաշխման կարգը սահմանված է Օրենքի 12-րդ հոդվածով, համաձայն որի՝

1. Կենտրոնական բանկի շահույթը հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա համար հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան՝ որպես տվյալ տարվա ընթացքում ստացված բոլոր եկամուտների և կատարած բոլոր ծախսերի (ներառյալ կորուստներ) տարբերություն:
2. Կենտրոնական բանկի շահույթից կատարվում են հետևյալ մասհանումները՝
 - ա) շահույթի 20 տոկոսն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը, մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25 տոկոսը
 - բ) ուղղվում է տվյալ օրենքի 11 հոդվածով նախատեսված պարտատոմսերի մարմանը, դրա համար անհրաժեշտ գումարի չափով:
3. Նշված մասհանումները կատարելուց հետո ֆինանսական տարվա արդյունքում ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:


2.3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Կենտրոնական բանկի ներկայումս գործող կառուցվածքը բերված է նկար 4-ում:

Կենտրոնական բանկի կառավարումը կարգավորվում է Օրենքի 3-րդ գլխի դրույթներով:

Չամաձայն այդ դրույթների, մասնավորապես՝

- ❖ Կենտրոնական բանկի նախագահը կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է, որը պատասխանատու է կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար:
- ❖ Կենտրոնական բանկի նախագահն ունի մեկ տեղակալ: Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ 37 նախագահի առաջարկությամբ՝ յոթ տարի ժամկետով:
- ❖ Կենտրոնական բանկի խորհուրդը կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Այն կազմված է կենտրոնական բանկի նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից:
- ❖ Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին նշանակում է 37 նախագահը՝ հինգ տարի ժամկետով:
- ❖ Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը կենտրոնական բանկի հատուկ կառուցվածքային ստորաբաժանում է, որը բաղկացած է հինգ անդամից՝ ներառյալ գլխավոր վերստուգիչը: Գլխավոր վերստուգիչին և վերստուգիչ խմբի անդամներին կենտրոնական բանկի նախագահի առաջարկով նշանակում և ազատում է աշխատանքից կենտրոնական բանկի խորհուրդը:
- ❖ Վերստուգիչ խումբը հաշվետու է կենտրոնական բանկի խորհրդին:



Նկար 4.ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքը

Ուսումնական առաջադրանքներ.


1. Թվարկել Կենտրոնական բանկի խորհրդի, նախագահի, խորհրդի անդամների և վերստուգիչ խմբի իրավասությունները և գործառնությունները (հոդվածներ 18, 19, 20, 25):
2. Ներկայացնել Կենտրոնական բանկի կանոնադրության բովանդակությունը՝ համաձայն օրենքի (հոդված 29):

2.4. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իր խնդիրներն իրականացնելիս Կենտրոնական բանկը համագործակցում կամ փոխհարաբերությունների մեջ է մտնում ՀՀ պետական մարմինների, բանկերի և այլ անձանց հետ (նկար 5):

Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները ՀՀ պետական մարմինների հետ դրսևորվում են, մասնավորապես, նրանում, որ՝

- Կենտրոնական բանկի նախագահը կամ նրա տեղակալը պարբերաբար պարզաբանումներ կամ բացատրություններ են տալիս Ազգային ժողովին և նրա հանձնաժողովներին Կենտրոնական բանկի քաղաքականության մասին (հոդված 7, կետ 2):
- Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման ընթացքում Կենտրոնական բանկը խորհրդակցում է կառավարության հետ (հոդված 7, կետ 3):
- Կենտրոնական բանկն անվճար իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը (հոդված 30):



Նկար 5. Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները

• Պետությունից նախագծի կազմելիս կառավարությունը կամ նրա լիազորած պետական կառավարման մարմինը խորհրդակցում է Կենտրոնական բանկի հետ՝ պետությունից նախագծին առնչվող հարցերի շուրջ: Կենտրոնական բանկը պետական բյուջեի նախագծի վերաբերյալ կառավարությանը պաշտոնական եզրակացություն է ներկայացնում: Այդ եզրակացությունը պետությունից նախագծին կից ներկայացվում է Ազգային ժողովի քննարկմանը (հոդված 31):

• Կենտրոնական բանկը կառավարության ֆինանսական գործակալն է՝
 ա) կառավարության լիազորած մարմնի կողմից թողարկված պարտատոմսերի և այլ արժեթղթերի բաշխման, գրանցման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հիմնական զուեմարի, տոկոսների կամ սահմանված այլ վճարումների իրականացման գծով հանդիսանում է կառավարության լիազորած մարմնի թողարկած պարտատոմսերի կենտրոնական պահառու:

բ) պետական բյուջեի և ներքին ու արտաքին պետական պարտքի սպասարկման հետ կապված գործառնությունների, ինչպես նաև վճարային այլ գործառնությունների իրականացման գծով:

գ) Կենտրոնական բանկի խնդիրներին չհակասող այլ գործառնությունների գծով (հոդված 32):

Կենտրոնական բանկը տրամադրում է կառավարությանը դրամավարկային և օրենքով իր իրավասությանը վերապահված այլ հարցերին առնչվող տեղեկություններ: Կառավարության լիազորած մարմինները, ինչպես նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը Կենտրոնական բանկին է տրամադրում տեղեկություններ՝ պետական բյուջեի կատարման, դրա ընթացիկ ծախսերի և եկամուտների, պետական փոխառությունների մասին, այդ թվում՝ դրանց աղբյուրների, ծավալի, տոկոսադրույքի, մարման ժամկետների, այլ պայմանների, փոխառու միջոցների օգտագործման ուղղությունների և նպատակների, վճարային հաշվեկշռի, ֆինանսական և տնտեսական այլ հարցերի վերաբերյալ:

Կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը կամ այլ պետական մարմիններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարկավորելը կամ այլ կերպ ֆինանսավորելն արգելվում է՝ բացառությամբ տվյալ օրենքով նախատեսված դեպքերի:

Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները բանկերի և այլ անձանց հետ կարգավորվում են Օրենքի 5-րդ գլխով:

Չամաձայն այդ գլխի դրույթների՝ Կենտրոնական բանկը, մասնավորապես՝

• նպաստում է բանկերի և Կենտրոնական բանկից լիցենզիա ստացած այլ անձանց գործունեությանը, կայուն զարգացմանը և դրանց համար ազատ մրցակցության համար հավասար պայմանների ստեղծմանը

• չի կարող միջամտել բանկերի և իրենից լիցենզիա ստացած այլ անձանց ընթացիկ գործունեությանը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Կենտրոնական բանկը, օրինակ, կարող է բանկում կամ վարկային կազմակերպությունում վերստուգումների իրականացնելիս, պարտադրել նրան փոխելու [ակտիվների](#) դասերը, ավելացնելու ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումները

• իր սահմանած կարգով և պայմաններով Կենտրոնական բանկում ստեղծվում է բանկերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ՝ վարկային ռեզիստոր, որին պարտադիր մասնակցում են Չայաստանի Չանրապետության տարածքում գործող բոլոր բանկերը

• օրենքին համապատասխան սահմանում է բանկերի գործունեության նորմատիվները (այդ թվում պարտադիր պահուստավորման նորմատիվը), դրանց հաշվարկման կարգը

• օրենքով սահմանված կարգով լիցենզավորում է [բանկային գործունեությունը](#) և այլ անձանց, վերահսկում է բանկերի գործունեությունը, սահմանում է դրանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների և տեղեկանքների ձևերը և դրանք ներկայացնելու կարգը

- օրենքով նախատեսված դեպքերում կարող է պատժամիջոցներ կիրառել բանկերի նկատմամբ
 - կարող է վարկավորել բանկերին համաձայն օրենքի 38 հոդվածի:
- Ներկայումս ՀՀ կենտրոնական բանկը, բացի բանկերից, լիցենզավորում է նաև վարկային կազմակերպություններին, արտարժույթի փոխանակման կետերին, արժույթային դիլերներին, արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպմամբ զբաղվող ինքնակարգավորվող, դրամական (փողային) փոխանցումներ, վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ, քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող, վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպություններին: Կենտրոնական բանկը կարգավորում և վերահսկում է այդ անձանց գործունեությունը, պատժամիջոցներ կիրառում դրանց նկատմամբ:

Ուսումնական առաջադրանքներ.

1. *Թվարկել Կենտրոնական բանկի կողմից բանկերի վարկավորումը կարգավորող դրույթները՝ համաձայն օրենքի (հոդված 38):*
2. *Ներկայացնել Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները բանկային միությունների և ասոցիացիաների հետ՝ համաձայն օրենքի (հոդված 39):*

2.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ: ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՄՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, շրջանառությունից հետ կանչելը և հանելը, թղթադրամի հատկանիշները, փոխանակումը կարգավորվում են Օրենքի 6-րդ գլխի դրույթներով: Համաձայն դրանց, մասնավորապես՝

- ❖ Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է:
 - ❖ Օրենքին համաձայն թողարկված և շրջանառությունից չհանված թղթադրամն ու մետաղադրամը հանդիսանում են Կենտրոնական բանկի անվերապահ պարտավորությունը և ապահովված են նրա բոլոր միջոցներով:
 - ❖ Կենտրոնական բանկի կողմից թողարկված և շրջանառությունից չհանված թղթադրամն ու մետաղադրամը գույքի, գույքային իրավունքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց օրինական վճարամիջոցներ են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով ՀՀ տարածքում փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց:
 - ❖ ՀՀ տարածքում օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամ և մետաղադրամ թողարկելը, շրջանառությունից հետ կանչելը ու հանելը, անվճար փոխանակելը Կենտրոնական բանկի իրավասությունն է:
 - ❖ Կենտրոնական բանկն իր սահմանած կարգով անվճար փոխանակում է հնամաշ և վնասված, սակայն վճարունակության հատկանիշներին համապատասխանող թղթադրամները ու մետաղադրամները՝ առանց գումարային սահմանափակումների:
 - ❖ Թողարկված թղթադրամի և մետաղադրամի ամբողջական հանրագումարը հաշվառվում է Կենտրոնական բանկի հաշվեկշռում՝ որպես Կենտրոնական բանկի պարտավորություն: Պահուստում գտնվող թղթադրամը և մետաղադրամը Կենտրոնական բանկի պարտավորություն չեն հանդիսանում և հաշվառվում են արտահաշվեկշռային հաշիվներում:
- Կենտրոնական բանկի իրավասությունը արժույթային կարգավորման և վերահսկման, ՀՀ միջազգային պահուստների պահպանման բնագավառում սահմանված է Օրենքի 7-րդ գլխի դրույթներով: Այդ դրույթների մասին ավելի մանրամասն կխոսենք «Արժույթային կարգավորումը և վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում» 17-րդ թեմայում:

Համաձայն այդ դրույթների, Կենտրոնական բանկը՝

- հանդիսանում է ՀՀ արժույթային գործակալը և լիազորված է իրականացնելու արժույթային քաղաքականություն: Վերջինս իրենից ներկայացնում է տնտեսական, իրավական և կազմակերպչական միջոցառումների և ձևերի ամբողջությունը, որոնք իրականացվում են արժույթային հարաբերությունների բնագավառում: Երկրի արժույթային քաղաքականությունն անցկացվում է նրա կառավարության, կենտրոնական բանկի, կենտրոնական ֆինանսական մարմինների կողմից՝ արտարժույթի, արտարժույթային փոխարժեքի, արտարժույթային գործառնությունների վրա փոխազդեցության միջոցով
- սահմանում է արտարժույթային գործառնությունների իրականացման, արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորման կարգը
- հսկում և կարգավորում է արժույթային գործառնություններ իրականացնող դիլերների (ներառյալ բանկերի) գործունեությունը, դրանց համար սահմանում արտարժույթի տնօրինման նորմատիվը
- սահմանում է արտարժույթային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը
- իր հաշվեկշռում արտացոլում է ՀՀ միջազգային պահուստները
- միջազգային պահուստները պահպանում է այն մակարդակի վրա, որը համապատասխանում է դրամավարկային քաղաքականության իրականացմանն ու ապահովում է ՀՀ միջազգային պարտավորությունների անխոչնդոտ կատարմանը
- յուրաքանչյուր եռամսյակը մեկ կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Եթե ՀՀ միջազգային պահուստների մակարդակը նվազում է, կամ ըստ Կենտրոնական բանկի, առկա է դրա նվազման այնպիսի միտում, որի հետևանքով կարող է վտանգվել դրամավարկային քաղաքականության իրականացումը կամ ՀՀ միջազգային պարտավորությունների անխոչնդոտ կատարումը, ապա Կենտրոնական բանկն ար-

տա հերթ տեղեկատվություն է ներկայացնում կառավարությանը միջազգային պահուստների վիճակի, դրանց մակարդակի նվազման կամ հնարավոր նվազման պատճառների, ինչպես նաև ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ և այդ մասին տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության նախագահին և Ազգային ժողովին:

Օրենքում 2001 թվականի նոյեմբերին կատարված լրացմանը մեր հանրապետությունում առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեցին քաղաքացիների ավանդների ապահովագրման վերաբերյալ դրույթներ, որը, կարծում ենք, կարևոր գործոն կհանդիսանա բանկային համակարգի հանդեպ հասարակության վստահության ամրապնդման գործում: Ելնելով տվյալ օրենքով իրեն վերապահված իրավասությունից, ՀՀ կենտրոնական բանկն արդեն սահմանել է համապատասխան կանոնակարգ (ԿԲ կանոնակարգ 20): Բանկային ավանդների պարտադիր երաշխավորման մեխանիզմին է նվիրված հաջորդ թեման:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է Կենտրոնական բանկերի դերը, ինչո՞վ են դրանք տարբերվում առևտրային բանկերից:
2. Որո՞նք են ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և խնդիրները:
3. Ի՞նչպիսի նորմերով է ամրագրվում Կենտրոնական բանկի ինքնուրույնությունը:
4. Ո՞րն է դրամավարկային քաղաքականության ծրագրի բովանդակությունը:
5. Ինչպե՞ս են կանոնակարգվում Կենտրոնական բանկի բաց շուկայական գործառնությունները և պարտադիր պահուստավորումը:
6. Որո՞նք են Կենտրոնական բանկի կապիտալի, եկամուտների, ծախսերի և կապիտալ ներդրումների տարրերը:
7. Ինչպիսի՞ն է Կենտրոնական բանկի շահույթի բաշխման կարգը:
8. Ինչպիսի՞ն է Կենտրոնական բանկի կառավարումը, որո՞նք են Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի իրավասությունները:
9. Ինչպիսի՞ն են Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները պետական մարմինների, բանկերի, միջազգային կազմակերպությունների և այլ անձանց հետ:
10. Ինչպե՞ս է կարգավորվում Կենտրոնական բանկի կողմից կառավարության և բանկերի վարկավորումը:
11. Ինչպե՞ս է կանոնակարգվում ՀՀ արժույթի թողարկումը, շրջանառությունից հետ կանչելը, փոխանակումը:
12. Ո՞րն է Կենտրոնական բանկի իրավասությունը արժույթային կարգավորման և ՀՀ միջազգային պահուստների պահպանման բնագավառում:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1. ՀՀ կենտրոնական բանկը՝

- ա) իր խնդիրներն իրականացնելիս անկախ չէ պետական մարմիններից
- բ) պատասխանատվություն է կրում առևտրային բանկերի պարտավորությունների համար
- գ) պատասխանատվություն է կրում կառավարության պարտավորությունների համար
- դ) չունի ինքնուրույն հաշվեկշիռ
- ե) վերոհիշյալ բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 2. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) ՀՀ կենտրոնական բանկը կարող է բանկերին տրամադել նաև երկարաժամկետ՝ ավելի քան մեկ տարի ժամկետով վարկեր
- բ) ՀՀ կենտրոնական բանկը չի կարող երաշխավորել բանկերի պարտավորությունները
- գ) ՀՀ կենտրոնական բանկը, առանձին դեպքերում, կարող է բանկերին տրամադել նաև բլանկային վարկեր,
- դ) ճիշտ են բոլոր պատասխանները:

Հ ա ր ց 3. Ներքոհիշյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա) ՀՀ կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը հաշվետու է նաև կենտրոնական բանկի նախագահին
- բ) ՀՀ կենտրոնական բանկի կանոնադրությունը հաստատում է նրա խորհուրդը
- գ) ճիշտ են բոլոր պատասխանները
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 4. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) շրջանառությունից չհանված թղթադրամը ՀՀ կենտրոնական բանկի անվերապահ պարտավորությունն է
- բ) պահուստում գտնվող թղթադրամը ՀՀ կենտրոնական բանկի պարտավորություն չի հանդիսանում և հաշվառվում է արտահաշվեկշռում
- գ) ՀՀ կենտրոնական բանկը լիազորված է իրականացնելու արժույթային քաղաքականություն
- դ) ՀՀ կենտրոնական բանկն իր հաշվեկշռում չի արտացոլում ՀՀ միջազգային պահուստները:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ ամփոփ ներկայացնել [բանկային ավանդ](#)ների վերադարձի ապահովման իրավական կարգավորումը ՀՀ-ում, բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման, երաշխիքային վճարների չափերը, ավանդների երաշխավորման հիմնադրամի միջոցների կառավարման, երաշխավորված գումարի հատուցման կարգը, պայմաններն ու ժամկետները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- ամփոփ ներկայացնել բանկային ավանդների վերադարձի ապահովման իրավական կարգավորումը Հայաստանում
- բնութագրել պարտադիր երաշխավորման օբյեկտը
- իմանալ բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման չափը
- ներկայացնել բանկային ավանդների երաշխավորման հատուկ հիմնադրամին երաշխիքային վճարների չափը և վճարման կարգը
- ներկայացնել ավանդների երաշխավորման հիմնադրամի միջոցների կառավարման կարգը
- ներկայացնել երաշխավորված գումարը և երաշխավորված գումարի ստացման դեպքերը
- ներկայացնել երաշխավորված գումարի հատուցման կարգը, պայմանները և ժամկետները:

3.1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆՂՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց բանկային ավանդների վերադարձի ապահովման իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման մասին» կանոնակարգ 20-ով (այսուհետ՝ ԿԲ կանոնակարգ 20) և «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով (այսուհետ՝ ԿԲ կանոնակարգ 3)

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 908-րդ հոդվածի, բանկերը պարտավոր են պարտադիր ապահովագրության միջոցով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ եղանակներով, ապահովել քաղաքացիների ավանդների վերադարձը: Քաղաքացիների ավանդների վերադարձն այն բանկի կողմից, որի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի կամ բաժնեմասերի հիսուն տոկոսից ավելին պատկանում է Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին, օրենսգրքով նախատեսված կարգով երաշխավորվում է նաև վերջիններիս սուբսիդիար պատասխանատվությամբ: Նշենք, որ ներկայումս մեր հանրապետության տարածքում չկա այնպիսի առևտրային բանկ, որի կանոնադրական կապիտալն ունենա նման կառուցվածք:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանվում են բանկային ավանդների պարտադիր երաշխավորման օբյեկտը, երաշխավորման հատուկ հիմնադրամին կատարվող և երաշխավորված գումարի ստացման դեպքերը, հատուցված երաշխավորված գումարի ստացման դիմաց ՀՀ կենտրոնական բանկի պահանջի իրավունքը և երաշխավորման հատուկ հիմնադրամի ձևավորումը: Օրենքով սահմանված չեն երաշխիքային վճարների և երաշխավորված գումարի չափերի վերաբերյալ կոնկրետ թվեր, ինչպես օրինակ, դրանք ամրագրված ԱՄՆ-ում գործող համապատասխան օրենքով: Դրանց սահմանումը վերապահված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին:

Ելնելով այդ օրենքով իրեն վերապահված իրավասություններից, ՀՀ կենտրոնական բանկը կանոնակարգ 20-ով սահմանել է բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման և երաշխիքային վճարների չափերը, ավանդների երաշխավորման հիմնադրամի միջոցների կառավարման, երաշխավորված գումարի հատուցման կարգը, պայմանները և ժամկետները:


3.2. ՊԱՐՏԱԴԻՐ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 20-ի, ՀՀ տարածքում գործող բանկերը պարտավոր են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 7¹ գլխի պահանջներին համապատասխան, տվյալ կանոնակարգով սահմանված կարգով և պայմաններով երաշխավորել ֆիզիկական անձանցից ներգրավված բոլոր տեսակի դրամային և արտարժութային ավանդները:

Ավանդների երաշխավորման հատուկ հիմնադրամի միջոցների հաշվին ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ ստեղծվել է ՀՀ կենտրոնական բանկի «Ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման ֆոնդ» հիմնարկը, որը երաշխավորում է նաև ֆիզիկական անձանց դրամային և արտարժութային բանկային հաշիվները՝ ԿԲ կանոնակարգ 20-ով սահմանված կարգով և պայմաններով:

Համաձայն ՀՀ ԿԲ-ի, բանկերը պարտավոր են երաշխավորել ֆիզիկական անձանցից ներգրավված բոլոր տեսակի դրամային և արտարժութային ավանդները՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափով: ԿԲ կանոնակարգով 20-ով ֆիզիկական անձանց թվին են դասվում նաև անհատ ձեռնարկատերերը: Բացի դրանից, նշված կանոնակարգով պարտադիր երաշխավորման օբյեկտ են համարվում նաև ֆիզիկական անձանց դրամային և արտարժութային հաշիվները:

Երաշխավորված գումարի առավելագույն չափն է հանդիսանում երաշխավորված գումարի ստացման դեպքի օրվա դրությամբ բանկում առկա ֆիզիկական անձի ավանդների, հաշիվներում առկա միջոցների (այսուհետև՝ ավանդ) ամբողջ գումարը (այդ օրվա վերջի դրությամբ բանկի հաշվեկշռում առկա գումարը), բայց ոչ ավելի, քան ԿԲ կանոնակարգ 20-ով սահմանված չափերով (նկար 6):



Նկար 6. Երաշխավորված գումարի առավելագույն չափը

Արտարժույթային ավանդների դրամային համարժեքությունը որոշվում է ավանդի բանկ մուտք լինելու օրվա, իսկ ավանդի գումարին տոկոսների հավելագրման դեպքում՝ այդ տոկոսների հավելագրման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով:

Երկու կամ ավելի ֆիզիկական անձանց համատեղ ավանդը դիտարկվում է որպես յուրաքանչյուր անձի առանձին ավանդ: համատեղ ավանդի պայմանագրով սահմանված ավանդատուի մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ ավանդը բաժանվում է ավանդատուների միջև հավասարաչափ:

Եթե մեկ անձը մեկ բանկում ունի առանձին ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ ավանդի ավանդատու է, ապա երաշխավորվող ավանդը հաշվարկվում է որպես առանձին ավանդի և համատեղ ավանդի իր մասնաբաժնի հանրագումարը, իսկ երաշխավորման ենթակա գումարը հաշվարկվում է ԿԲ կանոնակարգ 20-ի համաձայն:

Ֆիզիկական անձի կողմից տվյալ բանկի նկատմամբ պարտավորություն ունենալու դեպքում երաշխավորված գումարը հատուցվում է միայն այն դեպքում, եթե այդ պարտավորությունը պակաս է երաշխավորված գումարի առավելագույն չափից: Ընդ որում, այս դեպքում հատուցվում է միայն երաշխավորված գումարի և անձի կողմից տվյալ բանկի նկատմամբ պարտավորության տարբերությունը, իսկ երաշխավորման ենթակա գումարը հաշվարկվում է ԿԲ կանոնակարգ 20-ի համաձայն:

Ուսումնական առաջադրանք

Պայմանական թվերի հիման վրա հաշվարկել երաշխավորված գումարի առավելագույն չափը՝ նկար 6-ում ներկայացված դեպքերի համար:

3.3. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ կենտրոնական բանկը բացում, վարում և կառավարում է բանկային ավանդների երաշխավորման հատուկ հիմնադրամ, որի օգտին բանկերը կատարում են *երաշխիքային վճարների վճարում*:

Բանկերի կողմից երաշխիքային վճարների հաշվարկումը և վճարումն իրականացվում է բանկերի կողմից ներգրավված ավանդների հիման վրա՝ ԿԲ կանոնակարգ 20-ով սահմանված կարգով:

ՀՀ տարածքում գործող բանկերը երաշխիքային վճարներն իրականացնում են 2003 թվականի հուլիսի 1-ից: Ընդ որում՝ 2003 թվականի հուլիսի 1-ի դրությամբ և դրանից հետո ժամանակավոր ադմինիստրացիայի կառավարման ներքո գտնվող բանկերը երաշխիքային վճարներ չեն իրականացնում:

Բանկերը երաշխիքային վճարների հաշվարկն իրականացնում են ԿԲ կանոնակարգ 3-ով սահմանված հաշվարկի հիման վրա: Այդ կանոնակարգով սահմանված է «Երաշխիքային վճարումների հաշվարկման և բանկի ավանդատուների քանակի ու ավանդների երաշխավորված գումարի վերաբերյալ» թիվ 26 հաշվետվությունը, որը ներկայացվում է եռամսակային պարբերականությամբ:

Ստորև ներկայացված է այդ հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը:

24 թիվ 26
(եռամսյակային)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երաշխիքային վճարումների հաշվարկման և բանկի ավանդատուների քանակի և ավանդների երաշխավորված գումարի վերաբերյալ

Բանկի անվանումը _____
Ամսաթիվը _____ թ. -ից

Աղյուսակ 1 (հազար դրամ)

1	2
Եռամսյակի ընթացքում ավանդների միջինը	
այդ թվում՝ արտադուրով	
Երաշխիքային վճարումների հաշվարկված չափը եռամսյակի համար	

Աղյուսակ 2 (հազար դրամ)

1	2	3	4	5	6	7
Ավանդատուների քանակը հաշվետու օրվա դրությամբ						
Ավանդների երաշխավորված ընդհանուր գումարը						

Երաշխիքային վճարների գումարի չափը կազմում է հաշվետու եռամսյակի ընթացքում բանկերի կողմից ներգրավված ավանդների միջինի տարեկան **0,5 տոկոս**:

Երաշխիքային վճարի չափը մեծացնելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից վեց ամիս հետո: Բանկերը երաշխիքային վճարները կատարում են հայկական դրամով՝ եռամսյակը մեկ անգամ:

Բանկերը երաշխիքային վճարները կատարում են (ՀՀ կենտրոնական բանկը դրանք գանձում է) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

Բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում ԿԲ կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 26 հաշվետվությունը, որի հիման վրա երաշխիքային վճարները ՀՀ կենտրոնական բանկը գանձում է բանկերի ՀՀ կենտրոնական բանկում գտնվող թղթակցային հաշիվներից: Համաձայն ՀՀ ԿԲՕ-ի, թղթակցային հաշիվներում համապատասխան գումարի բացակայության դեպքում այդ գումարի վրա հաշվարկվում են տոկոսներ՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով:

Համաձայն ԿԲ կանոնակարգ 3-ի,
 Թիվ 26 հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակից:
 Առաջին աղյուսակի «Եռամսյակի ընթացքում ավանդների միջինը» տողում լրացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց բանկային ավանդների և բանկային հաշիվների միջին գումարը՝ հաշվարկված հետևյալ բանաձևով՝

$$U_{\text{մե}} = (U_1 + U_2 + \dots + U_n) / n$$
, որտեղ՝
 U_1, U_2, \dots, U_n ՝ բանկի ֆիզիկական անձանց ավանդներն են ըստ օրերի, $U_{\text{մե}}$ - բանկի ֆիզիկական անձանց ավանդների միջինն է եռամսյակի ընթացքում, n - հաշվետու եռամսյակի օրերի թիվն է:
 «Երաշխիքային վճարումների հաշվարկված չափը եռամսյակի համար» տողում լրացվում է հաշվետու եռամսյակի համար հաշվարկված երաշխիքային վճարումների գումարը, որը կազմում է եռամսյակի ընթացքում ավանդների միջինի որոշակի տոկոսը (տարեկան): Հաշվետու եռամսյակի համար երաշխիքային վճարման չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Եվ = U_{\text{մե}} * S_{\text{տ}} / (n1 / 365)$$
,
 որտեղ՝ $Եվ$ - հաշվետու եռամսյակի երաշխիքային վճարումների չափն է, $S_{\text{տ}}$ - տարեկան տոկոսն է, $n1$ - հաշվետու եռամսյակի օրերի քանակն է, $U_{\text{մե}}$ - բանկի ֆիզիկական անձանց ավանդների միջինն է եռամսյակի ընթացքում:
 Աղյուսակ 2-ի «Ավանդատուների քանակը հաշվետու օրվա դրությամբ» տողում լրացվում է եռամսյակի վերջին ամսվա վերջին օրվա դրությամբ բանկում առկա ավանդատուների քանակը՝ ըստ ավանդի մեծության և տեսակի: Ավանդատուների քանակը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ մեկ անձի բոլոր ավանդները (այդ թվում՝ համատեղ) համարվում են մեկ ավանդ, իսկ հաշվարկում ընդգրկվում են միայն երաշխավորվող ավանդների ավանդատուները:

«Ավանդների երաշխավորված ընդհանուր գումարը» տողում լրացվում են երաշխավորված (հատուցմանը ենթակա) ավանդների ընդհանուր ծավալներն՝ ըստ ավանդի մեծության և տեսակի: Այս տողի առանձին սյունակները լրացնելու համար բանկը պետք է հաշվարկի յուրաքանչյուր խմբի ավանդատուների հատուցման համար պահանջվող գումարները:

2-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերը ունեն միայն դրամային ավանդ (ավանդներ), և որոնց գումարը չի գերազանցում Կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

3-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերն ունեն միայն արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց գումարը չի գերազանցում Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

4-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերն ունեն և դրամային, և արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց դրամային ավանդը չի գերազանցում Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

5-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերը ունեն և դրամային, և արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց դրամային ավանդը գերազանցում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափը, սակայն քիչ է, քան Կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

6-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերը ունեն և դրամային, և արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց դրամային ավանդը գերազանցում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

7-րդ սյունակում լրացվում են 2-ից 6-րդ սյունակների գումարներն ըստ «Ավանդատուների քանակը հաշվետու օրվա դրությամբ» և «Երաշխավորման ենթակա ավանդների ընդհանուր ծավալը» տողերի:

Երաշխիքային վճարները ՀՀ կենտրոնական բանկը կուտակում է հիմնադրամում:

Հիմնադրամի միջոցները կառավարում է հիմնարկը՝ ԿԲ կանոնակարգ 20-ով և հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով ու պայմաններով:

Հիմնադրամի միջոցների, այդ թվում՝ հատուցված և բանկերի նկատմամբ ձեռք բերված պահանջի հիման վրա բանկերից ստացված գումարների, օրենքով սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարված մասհանումների, հիմնադրամի հաշվին ստացված դրամաշնորհների, վարկերի գումարներից առաջացած միջոցները հիմնարկը տեղաբաշխում է ՀՀ կենտրոնական բանկում որպես ավանդ:

Բանկային ավանդների երաշխավորման հատուկ հիմնադրամին վճարված երաշխիքային վճարների գումարները, դրանց վրա հաշվարկված տոկոսները, այդ գումարների օգտագործումից ստացված եկամուտները, Կենտրոնական բանկի կողմից հատուցված և սնանկ բանկերի նկատմամբ ձեռք բերած պահանջի հիման վրա սնանկ բանկերից ստացված երաշխիքային վճարների գումարները ֆինանսական տարվա արդյունքներով չեն փոխանցվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և կուտակվում են [բանկային ավանդների երաշխավորման հատուկ հիմնադրամում](#) (ՀՀ ԿԲՕ, հոդված 53⁵):


Ուսումնական առաջադրանք

Պայմանական թվերի հիման վրա հաշվարկել երաշխիքային վճարների հաշվարկը և լրացնել ԿԲ կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 26 հաշվետվությունը :

3.4. ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԴԵՊՔԸ, ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Համաձայն ՀՀ ԿԲՕ-ի 53³-րդ հոդվածի, *երաշխավորված գումարի ստացման դեպք է* համարվում «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից բանկին սնանկ ճանաչելը: Երաշխավորված գումարների հատուցումը կատարվելու է 2005 թվականի հուլիսի 1-ից, այսինքն՝ երաշխավորված գումարի ստացման դեպքը պետք է վրա հասած լինի այդ պահից հետո:

Երաշխավորված գումարը հատուցելուց հետո Կենտրոնական բանկը հատուցված գումարների չափով պահանջ է ձեռք բերում սնանկ բանկի նկատմամբ: Դա նշանակում է, որ սնանկության հետևանքով լուծարվող բանկի լուծարային միջոցներից վերը նշված օրենքով սահմանված հերթականությամբ պետք է բավարարվեն Կենտրոնական բանկի պահանջները՝ երաշխիքային հիմնադրամից հատուցված գումարների չափով (տես նկար 7):



Նկար 7. Երաշխավորված գումարների հատուցման կարգը և ժամկետները

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչպե՞ս կարելի է ամփոփ ներկայացնել բանկային ավանդների վերադարձի ապահովման իրավական կարգավորումը Հայաստանում:
2. Որո՞նք են պարտադիր երաշխավորման օբյեկտները:
3. Ո՞րն է բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման չափը:
4. Ո՞րն է բանկային ավանդների երաշխավորման հատուկ հիմնադրամին երաշխիքային վճարների չափը և վճարման կարգը:
5. Ինչպե՞ս կատարվում ավանդների երաշխավորման հիմնադրամի միջոցների կառավարումը:
6. Ո՞րն է երաշխավորված գումարի չափը, որո՞նք են երաշխավորված գումարի ստացման դեպքերը:
7. Որո՞նք են երաշխավորված գումարի հատուցման կարգը, պայմանները և ժամկետները:
8. Ինչպիսի՞ն է բանկային ավանդների երաշխավորման հատուկ հիմնադրամի ձևավորումը:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) սկսած 2003թ. հուլիսի 1-ից, երաշխիքային հիմնադրամ է ձևավորվելու նաև իրավաբանական անձանցից ներգրավված ավանդների համար
- բ) ավանդների երաշխիքային հիմնադրամին կատարվող հատկացումների չափը սահմանում է ՀՀ ԿԲ խորհուրդը
- գ) ավանդների երաշխիքային հիմնադրամից կատարվում է հատուցում, եթե բանկը ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ ծանաչվել է անվճարունակ
- դ) ավանդների երաշխիքային հիմնադրամից կատարվող հատուցումների չափը սահմանվում է օրենքով
- ե) ճիշտ են բ) և գ) պատասխանները:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն ԿԲ կանոնակարգ 20-ի, պարտադիր երաշխավորման օբյեկտ չեն համարվում՝

- ա) անհատ ձեռնարկատերերի ավանդները
- բ) ֆիզիկական անձանց բանկային հաշիվների մնացորդները,
- գ) անհատ ձեռնարկատերերի արտարժութային բանկային հաշիվների մնացորդները
- դ) առևտրային կազմակերպությունների ավանդները:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Երաշխավորված գումարի առավելագույն չափն է՝

- ա) արտարժութային ավանդի համար 2 միլիոն հայկական դրամը
- բ) դրամային ավանդի համար 1 միլիոն հայկական դրամը
- գ) եթե մեկ ֆիզիկական անձը մեկ բանկում ունի դրամային և արտարժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 1 միլիոն հայկական դրամից ավելի է, ապա դրամային ավանդը մինչև 2 միլիոն հայկական դրամի չափով
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ

Թեմայի նպատակն է՝ պարզաբանել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, դրանց պահպանման, տրամադրման և հրապարակման իրավական հիմքերը և կարգը, բանկային գաղտնիքի շուրջ ծագող հարաբերությունների մասնակիցների իրավասությունները, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- բացատրել օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները
- բնութագրել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները
- ներկայացնել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանման կարգը
- ներկայացնել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման հիմքերը և կարգը
- ներկայացնել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման իրավական հիմքերը և կարգը
- ներկայացնել բանկային գաղտնիքի մասին օրենքի պահանջները խախտելու համար մեղավոր անձանց պատասխանատվությունը:

Բանկային գաղտնիքը քաղաքացիական իրավունքի հատուկ ինստիտուտ է, որը պաշտպանում է բանկերի, նրանց հաճախորդների (քաղաքացիների և իրավաբանական անձանց) հաշիվների և գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը, այդ թվում՝ առևտրային գաղտնիքը: Բանկային գաղտնիքի պահպանումը սովորաբար պատճառաբանվում է հաճախորդների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ և պարտադիր է բանկի բոլոր աշխատակիցների համար: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն իրենց՝ հաճախորդներին կամ նրանց ներկայացուցիչներին, մարմիններին և անձերին՝ տվյալ երկրի համապատասխան օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենք) ընդունվել է 1996թ հոկտեմբերին: Դրա ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր հանրապետության բանկային համակարգ խնայողությունների ներգրավման խրախուսման, դրա նկատմամբ վստահության վերականգնման նկատառումներով:

4.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի, բանկային գաղտնիքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ նաև այլ իրավական ակտերով:

Բանկային գաղտնիքին վերաբերող դրույթներ սահմանված են նաև, մասնավորապես, հետևյալ օրենքներով.

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (հոդվածներ 141, 925),
- ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» (հոդվածներ 21, կետ 2, 28 կետ 3),
- ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին» (հոդվածներ 3, կետ 2, 57 կետ 4, 58 կետ 4),
- ՀՀ օրենքը «Աուդիտորական գործունեության մասին» (հոդվածներ 18, կետ 2, 29 կետ 4),

Օրենքի դրույթները տարածվում են՝

- ՀՀ կենտրոնական բանկի
- ՀՀ տարածքում գործող բանկերի, այդ թվում՝ դրանց և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի, ներկայացուցչությունների
- բոլոր այն ֆիզիկական, իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների վրա, որոնք տվյալ օրենքով սահմանված կարգով բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ են ստացել կամ տեղեկացել են դրանց:

4.2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

- ⇒ «Բանկային գաղտնիք»
- ⇒ «Երրորդ անձինք»
- ⇒ «Բանկային գաղտնիքի հրապարակում»
- ⇒ «Բանկային գաղտնիքի տրամադրում»:

<p>Բանկային գաղտնիք</p> <p>Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ (հոդված 4):</p>
<p>Երրորդ անձինք</p> <p>«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իմաստով երրորդ անձ են համարվում բացի տվյալ բանկից և իր հաճախորդից, բոլոր այլ անձինք. ընդ որում, Կենտրոնական բանկը, բանկերը և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային կազմակերպությունները երրորդ անձ չեն հանդիսանում (հոդված 5):</p>
<p>Բանկային գաղտնիքի հրապարակում</p> <p>Բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը, երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը, երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը (հոդված 6):</p>
<p>Բանկային գաղտնիքի տրամադրում</p> <p>Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը՝ միայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, հիմքերով և պետական մարմիններին, պաշտոնատար անձանց ու քաղաքացիներին այդ տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով հաղորդելն է (հոդված 9):</p>

Օրենքով տրված է բանկային գաղտնիքի բավականին լայն իրավական բնորոշում. ըստ էության, այդպիսի է համարվում բանկի հաճախորդի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որը նա մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141 հոդվածի՝ տեղեկությունները, որոնք չեն կարող բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով: Բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը պաշտպանվում է այդ օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված եղանակներով:

Ինչպես արդեն գիտենք, համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքների, բանկերի գործունեության վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ կենտրոնական բանկին: Այդ գործառնության իրականացման արդյունքում վերջինիս հայտնի են դառնում ոչ միայն բանկերի, այլ նաև դրանց հաճախորդների վերաբերյալ տեղեկություններ: Օրենքով նման տեղեկությունները նույնպես համարվում են բանկային գաղտնիք, իսկ բանկերը՝ ՀՀ կենտրոնական բանկի հաճախորդներ:

4.3. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Համաձայն Օրենքի, բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում ոչ միայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով հրապարակելը կամ տարածելը, այլ նաև երրորդ անձանց հայտնի դարձնելը, նրանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը:

Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են հայտնի դառնալ նաև բանկին իրավաբանական, հաշվապահական, այլ խորհրդատվական կամ ներկայացուցչական ծառայություններ մատուցող կամ բանկի համար որոշակի աշխատանքներ կատարող անձանց և կազմակերպություններին, որոնք նրանց հայտնվում կամ տրամադրվում են՝ տվյալ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար: Նման դեպքերում տեղեկությունների տրամադրումը բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում, իսկ այդ անձինք պարտավոր են պահպանել բանկային գաղտնիքը:

Օրենքն արգելում է որևէ անձի, կազմակերպության, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից իրեն վստահված կամ ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ նրան հայտնի դարձած և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը: Ընդ որում, այդ պահանջը չի տարածվում՝

1. բանկի հաճախորդի վրա՝ միայն իրեն վերաբերող տեղեկությունների հրապարակման մասով
2. բանկերի վրա՝ բանկերի վերահսկողության ընթացքում ՀՀ կենտրոնական բանկին տրամադրվող տեղեկությունների մասով:

Որոշակի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են հրապարակվել տվյալ հաճախորդի գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ: Հաճախորդի թույլտվությամբ կարող են հրապարակվել միայն տվյալ հաճախորդին վերաբերող տեղեկությունները՝ Օրենքի 14 հոդվածին համապատասխան:

4.4. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ


Բանկերը երաշխավորում են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 925 հոդվածի 1-ին կետի, «բանկը երաշխավորում է բանկային հաշվի և բանկային ավանդի, հաշվով գործառնությունների ու հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը»: Յուրաքանչյուր բանկ սահմանում է բանկային գաղտնիքի պահպանման կարգ: Նա պարտավոր է ձեռնարկել այնպիսի տեխնիկական միջոցներ և սահմանել այնպիսի կազմակերպչական կանոններ, որոնք անհրաժեշտ են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ պահպանելու համար:

Օրենքն արգելում է բանկի ներկա և նախկին ղեկավարներին և ծառայողներին, ինչպես նաև բանկին ծառայություններ մատուցող (կամ նախկինում մատուցած) կազմակերպություններին ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ իրենց վստահված կամ հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակելը, իր անձնական կամ երրորդ անձի շահերից ելնելով դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը:

Բանկը կարող է դատարանում հրապարակել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հաճախորդի վերաբերյալ՝ իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտության դեպքում և սահմաններում, եթե վեճը ծագել է բանկի և տվյալ հաճախորդի միջև: Տվյալ դեպքում, բանկի կամ հաճախորդի միջնորդությամբ դատական նիստը կարող է լինել դռնփակ:

4.5. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՏՐԱՍԱԴՐՈՒՄԸ: ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՋԵՎ

Օրենքով արգելվում է այլ անձանց և կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) կողմից իրենց վստահված կամ հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը, որոնք նրանց վստահված են եղել կամ հայտնի են դարձել դրանց ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ: Դրանով միաժամանակ սահմանվում են այն անձանց (մարմինների) շրջանակը և հիմքերը, որոնց դեպքում կարող են տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները (նկար 8):



Նկար 8. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 925 հոդվածի 2-րդ կետի, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն հաճախորդներին կամ նրանց ներկայացուցիչներին: Պետական

մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց նման տեղեկություններ կարող են տրամադրվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Բանկերը, Օրենքին համապատասխան՝

⇒ քրեական գործով մեղադրյալ ճանաչված անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները *քրեական հետապնդում իրականացնող մարմիններին* տրամադրում են միայն խուզարկության մասին դատարանի որոշմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան

⇒ քաղաքացիական և քրեական գործերի կողմ հանդիսացող իրենց հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են միայն *դատարանի*՝ ՀՀ քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա, ինչպես նաև իր հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա

⇒ իրենց հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում է ՀՀ *հարկային մարմիններին* միայն դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա, ինչպես նաև իր հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա:

⇒ հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են տվյալ *հաճախորդի ժառանգներին (իրավահաջորդներին)*, եթե վերջիններս կամ նրանց ներկայացուցիչները տվյալ անձանց ժառանգության (իրավահաջորդության) իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր են ներկայացրել:

Առաջին երկու դեպքերում բանկը պարտավոր է դատարանի որոշումը (վճիռը կամ դատավճիռը) ստանալուց հետո *երկու բանկային օրվա ընթացքում* դատարանին կամ դատարանի կողմից լիազորված անձին տրամադրել տվյալ որոշմամբ (վճռով կամ դատավճռով) պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ և կնքված ծրարում: Այդ ընթացքում բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ դատարանի որոշումը, վճիռը կամ դատավճիռը ստանալու և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու բանկի պարտավորության մասին իր հաճախորդին տեղեկացնելու համար:

Բանկերի ղեկավարները պարտավոր են քրեական հետապնդում իրականացնող մարմնին հայտնել իրենց հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված հանցագործության մասին. ընդ որում, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները և փաստաթղթերը նշված մարմնին տրամադրվում են համաձայն Օրենքի համապատասխան հոդվածների:

Բանկերի ծառայողները պարտավոր են իրենց հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված հանցագործության վերաբերյալ նման տեղեկությունների մասին գրավոր ձևով հայտնել բանկի ղեկավարներին, կամ նրանցից թեկուզ մեկին:

Բանկը պարտավոր է ժառանգության (իրավահաջորդության) իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթերը ստանալու պահից *հինգ բանկային օրվա ընթացքում* տեղեկացնել դիմող անձանց կամ կազմակերպություններին ներկայացված փաստաթղթերի անբավարարության մասին՝ նշելով պակասող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, իսկ դրանց բավարարության դեպքում՝ տասը բանկային օրվա ընթացքում նրանց հաղորդել հաճախորդի վերաբերյալ բանկում եղած սպառիչ տեղեկությունները և տրամադրել բոլոր փաստաթղթերը:

Բանկերը, իրենց գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ ներդրումների վերադարձելիությունը ապահովելու նպատակով կարող են միմյանց, վարկային կազմակերպությունների հետ փոխանակել կամ միմյանց, ինչպես նաև վարկային կազմակերպություններին տրամադրել իրենց հաճախորդների մասին տեղեկություններ, թեկուզև դրանք բանկային գաղտնիք կազմեն:

Ինչպես արդեն նշել ենք 1-ին թեմայում, Կենտրոնական բանկն ընդունել է «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեզիստրի ստեղծման և վարկային ռեզիստրին ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության» կարգը: Համաձայն կարգի, վարկատուները պարտավոր են վարկային ռեզիստր ներկայացնել տեղեկություններ վարկառուների վերաբերյալ, եթե նույնիսկ դրանք բանկային գաղտնիք են ներկայացնում:

Կենտրոնական բանկն իրավունք ունի բանկերի վերահսկողության ընթացքում ստանալու և ծանոթանալու բանկերի հաճախորդների վերաբերյալ տեղեկություններին, թեկուզև դրանք բանկային գաղտնիք կազմեն, եթե այդ տեղեկությունները անհրաժեշտ են վարկային և այլ ներդրումների, այլ [ակտիվ](#)ների գնահատման համար: Կենտրոնական բանկն իրավունք չունի պետական մարմիններին, պաշտոնատար կամ որևէ այլ անձի տրամադրել բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի հաճախորդների վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

Բանկը պարտավոր է մերժել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը, եթե պահանջը չի համապատասխանում Օրենքի դրույթներին:

Բանկն իրավունք չունի իր տվյալ հաճախորդի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով տեղեկություններ տրամադրելիս, վերջինիս կողմից կնքված պայմանագրերի կամ այլ գործարքների (գործառնությունների) կողմ հանդիսացող անձանց և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, եթե դրանք չեն պահանջվել Օրենքով սահմանված կարգով:

4.6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Օրենքով սահմանված է նաև դրա պահանջները խախտելու համար պատասխանատվությունը, ընդ որում՝ պատասխանատվության կարող են ենթարկվել ոչ միայն բանկի ղեկավարները, այլ նաև ցանկացած մեղավոր անձ:

Բանկային գաղտնիքի հրապարակման արգելման, գաղտնիքի պահպանման, քրեական հետապնդում իրականացնող մարմինն և դատարանին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման, տրամադրման ենթակա տեղեկությունների սահմանների վերաբերյալ հողվածների պահանջների խախտման մեջ մեղավոր անձինք և կազմակերպությունները պարտավոր են հատուցել խախտման հետևանքով բանկի հաճախորդին պատճառված վնասներն ամբողջությամբ: Բանկի համար նման պատասխանատվություն սահմանված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 925 հոդվածի 3-րդ կետի հողվածով:

Նշված խախտումներն առաջացնում են տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկից մինչև տասը հազարապատիկի չափով և կարող են առաջացնել օրենքով սահմանված քրեական պատասխանատվություն: Ելնելով այն հաշվարկից, որ նվազագույն աշխատավարձը ներկայումս սահմանված է 1000 դրամ, բանկային գաղտնիքի մասին օրենքի վերոհիշյալ հողվածների պահանջները խախտելու մեջ մեղավոր անձինք և կազմակերպությունները կարող են տուգանվել 2 մլն դրամից մինչև 10 մլն դրամի չափով:

Նշենք, որ բանկային գաղտնիքի պահպանման պահանջները խախտելու համար նախատեսված է տուգանքի ձևով պատասխանատվության ավելի մեծ չափ, քան բանկի ղեկավարների համար սահմանված է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով, այսինքն՝ 1 մլն դրամ):

Ինքնատուգման հարցեր

1. Որո՞նք են բանկային գաղտնիքի, դրա հրապարակման և տրամադրման, երրորդ անձի հասկացությունների բնորոշումները:
2. Ի՞նչպիսիս կարելի է բնութագրել բանկային գաղտնիքի մասին օրենսդրությունը:
3. Որն է «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի ընդունման հիմնական նպատակը և գործողության ոլորտը:
4. Որո՞նք են բանկերի պարտականությունները՝ բանկային գաղտնիքի պահպանման գծով:
5. Ո՞ր դեպքերում և ի՞նչ հիմքերով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել քրեական հետապնդում հարուցող մարմիններին, դատարանին, հաճախորդի ժառանգներին (իրավահաջորդներին) և հարկային մարմիններին:
6. Ո՞ր դեպքերում և ի՞նչ հիմքերով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել այլ բանկերին:
7. Հանցագործության մասին հայտնելու ի՞նչ պարտականություն ունեն բանկի ղեկավարները և ծառայողները:
8. Ի՞նչ պատասխանատվություն են կրում բանկային գաղտնիքի մասին օրենքի պահանջները խախտելու համար մեղավոր անձինք:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ. Բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում՝

- ա) նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բանավոր հրապարակումը
- բ) նաև երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն անուղղակիորեն ընձեռելը
- գ) երրորդ անձանց հայտնի դարձնելը
- դ) վերոհիշյալ բոլոր պահանջներն էլ սխալ են:

Հ ա ր ց 2 . Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմիններին տրամադրվում են՝

- ա) ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ
- բ) նաև դատարանի որոշման հիման վրա,
- գ) առանց որևէ թույլտվության
- դ) վերոհիշյալ բոլոր պատասխաններն էլ սխալ են:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իմաստով երրորդ անձ են համարվում՝

- ա) այն բանկը, որտեղ հաճախորդն ունի հաշիվ
- բ) ՀՀ կենտրոնական բանկը
- գ) բանկերը
- դ) վարկային կազմակերպությունները
- ե) վերոհիշյալ բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 4 . Բանկային գործունեության անվտանգությունն ապահովելու նպատակով բանկերը կարող են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները միմյանց տրամադրել՝

- ա) ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ
- բ) միայն հաճախորդի գրավոր համաձայնությամբ,
- գ) ինքնուրույնաբար, առանց որևէ համաձայնության
- դ) վերոհիշյալ պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

ԳԼՈՒԽ 5. ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ»

Թեմայի նպատակն է՝ բացատրել Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման իրավական կարգավորումը, ֆինանսական հաշվետվությունների տարրերը, հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները, հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման միասնական հիմունքները, ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման վերաբերյալ սահմանված կանոնները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- բացատրել օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները
- թվարկել և բացատրել հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու հիմնական սկզբունքները
- ներկայացնել ակտիվների և պարտավորությունների չափման և գույքագրման հիմունքները,
- ներկայացնել հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման հիմնական կանոնները
- ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների տարրերը և դրանց ճանաչման կանոնները,
- ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման նկատմամբ սահմանված պահանջները:

5.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տվյալ թեմայի տեքստում ամենուրեք՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝ *հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են Օրենքը, հաշվապահական հաշվառմանը վերաբերող ՀՀ այլ օրենքներ, Օրենքով սահմանված հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից ընդունված իրավական այլ ակտեր:*

Օրենքը տարածվում է նաև բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, վարկային կազմակերպությունների վրա:

Բանկերում հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը՝ կառավարության լիազորված մարմնի հետ համատեղ: Համաձայն ՀՀ կառավարության 24.07.98թ թիվ 457 որոշման, հաշվապահական հաշվառումը կարգավորող կառավարության լիազորած պետական մարմինը ներկայումս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն է:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը հաստատում է կազմակերպության համար պարտադիր կատարման ենթակա՝

- ա) *հաշվապահական հաշվառման ստանդարտները*
- բ) *հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները*
- գ) *հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման, ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների կատարման, հաշվապահական հաշվառման քաղաքականության, արտադրական ծախսումների (ինքնարժեքի) հաշվառման վերաբերյալ մեթոդական ցուցումներ, հրահանգներ (հոդված 4, կետ 2):*

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կազմակերպությունների համար հաստատել է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՄ), իսկ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանվել են, թե այդ ստանդարտներից որո՞նք են տարածվում ՀՀ տարածքում գործող բանկերի վրա:

Բանկերում և վարկային կազմակերպություններում ներկայումս կիրառվում են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 6.08.2002 թիվ 258-Ն որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 27.08.2002 թիվ 629-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման իրահանգը»: Համանման փաստաթղթեր են հաստատվել նաև վարկային կազմակերպությունների համար:

Օրենքով նախատեսվում է կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու վերաբերյալ ներքին փաստաթղթերի մշակում:

Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում կազմակերպությունը մշակում է դրանք ինքնուրույն, ելնելով՝

- ա) *նման հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից*
- բ) *սույն օրենքով սահմանված հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից*
- գ) *գործնական փորձից՝ այնքանով, որքանով դա համահունչ է սույն մասի «ա» և «բ» կետերով սահմանված դրույթներին (հոդված 4, կետ 3):*

5.2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները

Օրենքում կիրառվող հիմնական հասկացություններն են՝


- ⇒ «Հաշվապահական հաշվառում»
- ⇒ «Ֆինանսական հաշվետվություններ»
- ⇒ «Ակտիվ»
- ⇒ «Պարտավորություն»
- ⇒ «Սեփական կապիտալ»
- ⇒ «Եկամուտ»
- ⇒ «Ծախս»

Հաշվապահական հաշվառում
 Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով (հոդված 6):

Ֆինանսական հաշվետվություններ
 Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և կազմակերպության իրականացրած գործառնությունների համակարգված ֆինանսական ներկայացումն են (հոդված 5):

Ֆինանսական հաշվետվությունների տարրերը և նպատակը

Ֆինանսական հաշվետվությունների տարրերն են կազմակերպության [ակտիվները](#), սեփական կապիտալը, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը (նկար 9):



Նկար 9. Ֆինանսական հաշվետվությունների տարրերը

Ֆինանսական հաշվետվությունների տարրերը

Ակտիվը կազմակերպության կողմից վերահսկվող միջոց է՝ որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք, որից ակնկալվում է ապագա տնտեսական օգուտների ներհոսք կազմակերպություն:

Պարտավորությունը կազմակերպության ներկա պարտականությունն է՝ որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք, որի կատարումն ակնկալվում է, որ կհանգեցնի կազմակերպությունից տնտեսական օգուտների մարմնավորող միջոցների արտահոսքի:

Սեփական կապիտալը կազմակերպության ակտիվներն են՝ պարտավորությունները հանելուց հետո:

Եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների ավելացումն է, որը տեղի է ունենում ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման ձևով, և որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով սեփական կապիտալի ավելացման:

Ծախսը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազումն է, որը տեղի է ունենում ակտիվների արտահոսքի կամ նվազման կամ պարտավորությունների առաջացման կամ աճի ձևով, և որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազման, բացառությամբ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով դրա նվազման դեպքի (հոդված 5):

Ֆինանսական հաշվետվությունների նպատակը կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին (ներկա և պոտենցիալ ներդրողներին, կառավարչական անձնակազմին և աշխատողներին, պետական մարմիններին, մատակարարներին և այլ կրեդիտորներին, փոխատուներին, հասարակությանը և ֆինանսական հաշվետվությունների այլ օգտագործողներին) անկողմնակալ տեղեկատվությամբ ապահովումն է, որը նրանց օգտակար է տնտեսական որոշումներ կայացնելու համար (հոդված 7): Այսպիսով, ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները կարող են լինել շատ բազմազան, այդ թվում՝ ներկա և պոտենցիալ ներդրողներ:

Չաշվապահական հաշվառում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվող հոդվածները պետք է ճանաչվեն, այսինքն՝ համապատասխանեն տարրի սահմանմանը և բավարարեն հետևյալ չափանիշները՝

ա) հավանական է, որ հոդվածի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կներհոսեն կազմակերպություն կամ կարտահոսեն կազմակերպությունից,

բ) հոդվածն ունի արժեք, որը կարող է արժանահավատորեն չափվել (հոդված 8, կետ 1):

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են այն դեպքերը, թե երբ են [ակտիվը](#) և պարտավորությունը ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ եկամուտը և ծախսերը՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ուսումնական առաջադրանքներ

1. Նկարագրել այն դեպքերը, երբ ակտիվը և պարտավորությունը ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում:

2. *Նկարագրել այն դեպքերը, երբ եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:*

Ֆինանսական հաշվետվությունների տարրերի չափումը

Ֆինանսական հաշվետվությունների տարրերի չափումն այն դրամական մեծության որոշումն է, որով դրանք ենթակա են ճանաչման հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (հոդված 9, կետ 1):

Կազմակերպության ակտիվները և պարտավորությունների չափումը կատարվում է սկզբնական (փաստացի), ընթացիկ (վերականգնման), իրացման (մարման) և ներկա արժեքով: Ակտիվների և պարտավորությունների, եկամուտների և ծախսերի չափման հիմունքները սահմանված են Օրենքի 9-րդ հոդվածով: Կազմակերպության ակտիվները և պարտավորությունների չափման համեմատական բնութագիրը բերված է աղյուսակ 2-ում:


Աղյուսակ 2. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների չափման եղանակների համեմատական ընթացիկը

	Սկզբնական (փաստացի) արժեք	Ընթացիկ (վերականգնման) արժեք	Իրացման (մարման)	Ներկա արժեքով
Ակտիվները գրանցվում են	ձեռքբերման պահի դրությամբ դրանց ձեռքբերման համար վճարված (վճարվելիք) դրամական միջոցների գումարի չափով, իսկ այլ ձևով հատուցելու դեպքում՝ հատուցման իրական արժեքի չափով	դրամական միջոցների այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման ակտիվ ձեռք բերվեր	դրամական միջոցների այն գումարի չափով, որը կարող էր ներկա պահին ստացվել ակտիվները սովորական պայմաններում վաճառելով	դրամական միջոցների ապագա գուտ ներհոսքերի գեղչված գումարի չափով, որոնք ակնկալվում է, որ կստեղծեն այդ ակտիվները կազմակերպության սովորական գործունեության ընթացքում
Պարտավորությունները գրանցվում են	դրանց դիմաց ստացված ակտիվների (ծառայությունների) գումարի չափով կամ, եթե դրանց դիմաց ակտիվներ (ծառայություններ) չեն ստացվել, դրամական միջոցների այն գումարի չափով, որն ակնկալվում է, որ կվճարվի սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունները մարելու համար	դրամական միջոցների այն գումարի չափով, որն անհրաժեշտ կլիներ այդ պարտավորությունները ներկա պահին մարելու համար	իրենց մարման արժեքով, այսինքն՝ դրամական միջոցների այն գումարի չափով, որն ակնկալվում է, որ կվճարվի սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունները մարելու համար	դրամական միջոցների ապագա գուտ արտահոսքերի գեղչված գումարի չափով, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն կազմակերպության սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունները մարելու համար

Եկամուտները չափվում են այն գումարով, որով չափվում է ակտիվների համապատասխան աճը կամ պարտավորությունների համապատասխան նվազումը, իսկ ծախսերը՝ այն գումարով, որով չափվում է ակտիվների համապատասխան նվազումը կամ պարտավորությունների համապատասխան աճը:

Չափման հիմունքների կիրառման եղանակները սահմանվում են հաշվապահական հաշվառման ստանդարտներով (հոդված 9, կետ 5):

Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները սահմանված են Օրենքի 10-րդ հոդվածում և թվարկված են նկար 10-ում:



Նկար 10. Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները:

Ուսումնական առաջադրանք

Բացատրել հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները:

5.3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ

Օրենքի 11-12 հոդվածների դրույթներով սահմանված են կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի հետևյալ իրավունքները և պարտականությունները: Մասնավորապես՝

❖ Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջների համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար:

❖ Կազմակերպության ղեկավարը պարտավոր է սահմանել կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ապահովել հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը:

❖ Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

❖ Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար:

❖ Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարածայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

❖ Հրապարակվող ֆինանսական հաշվետվություններն ստորագրելու իրավունք ունի որակավորված գլխավոր հաշվապահը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորի որակավորում ունեցող ֆիզիկական անձը:

Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները սահմանված են Օրենքի 13-րդ հոդվածով, համաձայն որի՝

1. Հաշվապահական հաշվառումը վարվում է՝

ա) ՀՀ արժույթով՝ հայկական դրամով (Այսպես, բանկի արտարժույթային ակտիվները և պարտավորությունները հաշվեկշռում արտահայտվում են ՀՀ դրամով՝ տվյալ օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով, - Ս.Ն.):

բ) կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան (Դա նշանակում է, որ գործառնությունը միևնույն գումարով գրանցվում է մի հաշվի դեբետում և միաժամանակ մեկ

այլ հաշվի կրեդիտում, - Ս.Ն.)


գ) *անընդհատ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:*

2. *Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:*

3. *Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները պետք է հաշվապահական հաշվառման հաշիվներում գրանցվեն ժամանակին այնպես, որ դրանք արտացոլվեն այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որին վերաբերում են:*

Չաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են *սկզբնական հաշվառման փաստաթղթերի* հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան 14 հոդվածի 2 կետով սահմանված վավերապայմանները (ռեկվիզիտները) (ճկար 11):



Նկար 11. Սկզբնական հաշվառման փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք (հոդված 14, կետ 3):

Դրամարկղային և բանկային փաստաթղթերում սխալների ուղղում չի թույլատրվում:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է **հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում**: Դրանցում տնտեսական գործառնությունները գրանցվում են ժամանակագրական կարգով: Գրանցամատյանները ժամանակին և ամբողջական կազմելու պատասխանատվությունը կրում են դրանք վարող անձինք:

Գրանցամատյաններում չժամանցված ուղղումներ չեն թույլատրվում: Սխալի ուղղումը հաստատվում է տվյալ գրանցամատյանի ստորագրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ՝ նշելով ուղղման ամսաթիվը:

Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը կազմակերպությունն անցկացնում է հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով: Օրենքը սահմանում է այն դեպքերը, երբ գույքագրման անցկացումը պարտադիր է (հոդված 17, կետ 2):

Գույքագրման անցկացումը պարտադիր է՝

- ⇒ տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ
- ⇒ կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում
- ⇒ տարերային աղետների, հրդեհների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքերում
- ⇒ գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի բացահայտման դեպքերում
- ⇒ նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքերում:

5.4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Համաձայն Օրենքի 20-րդ հոդվածի, կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ներառում են նկար 12-ում ներկայացված հաշվետվությունները և տեղեկությունները:



Նկար 12. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Եթե ֆինանսական հաշվետվություններն օրենքով ենթակա են պարտադիր աուդիտի, ապա ֆինանսական հաշվետվություններին կից պետք է ներկայացվի աուդիտորական եզրակացություն:

Ուսումնական առաջադրանք

Տալ ֆինանսական հաշվետվություններից յուրաքանչյուրի բնութագրումը՝ համաձայն Օրենքի:

Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների հիման վրա՝ ՀՀ արժույթով: Օրենքով և հաշվապահական հաշվառման ստանդարտներով նախատեսված դեպքերում հիմնական (մայր) կազմակերպությունը պարտավոր է կազմել համախմբված ֆինանսական հաշվետվություններ:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն նրա բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, այդ թվում ՀՀ սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ցուցանիշները:

Ֆինանսական հաշվետվությունը պետք է ունենա հետևյալ պարտադիր վավերապայմանները (հոդված 21, կետ 4)՝

- ⇒ անվանումը
- ⇒ հաշվետու ամսաթիվը կամ ժամանակաշրջանը, որի համար կազմված է հաշվետվությունը
- ⇒ կազմակերպության անվանումը
- ⇒ գտնվելու վայրը
- ⇒ թվային ցուցանիշների ներկայացման չափսը (ֆորմատը)
- ⇒ պատասխանատու անձանց ստորագրությունները:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով կարող են սահմանվել նաև այլ վավերապայմաններ:

Ֆինանսական հաշվետվություններն ստորագրում են կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը: Դրանք կնքվում են կազմակերպության կնիքով:

Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը կարգավորվում է Օրենքի 23 հոդվածի դրույթներով: Մասնավորապես՝

Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու ժամկետը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու օր է համարվում դրանք ըստ պատկանելության հանձնելու կամ փոստով ուղարկելու օրը:

Բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերն իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (հոդված 24, կետ 1):

Ինքնատուզման հարցեր

1. Որո՞նք են Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները:
2. Ի՞նչ է հաստատում հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական նարմինը:
3. Որո՞նք են ֆինանսական հաշվետվությունների տարրերը և ե՞րբ են ճանաչվում վերջիններս:
4. Որո՞նք են ֆինանսական հաշվետվությունների տարրերի չափման հիմունքները:
5. Որո՞նք են կազմակերպության ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման դեպքերը:
6. Որո՞նք են հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները:
7. Որո՞նք են կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները հաշվապահական հաշվառման վարման գործում:
8. Որո՞նք են հաշվապահական հաշվառման վարման կանոնները:
9. Որո՞նք են սկզբնական հաշվառման փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները:
10. Որո՞նք են ֆինանսական հաշվետվության պարտադիր վավերապայմանները:
11. Ինչե՞ր են նտնում ֆինանսական հաշվետվությունների կազմի մեջ:

ԹԵՍԹ

Հ ա ղ ց 1 . Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունք չի հանդիսանում՝

- ա) համադրելիությունը
- բ) սահմանազատումը
- գ) հաշվանցումը
- դ) կրկնակի գրանցումը:

Հ ա ղ ց 2 . Սկզբնական հաշվառման փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները սահմանվում են՝

- ա) Օրենքով
- ա) բանկի կողմից՝ ինքնուրույնաբար
- բ) ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից
- գ) ՀՀ հարկային նարմինների կողմից
- ե) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ղ ց 3 . Եկամուտը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել ապագա տնտեսական օգուտների աճ՝ կապված՝

- ա) միայն ակտիվների աճի հետ
- բ) ակտիվների աճի կամ պարտավորությունների նվազման հետ
- գ) միայն պարտավորությունների նվազման հետ
- դ) ակտիվների նվազման կամ պարտավորությունների աճի հետ
- ե) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ղ ց 4 . Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը պարտադիր է՝

- ա) տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց հետո
- բ) եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ
- գ) նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքում
- դ) ճիշտ են ա) և գ) պատասխանները:

Հ ա ղ ց 5 . Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մի հաշվետու ժամանակաշրջանից մյուսը՝

- ա) կարող է փոփոխվել կազմակերպության գործադիր տնօրենի ցանկությամբ
- բ) կարող է փոփոխվել, եթե տեղի են ունեցել փոփոխություններ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի մեջ
- գ) կարող է փոփոխվել կազմակերպության ղեկավարի փոփոխության դեպքում
- դ) ճիշտ են բ) և գ) պատասխանները:

Հ ա ղ ց 6 . Հաշվեգրման սկզբունքի դեպքում հաշվապահական հաշվառման մեջ՝

- ա) եկամուտները ճանաչվում և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների ստացման ժամկետից
- բ) ծախսերն արտացոլվում են դրամական միջոցների վճարման պահին
- գ) եկամուտներն արտացոլվում են դրանց ստացման պահին
- դ) ճիշտ են ա) և բ) պատասխանները:

ՓԼՈՒԽ 6. ԲԱՆԿԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ բացատրել «բանկ» և դրան հարակից հասկացությունների իրավաբանական բնորոշումները, բնութագրել բանկերի ինքնուրույնությունը, կազմակերպական իրավական ձևերը, կառուցվածքը և ներկայացնել բանկի կառավարման մարմինների և վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները, տալ բանկի ղեկավարների սահմանումը և ներկայացնել դրանց որակավորման ստուգման կարգը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- տալ բանկի և դրան հարակից հասկացությունների իրավաբանական բնորոշումները՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենք)
- ներկայացնել առևտրային բանկերի կազմակերպական - իրավական տեսակները և տալ դրանց համեմատական իրավական նկարագիրը
- բնութագրել բանկերի ինքնուրույնությունը
- բնութագրել բանկի կազմակերպական կառուցվածքը
- տալ նշանակալից մասնակցության սահմանումը
- բնութագրել [բանկի մասնաճյուղը](#) և ներկայացուցչությունը
- ներկայացնել բանկի կառավարման մարմինների իրավասությունները
- բնութագրել բանկերի վերստուգիչ հանձնաժողովի դերը և գործառնությունները
- տալ բանկի ղեկավարների սահմանումը և դրանց որակավորման ստուգման կարգը:

6.1. ԲԱՆԿ, ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ: ԲԱՆԿԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ բանկը յուրահատուկ ֆինանսական միջնորդ է, ավանդառու կազմակերպություն, յուրաքանչյուր

<p>Բանկ</p> <p>Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն (Օրենքի հոդված 4, կետ 1):</p>
<p>Բանկային գործունեություն</p> <p>Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդի ընդունողի անուկից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով (Օրենքի հոդված 4, կետ 2):</p>
<p>Բանկային ավանդ</p> <p>Բանկային ավանդ է համարվում անձին տրամադրված այն դրամական գումարը, որի տրամադրման պայմանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բանկային ավանդի պայմանագրի համար սահմանված պահանջներին, և որը չի տրամադրվել այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ կամ որպես գույք, գույքային իրավունքներ վարձակալելու կամ ձեռք բերելու, աշխատանք կամ ծառայություն մատուցելու հատուցում կամ որպես պարտավորության ապահովման միջոց (Օրենքի հոդված 5):</p>

երկրում այն գտնվում է կարգավորման և վերահսկողության խիստ դաշտում, օրենսդրությամբ տրվում է «բանկ» և «բանկային գործունեություն» հասկացությունների սահմանումները:

- ⇒ Բանկային գործունեության սահմանումից, մասնավորապես, հետևում է, որ՝
- ⇒ [Բանկային գործունեություն](#) համարվում է ոչ միայն փաստացի ավանդներ ներգրավելը, այլ նաև նման առաջարկությամբ հանդես գալը, քանի որ դրանով իսկ անձը դառնում է պոտենցիալ ներգրավող:
- ⇒ Բանկային գործունեությունը ենթադրում է միաժամանակյա երկու գործունեություն. ավանդներ ներգրավելը և դրանք տեղաբաշխելը: Այսպիսով, միայն վարկային գործառնություններ իրականացնելը չի համարվում բանկային գործունեություն: Այսպես, նման գործառնություններ են իրականացնում, բանկերից բացի, նաև վարկային կազմակերպությունները և գրավատները:
- ⇒ Բանկը ներգրաված ավանդները տեղաբաշխում է իր անուկից և իր ռիսկով: Դրանով իսկ բանկը ստանձնում է նաև ավանդներ ներգրավելու ռիսկը: Բանկերն այլ ֆինանսական միջնորդներից տարբերվում են հիմնականում նրանով, որ դրանք, լինելով ավանդառու կազմակերպություն, կարող են վտանգի ենթարկել ոչ միայն մասնակիցների ներդրումները, այլ նաև հասարակության լայն շրջանակներից ներգրաված միջոցները:

«Բանկային ավանդի» բնորոշումը համապատասխանեցված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով տրված [բանկային ավանդի](#) սահմանմանը: Նախկինում բանկային օրենսդրությամբ բանկային ավանդ էին համարվում նաև հաճախորդների ընթացիկ, հաշվարկային և նման այլ հաշիվները, ինչպես նաև ավանդի վրա հաշվարկված տոկոսները: Բացի դրանից, ենթադրվում էր, որ բանկային ավանդը կարող էր լինել նաև առանց տոկոսի: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով առաձնացված են բանկային ավանդը և բանկային հաշիվը, իսկ [բանկային ավանդի պայմանագիրը](#) հատուցումային պայմանագիր է, այսինքն՝ ցանկացած, այդ թվում ցպասահնջ բանկային ավանդի դիմաց բանկը տոկոսներ պետք է վճարի դրա դիմաց:

Համաձայն բանկային ավանդի իրավական բնորոշման, բանկային ավանդ չի համարվում բանկին տրամադրված նաև այն դրամական գումարը, որը տրամադրվել է որպես պարտավորության ապահովման միջոց: Սակայն բանկային ավանդը՝ համապատասխան պայմանագիրը կնքելուց և գումարը բանկ մուտքագրելուց հետո, կարող է հանդես գալ որպես պարտավորության ապահովման միջոց (դրամական միջոցների գրավի առարկա): Ընդ որում, բանկային ավանդը գրավադրման ընթացքում չի դադարում այդպիսին լինելուց:

Առանց ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված [բանկային գործունեության լիցենզիայի](#), Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է: Քանի որ բանկային գործունեությամբ կարող են զբաղվել միայն բանկերը, ուստի Օրենքը խիստ կանոնակարգում է նաև «բանկ» բառի օգտագործումը (հոդված 6):

Առևտրային բանկի հիմնական նպատակը առավելագույն շահույթի ստացումն է, որը հաճախ հակասության մեջ է մտնում իրացվելիության ապահովման հետ, քանի որ բարձր իրացվելի [ակտիվները](#), որպես կանոն, եկամտաբեր չեն կամ ունեն ցածր եկամտաբերություն: Բանկերն ինքնուրույն են իրականացնում իրենց ընթացիկ գործունեությունը, այդ թվում՝ ներգրավում և տեղաբաշխում միջոցներ, սահմանում դրանց տոկոսադրույթները:

Բանկերի ինքնուրույնությունը ամրագրված է Օրենքի 11 հոդվածի դրույթներով: Մասնավորապես՝

- ❖ Արգելվում է որևէ կերպ ներգործել [բանկի ղեկավարների](#) վրա՝ նրանց պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում կամ միջամտել բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի, Կենտրոնական բանկը չի կարող միջամտել բանկերի և իրենից լիցենզիա ստացած այլ անձանց ընթացիկ գործունեությանը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- ❖ Կառավարությունը և բանկերը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե բանկերը կամ կառավարությունը այդպիսիք չեն ստանձնել: Կենտրոնական բանկը և բանկերը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում: Սա, մասնավորապես, նշանակում է, որ իրացվելիության կամ վճարունակության հիմնախնդիրներ ունեցող բանկի ավանդատուներն իրավունք չունեն իրենց ավանդների վերադարձը պահանջել ՀՀ կառավարությունից և Կենտրոնական բանկից:
- ❖ Բանկերն ինքնուրույն են իրականացնում իրենց հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:
- ❖ Հիմնական միջոցների գնահատումն իրականացվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի՝
 - Գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ տվյալ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:
 - Հիսուն և ավելի բաժնետեր (թվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի՝ գործարքի կնքմամբ շահագրգռվածություն չունեցող, անկախ անդամների կողմից:
 - Գույքի շուկայական արժեքի սահմանման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից ընկերությունը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:
 - Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի սահմանումը պարտադիր է տվյալ օրենքով սահմանված ընկերության բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի հետգնման դեպքերում:

6.2. ԲԱՆԿԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի, հանրապետության տարածքում բանկերը կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպական-իրավական ձևերով՝

- բաժնետիրական ընկերությունների (բաց կամ փակ)
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների
- կոոպերատիվների:

Վերը նշված կազմակերպական-իրավական ձևերով հիմնադրված բանկերի համեմատական բնութագիրը բերված է աղյուսակ 3-ում:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ձևով ստեղծված բանկերին անվանում են նաև փայտտիրական բանկեր: Այդպիսի համատեքստում «փայ» բառը նշանակում է, որ ավանդների ներդրման մասին գրավոր վկայականը, որը սովորաբար կոչվում է փայի կամ մասնակցության վկայական, ոչ թե արժեթուղթ է (բաժնետոմս), այլ ընդամենը իրավաբանական ստացագիր: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկի բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիրը տրամադրում է ՀՀ կենտրոնական բանկը՝ իր կողմից սահմանված ձևով: Այդ վկայագիրը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝ ՍՊԸ-ի լրիվ ֆիրմային անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը, կանոնադրական կապիտալի

(հիմնադրամի) չափը, մասնակիցը, բաժնեմասի չափը, բաժնեմասի ձեռքբերման հիմքը, գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի համապատասխան ընկերությունների մասին օրենքով սահմանված քանակը: Հակառակ դեպքում, այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո՝ դատական կարգով լուծարվում է, եթե նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև օրենքով սահմանված քանակը:

Աղյուսակ 3 Տարբեր կազմակերպական-իրավական ձևի բանկերի համեմատական բնութագիրը

	ԲԲԸ-ի ձևով ստեղծված բանկ	ՓԲԸ-ի ձևով ստեղծված բանկ	ՍՊԸ-ի ձևով ստեղծված բանկ	Կոոպերատիվի ձևով ստեղծված բանկ
1	2	3	4	5
<i>Փաստացի համալրված կանոնադրական կապիտալը</i>	Բանկի կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի իրացումից ստացված գումարը	Բանկի կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի իրացումից ստացված գումարը	Բանկի մասնակիցների բաժնեմասերի դիմաց ներդրված գումարը	Բանկի մասնակիցների բաժնեմասերի դիմաց ներդրված գումարը
<i>Կանոնադրական կապիտալում մասնակցի ներդրումը հավաստող փաստաթուղթը</i>	Բաժնետոմսեր (հասարակ կամ արտոնյալ)	Բաժնետոմսեր (հասարակ կամ արտոնյալ)	Կանոնադրական կապիտալում մասնակցի փայլը	Կանոնադրական կապիտալում մասնակցի փայլը
<i>Մասնակիցների պատասխանատվությունը բանկի պարտավորությունների համար</i>	Սահմանափակ է: Իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը	Սահմանափակ է: Իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը	Սահմանափակ է: Իրենց ներդրած արժեքի սահմաններում կրում են բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը	Սահմանափակ է: Իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը
<i>Բաժնետոմսերի տեղաբաշխման հնարավորությունը</i>	Բաժնետոմսերը կարող են ազատ գնվել և վաճառվել արժեթղթերի շուկայում, տեղաբաշխվում են մասնակիցների հնարավոր անսահմանափակ շրջանում	Բաժնետոմսերը չեն գնվում և վաճառվում արժեթղթերի շուկայում, տեղաբաշխվում են մասնակիցների սահմանափակ շրջանում	Բաժնետոմսեր չեն թողարկում	Բաժնետոմսեր չեն թողարկում
<i>Մասնակիցների թիվը</i>	1 և ավելի	1 - 49	1 - 49	3 և ավելի
<i>Մասնակցի ծայնի իրավունքը կառավարման մեջ</i>	Բանկի կանոնադրական կապիտալում ներդրմանը համամասնական	Բանկի կանոնադրական կապիտալում ներդրմանը համամասնական	Բանկի կանոնադրական կապիտալում ներդրմանը համամասնական	Անկախ բանկի կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության չափից ունեն մեկ ծայնի իրավունք
<i>Բանկի պատասխանատվությունն իր պարտավորությունների համար</i>	Պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով	Պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով	Պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով	Պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով
<i>Բանկի շահաբաժիններ վճարելու կարգը</i>	Բանկի կանոնադրական կապիտալում ներդրմանը համամասնական	Բանկի կանոնադրական կապիտալում ներդրմանը համամասնական	Բանկի կանոնադրական կապիտալում ներդրմանը համամասնական	Սահմանվում է բանկի կանոնադրությամբ
<i>Նոր մասնակիցներ ընդունելու կարգը</i>	Առանց մյուս մասնակիցների համաձայնության	Մյուս մասնակիցների համաձայնությամբ	Մյուս մասնակիցների համաձայնությամբ	Սահմանվում է բանկի կանոնադրությամբ
<i>Բանկի կապիտալում ունեցած իր բաժնեմասն օտարելու իրավունքը</i>	Առանց մյուս մասնակիցների համաձայնության	Մյուս մասնակիցների համաձայնությամբ՝ կանոնադրությամբ սահմանված կարգով	Մյուս մասնակիցների համաձայնությամբ՝ կանոնադրությամբ սահմանված կարգով	Սահմանվում է բանկի կանոնադրությամբ

Եթե կոոպերատիվ բանկի մասնակիցների թիվը նվազում է երեքից, ապա այդ բանկը ենթակա է լուծարման կամ պետք է վեց ամսվա ընթացքում լրացնի իր մասնակիցների թիվը:

Կոոպերատիվ բանկի շահաբաժիններ վճարելու, նոր մասնակիցներ ընդունելու, բանկում մասնակցությունը դադարելու, ինչպես նաև բանկի լուծարման դեպքում բանկի կապիտալը մասնակիցների միջև բաշխելու կարգը սահմանվում է կոոպերատիվ բանկի կանոնադրությամբ:

Բանկերն ունեն իրենց ֆիրմային անվանումը, որը պարտադիր պետք է պարունակի «բանկը» բառը և կազմակերպական-իրավական ձևի մասին նշումը («սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն», «բաց/փակ բաժնետիրական ընկերություն» կամ «կոոպերատիվ» բառերը):

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ներկայումս ՀՀ տարածքում գործող և ՀՀ կենտրոնական բանկի ընդհանուր վերահսկողության դաշտում գտնվող 20 բանկերից 3-ը բաց բաժնետիրական ընկերություններ են, 14-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ, 2-ը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և 1-ը՝ կոոպերատիվ բանկ: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ձևով ստեղծված բանկերի փոքր քանակը, մասամբ պայմանավորված է նման ընկերությունների մասին օրենքի բացակայությամբ, որն ընդունվել է համեմատաբար վերջերս՝ 2001 թվականի հոկտեմբերին:

6.2. ԲԱՆԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բանկի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կառուցվածքում առանձնանում են կազմակերպական և կառավարման կառուցվածքները: Առաջինը վերաբերում է բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կազմին և դրանց միջև փոխհարաբերություններին, իսկ երկրորդը՝ բանկի կառավարման մարմիններին և դրանց իրավասություններին, կառավարման տարբեր մակարդակներում գտնվող կառավարման օղակներին, նրանցում աշխատող կառավարման անձնակազմին, պաշտոններին, որոնց դեպքում ղեկավար-ենթակա փոխհարաբերություններն իրականացվում են կառավարման ենթակայության համակարգերով:

Միջազգային բանկային պրակտիկայում բանկի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները սովորաբար դասակարգվում են երեք խումբ ստորաբաժանումների՝ Front Office, Back Office և Middle Office, որոնց բնութագրերի և գործառնությունների մասին ընթերցող կարող է իմանալ, մասնավորապես, Ֆինանսաբանկային քոլեջում պատրաստված այլ առարկաների ուսումնական մոդուլներից:

Հարկ է նշել, որ բանկի կազմակերպական և կառավարման կառուցվածքները հաճախ խաչաձևվում են, և բանկի կառուցվածքը ներկայացվում է որպես կազմակերպական-կառավարման կառուցվածք:

Բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը կարող է պայմանավորված լինել ինչպես բանկի զարգացման ռազմավարությամբ, այնպես էլ ընթացիկ խնդիրներով: Առևտրային բանկի կազմակերպական կառուցվածքի վրա ազդում են մի քանի գործոններ, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող գործառնությունները, բանկի մեծությունը, անձնակազմի առկայությունը և ծախսերի տնտեսման խնդիրները, բանկի ունիվերսալացման կամ մասնագիտացման մակարդակը:

Բանկի կազմակերպական կառուցվածքում կարող են լինել նաև որոշ ստորաբաժանումներ, որոնց առկայությունը պայմանավորված է օրենսդրությամբ ներկայացվող պահանջով կամ տվյալ առևտրային բանկի և միջազգային ֆինանսական կազմակերպության միջև կնքված պայմանագրի պայմաններով:

Այսպես, համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի՝ իրենց ընթացիկ գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով բանկերն ստեղծում են ներքին հսկողություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում (ներքին հսկող խումբ կամ վերահսկիչ, հսկիչ), որը հաշվետու է բանկի գործադիր մարմնին: Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը: Ներքին հսկողություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման մեջ չեն կարող նշանակվել բանկի խորհրդի անդամները, բանկի վերստուգիչ հանձնաժողովի անդամները, բանկի այլ ղեկավարները: Բացի դրանից, համաձայն ԿԲ կանոնակարգ 5-ի՝ բանկերը պարտավոր են ունենալ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության, տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմամբ զբաղվող կառուցվածքային ստորաբաժանում կամ աշխատակից կամ այդ պարտականությունները դնել այլ կառուցվածքային ստորաբաժանման կամ աշխատակցի վրա (օրինակ՝ իրավաբանական կամ անվտանգության վարչություն (բաժին)):

Ուսումնական առաջադրանքներ

1. Պատկերել պայմանական բանկի կազմակերպական կառուցվածքը:

2. *Ներկայացնել բանկի կառուցվածքային ստորաբաժանումների գործառնությունները և միմյանց միջև փոխհարաբերությունները:*

Բանկի մասնակիցները: Նշանակալից մասնակցություն

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝

❖ Բանկի մասնակից են համարվում բանկի հիմնադիրները, բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի բաժնետերերը, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկի և կոոպերատիվ բանկի մասնակիցները (փայտտերերը, անդամները): Այսպիսով, «բանկի մասնակիցը» հավաքական հասկացություն է, որը կիրառվում է կազմակերպական-իրավական բոլոր ձևերի բանկերի նկատմամբ:

❖ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները բանկի մասնակից կարող են լինել օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72 հոդվածով բացառվում է նման մասնակցությունը: Նշված մարմիններն իրավունք չունեն հանդես գալ որպես տնտեսական ընկերակցությունների (ինչպիսիք համարվում են նաև առևտրային բանկերը) ու ընկերությունների մասնակիցներ:

❖ Բանկի մասնակից չեն կարող լինել կուսակցությունները և արհեստակցական միությունները: Այդ դրույթի նպատակն է, բանկերին հեռու պահել քաղաքական պայքարից, բացառել դրանց ծառայեցնելը այս կամ այն քաղաքական կուսակցությանը կամ բանկերի գործունեության կողմնորոշվածության մեջ նախապատվությունը տալը սոցիալական խնդիրների լուծմանը: Նկատենք, որ օրենքով չի արգելվում աորևէ քաղաքական կուսակցության անդամի մասնակցությունը բանկերի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը:

Ինչպես հայտնի է, բաժնետիրական ընկերության և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի ձայնի իրավունքը, հետևապես ընկերության կառավարման մարմինների որոշումների վրա ազդելու հնարավորությունը կախված է ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցի կողմից տնօրինվող ձայնի իրավունք բաժնեմասից: Դրա հետ կապված՝ բանկային օրենսդրության կարգավորվում է բանկի կանոնադրական հիմնադրամում իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից նշանակված մասնակցության ձեռքբերումը, նախատեսված են որոշակի սահմանափակումներ այդպիսի մասնակցություն ձեռք բերող անձանց նկատմամբ, որոնց մասին կխոսենք սույն դասընթացի հաջորդ թեմաներից մեկում:

Նշանակված մասնակցություն

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի՝ բանկերի գործունեությունը կարգավորող օրենքների իմաստով նշանակված է համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում՝

- ա) մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը.
- բ) մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը կամ ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշել տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, կամ էապես ազդել նրանց որոշումների կայացման կամ կիրառման վրա, կամ կանխորոշել տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները:

Նշանակված մասնակցություն ունեցող է նաև այն անձը, որը հնարավորություն ունի կանխորոշել տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, կամ էապես ազդել նրանց որոշումների կայացման կամ կիրառման վրա, կամ կանխորոշել տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները՝ տվյալ բանկի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով:

Օրենքով տրված է նշանակված մասնակցության ավելի լայն իրավական սահմանում և նախատեսված են բանկի բանկի կանոնադրական հիմնադրամում այդպիսի մասնակցության ձեռքբերման սահմանափակման ավելի շատ հիմքեր, քան, ասենք, վարկային կազմակերպությունների համար: Նման մասնակցությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցի տոկոսային բաժնեմասի մեծությամբ, այլ նաև գործարար համբավով կամ հեղինակությամբ: Դեռ ավելին, անձը կարող է չլինել բանկի մասնակից, սակայն համարվել նշանակված մասնակցություն ունեցող անձ՝ տվյալ բանկի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով (օրինակ, բանկի խոշոր ավանդատուն կամ հաշվետերը, որի դուրս գալը բանկից կարող է հանգեցնել իրացվելիության լուրջ հիմնախնդրի):

Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են նշանակված մասնակցություն ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակված մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առ ոչինչ է (հոդված 18):

Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

Բանկն իր տարածքից դուրս գործունեություն կարող է իրականացնել միայն մասնաճյուղի կամ ներկայացուցչության ձևով: 2001 թվականի վերջերին «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխությամբ բանկերն այլևս չեն կարող ունենալ գործառնական գրասենյակներ (կետեր)՝ որպես իրենց գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում:

ՀՀ տարածքում գործող բանկերը կարող են հիմնադրել նաև սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղեր, որոնց գրանցման առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 1-ով:

Բանկի մասնաճյուղը բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և (կամ) օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում: Հարկ է նշել, որ, ի տարբերություն օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ռեզիդենտ բանկի մասնաճյուղերին չի տրվում բանկային գործունեության լիցենզիա. վերջիններս գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից և մասնաճյուղ հիմնադրող բանկին տրվում է մասնաճյուղի գրանցման վկայական:

Սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղ է համարվում այն մասնաճյուղը, որը, համաձայն բանկի կողմից հաստատված մասնաճյուղի կանոնադրության, իրականացնում է միայն հետևյալ գործառնությունները՝

ա) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները

բ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ

և գործում է օդանավակայաններում, երկաթուղային կայարաններում, ավտոկայաններում, մաքսային սահմաններում կամ ՀՀ կառավարության կողմից հաստատված սահմանամերձ համայնքներում:

Բանկի ներկայացուցչությունը բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և Օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

Քանի որ բանկի մասնաճյուղը և ներկայացուցչությունը չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ուստի՝

- ⇒ նրանց պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում հիմնադիր բանկը
- ⇒ նրանք չեն կարող ինքնալուծարվել կամ վերակազմակերպվել
- ⇒ նրանք չունեն կանոնադրական հիմնադրամ և ընդհանուր կապիտալ
- ⇒ նրանք ունեն ոչ թե ինքնուրույն, այլ առանձին հաշվեկշիռ, որը միավորվում է հիմնադիր բանկի հաշվեկշիռում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով
- ⇒ ՀՀ կենտրոնական բանկը ռեգիլեյնտ բանկի մասնաճյուղերի համար չի սահմանում հիմնական տնտեսական նորմատիվներ և հաշվետվությունների ձևեր:

6.3. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Առևտրային բանկի հաջողության կարևորագույն գրավականներից է նրա կառավարումը, որի դերը գնալով ավելի է մեծանում՝ կապված, մասնավորապես, բանկային ռիսկերի կառավարման հետ: Եվ, պատահական չէ, որ բանկի կառավարումը բանկերի գործունեության ամփոփ գնահատման «ՔԱՄԵԼՍ» համակարգի բաղադրիչներից մեկն է: Ելնելով դրանից, ՀՀ բանկային օրենսդրությամբ որոշակի պահանջներ են սահմանված ինչպես բանկի կառավարման մարմինների, այնպես էլ նրա ղեկավարների նկատմամբ:


Բանկի կառավարման արդյունավետությունը կախված է ոչ միայն կառավարման կառուցվածքի ճիշտ ընտրությունից, աշխատակիցների միջև իրավասությունների հստակ բաշխումից, այլ նաև բանկի կառավարման մարմինների գործունեությունից:

Համաձայն Օրենքի 21 հոդվածի 1-ին կետի՝ բանկի կառավարման մարմիններն են՝

- ⇒ բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը
- ⇒ բանկի խորհուրդը (տնօրենների խորհուրդ կամ դիտորդ խորհուրդ)
- ⇒ բանկի գործադիր տնօրենը
- ⇒ բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքում՝ բանկի վարչությունը: Եթե բանկի կանոնադրությամբ նախատեսված է վարչություն ունենալ, ապա կանոնադրությամբ պետք է սահմանազատվեն գործադիր տնօրենի և վարչության իրավասությունները:

Բանկի կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը, իրավասությունների շրջանակը սահմանվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և բանկի կանոնադրությամբ, եթե «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով այլ բան սահմանված չէ:

Բանկի կառավարման մարմինների ընտրության կամ նշանակման կարգը, իրավասությունները սահմանվում են օրենքով և բանկի կանոնադրությամբ:



Նկար 13. Բանկի կառավարման մարմինները

Ցանկացած կազմակերպական-իրավական ձևով ստեղծված բանկի կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է, որը լուծում է բանկի բոլոր ռազմավարական խնդիրները:

Բանկի խորհուրդն իրականացնում է նրա գործունեության ընդհանուր ղեկավարումը, որոշում է բանկի գործունեության նախապատվելի ուղղությունները, հաստատում բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը, վարկային քաղաքականությունը, ներքին հսկողության մեխանիզմը, գումարում բանկի մասնակիցների տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովները և հաստատում դրանց օրակարգը և այլն: Նրա անդամները սովորաբար ընտրվում են բանկի մասնակիցների թվից, դրանց թիվը կարող է շատ տարբեր լինել, սակայն չի կարող փոքր լինել երեքից:

Օրենքներով¹ սահմանվում են նաև բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը, որոնք չեն կարող փոխանցվել գործադիր մարմինների իրավասությանը:

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է բանկի գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը կամ բանկի գործադիր տնօրենը՝ բանկի վարչության հետ համատեղ: Վարչության առկայության դեպքում ընկերության գործադիր տնօրենը կատարում է նաև բանկի վարչության նախագահի պարտականությունները:

Բանկի վարչությունը գործում է բանկի կանոնադրության, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված վարչության գործունեության կանոնակարգի հիման վրա:

Բանկի գործադիր մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է բանկի խորհրդի որոշմամբ, եթե բանկի կանոնադրությամբ այդ հարցերը տրված են բանկի խորհրդի իրավասությանը: Բանկի գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված՝ բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի իրավասությունն հանդիսացող հարցերի:

Բանկի գործադիր մարմինը կազմակերպում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի որոշումների կատարումը: Նա ղեկավարում է բանկի ընթացիկ գործունեությունը, հաշվետու է բանկի խորհրդին (տնօրեններին, դիտորդ խորհրդին) և մասնակիցների ընդհանուր ժողովին:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար բանկի մասնակիցների ընդհանուր ժողովն ընտրում է բանկի վերստուգիչ հանձնաժողով, որի իրավասությունները սահմանվում են օրենքով և բանկի կանոնադրությամբ: Բանկի վերստուգիչ հանձնաժողովը չի համարվում բանկի կառավարման մարմին, թեև վերստուգիչ հանձնաժողովի նախագահը և անդամները հանդիսանում են բանկի ղեկավարներ:

Վերստուգիչ հանձնաժողովը՝

- ⇒ բանկում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ
- ⇒ բանկի խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին բանկի գործունեության համապատասխանության, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին
- ⇒ եզրակացություններ է տալիս բանկի խորհրդի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ, իրականացնում է օրենքով և բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Վերստուգիչ հանձնաժողովը, որը բաղկացած է առնվազն երեք անդամից, հետևում է բանկի կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է բանկի փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և բանկի կանոնադրությանը: Նրա գործունեության կարգը սահմանվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթով՝ վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգով:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, բանկի վերստուգիչ հանձնաժողովը չի համարվում բանկի կառավարման մարմին, թեպետև վերստուգիչ հանձնաժողովի նախագահը և անդամները համարվում են բանկի ղեկավարներ: Դեռ ավելին, ՀՀ կենտրոնական բանկը ստուգում է նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը և նրանց տրամադրում որակավորման վկայական, կարող է տուգանել բանկային օրենսդրության խախտումների համար:

6.4. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒՓՈՒՄԸ

Բանկերի գործունեության կարգավորման առումով կարևոր է «բանկի ղեկավարներ» հասկացության իրավական բնորոշումը, քանի որ, կախված այն բանից, թե ովքեր են մտնում բանկի ղեկավարների կազմում, կենտրոնական բանկերը հնարավորություն են ստանում նեղ կամ լայն շրջանակի անձանց համար սահմանելու նրանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները, որոշակի անձանց արգելելու բանկում ղեկավար պաշտոններ զբաղեցնելը, գրանցելու բանկի ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները, սահմանափակելու բանկի հետ կապված ռիսկը («ինսայդերական» ռիսկը), կիրառելու բանկային օրենսդրության խախտումների համար բանկի համապատասխան աշխատակիցների նկատմամբ պատասխանատվության միջոցներ:

Բանկային օրենսդրությամբ կոնկրետ պահանջներ են սահմանվում բանկերի ղեկավարների մասնագիտական որակավորման համապատասխանելիության վերաբերյալ, իսկ ՀՀ կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում սահմանելու բանկի ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային

¹ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 99 և 115, ՀՀ օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին», հոդվածներ 67 և 84, ՀՀ օրենքը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», հոդված 36:

ստորաբաժանումների ղեկավարների) որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և ստուգման կարգը, արգելվում է որոշակի անձանց բանկի ղեկավար պաշտոններ զբաղեցնելը, օրենսդրության խախտումների համար ՀՀ կենտրոնական բանկը կարող է նրանց զրկել որակավորման վկայականից, նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի (1 մլն դրամի) չափով:

Բանկերի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի իմաստով բանկի ղեկավարներ են համարվում բանկի խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, բանկի վարչության նախագահը և անդամները, բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը, բանկի գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները կամ բանկի հիմնադիր փաստաթղթերով նախատեսված՝ նմանատիպ լիազորություններ իրականացնող մարմինների անդամները, բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ներքին հսկող խմբի ղեկավարը (վերահսկիչը, հսկիչը), բանկի անուհից գործարքներ կատարելու համար լիազորված բանկի աշխատակիցները:

Բանկի ղեկավարների վերաբերյալ բանկային օրենսդրությամբ սահմանված նորմերը տարածվում են բանկի բոլոր ղեկավարների վրա, եթե օրենքով կամ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով չեն նախատեսվում բացառություններ: Այսպես, համաձայն Օրենքի, բանկի հետ կապված անձինք են համարվում բանկի բոլոր ղեկավարները: Բանկի ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված (այլ ոչ թե ցանկացած, - Ս. Ն.) հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք

բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք

գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք

դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին

ե) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը ՀՀ կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված կենտրոնական բանկի կարծիքով հինք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը

զ) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

Օրենսդրությամբ սահմանված են բանկի ղեկավարների վերաբերյալ բացառություններ պարունակող հետևյալ նորմերը.

❖ Բանկի ղեկավարների, բացառությամբ բանկի գլխավոր հաշվապահի տեղակալի և բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, փոփոխությունները ենթակա են գրանցման ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

❖ ՀՀ կենտրոնական բանկը կարող է օրենսդրության յուրաքանչյուր խախտման համար բանկի ղեկավարի (բացառությամբ խորհրդի անդամների) նկատմամբ միաժամանակ կիրառել նախազգուշացում՝ խախտումները վերացնելու հանձնարարականով, և (կամ) տուգանք՝ ղեկավարի նկատմամբ, և (կամ) բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկում:

❖ Բանկի ղեկավարների, բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և կարգը սահմանում է կենտրոնական բանկը:

❖ Բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի նախագահի և անդամների, բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) կազմում փոփոխություններ կատարելու դեպքում բանկը պարտավոր է նոր նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուներին նախապես ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ՝ սահմանված կարգով մասնագիտական որակավորման վկայական ստանալու համար:

Բանկի ղեկավարների թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման ու վկայականի տրամադրման կարգը սահմանված է ՀՀ կենտրոնական բանկի «Կանոնակարգ» 1-ով:

Համաձայն այդ կանոնակարգի, բանկի, բանկի մասնաճյուղի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի նշանակվող կամ ընտրվող ղեկավարների, բացառությամբ՝ խորհրդի նախագահի, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից կամ ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից:

Քննությունն անցկացվում, և որակավորման ու մասնագիտական համապատասխանության վկայական տրվում է հետևյալ պաշտոններում որպես ղեկավար աշխատելու համար.

ա) բանկի գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

բ) բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, ներքին հսկող խմբի ղեկավար (վերահսկիչ, հսկիչ)

գ) օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ

դ) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ

ե) բանկի վարչության անդամ, մասնաճյուղի կառավարիչ, գործադիր տնօրենի տեղակալ

զ) բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ

է) բանկի վերստուգիչ հանձնաժողովի անդամ, բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ:

Ընդ որում՝ բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) վկայական ստացած անձը կարող է աշխատել բանկի վարչության անդամ, մասնաճյուղի կառավարիչ, գործադիր տնօրենի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, ճեռքին հսկող խմբի ղեկավարի (վերահսկիչի, հսկիչի) վկայական ստացած անձը՝ բանկի վերստուգիչ հանձնաժողովի անդամ, բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի վկայական ստացած անձը՝ բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ:

Բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը չի կարող լինել բանկի աշխատակից: Նման սահմանափակման նպատակն է բացառել շահերի բախումը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահին և անդամներին հնարավորության տակ անկաշկանդ կերպով իրականացնել իրենց իրավասությունները: Միանգամայն հասկանալի է, որ բանկի գործադիր տնօրենի կողմից նշանակված աշխատակիցը կաշկանդված է գործադիր մարմնի գործունեությունը ստուգելու ընթացքում հայտնաբերված խախտումներն արձանագրելիս:

Մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ, եթե մասնաճյուղն ապահովված է այնպիսի համակարգչային ծրագրերով, որոնք ապահովում են մասնաճյուղում կատարվող գործարքների ավտոմատ արտացոլումը բանկի հաշվեկշռում:

Բանկի խորհրդի նախագահի որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում՝ հարցազրույցի ձևով:

Հարցազրույցի արդյունքների հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը արձանագրում է բանկի խորհրդի նախագահի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին:

Բանկի խորհրդի նախագահի տեղակալի, անդամների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի նիստում՝ հարցազրույցի ձևով:

Ուսումնական առաջադրանք

1. *Նկարագրել բանկի ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 1-ի:*

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են «բանկ», «բանկային գործունեություն» և «բանկային ավանդ» հասկացությունների իրավական բնորոշումները:
2. Ինչպիսի՞ կազմակերպական-իրավական ձևերով կարող են ստեղծվել բանկերը: Ի՞նչպիսին է այդ ձևերի համեմատական նկարագիրը:
3. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկերի ինքնուրույնությունը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում բանկի կազմակերպական կառուցվածքը: Ի՞նչպես կարելի է պատկերել բանկի կազմակերպական կառուցվածքը:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում բանկի մասնաճյուղը:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում բանկի ներկայացուցչությունը:
7. Որո՞նք են բանկի կառավարման մարմինները և դրանց իրավասությունները:
8. Որո՞նք են բանկերի վերստուգիչ հանձնաժողովի դերը և գործառույթները:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկային գործունեություն է համարվում՝

- ա) վարկեր տրամադրելը
- բ) ավանդ ընդունելը և ավանդ ընդունողի ամուսնից և ռիսկով դրանք տեղաբաշխելը
- գ) ֆակտորինգային գործառնությունները
- դ) ֆինանսական վարձակալությունը (լիզինգը)
- ե) վերոհիշյալ բոլոր գործառնությունները:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկային ավանդը կարող է հանդես գալ որպես պարտավորության ապահովման միջոց (գրավ)
- բ) բանկային ավանդի տրամադրման պայմանները կարող են չհամապատասխանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բանկային ավանդի պայմանագրի համար սահմանված պահանջներին
- գ) բանկային ավանդը կարող է տրամադրվել այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությանը
- դ) բանկային ավանդը կարող է տրամադրվել որպես գույք ձեռք բերելու միջոց
- ե) վերոհիշյալ բոլոր պնդումներն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկի մասնակիցներ չեն կարող լինել հասարակական կազմակերպությունները,
- բ) բանկերը կարող են հիմնադրվել նաև որպես լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություններ,

- գ) կոոպերատիվ բանկի բոլոր անդամներն անկախ մասնակցության չափից ունեն մեկ ձայնի իրավունք,
 դ) բանկի մասնակից կարող են լինել նաև պետական մարմինները,
 ե) վերոհիշյալ բոլոր պնդումներն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 4 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) բաց բաժնետիրական ընկերության ձևով ստեղծված բանկը կարող է ունենալ 1 բաժնետեր
 բ) կոոպերատիվ բանկը կարող է ունենալ 2 անդամ
 գ) ՍՊԸ-ի ձևով ստեղծված բանկը կարող է ունենալ 1 մասնակից
 դ) բանկի մասնակիցները բանկի պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում իրենց ներդրած գումարի չափով:

Հ ա ր ց 5 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկի վերստուգիչ հանձնաժողովի անդամներին նշանակում է գործադիր տնօրենը
 բ) բանկի վերստուգիչ հանձնաժողովը համարվում է բանկի կառավարման մարմին
 գ) բանկի խորհրդի անդամները կարող են միաժամանակ լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամ
 դ) բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն կարող է ձեռք բերել ցանկացած գործունակ քաղաքացի
 ե) վերոհիշյալ բոլոր պնդումներից ոչ մեկն էլ ճիշտ չէ:

Հ ա ր ց 6 . Անձը կամ փոխկապակցված անձինք կարող են բանկի կանոնադրական հիմնադրամում ձեռք բերել նշանակալից մասնակցություն.

- ա) առանց 77 կենտրոնական բանկի նախնական համաձայնության
 բ) ձեռքբերման պահից 6 ամսյա ժամկետում՝ 77 ԿԲ-ի համաձայնությունը ստանալու պայմանով
 գ) 77 կառավարության համաձայնությամբ
 դ) միայն 77 կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

ՓՂՈՒԽ 7. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Ժամանակակից բանկային գործը ձեռնարկատիրական գործունեության առավել խիստ կարգավորվող և վերահսկվող ոլորտներից է, որի հիմքում ընկած է նոր բանկերի հիմնադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը, իսկ բանկային գործունեության լիցենզավորումը հանդես է գալիս որպես բանկային հնարավոր ռիսկերի սահմանափակման կարևոր գործիք: Ելնելով երկրի տնտեսությունում և ֆինանսական շուկայում բանկերի ունեցած առանձնահատուկ դերից, բանկային համակարգի հանդեպ բնակչության վստահության ամրապնդման անհրաժեշտությունից, նոր ստեղծվող բանկերի նկատմամբ օրենսդրորեն ավելի խիստ պահանջներ են սահմանված, քան լիցենզավորման ենթակա գործունեության այլ տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների համար:

Բանկերի գործունեությունը կարգավորող պետական իրավասու մարմինը պետք է հսկի նոր բանկերի ստեղծման ողջ գործընթացը. թույլատրելու միայն այնպիսի բանկերի մուտքը բանկային համակարգ, որոնք, նրա կարծիքով, ունեն բավարար ֆինանսական, կադրային, կառավարչական և այլ նախադրյալներ որպես բանկ, լիարժեք ֆինանսական միջնորդ կայանալու համար: Մեր հանրապետությունում վերջին տարիներին ստեղծված բանկերը (Յունիբանկը, Արդշինինվեստբանկը) հիմնադրվել են 5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումարով կանոնադրական հիմնադրամով, այն դեպքում, եթե գործող բանկերն իրենց ընդհանուր կապիտալի մեծությունը նշված չափին պետք է հասցնեն մինչև 2005 հուլիսի 1-ը:

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկային գործունեության լիցենզավորման իրավական առանձնահատկությունները, նկարագրել լիցենզավորման փուլերը, բանկերի տարածքային ստորաբաժանումների, փոփոխությունների գրանցման ընթացակարգերը, բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման սահմանափակումները և ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրան նախնական համաձայնության տալու կարգը՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- բացատրել բանկային գործունեության լիցենզավորման անհրաժեշտությունը
- ներկայացնել բանկային գործունեության լիցենզավորման առանձնահատկությունները
- ներկայացնել բանկային գործունեության լիցենզավորման փուլերը
- ներկայացնել լիցենզիայի նախնական հավանություն ստանալու անհրաժեշտ պայմանները
- բնութագրել բանկի գործունեության տնտեսական ծրագիրը՝ որպես լիցենզիայի նախնական հավանություն ստանալու հիմնական պայման
- ներկայացնել և բնութագրել բանկի կանոնադրության բովանդակությունը
- ներկայացնել բանկի գրանցման անհրաժեշտ պայմանները
- ներկայացնել լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները
- բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման սահմանափակումները
- նկարագրել ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալու կարգը
- նկարագրել բանկի մասնաճյուղի գրանցման ընթացակարգը
- նկարագրել բանկի ներկայացուցչության գրանցման ընթացակարգը
- նկարագրել փոփոխությունների գրանցման ընթացակարգը:

7.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկերը ենթակա են պետական գրանցման ՀՀ կենտրոնական բանկում, դրանք կարող են իրականացնել բանկային գործունեություն՝ վերջինիս կողմից տրամադվող լիցենզիան ստանալու պահից: Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենք) ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկը բանկային գործունեության լիցենզիա է տրամադրում բանկերին և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերին:

Բանկային գործունեության լիցենզավորման նպատակը բանկերի ավանդատուների և այլ պարտատերերի շահերի պաշտպանությունն է: Լիցենզավորումը հանդես է գալիս որպես բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության գործընթացի սկիզբ: Բանկերի գործունեությունը կարգավորող պետական իրավասու մարմինը պետք է հսկի նոր բանկերի ստեղծման ողջ գործընթացը, թույլատրելու միայն այնպիսի բանկերի մուտքը բանկային համակարգ, որոնք, նրա կարծիքով, ունեն բավարար նախադրյալներ որպես բանկ, լիարժեք ֆինանսական միջնորդ կայանալու համար:

Հայաստանի Հանրապետությունում բանկերի գործունեության լիցենզավորումը բնութագրվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով՝

Բանկային գործունեության լիցենզիան դասվում է բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների շարքին, այսինքն՝ լիցենզավորող մարմնի (տվյալ դեպքում՝ ՀՀ կենտրոնական բանկի) կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար տվյալ օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում, եթե

օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ: Օրենքով *բանկային գործունեության լիցենզավորման յուրաքանչյուր փուլի տևողությունը սահմանված է մինչև մեկ ամիս*: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար լիցենզիայի նախնական հավանության միջնորդագրի, բանկի գրանցման դիմումի կամ լիցենզիա տալու դիմումի քննության մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել (բանկի գրանցման փուլում՝ անորոշ ժամկետով) ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Այդ տեղեկությունների ստացման անհրաժեշտությունը կարող է կապված լինել նոր ստեղծվող բանկում ներդրվող դրամական միջոցների ծագման օրինականությունը ստուգելու, բանկային համակարգ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների մուտքը կանխելու հետ:

Օրենքով բանկային գործունեության լիցենզավորման յուրաքանչյուր փուլի համար պահանջվող փաստաթղթերի կամ պայմանների ցանկերը սահմանելիս ՀՀ կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում *սահմանելու նաև այլ փաստաթղթեր և պայմաններ*: Դրանով իսկ ՀՀ կենտրոնական բանկն ունի բանկային գործունեության լիցենզավորման ողջ գործընթացը վերահսկելու իրավական մեծ հնարավորություն:

Բանկային գործունեության լիցենզավորումը փուլային ընթացակարգ է, այն բաղկացած է երեք փուլից՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստանալու նախնական հավանության տրման, բանկի գրանցման և լիցենզիայի տրամադրման (ի տարբերություն, օրինակ, վարկային կազմակերպությունների, որոնց գրանցումը և լիցենզավորումը միաժամանակյա գործընթաց է: Մինչև 1996թ. կեսերը նման գործընթաց էր նաև բանկերի գրանցումը և լիցենզավորումը): Նման գործընթացը ՀՀ կենտրոնական բանկին հնարավորություն է տալիս մանրակրկիտ ուսումնասիրել նոր բանկի ստեղծման բոլոր պայմանները, այն նկատառումները, որոնցից ելնելով, նախաձեռնող անձինք որոշել են բանկ հիմնադրել:

Բանկային գործունեության լիցենզավորման ընթացակարգը սահմանվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով: Այլ օրենքներով բանկային գործունեության լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված չլինելու դեպքում գործում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչվում բացառապես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Այլ օրենքներով լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ այլ դրույթներ սահմանված չլինելու դեպքում գործում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Բանկային գործունեության լիցենզավորման գործընթացի վերը բերված իրավական առանձնահատկությունները բխում են բանկերի՝ որպես յուրահատուկ տնտեսավարող սուբյեկտների բնույթով պայմանավորված դրանց գործունեության կարգավորման ու վերահսկողության անհրաժեշտությունից: Նման իրավական նորմերի առկայությունը ՀՀ կենտրոնական բանկին մեծ հնարավորություններ են ընձեռում կանխելու պատահական, այսպես, կոչված, «գրպանային», ի սկզբանե հեռանկարներ չունեցող սուբյեկտների մուտքը հանրապետության բանկային համակարգ:

Ասվածի վառ օրինակ է ծառայում Հայաստանում բանկային օրենսդրության գրեթե բացակայության պայմաններում 1991-1993 թվականներին բանկերի թվաքանակի արագ աճը: Նոր բանկերի ստեղծման և գործունեության նկատմամբ առկա պահանջների մակարդակը խիստ անբավարար էր, որի հետևանքով ձևավորվող բանկային համակարգում տիրում էր ամենաթողության մթնոլորտ: Ցածր էին նաև բանկերի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափին ներկայացվող պահանջները (100 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, իսկ բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ սահմանված չէր): Արդյունքում ստեղծվել էին մի շարք բանկեր և ֆինանսավարկային կազմակերպություններ, որոնք հիմնականում ապահովված չէին համապատասխան մասնագետներով, կատարում էին խիստ սահմանափակ բանկային գործառնություններ, սպասարկում էին առավելապես իրենց հիմնադիրներին և փայտերերին: 1994թ. հունվարի 1-ի դրությամբ գործում էին 58 բանկ և արտասահմանյան բանկերի 14 մասնաճյուղ: Դրանց մեծ մասը հետագա տարիներին այդպես էլ չկայացան որպես լիարժեք բանկ, չկարողացան շարունակել իրենց գործունեությունը կարգավորման օրենսդրական դաշտի խստացման պայմաններում: Բավական է նշել, որ միայն 1995 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից անվավեր են ճանաչվել 20 բանկի և օտարերկրյա բանկերի 4 մասնաճյուղի բանկային գործունեություն իրականացնելու արտոնագրերը:

7.2. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Բանկային գործունեության լիցենզավորման փուլերը

Բանկային գործունեության լիցենզիան ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերին և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերին տրվող բանկային գործունեություն իրականացնելու թույլտվությունը հավաստող փաստաթուղթ է: Առանց ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված [բանկային գործունեության լիցենզիայի](#), ՀՀ տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է:


Բանկային գործունեության լիցենզավորման, բանկերի տարածքային ստորաբաժանումների՝ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման ու գրանցման ընթացակարգերը կանոնակարգվում են Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկերի լիցենզավորման ընթացակարգը սկսվում է լիցենզիայի նախնական հավանություն ստանալու միջնորդագրի ներկայացնելու պահից և ավարտվում է լիցենզիա տալու

կամ լիցենզիա ստանալու դիմումը մերժելու պահով: Ընդ որում՝ բանկային գործունեության լիցենզիա տալու բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ կենտրոնական բանկին:

Բանկային գործունեության լիցենզավորման փուլերը ներկայացված են նկար 14-ում:

Բանկային գործունեության լիցենզավորման յուրաքանչյուր փուլ ունի իր նպատակը, իսկ դրա անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Օրենքով սահմանված չեն բանկային գործունեության լիցենզավորման յուրաքանչյուր փուլի համար պահանջվող փաստաթղթերի կամ պայմանների սպառիչ ցանկերը: Օրենքը ՀՀ կենտրոնական բանկին իրավունք է վերապահում սահմանելու այլ փաստաթղթեր և պայմաններ (հոդված 25, ենթակետ «դ», հոդված 27, կետ 1, ենթակետ «գ», հոդված 29, կետ 1, ենթակետ «գ»):



Նկար 14. Բանկային գործունեության լիցենզավորման ընթացակարգի փուլերը

Ստորև ներկայացնենք լիցենզավորման յուրաքանչյուր փուլի նպատակը, բովանդակությունը, ինչպես նաև անհրաժեշտ պայմանները՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:

Լիցենզիա ստանալու նախնական հավանությունը

Լիցենզավորման եռափուլ ընթացակարգում առանձնապես կարևորվում է *լիցենզիա ստանալու նախնական հավանության* համար նախաձեռնող անձանց կողմից ՀՀ կենտրոնական բանկ միջնորդագրի և դրան կից ներկայացված փաստաթղթերի քննարկման փուլը:

Լիցենզիա ստանալու նախնական հավանության համար նախաձեռնող անձինք ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում ԿԲ կանոնակարգ 1-ի կանոն 3-ով սահմանված հետևյալ փաստաթղթերը.

- ✓ նախաձեռնող անձանց կամ օտարերկրյա բանկի միջնորդագիրը
- ✓ ստեղծվող բանկի կանոնադրության նախագիծը, իսկ օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար՝ օտարերկրյա բանկի մասնաճյուղի հիմնադիր բանկի փաստաթղթերը և մասնաճյուղի կանոնադրության նախագիծը
- ✓ ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը
- ✓ եթե նախաձեռնող անձինք կամ օտարերկրյա բանկը հանդես են գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև պատշաճ կարգով տրված լիազորագիրը
- ✓ բանկի մասնակիցների վերաբերյալ ԿԲ կանոնակարգով 1-ով նախատեսված փաստաթղթերը:
 1. ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է նախաձեռնող անձանց կամ օտարերկրյա բանկի միջնորդագրի, ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրի, բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի և նրա հետ փոխկապակցված անձանց ղեկավարների կենսագրական տվյալների և բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկանքի ձևերը:

Բանկերի հիմնադրման գործընթացը սովորաբար սկսվում է դեռ այն պահից, երբ մարդկանց և (կամ) կազմակերպությունների մի խումբ, գալիս է այն համոզման, որ ինչ-որ քաղաքում կամ տարածաշրջանում անբավարար են բանկային (հատկապես՝ փոխառությունների տրամադրման) ծառայությունները և այնտեղ նպատակահարմար է նոր բանկ հիմնել: Սակայն նոր բանկի բացումը ուղեկցվում է որոշակի ռիսկով, որը պայմանավորված է նոր կազմակերպության կայացման և գոյատևման անորոշությամբ: Դեռ ավելին, գոյություն ունեցող բանկերը նոր ստեղծվողների նկատմամբ ունեն վճռական առավելություններ՝ աշխատանքի մեծ փորձը, համբավը, հաճախ էլ տարածքային սփռվածությունը և այլն:

Նոր բանկի ստեղծման հարցը, ըստ էության, լուծվում է լիցենզիա ստանալու նախնական հավանության այս փուլում: Այս փուլի հիմնական նպատակն է մանրամասն քննարկել նախաձեռնող անձանց կողմից ներկայացված փաստաթղթերը, պարզել, թե ովքե՞ր են լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները, պարտատերերը, որքանո՞վ է իրատեսական գործունեության տնտեսական ծրագիրը: Լիցենզիա ստանալու նախնական հավանության վերաբերյալ որոշման հիման վրա նախաձեռնող անձինք հնարավորություն են ունենում շարունակել իրենց մտադրության իրագործումը, իսկ մերժում ստանալու դեպքում՝ զերծ մնալ հետագա կապիտալ և այլ ծախսեր կատարելուց:

Ելնելով օրենքով իրեն վերապահված իրավասությունից, ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է հետևյալ փաստաթղթերի ձևերը՝

- *նախաձեռնող անձանց կամ օտարերկրյա բանկի միջնորդագրի*
- *ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրի*
- *կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի և նրա հետ փոխկապակցված անձանց ղեկավարների ցուցակն ու յուրաքանչյուր ղեկավարի կենսագրական տվյալները*
- *բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկանքի ձևերը:*

Ուսումնական առաջադրանք.

Ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ լիցենզիա ստանալու նախնական հավանության համար պահանջվող փաստաթղթերի ձևերը:

Լիցենզիա ստանալու նախնական հավանության միջնորդագիրը իրենից ներկայացնում է նախաձեռնող անձանց կամ օտարերկրյա բանկի պաշտոնական դիմումը ՀՀ կենտրոնական բանկին, որով նրանք վերջինիս տեղյակ են պահում բանկ (օտարերկրյա բանկի մասնաճյուղ) ստեղծելու մասին և հավաստիացնում, որ մանրակրկիտ դիտարկել են միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը, տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական և գիտակցում, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Բանկի կանոնադրությունը: Բանկի հիմնադիր փաստաթուղթը նրա հիմնադիրների կողմից հաստատված կանոնադրությունն է, որի հիման վրա լիցենզավորող պետական մարմինը պատկերացում է կազմում, մասնավորապես, նոր ստեղծվող բանկի իրավական վիճակի, գտնվելու վայրի, մեկնարկային կապիտալի, կառավարման մարմինների կառուցվածքի և իրավասությունների, բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ցանկի, տարածքային ստորաբաժանումների ստեղծման և գործունեության դադարման վերաբերյալ: Բանկի կանոնադրության բովանդակությանը ներկայացվող պարտադիր պահանջները սահմանվում են բանկային օրենսդրությամբ: Բանկի կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարվում են, ինչպես նաև բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ: Եթե բանկը հիմնադրվում է բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ձևով և ունի մեկ հիմնադիր, ապա այն, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության, գործում է այդ հիմնադրի հաստատած կանոնադրության հիման վրա: Բանկի կանոնադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում և դրանք երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրանց գրանցման պահից:

ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է նաև օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրության բովանդակությունը:

ՀՀ կենտրոնական բանկը, լիցենզիա ստանալու նախնական հավանության միջնորդագիրը քննարկելիս ստուգում է, մասնավորապես, բանկի կանոնադրության համապատասխանությունը գործող օրենսդրությանը: Բանկի կանոնադրության անհամապատասխանությունն օրենքին կարող է հիմք հանդիսանալ նրա պետական գրանցումը մերժելու համար:


Ուսումնական առաջադրանքներ

1. Ներկայացնել բանկի կանոնադրության բովանդակությունը՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:
2. *Ներկայացնել օտարերկրյա բանկի կանոնադրության բովանդակությունը՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:*

Բանկի գործունեության տնտեսական ծրագիրը՝ կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելալետային տվյալներով հիմնավորված, ծրագրի ներկայացմանը հաջորդող առնվազն երեք լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, տնտեսական գործունեությունը հիմնավորող (նկարագրող) փաստաթուղթ է: Այն բանկային գործունեության լիցենզավորման կարևորագույն գործիք է, որի միջոցով ՀՀ կենտրոնական բանկը կարող է արգելել նոր ստեղծվող պատահական բանկերի մուտքը բանկային համակարգ: Նախաձեռնող անձինք լիցենզիա ստանալու նախնական հավանության համար այդ ծրագրով պետք է ՀՀ կենտրոնական բանկին կարողանան համոզել, որ տնտեսական ծրագիրն իրատեսական է, և գործելով ծրագրին համապատասխան, բանկն ի վիճակի կլինի իրականացնել բնականոն բանկային գործունեություն:

Ստեղծվող բանկի գործունեության տնտեսական ծրագրի բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի «գ» ենթակետով, իսկ ծրագրի ձևը՝ ԿԲ կանոնակարգ 1-ի կանոն 7-ով:

Բանկի գործունեության տնտեսական ծրագիրը բաղկացած է հինգ բաժիններից, որոնք ներկայացված են նկար 15-ում:



Նկար 15. Բանկի գործունեության տնտեսական ծրագիրը

Նախատեսված փաստաթղթերն ստանալուց հետո ՀՀ կենտրոնական բանկը նախնական հավանություն տալու համար քննում է դրանք համաձայն ԿԲ կանոնակարգ 1-ի և օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում որոշում կայացնում: Ընդ որում, որոշակի տեղեկություններ ստանալու համար, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, միջնորդագրի քննության մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել: Եթե բանկի գործունեության տնտեսական ծրագիրը համապատասխանում է անհրաժեշտ բոլոր պահանջներին, նոր բանկը կունենա բավարար կապիտալ և կառավարում, ապա, որպես կանոն, բանկային գործունեության լիցենզիա ստանալուն նախնական հավանություն կտրվի: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից բանկին նախնական հավանություն տալը ենթադրում է, որ նախնական հավանություն է տրվել նաև բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություններին:

Գործող օրենսդրությունը կանոնակարգում է նաև լիցենզիա ստանալու նախնական հավանության միջնորդության մերժումը: Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել միջնորդագիրը, եթե.

- ❖ ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունը կհակասի օրենքներին կամ այլ իրավական ակտերին
- ❖ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի հաստատած ձևին
- ❖ բանկը, գործելով ծրագրին համապատասխան, ի վիճակի չի լինի բնականոն բանային գործունեություն իրականացնել, քանի որ.
 - չունի պրոֆեսիոնալ գործադիր մարմին
 - առկա են ներդրումների ծագման ոչ օրինական լինելը հաստատող ապացույցներ
 - տնտեսական ծրագրում առկա է ներկայացված տվյալների անհամապատասխանություն
 - բանկի ղեկավարների թեկնածուների վերաբերյալ առկա են Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով նախատեսված՝ բանկի ղեկավարի թեկնածության մերժման համար նախատեսված հիմքերը
 - տնտեսական ծրագիրն անիրատեսական է:

Նախնական հավանություն տալու կամ նախնական հավանությունը մերժելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ենթակա չէ դատական կարգով բողոքարկման:

Ուսումնական առաջադրանք

Ներկայացնել բանկի գործունեության տնտեսական ծրագրի յուրաքանչյուր բաժնի բովանդակությունը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 1-ի:

Բանկերի զրանցումը

Բանկերը և դրանց տարածքային ստորաբաժանումները զրանցվում են ոչ թե ձեռնարկությունների զրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնի, այլ ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

- Բանկը ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու համար ներկայացնում է ԿԲ կանոնակարգ 1-ի կանոն 9-ով սահմանված հետևյալ փաստաթղթերը.
- ✓ գրանցման դիմում, բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը բանկի կանոնադրությունը հաստատելու և բանկի ղեկավարներ ընտրելու (նշանակելու) վերաբերյալ
 - ✓ ստեղծվող բանկի ղեկավարների կենսագրական տվյալները
 - ✓ բանկի կանոնադրությունը
 - ✓ բանկի ղեկավարների ցուցակը, բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) և գլխավոր հաշվապահի վավերացված ստորագրությունների նմուշները
 - ✓ տեղեկանք՝ բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ
 - ✓ բանկի գրանցման պետական տուրքի (որի գումարը կազմում է 40000 դրամ) անդորրագիրը
 - ✓ հիմնադիր-իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձի կառավարման լիազորված մարմնի որոշումը
 - ✓ քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից կամ օտարերկրյա ներդնողի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ
 - ✓ իրավաբանական անձ-մասնակցի հիմնադիր փաստաթղթերը
 - ✓ բանկի ֆիրմային անվանման գրանցման փաստաթղթի պատճենը:

Մինչև գրանցման մասին դիմումը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելը ենթադրվում է, որ բանկն արդեն ձևավորել է իր կառավարման մարմինները, հաստատել կանոնադրությունը, ընտրել կամ նշանակել ղեկավարներին: Եթե բանկն ստեղծվելու է բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձևով, ապա բանկի գրանցումից հետո նա կարող է թողարկել բաժնետոմսեր և դրանց տեղաբաշխման միջոցով համալրել կանոնադրական հիմնադրամը:

Բանկը պարտավոր է ՀՀ կենտրոնական բանկի նախնական հավանությունն ստանալու պահից մեկ տարվա ընթացքում (որի հաշվարկում չի ընդգրկվում կասեցման ժամկետը) լիցենզիա ստանալու համար դիմել ՀՀ կենտրոնական բանկ: Նշված ժամկետում Կենտրոնական բանկ չդիմելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկի նախնական հավանությունը և գրանցումը ուժը կորցնում են:

Բանկի գրանցման համար պահանջվող ամբողջական և բավարար փաստաթղթերն ստանալու պահից՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ գրանցվում է բանկը կամ մերժվում է դրա գրանցումը: Ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար գրանցման դիմումի քննության մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել անորոշ ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում բանկը համարվում է գրանցված:

- Ելնելով օրենքով իրեն վերապահված իրավասությունից, ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է հետևյալ փաստաթղթերի ձևերը՝*
- *գրանցման դիմումի*
 - *ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների կենսագրական տվյալների*
 - *բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանքի ձևերը:*

Կենտրոնական բանկը բանկի գրանցման մասին որոշում ընդունելուց հետո այդ մասին ծանուցում է ձեռնարկությունների գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար, իսկ հիմնադիրներին տալիս է իր կողմից սահմանված ձևով գրանցման վկայական:

Բանկը գրանցվում է միայն ՀՀ կենտրոնական բանկում բացված համապատասխան հաշվում բանկերի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափով միջոցների առկայության դեպքում: Կուտակման հաշվի միջոցները առեցված են համարվում և չեն կարող տիրապետվել, տնօրինվել և օգտագործվել մինչև ՀՀ կենտրոնական բանկում բանկի կանոնադրության գրանցումը կամ մերժումը: Հայաստանում բանկերի լիցենզավորման նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ որ եղել են դեպքեր, երբ գրանցված բանկերին չի տրվել բանկային գործունեության լիցենզիա՝ ստեղծվող բանկի մասնակիցների կողմից բանկի կանոնադրական հիմնադրամը չհամալրելու պատճառով:

Կենտրոնական բանկում գրանցվելու պահից բանկը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Դա բաժնետիրական ընկերության ձևով ստեղծվող բանկին հնարավորություն է տալիս թողարկել բաժնետոմսեր և դրանց տեղաբաշխման հաշվին համալրել հայտարարված կանոնադրական հիմնադրամը: Ընդ որում՝ դրանք կարող են ձեռք բերվել նաև մեկ անձի կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնության առկայության դեպքում:

Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել բանկի կամ օտարերկրյա [բանկի մասնաճյուղի](#) գրանցման միջնորդագիրը, եթե.

- ❖ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ

❖ ներկայացվել են ոչ ամբողջական կամ ոչ բավարար փաստաթղթեր:
Կենտրոնական բանկի խորհուրդը բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցման մասին որոշում ընդունելուց հետո, օրենքով սահմանված եռօրյա (աշխատանքային) ժամկետում, հիմնադիրներին տալիս է իր կողմից սահմանված ձևով գրանցման վկայական:

Ուսումնական առաջադրանք.

Ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ բանկերի գրանցման հետ կապված փաստաթղթերի ձևերը:

Բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը

Բանկը կարող է զբաղվել բանկային գործունեությամբ միայն օրենքով սահմանված կարգով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզիայի տրամադրման փուլի նպատակն է համոզվել նրանում, որ բանկը, լիցենզիա ստանալու պահից կարող է սկսել իր բնականոն բանկային գործունեությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է պարզել բանկի տարածքի և դրա տեխնիկական հագեցվածության, ղեկավարների մասնագիտական որակավորման համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին, կանոնադրական հիմնադրամի համալրումը, ներքին կազմակերպական կառուցվածքի և գործառնական համակարգի ձևավորումը և այլն:

Բանկային գործունեության լիցենզիայի տրամադրման ընթացակարգը կանոնակարգվում է Օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ ԿԲ կանոնակարգի 1-ի 4-րդ գլխի կանոններով:

- Կենտրոնական բանկը գրանցված բանկին լիցենզիա է տալիս, եթե բավարարվել են հետևյալ պայմանները.
- ✓ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափի լրիվ համալրումը
- ✓ բանկային գործունեության համար ձեռք բերված կամ վարձակալված տարածքը և դրա տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած պահանջներին և բանկի գործունեության տնտեսական ծրագրին
- ✓ ստեղծվել են բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը և գործառնական համակարգը
- ✓ բանկի ղեկավարներն ունեն ԿԲ կանոնակարգի 1-ով սահմանված կարգով ստացած որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականներ և (կամ) անցել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կամ վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովի նիստում հարցազրույց
- ✓ վճարվել է լիցենզիա ստանալու պետական տուրքը (որի գումարը կազմում է 3 մլն դրամ):

Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայումս սահմանված է հիսուն միլիոն դրամ: Սակայն այդ չափի համալրումը գործնականում չի կարող համարվել լիցենզիա ստանալու առաջին պայմանի բավարարում, քանի որ՝

առաջին, լիցենզիա ստանալու պահից բանկն, ըստ էության, դառնում է գործող բանկ, և նա պետք է ապահովի նաև ընդհանուր կապիտալի նվազագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը, որը տասնյակ անգամներով գերազանցում է սահմանված կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը

երկրորդ, իր գործունեության սկզբնական շրջանում բանկի ընդհանուր կապիտալը հիմնականում բաղկացած է կանոնադրական հիմնադրամից

երկրորդ, օրենքով ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել նոր ստեղծվող բանկերի ընդհանուր կապիտալի այլ նվազագույն չափ (ըստ տրամաբանության՝ ավելի մեծ, քան սահմանված է գործող բանկերի համար):

Համաձայն ԿԲ կանոնակարգ 1-ի, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրվող լիցենզիայի նախնական հավանության նախապատվություն կարող են ունենալ այն նախաձեռնող անձինք, որոնց կազմում ընդգրկված կլինեն միջազգային համբավ (ճանաչում), առաջնակարգ վարկանիշ ունեցող կազմակերպություններ, միջազգային ֆինանսական ինստիտուտներ, կամ որոնց ներկայացրած տնտեսական ծրագրով բանկի կանոնադրական հիմնադրամի չափը կկազմի առնվազն 5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Տվյալ դեպքում հաշվի են առնվում նոր հիմնադրվող բանկերի գործունեության սկզբնական շրջանում բանկային ռիսկերի (այդ թվում՝ շուկայական, տոկոսային, վարկային, կառավարման /մենեջմենթի/ և այլ) առավել մեծ ներգործության, կատարվող կապիտալ ներդրումների զգալի մեծության արդյունքում հավանական կորուստների և վնասների առաջացումը, ինչպես նաև դրա հետ կապված՝ հիմնական տնտեսական նորմատիվների հնարավոր խախտումների կանխարգելման անհրաժեշտությունը:

Բանկի, բանկի մասնաճյուղի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջները սահմանված են ԿԲ կանոնակարգի 1-ով:

Մինչև լիցենզիայի տրամադրման մասին որոշում կայացնելը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիազորված աշխատակիցները տեղում ստուգում են նոր ստեղծվող բանկի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած պահանջներին, ինչպես նաև բանկի բացման պահին նրա գործառնական համակարգը պատրաստի վիճակը:

Բանկը և նրա մասնաճյուղը պետք է ունենան

- ✓ Սեփականության իրավունքով իրեն (իսկ օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր բանկին) պատկանող կամ վարձակալությամբ վերցված առանձնացված տարածք՝ կողավող դռնով: Տարածքի վարձակալության պայմանագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է կնքված լինի գրանցման համար փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն 5 տարի ժամկետով:
- ✓ Կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար՝ դրամարկղային հանգույց՝ առանձնացված բանկի կառուցվածքային մյուս ստորաբաժանումներից:
- ✓ Պահպանիչ-հակահղդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգեր, որոնց էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից (մեկը կարող է լինել տեղային (լոկալ)):

Բանկի և նրա մասնաճյուղի տարածքի, ինչպես նաև դրամարկղային հանգույցի արտաքին և ներքին տարածքի շուրջօրյա պահպանությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայտնի է, որ ցանկացած բանկի հաջողությունը զգալի չափով պայմանավորված է նրա կառավարման մարմինների իրավասությունների հստակ սահմանմամբ և դրանց պատշաճ իրականացմամբ, *բանկի ղեկավարների* ունակությունների և հմտությունների մաքուրակով: Այդ պատճառով էլ բանկային գործունեության լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմաններից է բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների, բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

Նոր ստեղծվող բանկի բոլոր ղեկավարները, բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, մինչև բանկին լիցենզիա տալը, պետք է ունենան ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված որակավորման վկայական կամ դրանց մասնագիտական համապատասխանության վերաբերյալ պետք է առկա լինի ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացությունը:

Բանկի ղեկավարների թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման ու վկայականի տրամադրման կարգը սահմանված է ԿԲ կանոնակարգ 1-ով:

Բանկին լիցենզիա տալու դիմումը քննարկվում է ՀՀ կենտրոնական բանկում՝ նույն կարգով, որը վերջինիս կողմից սահմանված է լիցենզիա ստանալու նախնական հավանության միջնորդագրի քննարկման համար:

Օրենքի 18-րդ հոդվածով սահմանված են բանկի կանոնադրական հիմնադրամում *նշանակալից մասնակցություն* ձեռք բերելու սահմանափակումները: Ընդ որում՝

- այդ սահմանափակումները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման վրա, եթե դա կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում բանկի կանոնադրական հիմնադրամի 20 տոկոսը, իսկ գերազանցելու դեպքում Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ձեռք է բերվում տվյալ հոդվածով սահմանված կարգով:
- օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ սույն կետով սահմանված անձանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես տվյալ հոդվածով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Օֆշորային տարածքների ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Օրենքով բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման մերժման համար սահմանված են գրեթե նույն հիմքերը, որոնք սահմանված են բանկի ղեկավարների համար:

ԿԲ կանոնակարգ 1-ով սահմանված է նաև բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունենալուն նախնական համաձայնություն տալու կարգը: Դրանով, մասնավորապես, սահմանված են իրավաբանական և ֆիզիկական անձ-մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված մասնակիցների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի ցանկը և միջնորդագրի քննարկման ընթացակարգը:

ՀՀ կենտրոնական բանկը, առանձին նորմատիվ ակտով հաստատել է նաև «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու» ուղեցույցը:

Ուսումնական առաջադրանքներ

1. Ներկայացնել բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման սահմանափակումները՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:
2. *Ներկայացնել բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունենալուն նախնական համաձայնություն տալու կարգը:*
3. *Ներկայացնել «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու» ուղեցույցը:*

7.3. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Բանկերի կողմից իրականացվող գործառնությունների և մատուցվող ծառայությունների ծավալների ավելացման կարևոր ուղղություններից է նրանց տարածքային ընդարձակումը՝ մասնաճյուղեր հիմնելու միջոցով: Համաձայն գործող օրենսդրության, բանկերը կարող են իրենց գտնվելու վայրից դուրս, որպես տարածքային ստորաբաժանումներ, հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

2002 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործող 25 բանկեր ունեին 231 մասնաճյուղ: Մասնաճյուղերի ընդհանուր թվի մոտ 82 տոկոսը բաժին է ընկել նախկին պետական մասնագիտացված բանկերին: Մասնաճյուղերի քանակով բանկերի մեջ առաջին տեղը գրավում է «Հայխնայբանկը», որն ունի 100 մասնաճյուղ, որոնց մեծ մասն առաջացել է նախկին գործառնական գրասենյակների (կետերը) մասնաճյուղերի վերագրանցվելու հետևանքով: Ութ բանկ չունի ոչ մի մասնաճյուղ, իսկ հինգ բանկ ունի 1- 2 մասնաճյուղ: Ընդամենը մեկ բանկ (Անելիք բանկը) ունի այլ երկրի տարածքում գործող մասնաճյուղ:

ՀՀ տարածքում բանկերի մասնաճյուղերը հիմնադրվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 1-ով սահմանված կարգով: Այլ պետությունների տարածքներում բանկերի մասնաճյուղերը հիմնադրվում են տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան:

Սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի գրանցման համար սահմանվում են հետևյալ բացառությունները՝

ա) տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը կարող է սահմանվել առնվազն մեկ տարի ժամկետով

բ) մասնաճյուղի կառավարչի և գլխավոր հաշվապահի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությունն անցկացվում է միայն բանավոր (հարցազրույցի ձևով), որի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը տալիս է դրական կամ բացասական եզրակացություն: Այս կարգով որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումն իրականացնելու դեպքում տրվող որակավորման վկայականում նշվում է «սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի» արտահայտությունը:

ՀՀ տարածքում գործող բանկերի՝ ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղերը գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ ներկայացնելով բանկային օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, այդ թվում՝ բանկի մասնաճյուղի կանոնադրությունը և գործունեության տնտեսական ծրագիրը:

- | |
|--|
| <p>ՀՀ տարածքում գործող բանկերի՝ ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղերը գրանցման համար ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ բանկի միջնորդագիրը ✓ բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ կառավարման իրավասու այլ մարմնի որոշումը, կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ բացելու մասին ✓ մասնաճյուղի հաստատված կանոնադրությունը ✓ բանկի մասնաճյուղի առաջարկվող ղեկավարների կենսագրական տվյալները, ինչպես նաև մասնագիտական համապատասխանության և որակավորման վկայականի պատճենը ✓ ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 1-ով սահմանված ձևով՝ ստեղծվող մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը ✓ մասնաճյուղի տարածքի սեփականության իրավունքի վկայականի պատճենը կամ փաստաթղթերը՝ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն հինգ տարի ժամկետով կնքված, համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագիրը ✓ մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը: |
|--|

Բանկի գրանցման ընթացակարգի համեմատ ռեզիդենտ (տեղական) բանկի մասնաճյուղի գրանցումը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

Առաջին, մասնաճյուղ գրանցելու համար հիմնադիր բանկը, ի թիվս այլ փաստաթղթերի, պետք է ներկայացնի նաև մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը, այն դեպքում, երբ բանկի գործունեության տնտեսական ծրագիրը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվում լիցենզիա ստանալու նախնական հավանության փուլում: Այդ ծրագրի բովանդակությունը հիմնականում կրկնում է բանկի գործունեության տնտեսական ծրագիրը՝ հաշվի առնելով մասնաճյուղի իրավական վիճակի առանձնահատկությունները: Այսպես, քանի որ մասնաճյուղը չունի կանոնադրական հիմնադրամ և ընդհանուր կապիտալ, նրա տնտեսական ծրագրում խոսք չի կարող գնալ կապիտալացման ռազմավարության մասին:

Երկրորդ, մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրում նախատեսվող ֆինանսական գործառնություններն ու գործունեության հիմնական ուղղությունները, ակտիվների, պասիվների մոտավոր կազմը, կառուցվածքը, շահույթների և վնասների պլանային հաշվարկը տրվում է ոչ թե առաջին երեք, այլ երկու տարվա համար: Ծրագրում բերված բոլոր կանխատեսումները պետք է հիմնավորված լինեն կրկնրեստ հաշվարկներով, վերլուծություններով և բխեն բանկի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից:

Երրորդ, մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի գրանցումից հետո՝ մասնաճյուղի գրանցման մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետում:

Չորրորդ, ՀՀ կենտրոնական բանկը մասնաճյուղի գրանցումը կարող է մերժել ոչ միայն բանկի գրանցման մերժման, այլև մի շարք այլ հիմքերով, որոնք թվարկված են հետագայում:

ՀՀ տարածքում գործող բանկերը ՀՀ տարածքից դուրս մասնաճյուղեր ստեղծելիս ստանում են ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությունը՝ ներկայացնելով հիմնադիր բանկի միջնորդագիրը, մասնաճյուղի ստեղծման տնտեսական ծրագիրը, իսկ համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո հաշվառվում են ՀՀ կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ:

Օրենքով բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման մասին բանկի միջնորդագիրը մերժելու հիմքերը թվարկելիս ՀՀ կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում սահմանելու բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման դիմումը մերժելու նաև այլ հիմքեր:

Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել բանկի՝ ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղի գրանցման միջնորդագիրը, եթե.

- ա) ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ
- բ) փաստաթղթերը ներկայացվել են թերի
- գ) բանկի մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը չեն համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 1-ով սահմանված պահանջներին
- դ) բանկի մասնաճյուղի ղեկավարների որակավորումը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին
- ե) մասնաճյուղի գրանցման փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահին նախորդող մեկ տարվա ընթացքում բանկը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները
- զ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (CAMELS) ցածր է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած չափից
- է) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ մասնաճյուղի բացումը կհանգեցնի բանկի ֆինանսական վիճակի վատթարացման: ՀՀ ԿԲ կանոնակարգ 1-ի իմաստով՝ ֆինանսական վիճակի վատթարացում է համարվում բանկի կողմից տարածքային ստորաբաժանումների ստեղծման կամ ավտոմատ զանգվածային սարքերի համար այնպիսի ծախսերի նախատեսումը կամ կատարումը, որը կհանգեցնի կամ հանգեցրել է բանկի հիմնական տնտեսական նորմատիվի (նորմատիվների) խախտման:

Մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ, եթե մասնաճյուղն ապահովված է այնպիսի համակարգչային ծրագրերով, որոնք ապահովում են մասնաճյուղում կատարվող գործարքների ավտոմատ արտացոլումը բանկի հաշվեկշռում:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է համաձայնություն չտալ ՀՀ տարածքում գործող բանկի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծվող մասնաճյուղի ստեղծմանը՝ «ա», «բ», «ե», «զ» և «է» հիմքերով, ինչպես նաև այն դեպքում, եթե բանկը չի ապացուցում տվյալ երկրում մասնաճյուղ բացելու անհրաժեշտությունը և, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով, ծրագրում է շրջանառել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկի ներկայացուցչությունը չի կարող իրականացնել բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ, ներկայացուցչության գրանցման համար օրենսդրությամբ սահմանված են ավելի մեղմ պահանջներ, քան բանկի մասնաճյուղի համար: Այսպես, ՀՀ տարածքում գործող բանկերը ՀՀ տարածքում ներկայացուցչություններ գրանցելու համար ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում ոչ թե վերջինիս կողմից սահմանված ձևով գործունեության տնտեսական ծրագիր, այլ ներկայացուցչություն բացելու հիմնավորումը: Բացի դրանից, ՀՀ կենտրոնական բանկը չի սահմանում բանկի ներկայացուցչության տարածքին և տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող պահանջներ, նրա ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներ:

ՀՀ տարածքում օտարերկրյա բանկի ներկայացուցչություն գրանցելու համար, բացի վերը թվարկված փաստաթղթերից, ներկայացվում են նաև տեղեկանք օտարերկրյա բանկը լիցենզավորող մարմնից՝ տվյալ օտարերկրյա բանկի բանկային գործունեության լիցենզիայի առկայության մասին, օտարերկրյա բանկի կանոնադրության պատճենը:

ՀՀ տարածքում գործող բանկերը ՀՀ տարածքից դուրս ներկայացուցչություններ ստեղծելիս ստանում են Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ ներկայացնելով հիմնադիր բանկի միջնորդագիրը և ներկայացուցչություն բացելու հիմնավորումը:

ՀՀ տարածքում գործող բանկերը ՀՀ տարածքում ներկայացուցչություններ գրանցելու համար ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- ✓ հիմնադիր բանկի միջնորդագիրը
- ✓ ներկայացուցչություն բացելու հիմնավորումը
- ✓ բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ կառավարման իրավասու այլ մարմնի որոշումը կամ արձանագրությունից բաղված՝ ներկայացուցչություն բացելու մասին
- ✓ ներկայացուցչության կանոնադրությունը:

Համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո ՀՀ տարածքում գործող բանկերի՝ ՀՀ տարածքից դուրս ներկայացուցչությունները հաշվառվում են ՀՀ կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ: Անհրաժեշտության դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

Կենտրոնական բանկի նախագահը կարող է մերժել բանկի՝ ՀՀ տարածքում ստեղծվող ներկայացուցչության գրանցման միջնորդագիրը կամ համաձայնությունը չտալ ՀՀ տարածքում գործող բանկի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծվող ներկայացուցչության ստեղծմանը, բանկի մասնաճյուղի գրանցման միջնորդագիրը մերժելու նույն հիմքերով, բացառությամբ տարածքի և ղեկավարների որակավորման անհամապատասխանության հիմքերի:

Բանկը, ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ, կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամանակով:

Բանկի տարածքային ստորաբաժանման գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվություն ստանալու համար բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում վերջինիս կողմից (կանոնակարգ 1-ով) սահմանված փաստաթղթերը:

Բանկի տարածքային ստորաբաժանումների՝ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության դադարեցման դեպքում բանկը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- ✓ մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գրանցումից հանելու մասին միջնորդագիր
- ✓ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունը
- ✓ բանկի փոփոխված կանոնադրությունը՝ անհրաժեշտության դեպքում
- ✓ բանկի տարածքային ստորաբաժանման ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթ
- ✓ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման վկայականը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել մասնաճյուղի ժամանակավոր դադարեցումը, եթե.

- ա) ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ
- բ) փաստաթղթերը ներկայացվել են թերի
- գ) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանկի հաճախորդների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ
- դ) տվյալ տարածաշրջանում բացակայում է բանկային ծառայությունների մատուցումը որևէ բանկի կողմից (մասնաճյուղերի համար):

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 20-օրյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մշված ժամկետում կասեցնելու մասին բանկին չտեղեկացնելու դեպքում մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է ժամանակավորապես դադարեցված:

Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել կամ հետաձգել բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման գրանցումը, եթե.

- ա) ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ
- բ) փաստաթղթերը ներկայացվել են թերի
- գ) Կենտրոնական բանկի կարծիքով՝ բանկի հաճախորդների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ
- դ) տվյալ տարածաշրջանում բացակայում է բանկային ծառայությունների մատուցումը որևէ բանկի կողմից:

Այսպիսով, ՀՀ տարածքում գործող բանկերն իրենց գործունեության աշխարհագրությունն ընդլայնելու համար կարող են ստեղծել մասնաճյուղերի ցանց: Ընդ որում, օրենսդրությամբ սահմանված դեպքերում որոշ բանկեր կարող են զրկված լինել նման հնարավորությունից, իսկ արդեն գործող մասնաճյուղի գործունեության դադարեցման գրանցումը կարող է մերժվել կամ հետաձգվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

7.4. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ՀՀ տարածքում գործող բանկերը և օտարերկրյա բանկի մասնաճյուղերը պարտավոր են ՀՀ կենտրոնական բանկ գրանցման ներկայացնել հետևյալ փոփոխությունները՝

ա) բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի, բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրություններում կատարված փոփոխությունները, այդ թվում նաև՝ բանկի, դրա տարածքային ստորաբաժանման գործունեության վայրի փոփոխությունները

բ) ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները:

Կենտրոնական բանկը վերոհիշյալ փոփոխությունների գրանցման համար սահմանված փաստաթղթերն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, գրանցում է փոփոխությունները կամ մերժում գրանցումը: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում գրանցումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին բանկին չտեղեկացնելու դեպքում փոփոխությունները համարվում են գրանցված: Կենտրոնական բանկը մերժում է փոփոխությունների գրանցումը, եթե փոփոխությունները ծանուցվել են սահմանված կարգի և ձևի խախտումներով, և դրանք հակասում են օրենքներին ու այլ իրավական ակտերին:

Փոփոխություններն ուժի մեջ են ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից:

ԿԲ կանոնակարգ 1-ով սահմանված են բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի, բանկի տարածքային ստորաբաժանման (ստորաբաժանումների) կանոնադրություններում կատարված փոփոխությունների, բանկի ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) կազմում կատարված փոփոխությունների գրանցման համար ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և գրանցման ընթացակարգերը:

Ուսումնական առաջադրանքներ

1. Ներկայացնել բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի, բանկի տարածքային ստորաբաժանման կանոնադրություններում կատարված փոփոխությունների գրանցման ընթացակարգը:

2. Ներկայացնել բանկի ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման ընթացակարգը՝ համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգ 1-ի:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է բանկային գործունեության լիցենզավորման անհրաժեշտությունը:
2. Որո՞նք են բանկային գործունեության լիցենզավորման իրավական առանձնահատկությունները:
3. Որո՞նք են բանկային գործունեության լիցենզավորման երեք փուլերը:
4. Որո՞նք են լիցենզիայի նախնական հավանություն ստանալու անհրաժեշտ պայմանները:
5. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկի գործունեության տնտեսական ծրագիրը որպես լիցենզիայի նախնական հավանություն ստանալու հիմնական պայման:
6. Ի՞նչ դրույթներ է պարունակում բանկի կանոնադրությունը:
7. Որո՞նք են բանկի գրանցման համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերը:
8. Որո՞նք են լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները:
9. Որո՞նք են բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման սահմանափակումները:
10. Ինչպե՞ս կարելի է նկարագրել ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալու կարգը:
11. Ինչպե՞ս կարելի է նկարագրել բանկի մասնաճյուղի գրանցման ընթացակարգը:
12. Ինչպե՞ս կարելի է նկարագրել բանկի ներկայացուցչության գրանցման ընթացակարգը:
13. Ինչպե՞ս կարելի է նկարագրել փոփոխությունների գրանցման ընթացակարգը:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1 . Բանկի կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել.

- ա) բանկի գործադիր տնօրենի որոշմամբ
- բ) բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ
- գ) բանկի խորհրդում՝ ձայների 2/3-ով ընդունված որոշմամբ
- դ) ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկը պարտավոր է կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների մասին տեղեկացնել ՀՀ ԿԲ դրանք գրանցելու համար
- բ) բանկի կանոնադրության մեջ կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանք կատարելու պահից
- գ) բանկի խորհրդի կազմում կատարված փոփոխությունն ուժի մեջ է մտնում ՀՀ ԿԲ-ի կողմից գրանցելու պահից
- դ) բանկի մասնակիցները կարող են համալրել հայտարարված կանոնադրական կապիտալը հայտարարելու պահից:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ, եթե մասնաճյուղն ապահովված է այնպիսի համակարգչային ծրագրերով, որոնք ապահովում են մասնաճյուղում կատարվող գործարքների ավտոմատ արտացոլումը բանկի հաշվեկշռում
- բ) սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղ կարող է ստեղծվել նաև հյուրանոցներում
- գ) սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի կառավարչի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությունն անցկացվում է գրավոր և բանավոր
- դ) ներկայացուցչություն գրանցելիս բանկը պետք է ներկայացնի նաև դրա գործունեության տնտեսական ծրագիր:

Հ ա ր ց 4 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկն իր տարածքից դուրս գործունեություն կարող է իրականացնել նաև գործառնական գրասենյակի ձևով
- բ) այլ պետությունների տարածքներում բանկերի մասնաճյուղերը հիմնադրվում են ՀՀ օրենսդրությամբ համապատասխան
- գ) ՀՀ ԿԲ-ն չի կարող ներժել բանկի ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղի գրանցման միջնորդագիրը, եթե բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է ԿԲ-ի սահմանած չափից
- դ) բանկը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ բացատրել վարկային կազմակերպության գործունեության բնորոշումը, վարկային կազմակերպությունների տիպերը, ներկայացնել դրանց գրանցման և լիցենզավորման առանձնահատկությունները, նկարագրել վարկային կազմակերպությունների տարածքային ստորաբաժանումների հաշվառման ընթացակարգերը՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

Ուսուցիչությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- տալ վարկային կազմակերպության գործունեության բնորոշումը
- թվարկել և բնութագրել վարկային կազմակերպությունների տիպերը
- ներկայացնել վարկային կազմակերպության գործունեության լիցենզավորման ընթացակարգը
- նկարագրել վարկային կազմակերպության գործունեության օրինակելի կանոնակարգի բովանդակությունը
- ներկայացնել վարկային կազմակերպության գործունեության վայրի տեխնիկական հագեցվածության պահանջները
- ներկայացնել վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը
- ներկայացնել վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման կարգը
- ներկայացնել վարկային կազմակերպության մասնաճյուղի և ներկայացուցչության հաշվառման ընթացակարգը
- ներկայացնել փոփոխությունների գրանցման ընթացակարգը:

8.1. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒԸ: ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, ՀՀ տարածքում գործող բանկերը պարտավոր են մինչև 2005թ. հուլիսի 1-ը իրենց ընդհանուր կապիտալի մեծությունը հասցնել 5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ գումարի: Այդ պայմաններում առաջացել էր այն բանկերի հետագա գործունեության և իրավական վիճակի ճշգրտման անհրաժեշտություն, որոնք ի վիճակի չեն լինի ապահովելու ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, սակայն, պատրաստ են փոխել իրենց գործունեության տեսակը, գործել ցածր ռիսկային դաշտում՝ իրականացնելով բանկային դասական գորառնությունների մի մասը: Այդ խնդրի լուծմանն էր ուղղված 2002թ. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով օրենսդրական հիմք դրվեց ոչ միայն գործող բանկերի մի մասի գործունեության տեսակի փոփոխման, այլ նաև նոր վարկային և խնայողական միությունների, լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունների ստեղծման և գործունեության համար:

Օրենքով վարկային կազմակերպություններին թույլատրվում է ֆինանսական շուկայում իրականացնել այն ֆինանսական գործառնությունները, որոնք կապված չեն բանկային ավանդների ընդունման և բանկային հաշիվների բացման ու վարման հետ: Ենթադրվում է, որ վարկային կազմակերպության հիմնական առաքելությունը վարկեր տրամադրելը և վարկավորման հետ կապված այլ ծառայություններ մատուցելն է (երաշխիքներ, վարկարժանության մասին տեղեկատվություն և այլն):

2003 հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության լիցենզիա են ստացել 4 կազմակերպություն, իսկ մեկ բանկ («Գլաժոր» բանկը) փոխել է գործունեության տեսակը և գործում է որպես վարկային կազմակերպություն:

Վարկային կազմակերպությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենք) սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձն է, որն իրավունք ունի իրականացնել տվյալ օրենքով սահմանված գործունեության տեսակները:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի՝ *վարկային կազմակերպության գործունեություն* է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգրավելը և (կամ) նմանատիպ գործարքներ կնքելը և (կամ) վարկեր տրամադրելը կամ տվյալ օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարելը: Նմանատիպ գործարքների թվին են դասվում նաև ներդրումային (պարտատոմսեր) և վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը (բացառությամբ ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերի) կամ այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտաիրոջն ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ: Բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում այլ անձանց արգելվում է իրականացնել վերը նշված որևէ գործունեություն:

- Վերոհիշյալ սահմանումից, մասնավորապես, բխում է, որ.
 - ⇒ վարկային կազմակերպության գործունեություն է համարվում նաև փոխառություններ ներգրավելը, թեկուզև դրանք չստեղծաբաշխելու նպատակով
 - ⇒ վարկային կազմակերպության գործունեություն է համարվում նաև անձի սեփական միջոցների հաշվին փոխառություններ տրամադրելը

- ⇒ բանկերը կարող են իրականացնել վարկային կազմակերպությունների բոլոր գործառնությունները
- ⇒ ֆիզիկական անձը չի կարող ձեռնարկատիրական գործունեության նպատակներով տրամադրել փոխառություններ
- ⇒ ցանկացած իրավաբանական անձ չի կարող ձեռնարկատիրական գործունեության նպատակներով տրամադրել փոխառություններ՝ առանց համապատասխան լիցենզիայի:

Վարկային կազմակերպությունը կարող է ստեղծվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, բաժնետիրական ընկերության կամ առևտրային կամ ոչ առևտրային կոոպերատիվի կազմակերպչիրավական ձևերով: Խնայողական միությունները կարող են ստեղծվել բացառապես կոոպերատիվների ձևով (հոդված 3, կետ 4):

Այսպիսով, ի տարբերություն բանկերի, վարկային կազմակերպությունը կարող է ստեղծվել նաև ոչ առևտրային կոոպերատիվի կազմակերպչիրավական ձևով: Ընդ որում, նման ձևով ստեղծված վարկային կազմակերպության գործունեությունը նույնպես համարվում է ձեռնարկատիրական գործունեություն:

Օրենքը տալիս է վարկային կազմակերպությունների հետևյալ տիպերի (խմբերի) սահմանումները.

ա) *վարկային միություններ*, որոնք դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից և դրանք տրամադրում նրանց, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում դրամական միջոցներ են ներգրավում նաև այլ անձանցից կամ դրանք տրամադրում վերջիններիս

բ) *խնայողական միություններ*, որոնք դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից և դրանք տրամադրում են նրանց

Վերոհիշյալ սահմանումներից հետևում է, որ վարկային և խնայողական միությունների տարբերությունն այն է, որ վարկային միությունը, ի տարբերություն խնայողականի, կարող է ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ միջոցներ ներգրավել և վարկեր տրամադրել նաև այլ անձանց

գ) *ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպություններ*, որոնց հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության (լիզինգային) գործարքների կնքումն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի 6-րդ պարագրաֆով սահմանված կարգով և պայմաններով: Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը

դ) *դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող ֆակտորինգային կազմակերպություններ*, որոնց հիմնական գործունեությունը դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգ) գործարքների կնքումն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված կարգով և պայմաններով: Ֆակտորինգի պայմանագրով մի կողմը (ֆինանսական գործակալը՝ ֆակտորը) մյուս կողմին (հաճախորդին) հանձնում կամ պարտավորվում է հանձնել դրամական միջոցներ ի հաշիվ հաճախորդի (վարկատուի) երրորդ անձից (պարտապահից) ունեցած դրամական պահանջի, որը բխում է հաճախորդի կողմից երրորդ անձին ապրանքներ տրամադրելուց, նրա համար աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց, իսկ հաճախորդը ֆինանսական գործակալին զիջում է կամ պարտավորվում է զիջել այդ դրամական պահանջը:

ը) այլ վարկային կազմակերպություններ, որոնք որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ են ներգրավում և (կամ) նմանատիպ գործարքներ են կնքում և (կամ) վարկեր են տրամադրում կամ օրենքով սահմանված այլ ներդրումներ են կատարում: ՀՀ կենտրոնական բանկը, որպես այլ վարկային կազմակերպություններ, լիցենզիա է տրամադրում ունիվերսալ վարկային կազմակերպություններին:

ե) այլ վարկային կազմակերպություններ, որոնց հիմնական գործունեությունը Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գործունեությունները կամ դրանցից մեկն իրականացնելն է:

Կենտրոնական բանկը վարկային կազմակերպությունների գործունեության համար կարող է սահմանել որոշակի սահմանափակումներ՝ թույլատրելով կամ սահմանափակելով Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված գործառնությունների մի մասը: Ընդ որում, այդ սահմանափակումները կարող են սահմանվել վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման և չափերի, միջոցների տեղաբաշխման և չափերի, ինչպես նաև այն անձանց շրջանակի համար, որոնցից վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ ներգրավել և (կամ) որոնց շրջանակում վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ տեղաբաշխել: Նշված սահմանափակումները պետք է միևնույնը լինեն միևնույն տիպի (խմբի) վարկային կազմակերպությունների համար:


8.2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Վարկային կազմակերպության պետական գրանցումը և լիցենզավորումը կանոնակարգվում է Օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման համար գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության պահանջները, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռք բերումը» կանոնակարգ 13-ով և «Վարկային կազմակերպությունների գործունեության օրինակելի կանոնակարգով»:

Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը, որը հաստատում է նրա կառավարման բարձրագույն մարմինը և ներառում է վարկային կազմակերպության գործունեության տեսակը, ոլորտը, գործունեության կարգը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները, ընթացակարգերը և ՀՀ կենտրոնական բանկի սահմանած և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

- Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում՝
- ✓ գրանցման և լիցենզավորման դիմումը
 - ✓ վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 6 օրինակից
 - ✓ վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի որոշումը՝ վարկային կազմակերպության ղեկավարներ նշանակելու մասին
 - ✓ վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը՝ կազմված ՀՀ կենտրոնական բանկի սահմանած ձևով
 - ✓ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց՝ կենտրոնական բանկի սահմանած ձևով կազմված հայտարարությունը՝ Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության մասին
 - ✓ վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը
 - ✓ տարեկան պետական տուրքի վճարման մասին ամբողջագիրը (500 000 դրամ):

Ելնելով Օրենքով իրեն վերապահված իրավասությունից՝ ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է վարկային կազմակերպության գործունեության օրինակելի կանոնակարգ, որը բաղկացած է ութ գլուխներից (նկար16):



Նկար 16. Բանկի գործունեության տնտեսական ծրագիրը

Ուսումնական առաջադրանք

Ներկայացնել վարկային կազմակերպությունների գործունեության օրինակելի կանոնակարգի յուրաքանչյուր գլխի բովանդակությունը:

ՀՀ կենտրոնական բանկը վարկային կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի գործունեության վայրի տեխնիկական հագեցվածության պահանջները, ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը և վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռքբերման կարգերը սահմանել է ԿԲ կանոնակարգ 13-ով: Դրանք ամփոփ բերված են փոքր-ինչ ստորև:

ՀՀ կենտրոնական բանկը սահմանված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալու պահից մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը կամ մերժում է դրա

գրանցումն ու լիցենզավորումը: Վարկային կազմակերպությունը գրանցվում և լիցենզավորվում է, եթե պահպանվել են հետևյալ պահանջները (հոդված 5, կետ 2).

- ❖ ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը, որը վճարվում է ՀՀ կենտրոնական բանկում կամ ՀՀ տարածքում գործող այլ բանկում բացված կուտակային հաշվին
- ❖ վարկային կազմակերպության գործունեության վայրը համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին
- ❖ վարկային կազմակերպության ղեկավարները համապատասխանում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացվող որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին
- ❖ վարկային կազմակերպությունում նշանակված մասնակցություն ունեցող անձինք ստացել են ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությունը:

Գրանցման և լիցենզավորման մասին որոշման ընդունման պահից եռօրյա ժամկետում ՀՀ կենտրոնական բանկը վարկային կազմակերպությանը տալիս է գրանցման վկայական և լիցենզիա՝ այդ մասին ժամուցելով ՀՀ պետական ռեգիստրին՝ վարկային կազմակերպության գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար: Կենտրոնական բանկում գրանցվելու պահից վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և համարվում է լիցենզավորված:

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված գործառնություններն անկանխիկ իրականացնող վարկային կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի գործունեության վայրը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

Սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ վարձակալությամբ վերցված առանձնացված տարածք՝ կողպվող դռնով: Տարածքի վարձակալության պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է կնքված լինի գրանցման համար փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն հինգ տարի ժամկետով:

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված գործառնությունները կանխիկ իրականացնող վարկային կազմակերպությունների ու դրանց մասնաճյուղերի և (կամ) այն վարկային կազմակերպությունների և նրանց մասնաճյուղերի գործունեության վայրը, որոնք կանխիկ իրականացնում են թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, արժեթղթերի, փաստաթղթերի և այլ արժեքների ի պահ ընդունման գործառնություն, պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- ✓ սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ վարձակալությամբ վերցված առանձնացված տարածք՝ կողպվող դռնով: Տարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է կնքված լինի գրանցման համար փաստաթղթերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն հինգ տարի ժամկետով
- ✓ պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ)
- ✓ կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց՝ առանձնացված վարկային կազմակերպության կառուցվածքային մյուս ստորաբաժանումներից, որի մեջ մտնում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տարածքները
- ✓ գործառնական դրամարկղեր, հաճախորդներից ստացված դրամի և այլ արժեքների վերահաշվարկման, ինկասսատորներից կանխիկ դրամի ընդունման և նրանց կանխիկ դրամի հանձնման, վարկային կազմակերպության աշխատակցի հսկողության ներքո հաճախորդի կողմից ստացված գումարի վերահաշվարկման համար համապատասխան տարածքներ:

ՀՀ կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե.
ա) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ
բ) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին

գ) չեն պահպանվել Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պահանջները:
Գրանցվելու և լիցենզիա ստանալու դիմումը մեկամսյա ժամկետում պաշտոնապես չմերժվելու դեպքում վարկային կազմակերպությունը համարվում է գրանցված և լիցենզավորված:

Համաձայն օրենքի 9-րդ հոդվածի, *վարկային կազմակերպության ղեկավարներ* են համարվում վարկային կազմակերպության խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալը, վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը և վերստուգիչ հանձնաժողովի անդամները:

Վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը սնան է բանկերի ղեկավարների համար սահմանված կարգին:

Վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու մասնագիտական համապատասխանության վկայական տրվում է հետևյալ պաշտոններում որպես ղեկավար աշխատելու համար.

⇒ վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

- ⇒ վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ
- ⇒ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ
- ⇒ վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

Ընդ որում, բանկի գործադիր տնօրենի, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, գլխավոր հաշվապահի վկայական ունեցող անձինք կարող են աշխատել վարկային կազմակերպության համապատասխան ղեկավար պաշտոններում: Բացի այդ, բանկի գործադիր տնօրենի և ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի վկայական ունեցող անձինք կարող են աշխատել վարկային կազմակերպության վարչության նախագահի տեղակալ, վարչության անդամ, բանկի վերստուգիչ հանձնաժողովի նախագահի վկայական ունեցող անձինք կարող են աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ, բանկի գլխավոր հաշվապահի վկայական ունեցող անձինք կարող են աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալ:

Ուսումնական առաջադրանք

Չամենատել բանկի և վարկային կազմակերպության ղեկավարների սահմանումները և նրանց որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգերը:

Նշանակալից մասնակցություն: Օրենքով տրվում է նշանակալից մասնակցության այլ, ավելի նեղ սահմանում, քան տրված է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով: *Օրենքի և դրա հիման վրա ընդունված ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի իմաստով նշանակալից մասնակցություն է համարվում այն մասնակցությունը, որով վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը գերազանցում է կանոնադրական կապիտալի 10 տոկոսը:* Սակայն ինչպես բանկերի դեպքում, այստեղ նույնպես անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար իրավաբանական անձը կամ փոխկապակցված անձինք վարկային կազմակերպության միջնորդությամբ դիմում են ՀՀ կենտրոնական բանկ՝ ներկայացնելով ԿԲ կանոնակարգ 13-ի 46-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար ֆիզիկական անձը կամ փոխկապակցված անձինք վարկային կազմակերպության միջնորդությամբ դիմում են ՀՀ կենտրոնական բանկ՝ ներկայացնելով ԿԲ կանոնակարգ 13-ի 47-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

Կենտրոնական բանկը սահմանված բոլոր փաստաթղթերն ստանալու պահից մեկամսյա ժամկետում քննարկում է դրանք: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով: Կասեցնելուց հետո անձը պարտավոր է ներկայացնել Կենտրոնական բանկի կողմից պահանջվող փաստաթղթերը վերոհիշյալ ժամկետում: Սահմանված ժամկետում տվյալ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկը մերժում է միջնորդագիրը:

Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

Կենտրոնական բանկի խորհուրդը, սահմանված ժամկետում քննարկում է սահմանված փաստաթղթերը, համաձայնություն է տալիս նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն կամ մերժում է նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը՝ տասնօրյա ժամկետում ծանուցելով դիմողին, եթե առկա են Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը:

- Չամենատել Օրենքի 10-րդ հոդվածի՝ ՀՀ կենտրոնական բանկը մերժում է դիմումը՝ մերժման մասին որոշում կայացնելու պահից տասնօրյա ժամկետում ծանուցելով դիմողին, եթե՝
- ⇒ անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն
 - ⇒ անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ
 - ⇒ անձն օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
 - ⇒ անձը ճանաչվել է սնանկ և ունի չմարված (չներված) պարտավորություններ
 - ⇒ տվյալ գործարքն ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը
 - ⇒ փաստաթղթերը ներկայացվել են Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով, կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ, անարժանահավատ տեղեկություններ
 - ⇒ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրվելիք կամ մասնակցության օտարման դիմաց տրվող միջոցները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով ձեռք են բերվել հանցավոր կամ ոչ օրինական ճանապարհով:

Առանց ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնության՝ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

Ուսումնական առաջադրանքներ

1. Համեմատել բանկի և վարկային կազմակերպության գործունեության վայրի տեխնիկական հագեցվածության պահանջները:
2. *Համեմատել բանկի և վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության սահմանումները և նման մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:*

8.3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Վարկային կազմակերպությունը կարող է Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի Կանոնակարգ 13-ով սահմանված կարգով ՀՀ տարածքում կամ օտարերկրյա պետություններում բացել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք կարող են գործել ՀՀ կենտրոնական բանկում հաշվառման պահից: Օտարերկրյա պետություններում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում են տվյալ պետության օրենսդրությամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման կարգը, հաշվառման համար պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով (դրանք սահմանված են Կանոնակարգ 13-ով):

Համաձայն ԿԲ կանոնակարգ 13-ի 14-րդ կետի՝ ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- վարկային կազմակերպության հաշվառման դիմումը
- վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կամ կառավարման իրավասու այլ մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու մասին
- մասնաճյուղի կամ ներկայացուցչության հաստատված կանոնադրությունը (3 օրինակից):

Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի հաշվառվելուց հետո՝ մասնաճյուղի հաշվառման մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետում:

Նախատեսված փաստաթղթերն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ՀՀ կենտրոնական բանկը քննարկում է դրանք և որոշում կայացնում մասնաճյուղի հաշվառման մասին կամ մերժում է հաշվառումը, եթե առկա են Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերը և (կամ) ԿԲ կանոնակարգ 13-ով սահմանված գործունեության վայրի տեխնիկական հագեցվածության պահանջների անհամապատասխանության հիմքը: Ընդ որում՝ գործունեության վայրի տեխնիկական հագեցվածության պահանջների անհամապատասխանության հիմքը մերժման հիմք չէ այն վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի համար, որոնք «վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված գործառնություններն իրականացնում են անկանխիկ և թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, արժեթղթերի, փաստաթղթերի և այլ արժեքների ի պահ ընդունման գործառնությունը նույնպես կանխիկ չեն իրականացնում:

Վերը նշված կանոնակարգի 14-րդ կետով նախատեսված փաստաթղթերն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ՀՀ կենտրոնական բանկը քննարկում է դրանք և որոշում կայացնում ներկայացուցչության հաշվառման մասին կամ մերժում է հաշվառումը, եթե առկա են Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերը:

Դիմումի բավարարման դեպքում ՀՀ կենտրոնական բանկը հաշվառում է մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը և տալիս է հաշվառման վկայական, իսկ մերժելու դեպքում՝ մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է վարկային կազմակերպությանը:

Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի կամ ներկայացուցչության հաշվառման դիմումը, եթե.

- ա) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ
- բ) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին
- գ) դիմումի տրման պահին, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը:

Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը հաշվառումից հանվում է՝

- ա) վարկային կազմակերպության դիմումի հիման վրա՝ դիմումի տրման պահից մեկշաբաթյա ժամկետում.
- բ) վարկային կազմակերպության լուծարման դեպքում:

8.4. ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Վարկային կազմակերպությունների և դրանց տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխություններն ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցման պահից: Նշված փոփոխությունները գրանցելու համար վարկային կազմակերպություններն ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

⇒ կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ վարկային կազմակերպության կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված վարկային կազմակերպության կնիքով

⇒ վարկային կազմակերպության մասնակիցների ժողովի արձանագրությունը կամ իրավասու մարմնի որոշումը՝ վարկային կազմակերպության կամ վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանման (ստորաբաժանումների) կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ
 ⇒ վարկային կազմակերպության կամ վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանման փոփոխված կանոնադրությունը (երեք օրինակից):

Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում վարկային կազմակերպության փոփոխված կանոնադրության գրանցման համար վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ԿԲ կանոնակարգ 13-ի 53-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման հայտարարագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (բաց բաժնետիրական վարկային կազմակերպության համար):

Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպությունից կամ մասնակցություն ձեռք բերող անձից պահանջել կանոնադրական կապիտալում ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն: Այդ միջոցների ծագման, շրջանառության օրինականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, եթե տվյալ անձը հակառակը չի պայացուցում, ՀՀ կենտրոնական բանկն իրավասու է մերժել կանոնադրության գրանցումը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է վարկային կազմակերպության գործունեության իրավական բնորոշումը:
2. Որո՞նք են վարկային կազմակերպությունների տիպերը:
3. Ինչպիսի՞ն է վարկային կազմակերպության գործունեության լիցենզավորման ընթացակարգը:
4. Ինչպիսի՞ն է վարկային կազմակերպության գործունեության օրինակելի կանոնակարգի բովանդակությունը:
5. Որո՞նք են վարկային կազմակերպության գործունեության վայրի տեխնիկական հագեցվածության պահանջները:
6. Ովքե՞ր են համարվում վարկային կազմակերպության ղեկավարներ, և ինչպիսի՞ն է նրանց որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը:
7. Ո՞րն է համարվում նշանակալից մասնակցություն և ինչպիսի՞ն է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում այդպիսի մասնակցության ձեռքբերման կարգը:
8. Ինչպիսի՞ն է վարկային կազմակերպության մասնաճյուղերի հաշվառման ընթացակարգը:
9. Ինչպիսի՞ն է փոփոխությունների գրանցման ընթացակարգը:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) վարկային կազմակերպությունների գործունեությամբ կարող են զբաղվել նաև անհատ ձեռնարկատերերը
- բ) վարկային կազմակերպությունը կարող է իրականացնել [բանկային գործունեություն](#)
- գ) վարկային կազմակերպության գործունեություն է համարվում նաև որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգրավելը
- դ) վարկային կազմակերպության գործունեություն է համարվում միայն վարկեր տրամադրելը
- ե) բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Վարկային կազմակերպությունը կարող է ստեղծվել.

- ա) տնտեսական ընկերակցությունների ձևով
- բ) նաև բաց բաժնետիրական ընկերության ձևով
- գ) նաև ոչ առևտրային կոոպերատիվի ձևով
- դ) լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության ձևով
- ե) ճիշտ են բ) և գ) պնդումները:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն չեն կարող ձեռք բերել.

- ա) որևէ հանցագործություն կատարելու համար դատվածություն ունեցող անձինք
- բ) միայն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ծանաչված անձինք
- գ) նաև սնանկ ճանաչված, սակայն մարված (ներված) [պարտավորություններ](#) ունեցող անձինք
- դ) նաև այն անձինք, ովքեր վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրվելիք միջոցները ԿԲ-ի հիմնավորված կարծիքով ձեռք են բերվել հանցավոր կամ ոչ օրինական ճանապարհով:

Հ ա ր ց 4 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) վարկային կազմակերպությունը գրանցվում է ՀՀ պետական ռեգիստրի կողմից
- բ) կանոնադրական կապիտալը վճարելու համար վարկային կազմակերպությունը կարող է կուտակային հաշիվ բացել նաև ՀՀ տարածքում գործող որևէ բանկում
- գ) վարկային կազմակերպության գործունեության վայրը պետք է համապատասխանի ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին

- դ) վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք պետք է ստանան ԿԲ-ի նախնական համաձայնությունը
- ե) վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և համարվում է լիցենզավորված՝ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

Հ ա ր ց 5. Վ արկային կազմակերպության ղեկավարներ չեն համարվում.

- ա) վարկային կազմակերպության ներկայացուցչության ղեկավարը
- բ) վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք
- գ) վարկային կազմակերպության մասնաճյուղի կառավարիչը
- դ) վարկային կազմակերպության վարկային բաժնի պետը
- ե) վերոհիշյալ բոլոր անձինք:

Հ ա ր ց 6. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Կենտրոնական բանկը կարող է մերժել վարկային կազմակերպության մասնաճյուղի հաշվառման դիմումը, եթե

- ա) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ
- բ) ներկայացված փաստաթղթերը թերի են, անբողջական չեն կամ հակասում են ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին
- գ) դիմումի տրման պահին, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է ԿԲ-ի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը
- դ) վերոհիշյալ բոլոր պնդումներն էլ ճիշտ են:

ԳԼՈՒԽ 9. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ: ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Թեմայի նպատակն է՝ պարզաբանել բանկային գործունեության կարգավորման անհրաժեշտությունը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում օգտագործող և բանկերի գործունեության կարգավորմանն առնչվող հիմնական հասկացությունները, ՀՀ տարածքում բանկերի գործունեության կարգավորման իրավական հիմքերը, բանկերի ֆինանսական գործառնությունները, բանկերի ինվեստիցիոն (ներդրումային) գործունեությունը և դրա սահմանափակումները, բանկերի կողմից հաշիվների բացման և վարման կարգը, բանկի մասնակիցներին շահաբաժինների վճարման սահմանափակումները, ներկայացնել բանկերի համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը՝ կոնկրետ օրինակներով, նկարագրել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ բանկի գործունեության հեռանկարային զարգացման ծրագրի բովանդակությունը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- բացատրել բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության անհրաժեշտությունը և հիմնական նպատակը
 - տալ «փոխկապակցված անձանց», «բանկի հետ կապված անձանց», «ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեության» հասկացությունների սահմանումները
 - բացատրել բանկերի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները
 - բանկերի կողմից հաշիվների բացման և վարման իրավական հիմքերը
 - ներկայացնել բանկի մասնակիցներին շահաբաժինների վճարման սահմանափակումները
 - ներկայացնել բանկերի ինվեստիցիոն գործունեության սահմանափակումները
 - ներկայացնել բանկերի համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը՝ կոնկրետ օրինակներով
 - ներկայացնել բանկի հեռանկարային զարգացման ծրագրի կառուցվածքը:
- Թեման անցնելուց հետո ուսանողների համար պարզ կդառնան ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գործունեության կարգավորման բնագավառում ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմերը, բանկերի համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների չափերը, դրանց հաշվարկի մեջ մտնող տարրերի կազմը: Պայմանական թվերի հիման վրա նրանք կկարողանան հաշվարկել նորմատիվների փաստացի մեծությունները:

9.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բանկային գործունեությունը բավականաչափ ռիսկային է: Բանկերն իրենց գործունեության ընթացքում առնչվում են մի շարք ռիսկերի՝ վարկային, տոկոսային, իրացվելիության, անվճարունակության, շուկայական, արտարժույթային, գործառնական, սղաճի, երկրի և այլ ռիսկերի հետ: Քանի որ, ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենք), բանկային գործունեությանը (ավանդների ներգրավում և դրանց տեղաբաշխում) կարող են զբաղվել միայն բանկերը, ուստի վերջիններիս կրած վնասների պատճառով կարող են վտանգվել ոչ միայն մասնակիցների, այլ նաև ավանդատուների շահերը, տուժել բանկային համակարգի կայունությունը: Սրանով է հիմնականում պայմանավորված բանկային գործունեության իրավական կարգավորման և վերահսկողության անհրաժեշտությունը: Դրա գլխավոր նպատակը հանրապետության բանկային համակարգի իրացվելիության, վճարունակության, կայունության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումն է:

ՀՀ տարածքում բանկերի գործունեությունը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով (հոդված 2, կետ 2): Այլ օրենքները և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերը, ինչպես նաև դրանցով կարգավորվող հարաբերությունները թվարկված են սույն դասընթացի 1-ին թեմայում: ԿԲ կանոնակարգ 2-ը բանկերի գործունեության իրավական կարգավորման գծով ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նորմատիվ ակտերից մեկն է:

9.2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում օգտագործվող և բանկերի գործունեության կարգավորմանն առնչվող հիմնական հասկացություններն են՝

- «Փոխկապակցված անձինք» (հոդված 8)
- «Բաժանորդագրական գործունեություն» (հոդված 35)
- «Ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն» (հոդված 35)
- «Բանկի հետ կապված անձինք» (հոդված 39, կետ 2)


«Փոխկապակցված անձինք»: «Փոխկապակցված անձանց» հասկացությունը շատ կարևոր է որոշ բանկային ռիսկերի (առաջին հերթին մեկ փոխառուի գծով, բանկի հետ կապված մեկ անձի և բոլոր անձանց ռիսկի

առավելագույն չափի), բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության իրական գնահատման, հետևապես ռիսկերի դիվերսիֆիկացիայի աստիճանը որոշելու համար: Օրենսդիրը «փոխկապակցված անձանց» դիտում է որպես մեկ անձ:

Օրենքը սահմանում է այն դեպքերը, երբ փոխկապակցված են՝

- ⇒ երկու իրավաբանական անձինք
- ⇒ իրավաբանական և ֆիզիկական անձը
- ⇒ երկու ֆիզիկական անձինք:

Համաձայն օրենքի՝ հնարավոր են իավաբանական անձանց փոխկապակցվածության երեք դեպքեր, որոնք սխեմատիկորեն կարելի է ներկայացնել նկար 17-ով:



Նկար 17. Իրավաբանական անձանց փոխկապակցվածության դեպքերը

Առաջին դեպքում հաշվի է առնվում մեկ իրավաբանական անձի (ԻԱ 1) մասնակցությունը երկրորդի (ԻԱ 2) կանոնադրական կապիտալում կամ վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորությունը: Երկրորդ դեպքում փոխկապակցվածությունը պայմանավորված է երրորդ անձի՝ ընդհանուր մասնակցի (Մ) առկայությամբ, որը տնօրինում է երկու իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում որոշակի բաժնեմասի կամ ունի նրանց որոշումները կանխորոշելու հնարավորություն: Եվ, վերջապես, երրորդ դեպքում՝ փոխկապակցվածությունը որոշելիս հաշվի է առնվում երկու իրավաբանական անձանց ընդհանուր ղեկավարների (Ղ) և բանկի կառավարման մարմիններում նրանց ընտանիքի անդամների առկայությունը:

Ուսումնական առաջադրանք

Տալ փոխկապակցված անձանց սահմանումը՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին»

77 օրենքի:

«Ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն»: Համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի, բանկերը կարող են իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իրենց կամ հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսերը, պարտատոմսերը և ներդրումային այլ արժեթղթերը (բաժանորդագրական գործունեություն):

«Բանկի հետ կապված անձինք»: «Բանկի հետ կապված անձանց» հասկացությունը կարևոր է, այսպես կոչված, «ինսայդերական» ռիսկի գնահատման համար: Հայտնի է, որ նման անձինք ի պաշտոնե կամ բանկի կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության ուժով տիրապետում են տվյալ բանկի վերաբերյալ մարնամասն տեղեկատվության, բանկի ուժեղ և թույլ կողմերին: Գործնականում չի բացառվում բանկի հետ կապված անձանց կողմից բանկի անունից այնպիսի գործարքների կնքումը, որոնք բխում են նրանց անձնական շահերից, սակայն ամենեկին էլ ձեռնտու չեն բանկին:

Օրենքի և բանկերի գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով բանկի հետ կապված անձանց թվին են դասվում Օրենքի 39-րդ հոդվածում նշված անձինք (նկար 18):



Նկար 18. Բանկի հետ կապված անձինք


- ⇒ Բանկի հետ կապված անձանց սահմանումից, մասնավորապես, հետևում է, որ այդպիսիք են համարվում՝
- ⇒ ոչ թե բանկի բոլոր աշխատակիցները, այլ միայն ղեկավարները
- ⇒ ոչ թե բանկի բոլոր մասնակիցները, այլ բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք:

9.3. ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկերին թույլատրվող ֆինանսական գործառնությունները

Բանկերին և այլ վարկային կազմակերպություններին թույլատրվող ֆինանսական գործառնությունները սովորաբար սահմանվում են տվյալ երկրի օրենսդրությամբ: ՀՀ տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող են իրականացնել Օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված ֆինանսական գործառնությունները: Այդ գործառնությունների մի մասը զուտ բանկային գործառնություններ չեն (մասնավորապես հավատարմագրային, ֆակտորինգային, լիզինգային, ինվեստիցիոն, արտարժույթի առք ու վաճառքի և այլն):

ՀՀ տարածքում գործող բանկերի ֆինանսական գործառնությունները ներկայացված են ստորև բերված նկար 19-ում:



Նկար 19. ՀՀ առևտրային բանկերին թույլատրվող ֆինանսական գործառնությունները

Բանկը, լիցենզիա ստանալու պահից, բոլոր ֆինանսական գործառնությունները կարող է կատարել ինչպես հայկական դրամով, այնպես էլ արտարժույթով: Ուստի, ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի իմաստով համարվում են լիազորված բանկեր:

Բանկերը բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել նաև արժեթղթերով գործառնություններ. դրա համար հատուկ լիցենզիա չի պահանջվում:

Թեև ֆակտորինգային և լիզինգային գործառնությունները, համաձայն գորող օրենսդրության, համարվում են լիցենզավորման ենթակա գործունեություն, բանկերը նման գործառնությունները իրականացնում են նույնպես բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա՝ առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան կանոններով:

Օրենքը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին իրավունք է վերապահում սահմանելու օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից ՀՀ տարածքում ավանդներ ընդունելու համար լրացուցիչ պայմաններ (հոդված 14, կետ 3): Համաձայն ԿԲ Կանոնակարգ 1-ի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը ՀՀ տարածքում կարող են ավանդներ ընդունել միայն ՀՀ ոչ ռեզիդենտներից՝ բացառությամբ ՀՀ տարածքում գործող բանկերի: Նման սահմանափակումը, հեղինակի կարծիքով, կարելի է հիմնավորել հետևյալ հանգամանքներով.

Առաջին, օտարերկրյա բանկի մասնաճյուղերը չեն գտնվում կարգավորման այնպիսի խիստ դաշտում, ինչպիսին սահմանված է բանկերի համար: Բավական է նշել, որ դրանց համար սահմանված է ընդամենը մեկ հիմնական տնտեսական նորմատիվ՝ պարտադիր պահուստավորման նորմատիվը:

Երկրորդ, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ստեղծման միջոցով խրախուսվում է նրանց կողմից ոչ թե ՀՀ ռեզիդենտներից, այլ ոչ ռեզիդենտներից ավանդներ ներգրավելը և դրանք տեղաբաշխելը, այդ թվում՝ ՀՀ տարածքում:

Հարկ ենք համարում նշել, որ ներկայումս ՀՀ տարածքում չի գործում օտարերկրյա բանկի ոչ մի մասնաճյուղ:

Բանկերի ինվեստիցիոն գործունեության սահմանափակումները

Հայտնի է, որ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում բանկի կողմից ներդրումներ կատարելը բարձր ռիսկային գործունեություն է, քանի որ իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա մասնակիցների պահանջները բավարարվում են բոլոր պարտատերերի պահանջները բավարարվելուց հետո: Այդ պատճառով էլ օրենսդրությամբ սովորաբար նախատեսվում են բանկերի կողմից նման գործառնությունների իրականացման գծով որոշակի սահմանափակումներ:

Բանկերն ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեություն իրականացնում են համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի, ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեությունը կարգավորող այլ օրենքների և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի: Օրենքի 35-րդ հոդվածով, մասնավորապես, սահմանված են այն դեպքերը, երբ բանկը այլ անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն կարող է ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Բանկերին արգելվում է տեղաբաշխել որևէ անձի արժեթղթեր և միաժամանակ այդ անձին տվյալ արժեթղթերից բխող պարտավորությունները կատարելու համար վարկեր տրամադրել:

Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, բանկերին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում բանկի մասնակցությունը՝

- ա) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4, 99 տոկոս և ավելի մասնակցություն է
- բ) մեկ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը

գ) բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը:

Այսպիսով, անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս հաշվի է առնվում ոչ միայն այդ անձի կանոնադրական հիմնադրամի, այլ նաև տվյալ բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը:

Վերը նշված «ա» և «բ» ենթակետերով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում բացառապես Օրենքի 4-րդ գլխով նախատեսված գործունեություն կամ գործառնություններ իրականացնող անձանց, այդ թվում բանկերի կապիտալում բանկերի մասնակցության վրա: Բանկը Օրենքով սահմանված կարգով այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս տվյալ անձանց հաշվեկշիռները միավորում է իր հաշվեկշիռում Կենտրոնական բանկի սահմանած կարգով: Կենտրոնական բանկն իր սահմանած կարգով և պայմաններով վերահսկողություն է իրականացնում այն անձանց նկատմամբ, որոնց հաշվեկշիռները Օրենքով սահմանված կարգով բանկը միավորում է իր հաշվեկշիռում (համախմբված հաշվեկշիռ):

ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում բանկի մասնակցությունը մեկ այլ կամ միևնույն անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է 9 տոկոսը, 15 տոկոսը, 25 տոկոսը, 35 տոկոսը, 50 տոկոսը, 70 տոկոսը կամ կազմում է 100 տոկոս:

ԿԲ կանոնակարգ 2-ով սահմանված են այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն ՀՀ կենտրոնական բանկ՝ մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում 4.99 տոկոս և ավելի մասնակցություն կամ բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը գերազանցող մասնակցություն, կամ այլ անձանց կանոնադրական կապիտալներում բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը գերազանցող մասնակցություն ձեռք բերելու ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը ստանալու նպատակով, ինչպես նաև նախնական համաձայնություն տալու ընթացակարգը:

Ուսումնական առաջադրանք

Ներկայացնել բանկի կողմից այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելու համար ՀՀ կենտրոնական բանկի նախնական հավանություն տալու ընթացակարգը՝ համաձայն Օրենքի և ԿԲ կանոնակարգ 2-ի:

Շահաբաժինների բաշխման սահմանափակումները

Շահաբաժինների բաշխման սահմանափակումները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (ՀՀ ՔՕ), «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով:

Բաժնետիրական ընկերությունն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական կապիտալից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կպակասի դրա չափից (ՀՀ ՔՕ, հոդված 114, կետ 3):

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի՝

- ❖ Բանկերը կարող են շահաբաժիններ վճարել բացառապես տարեկան արդյունքներով:
- ❖ Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում դրա հաշվին շահաբաժիններ բաշխելու, մասնակցության հետ զննան, բաժնի առանձնացման ձևերով կամ այլ կերպ՝ արգելվում է: Տվյալ հոդվածի խախտմամբ շահաբաժիններ բաշխելու դեպքում Կենտրոնական բանկը բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ծանաչում:
- ❖ Կենտրոնական բանկը բանկին սահմանափակում կամ արգելում է մասնակիցներին շահաբաժիններ վճարել, եթե դրանք բաշխելու պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն: Բանկի բաժնետերերին շահաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

Հաշիվների բացումը և վարումը

Համաձայն ԿԲ կանոնակարգ 2-ի՝ բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը ՀՀ կենտրոնական բանկում բացում են հայկական դրամով թղթակցային հաշիվ: Նրանք կարող են հայկական դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվներ բացել ՀՀ տարածքում և արտասահմանում գործող բանկերում: Հաշվի բացման մասին հաշվետեր բանկը պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին:

ԿԲ կանոնակարգ 8-ով բանկերի կողմից հաճախորդների անունից հաշիվների բացման վերաբերյալ սահմանված են հետևյալ կանոնները.

❖ ՀՀ ռեզիդենտ բանկերը կարող են իրենց կողմից սահմանված կարգով ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների սպասարկման նպատակով ցանկացած արժույթով (ինչպես հայկական դրամով, այնպես էլ արտարժույթով) նրանց կամ նրանց կողմից նշանակված անձանց անունով բացել ու վարել ՀՀ օրենսդրությամբ չարգելված և միջազգային բանկային պրակտիկայում ընդունված հաշիվներ առանց սահմանափակումների (բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի հիման վրա սահմանված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերի):

❖ ՀՀ տարածքում գործող օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը կարող են ՀՀ ոչ ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների սպասարկման նպատակով, ցանկացած արժույթով, նրանց անունով բացել և վարել ՀՀ օրենսդրությամբ չարգելված և միջազգային բանկային պրակտիկայում ընդունված հաշիվներ (բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի հիման վրա սահմանված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերի):

❖ ՀՀ տարածքում գործող օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը կարող են ՀՀ ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների սպասարկման նպատակով, ցանկացած արժույթով, նրանց անունով բացել և վարել ՀՀ օրենսդրությամբ չարգելված և միջազգային բանկային պրակտիկայում ընդունված բանկային հաշիվներ (բացառությամբ ավանդային հաշիվների և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի հիման վրա սահմանված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերի):

Ավտոմատիզացիայի միջոցով իրականացվող գործառնական և դուրսգրումը

Ներկայումս գործում են ՀՀ կենտրոնական բանկի և Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված հետևյալ կարգերը.

1) «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման»

2) «ՀՀ տարածքում բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգերը:

Այս կարգերի մասին ընթերցողին մանրամասն կպատմենք դրանց նվիրված գլուխ 16-ում:

9. 4. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաչափերը

Բանկերի գործունեության կարգավորման բնագավառում ՀՀ կենտրոնական բանկի կարևորագույն գործիքներից է հիմնական տնտեսական նորմատիվների սահմանումը: ՀՀ կենտրոնական բանկը ԿԲ կանոնակարգ 2-ով ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերի համար սահմանել է հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվները (աղյուսակ 4):

Աղյուսակ 4 Բանկերի համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները

Նորմատիվի անվանումը	Մեծությունը
Կանոնադրական կապիտալի նվազագույն չափը, մլն դրամ	50
Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, ԱՄՆ դոլարին համարժեք գումար	01.07.2003թ.-ից՝ 2000000 01.07.2005թ.-ից՝ 5000000
Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվները, %	
ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված <u>ակտիվ</u> ների գումարների միջև	12
նվազագույն հարաբերակցությունը (Ն ¹ ՝ նորմատիվ)	8
հիմնական կապիտալի և ռիսկով կշռված <u>ակտիվ</u> ների գումարների միջև	
նվազագույն հարաբերակցությունը (Ն ² ՝ նորմատիվ)	
Բանկի իրացվելիության նորմատիվները, %	
բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև	20
նվազագույն հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն) (Ն ² ՝ նորմատիվ)	
բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև	80
նվազագույն հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն) (Ն ² ՝ նորմատիվ)	
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն ³ ՝ նորմատիվ), %	20
Բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափը, %	
բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (Ն ⁴ ՝ նորմատիվ)	50
բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն ⁴ ՝ նորմատիվ)	5
Արտարժույթի տնօրինման նորմատիվը, %	
արտարժույթի համախառն դիրքը չի կարող գերազանցել բանկի ընդհանուր կապիտալի	25

II խմբի մեջ մտնող արտարժույթների գծով բաց արտարժույթային դիրքը չի կարող գերազանցել ընդհանուր կապիտալի	5
ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը, %	6

Հիմնական տնտեսական նորմատիվները կոչված են սահմանափակելու բանկային ռիսկերը: Այսպես, կանոնադրական հիմնադրամի, ընդհանուր կապիտալի նվազագույն չափերի, կապիտալի համարժեքության նորմատիվները սահմանափակում են բանկի անվճարունակության ռիսկը, իրացվելիության նորմատիվները՝ իրացվելիության ռիսկը, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը՝ վարկային ռիսկը, արտարժույթի տնօրինման նորմատիվը՝ արտարժույթային ռիսկը, բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափը՝ ինսայդերական ռիսկը:

Կանոնակարգում «ընդհանուր կապիտալի» հասկացությանը զուգահեռ օգտագործվում է «սեփական կապիտալ» հասկացությունը՝ կապված այն բանի հետ, որ «Շահութահարկի մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներում օգտագործվում է «սեփական կապիտալ» հասկացությունը:

ՀՀ կենտրոնական բանկը ներկայումս չի սահմանել բանկի պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափը, իսկ բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի մեջ առանձին սահմանված է բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը:

Օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի համար սահմանված է միայն ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափի նորմատիվը:

Օրենքով ՀՀ կենտրոնական բանկին իրավասություն է վերապահված սահմանել նաև վեց ամիս ժամկետով հատուկ տնտեսական նորմատիվներ: Ներկայումս նման նորմատիվներ սահմանված չեն:

Հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և պետք է նույնը լինեն ՀՀ տարածքում գործող միևնույն տեսակի լիցենզիա ունեցող բոլոր բանկերի համար, բացառությամբ նոր ստեղծվող բանկերի համար սահմանվող ընդհանուր կապիտալի հիմնական տնտեսական նորմատիվի և օրենքով նախատեսված այլ դեպքերի: Այսպես, համաձայն օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ կետի՝ Կենտրոնական բանկը կարող է առանձին բանկի համար սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան սահմանված են այլ բանկերի համար, եթե բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի սահմանած ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից, կամ տվյալ բանկի ֆինանսական ցուցանիշները վատթարացել են, կամ բանկը գործունեություն է ծավալում բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտներում:

Կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը խստացնելու դեպքում հիմնական տնտեսական նորմատիվներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից վեց ամիս հետո, եթե Օրենքն այլ բան չի սահմանում: Այսպես՝

❖ Կենտրոնական բանկը բանկերի կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը վերանայելիս սահմանում է նաև այն ժամկետը, որի ընթացքում բանկերը պարտավոր են լրացնել կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն վերանայված չափերը, ընդ որում՝ տվյալ ժամկետը չի կարող երկու տարուց պակաս լինել (հոդված 46, կետ 2):

❖ Կենտրոնական բանկի կողմից նոր ստեղծվող բանկերի համար սահմանվող ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվն ուժի մեջ է մտնում ընդունման պահից (հոդված 46, կետ 3):

❖ Պարտադիր պահուստների նվազագույն չափը խստացնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, եթե տվյալ որոշմամբ ավելի ուշ ժամկետ սահմանված չէ (հոդված 51):

Կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը մեղմացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահից:

Բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, ինչպես նաև S^1 , S^2 , S^3 , S^4 հիմնական տնտեսական նորմատիվները հաշվարկվում են ամսական, պարտադիր պահուստավորման նորմատիվը 14-օրյա, իսկ արտարժույթի տնօրինման նորմատիվը՝ օրական կտրվածքով:

Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրումը և ընդհանուր կապիտալի հաշվարկը

Օրենքի 17-րդ հոդվածով բանկի կանոնադրական հիմնադրամի վերաբերյալ սահմանված են հետևյալ կանոնները.

Բանկի կանոնադրական հիմնադրամը հայտարարվում է այն հիմնադրելիս և ամրագրվում է նրա կանոնադրությամբ (հայտարարված կանոնադրական հիմնադրամ): Փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը ձևավորվում է բանկի մասնակիցների ներդրումներից: Փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը հավասար է՝

ա) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկի կամ կոոպերատիվ բանկի մասնակիցների բաժնեմասերի դիմաց ներդրված գումարին

բ) բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի իրացումից ստացված գումարին:


Բանկերի կանոնադրական հիմնադրամը համալրվում է փողով (ինչպես ՀՀ արժույթով, այնպես էլ Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթի տեսակներով): ՀՀ կենտրոնական բանկը ԿԲ կանոնակարգ 1-ով սահմանել է, որ բանկերի կանոնադրական հիմնադրամը կարող է համալրվել ինչպես ՀՀ արժույթով, այնպես էլ արտարժույթի առաջին խմբի մեջ մտնող արժույթներով:

Բաժնետոմսի հավելավճարները ներդրողների կողմից բանկի թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման գնի և դրանց [անվանական](#) արժեքի միջև եղած դրական տարբերություններն են:

Պետք է նշել, որ բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի սահմանման պայմաններում կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափի նորմատիվը էական դեր չի խաղում, քանի որ առաջինը հանդիսանում է վերջինի բաղադրիչներից մեկը: Կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը ծառայում է նաև որպես բանկի նկատմամբ նշանակվող տուգանքի առավելագույն չափի հաշվարկման հիմք:

- Կարևոր է հիշել նաև հետևյալը՝
- ⇒ օրենսդրությամբ չի արգելվում բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամի չափի փոքրացումը
- ⇒ բանկը պարտավոր է հայտարարված կանոնադրական հիմնադրամն ամբողջությամբ համալրել մեկ տարվա ընթացքում
- ⇒ բանկի մասնակիցները կարող են հայտարարված կանոնադրական հիմնադրամը համալրել միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից այն (բանկի կանոնադրության համապատասխան փոփոխությունը) գրանցելու պահից:

Ինչպես հայտնի է, ցանկացած կազմակերպության, այդ թվում նաև բանկի ընդհանուր կապիտալը կարել է հաշվարկել հաշվապահական հաշվառման հիմնական հավասարման հիման վրա՝ որպես կազմակերպության ընդհանուր ակտիվների և ընդհանուր պարտավորությունների տարբերություն: Բանկի ընդհանուր կապիտալի կազմը ներկայացված է նկար 20-ում:



Նկար 20. Բանկի ընդհանուր կապիտալի կազմը

Բանկի վճարունակության մակարդակի (անվճարունակության ռիսկի) գնահատման տեսանկյունից առավել կարևորվում է հիմնական կապիտալի բաղադրամասը, քանի որ վերջինս ձևավորվում է բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակիցների փաստացի ներդրումներից և շահույթի հաշվին ձևավորվող գլխավոր պահուստից ու այլ պահուստներից:

Ընդհանուր կապիտալի այդ բաղադրամասի կարևորությունը ամրագրվում է նաև օրենքներով: Այսպես, «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով բանկն անվճարունակ է ճանաչվում նաև այն դեպքում, երբ նա սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը և ավելին, իսկ համաձայն բանկային օրենսդրության՝ կապիտալի համարժեքության նորմատիվ է համարվում նաև հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին (Σ_1 նորմատիվ):

Ինչպես երևում է աղյուսակ 9.1-ից, մի շարք հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկին մասնակցում է բանկի ընդհանուր կապիտալը, որը հիմնավորվում է բանկի վճարունակության գնահատման, հնարավոր կորուստների կլանման գործում այդ ցուցանիշի խաղացած կարևոր դերով: Ընդ որում, հիմնական տնտեսական նորմատիվները հաշվարկելիս բանկի ընդհանուր կապիտալը վերցվում է հավասար ոչ թե որպես ընդհանուր ակտիվների և պարտավորությունների տարբերությանը, այլ որպես ԿԲ կանոնակարգ 2-ով նախատեսված նվազեցումները կատարելուց հետո մնացած հիմնական կապիտալի և լրացուցիչ կապիտալի գումար: Ընդ որում, լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի (ԿԲ կանոնակարգի 1-ով կատարվող նվազեցումները հաշվի առած) առավելագույնը 50%-ի չափով: Դրանից հետևում է, որ լրացուցիչ կապիտալը չի գերազանցել ընդհանուր կապիտալի 1/3-ը (հիմնական կապիտալ (2X) + լրացուցիչ կապիտալ (X) = Ընդհանուր կապիտալ (3X), որտեղից կարելի է ստանալ լրացուցիչ կապիտալի առավելագույն չափը՝ $X/3X = 1/3$):

Հիմնական կապիտալի մեծությունը պակասեցվում է.

ա) բանկի կողմից տրված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների գումարի չափով

բ) բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի, փայամասնակցության կամ մասնակցության գումարի չափով

գ) ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի չափով (բացառությամբ՝ բանկի գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերի և դրանց օգտագործման իրավունքների)

դ) այլ բանկերի կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարի չափով (բացառությամբ՝ մինչև 1998 թվականի հոկտեմբերի 21-ը կատարված ներդրումների)

ե) բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի չափով, բանկի սեփականությունը հանդիսանալու փաստը հաստատող համապատասխան փաստաթղթի տրման օրվանից վեց ամիս հետո

զ) բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով:

Յեղիմակի կարծիքով, վերը նշված նվազեցումներից «դ»-ն ուղղված է բանկային համակարգում հնարավոր «ֆինանսական բուրգերի» առաջացմանը կանխելուն, իսկ «ե» և «զ»-ն՝ բանկի ակտիվների ապագույթականացմանը:

Բանկի լրացուցիչ կապիտալի տարր են համարվում նաև երկարաժամկետ ստորադաս փոխառությունները՝ այն բանկերի համար, որոնց կանոնադրական կապիտալը գերազանցում է 2.000.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ մեծությունը: Այս փոխառությունները՝ սկսած դրանց մարման ժամկետի սկզբին նախորդող 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 1-ից, լրացուցիչ կապիտալի հաշվարկից հանվում են դրանց սկզբնական ընդհանուր գումարի 20%-ի չափով: Այսպես, ութ տարի ժամկետով և 100 մլն դրամ գումարով ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները դրանց մարման նախավերջին օրը լրացուցիչ կապիտալին կմասնակցեն 20 մլն դրամի չափով:

Փոխառությունները՝ որպես այդպիսիք, ճանաչելու համար դրանք պետք է միաժամանակ բավարարեն մի շարք պայմանների, որոնք սահմանված են ԿԲ կանոնակարգ 2-ով:

Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը հաշվարկվում է տվյալ տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հայկական դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեքով: Բանկը պարտավոր է սահմանված ժամանակացույցի տարեսկզբներին, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով ապահովել ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը:

Ուսումնական առաջադրանքներ

1. *Տալ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների բնորոշումը:*

2. *Պայմանական բանկի օրինակով հաշվարկել ընդհանուր կապիտալի նվազագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվի փաստացի մեծությունը:*

Կապիտալի համարժեքության նորմատիվների հաշվարկման կարգը

Կապիտալի համարժեքության նորմատիվների հաշվարկման կարգը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը սահմանված են ԿԲ կանոնակարգ 2-ի 28-32 կետերով: Համաձայն դրանց, մասնավորապես՝

⇒ նորմատիվների հաշվարկման բանաձևերում ընդհանուր կապիտալը, հիմնական կապիտալը և ռիսկով կշռված ակտիվները մասնակցում են միջին օրական մեծություններով

⇒ կոտորակների հայտարարներում ընդգրկվում են նաև հետհաշվեկշռային պարտավորությունները

⇒ ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են ակտիվային հաշիվների մնացորդները՝ տվյալ կանոնակարգով սահմանված կշիռներով

⇒ ռիսկով կշռված ակտիվների հանրագումարը պակասեցվում է ծախսերի հաշվին ձևավորվող վարկերի, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստների գումարի չափով: (Տվյալ դեպքում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ակտիվների որոշակի տեսակների գծով ստեղծվում են դրանց հնարավոր կորուստների պահուստներ և դրանց չափով ապահովագրված է ռիսկը,

⇒ ռիսկով կշռված ակտիվների հանրագումարը բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվների հաշվարկման ժամանակ նվազեցվում է հիմնական կապիտալից ԿԲ կանոնակարգ 2-ով նախատեսված պակասեցվող գումարի չափով:

Կապիտալի համարժեքության նորմատիվների պահպանումը դյուրին կլինի պահպանել այն բանկերին, որոնք իրականացնում են ոչ բարձր ռիսկային գործունեություն: Այս նորմատիվները սահմանափակում են նաև վարկային ռիսկը: Այսպես, եթե բանկը ոսկու ստանդարտացված ձուլակտորների գրավի դիմաց տրամադրել է վարկ այլ բանկում իր թղթակցային հաշվի մնացորդից, ապա այդ գործարքի արդյունքում կբարելավվեն կապիտալի համարժեքության նորմատիվների մեծությունները, քանի որ այդպիսի վարկի ռիսկը 0 է, իսկ այլ բանկում թղթակցային հաշվի մնացորդինը՝ 20%:

Ուսումնական առաջադրանքներ

1. Որո՞նք են γ_1 և γ_2 նորմատիվների հաշվարկում ընդգրկվող ակտիվային հաշիվների մնացորդների կշիռներն ըստ ռիսկերի (համաձայն կանոնակարգի):

2. *Պայմանական թվերի հիման վրա հաշվարկել կապիտալի համարժեքության հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները:*

Իրացվելիության նորմատիվների հաշվարկման կարգը

Ն¹ և Ն² նորմատիվների հաշվարկման բանաձևերում բարձր իրացվելի [ակտիվների](#), ընդհանուր ակտիվների և ցպահանջ պարտավորությունների ցուցանիշները մասնակցում են ամսվա ընթացքում միջին օրական մեծություններով:

Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվում են ստորև թվարկված այն ակտիվները (առանց այդ ակտիվների գծով հաշվեգրված տոկոսների), որոնց վրա չկա դրանց տնօրինումը սահմանափակող որևէ պայման:

❖ կանխիկ դրամական միջոցներ, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (բացառությամբ՝ ճանապարհին գտնվողների)՝ ՎԻՉԱ, ԹՈՄԱՍ ՔՈՒԿ/ՄԱՍՏԵՐ ՔԱՐՏ, ԱՍԵՐԻՔԱՆ ԷՔՍՊՐԵՍ, ՍԻՏԻՔՈՐՊ և Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև այլ վճարային փաստաթղթեր

❖ Կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների և պարտադիր պահուստների միջոցներ և ներդրված ավանդներ

❖ ոսկու ստանդարտացված ձուլակտորներ

❖ ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, բացառությամբ՝ գրավարկված, ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի և ռեպո համաձայնագրերի

❖ ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվներ, ընդ որում, վերջիններիս մեծությունը նվազեցվում է նույն բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան «նոտրո» թղթակցային հաշիվ մնացորդն է: Ընդ որում, բանկի բարձր իրացվելի ակտիվները հաշվարկելիս ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվներից առաջին հերթին նվազեցվում է նույն բանկի նկատմամբ «լրոր» թղթակցային հաշիվ մնացորդը, որից հետո՝ մնացած պարտավորությունները: Մնացած պարտավորությունները չեն նվազեցվում թղթակցային հաշիվից, եթե թղթակցի արտասահմանյան բանկի ռեյտինգն ըստ Ստանդարտ և Փուրզ (փակագծերում՝ Մուդիզ) ռեյտինգավորող կազմակերպության Բ- (Բ3) -ից բարձր է: Բանկի ընդհանուր ակտիվների հաշվարկում ընդգրկվում է ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի «Ակտիվներ» կարգի բոլոր հաշիվների հանրագումարը:

Ընդհանուր ակտիվների հանրագումարը պակասեցվում է՝

• ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերով, տվյալ բանկում պահվող (ներառյալ՝ բանկի դեպոզիտային հաշիվներում հաշվառվող) ոսկու ստանդարտացված ձուլակտորներով, դրամով, ՍԴԴ գանձուղի մեջ մտնող արժույթներով, ինչպես նաև այլ արտարժույթային միջոցներով ապահովված ակտիվների, եթե վերջիններս հանդիսանում են միևնույն արտարժույթով արտահայտված ակտիվների ապահովում, և ռեպո համաձայնագրերի գումարների չափով

• այն վարկերի գումարի չափով, որոնք տրամադրվել են օտարերկրյա բանկերից և ֆինանսական կազմակերպություններից նպատակային կարգով ներգրաված միջոցների հաշվին, որոնց վերադարձն ապահովված է ՀՀ կառավարության կամ Կենտրոնական բանկի երաշխավորությամբ, դրանց տրամադրման ժամկետները չեն գերազանցում ներգրավման ժամկետները, և բանկը դրանց գծով չի ստանձնել լրացուցիչ ռիսկեր

• թղթակցային «նոտրո» հաշիվներից նվազեցվող գումարների չափով: Ցպահանջ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները), այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունները:

Ուսումնական առաջադրանք

Պայմանական բանկի օրինակով հաշվարկել իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվի փաստացի մեծությունը:

Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկման կարգը

Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկման կարգը սահմանված է ԿԲ կանոնակարգ 2-ի 37-38 կետերով: Համաձայն դրանց՝

• Նորմատիվի հաշվարկի ժամանակ հաշվի է առնվում փոխառուների փոխկապակցվածության հանգամանքը. փոխկապակցված փոխառուները դիտվում են որպես մեկ փոխառու: Այսպես, եթե բանկը ամուսիններից մեկին տրամադրել է անշարժ գույքի գրավով ապահովված վարկ իր ընդհանուր կապիտալի 15%-ի չափով, ապա նա մյուսի պարտավորությունների համար երաշխիք կարող է տրամադրել առավելագույնը իր ընդհանուր կապիտալի 5%-ի չափով (20% - 15%):

• Համարիչում հաշվի են առնում փոխառուին տրամադրված վարկերը, բոլոր այլ փոխառությունները, ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները, տրամադրված նախավճարները, կանխավճարները, բանկի կողմից մատուցված ծառայության կամ ապրանքի դիմաց տարածանկետ վճարումները, [ակրեդիտիվների](#), փոխառուի կամ նրա հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում ներդրումները, ինչպես նաև բանկի նկատմամբ ցանկացած հիմքով ծագած այլ դեբիտորական պարտավորությունները, նրա պարտավորությունների դիմաց տրված երաշխիքները և երաշխավորությունները (բացառությամբ՝ բանկի թղթակցային հաշիվների):

• Համարիչում ընդգրկվում են նաև այլ բանկերի կողմից տվյալ բանկի դրամական միջոցների հաշվին և դրանցով ապահովված միևնույն անձանց տրամադրված փոխառությունները և (կամ) երաշխիքները, եթե այդ փոխառության վերադարձելիության ռիսկը ստանձնել է տվյալ բանկը:

• Վարկերը և այլ պարտավորությունները (այդ թվում՝ երաշխիքները և երաշխավորությունները) ռիսկի հաշվարկում ընդգրկվում են բանկի ռիսկով կշռված ակտիվների աղյուսակով սահմանված կշիռներով: Սա, մասնավորապես, նշանակում է, որ բանկը կարող է մեկ անձին տրամադրել իր ընդհանուր կապիտալի 20%-ից

ավելի չափով վարկ (օրինակ՝ ոսկու ստանդարտացված ձուլակտորների գրավով ապահովված)՝ չխախտելով նորմատիվի սահմանված առավելագույն չափը:

- Փոխառության տրման պահին նորմատիվը հաշվարկվում է նաև տվյալ օրվա ընդհանուր կապիտալի նկատմամբ:

Բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկման կարգը

Բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկման կարգը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը սահմանված են ԿԲ կանոնակարգ 2-ի 39-41 կետերով: Նորմատիվի հաշվարկման կարգը նման է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկման կարգին, մի տարբերությամբ, որ նորմատիվի հաշվարկման բանաձևի համարիչում բանկի հետ կապված անձի հետ այլ անձանց փոխկապակցվածության հանգամանքը հաշվի է առնվում միայն ակտիվային գործառնությունների մի մասի դեպքում, որն ըստ հեղինակի, Օրենքի բացթողումներից է:

Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկման կարգը

Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկման կարգը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը սահմանված են ԿԲ կանոնակարգ 2-ի 47-49 կետերով:

Արտարժույթային դիրքը բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև եղած տարբերությունն է՝ հաշվի առած հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների գծով պահանջները և պարտավորությունները (սվոփ, ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն) համապատասխան արտարժույթներով:

Արտարժույթային փակ դիրքը՝ բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև եղած քանակական հավասարությունն է, իսկ բաց դիրքը՝ քանակական անհավասարությունը: Բաց դիրքն, իր հերթին, լինում է երկար և կարճ: Արտարժույթային երկար դիրքի դեպքում արտարժույթով բանկի ակտիվային հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով պարտավորությունների հաշիվների մնացորդներին, իսկ կարճ դիրքի դեպքում՝ արտարժույթով բանկի պարտավորությունների հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդներին:

Արտարժույթային ռիսկն առաջանում է բաց դիրքի դեպքում: Այսպես, եթե բանկն ունի 2 մլն ԱՄՆ դոլար գումարով ակտիվներ և 1 մլն ԱՄՆ դոլար գումարով պարտավորություններ, ապա 33 դրամի՝ 3 դրամի չափով արժեքկման դեպքում բանկը կստանա $(2 - 1) \times 3 = 3$ մլն դրամի չափով եկամուտ:

Չուտ արտարժույթային դիրք՝ հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի հանրագումար՝ հաշվի առնելով տվյալ դիրքի մշանը (կարճ կամ երկար): Սա մշանակում է, որ միևնույն խմբում մեկ արտարժույթի երկար դիրքը կարող է չեզոքացնել մեկ այլ արտարժույթի կարճ դիրքը: Օրինակ, եթե բանկն ունի ԱՄՆ դոլարի գծով երկար դիրք՝ 700 մլն, իսկ եվրոյի գծով կարճ դիրք՝ 300 մլն դրամի չափով, ապա զուտ արտարժույթային դիրքը կկազմի՝ $700 + (-300) = 400$ մլն դրամ:

Համախառն արտարժույթային դիրք՝ հաշվարկվում է որպես արտարժույթների տարբեր խմբերի դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար: Սա մշանակում է, որ տարբեր խմբերում մեկ արտարժույթի երկար դիրքը չի կարող է չեզոքացնել մեկ այլ արտարժույթի կարճ դիրքը:

Արտարժույթային դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով, իսկ նորմատիվը սահմանվում է երկու խմբով՝

Առաջին խումբ. ՍԴԴ-ի զամբյուղի մեջ մտնող արտարժույթների, ինչպես նաև շվեյցարական ֆրանկի, կանադական դոլարի, շվեդական կրոնի, դանիական կրոնի, ավստրալիական դոլարի համար:

Երկրորդ խումբ. Այլ արտարժույթների համար:

Արտարժույթային բաց դիրքը հաշվարկվում է յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում 33 դրամով: Յուրաքանչյուր խմբի ներսում հաշվարկվում է զուտ արտարժույթային դիրք, իսկ երկու խմբերի համար միասին հաշվարկվում է համախառն արտարժույթային դիրք, որն իրենից ներկայացնում է առաջին և երկրորդ խմբերի արտարժույթային դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Ուսումնական առաջադրանք

Տալ արտարժույթային դիրքի և դրա տեսակների հաշվարկման կարգը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 2-ի:

Պարտադիր պահուստների նվազագույն չափի հաշվարկման կարգը

33 կենտրոնական բանկում պահուստավորման են ենթակա բանկի կողմից դրամով և արտարժույթով ներգրավված միջոցները: Սկսած 1999թ ապրիլի 9-ից, ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է միայն դրամով: Արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետ կապված ռիսկը կրում է բանկն ինքը:

Այս նորմը, մի կողմից Կենտրոնական բանկի համար լծակ է դրամական գանգվածը կառավարելու և հայկական դրամի նկատմամբ պահանջարկը մեծացնելու նպատակով, մյուս կողմից՝ անմիջականորեն ազդում է բանկերի արտարժույթային դիրքի վրա և ստիպում է նրանց վարել հավասարակշռված արտարժույթային ռիսկի կառավարման քաղաքականություն:

Պահուստավորման ենթակա գումարի մեծության կարգավորումը կատարվում է յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ: Կարգավորումը կատարվում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի պահուստավորված և պահուստավորման ենթակա (հաշվարկային) միջոցների միջին օրական գումարների համեմատման միջոցով (և ոչ թե յուրաքանչյուր օրվա գումարների համեմատման միջոցով, - ըստ Ս. Ն.):

Ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա միջոցների չափի հաշվարկի հաշվետու երկշաբաթյա ժամանակահատվածն ընդգրկում է հինգշաբթիից չորեքշաբթի ընկած 14 օրերը, իսկ փաստացի պահուստավորված միջոցների հաշվետու երկշաբաթյա ժամանակահատվածը՝ առաջին հինգշաբթիին հաջորդող ուրբաթից հինգշաբթի ընկած 14 օրերը: Ընդ որում, փաստացի պահուստավորման վերջին հինգշաբթի օրը, Կենտրոնական բանկից և 33 տարածքում գործող բանկերից ներգրավված լոմբարդային, համակարգային, միջբան-

կային վարկերի, միմյանցից ներգրաված այլ փոխառությունների և միջոցների (ներառյալ ռեպո համաձայնագրերով) հաշվին չեն կարող համալրվել հաշվետու ժամանակաշրջանի փաստացի պահուստավորված միջոցները:

- Պարտադիր պահուստավորման ենթակա չեն՝
- ⇒ Կենտրոնական բանկից ներգրաված լոնբարդային, համակարգային վարկերը:
- ⇒ ՀՀ տարածքում գործող բանկերի միջև թղթակցային հաշիվները, միմյանցից ներգրաված այլ միջոցները: Դրանով, մասնավորապես, խրախուսվում է միջբանկային շուկայի զարգացումը և բացառվում է միևնույն ներգրավված միջոցների դիմաց կրկնակի պահուստավորումը:
- ⇒ Բանկի ստորադաս փոխառությունները:

⇒ Կենտրոնական բանկում բացված կուտակման հաշվում հաշվառվող կանոնադրական կապիտալի համալրման նպատակով ներգրավված միջոցները:

Բանկերի պարտադիր պահուստավորված միջոցների, ինչպես նաև կանոնադրական կապիտալի համալրման նպատակով կենտրոնական բանկում բացված կուտակման հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվում և վճարվում են տոկոսներ՝ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, պայմաններով ու չափով:

Բանկի կողմից հայկական դրանով և արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց փաստացի պահուստավորված միջոցների հաշվառումը տարվում է բանկերի՝ կենտրոնական բանկում ունեցած դրանով թղթակցային (պարտադիր պահուստների) հաշվով: Բանկերն ինքնուրույն են տնօրինում, տիրապետում և օգտագործում պարտադիր պահուստների միջոցները:


ՀՀ տարածքում գործող բանկերի՝ այլ պետությունների տարածքում տեղաբաշխված և գործող մասնաճյուղերն ինքնուրույն են կատարում իրենց կողմից ներգրավված միջոցների դեպոնացումը տվյալ պետության կենտրոնական բանկում, վերջինիս կողմից սահմանված նորմատիվների սահմաններում և ժամկետներում:

Ուսումնական առաջադրանք

Տալ պարտադիր պահուստների նվազագույն չափի նորմատիվի հաշվարկման կարգը:

9.5. ԲԱՆԿԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀՀ կենտրոնական բանկը, ելնելով օրենքով իրեն վերապահված իրավասությունից, սահմանել է ՀՀ տարածքում գործող բանկերի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը, որը պատկերված է նկար 21-ում:



Նկար 21. Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի կառուցվածքը

Ուսումնական առաջադրանք

Սանրամասն նկարագրել բանկի հեռանկարային զարգացման ծրագրի բովանդակությունը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչո՞վ է պայմանավորված բանկային գործունեության կարգավորման անհրաժեշտությունը:
2. Ինչո՞վ է կարգավորվում բանկերի գործունեությունը:
3. Ովքե՞ր են համարվում փոխկապակցված անձինք:
4. Ովքե՞ր են համարվում բանկի հետ կապված անձինք:
5. Ի՞նչ ֆինանսական գործառնություններ կարող են իրականացնել բանկերը:
6. Որո՞նք են համարվում ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեություն:
7. Որո՞նք են ինվեստիցիոն գործունեության սահմանափակումները:
8. Ինչպե՞ս է իրականացվում բանկի կողմից այլ անձի (անձանց) կանոնադրական հիմնադրամում ներդրումներ կատարելիս Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալը:
9. Ինչպե՞ս են բացվում և վարվում բանկերի թղթակցային հաշիվները:
10. Որո՞նք են բանկի մասնակիցներին շահաբաժիններ վճարելու սահմանափակումները:
11. Որո՞նք են Կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց մեծությունները:
12. Ինչպե՞ս է հաշվարկվում հիմնական տնտեսական նորմատիվներից յուրաքանչյուրը:
13. Ինչպե՞ս կարելի է պատկերել բանկի հեռանկարային զարգացման ծրագրի կառուցվածքը՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. ՀՀ տարածքում գործող բանկերը ոչ ռեզիդենտ հաճախորդների սպասարկման նպատակով կարող են բացել և վարել.

- ա) միայն արտարժույթով հաշիվներ
- բ) ցանկացած արժույթով հաշիվներ
- գ) հայկական դրամով հաշիվներ՝ ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ
- դ) չեն կարող բացել և վարել հաշիվներ:

Հ ա ր ց 2. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը ԿԲ-ում բացում են հայկական դրամով թղթակցային հաշիվ
- բ) այլ բանկերում թղթակցային հաշիվ բացելիս սպասարկող բանկը պարտավոր է 5 բանկային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել ՀՀ ԿԲ-ին
- գ) բանկը օտարերկրյա բանկում կարող է թղթակցային հաշիվ բացել ՀՀ ԿԲ-ի թույլտվությամբ
- դ) վերոհիշյալ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 3. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Բանկի հետ կապված անձինք չեն համարվում՝

- ա) բանկի ղեկավարները
- բ) բանկի կապիտալում 10%-ից ավելի մասնակցությամբ անձինք
- գ) բանկի հետ փոխկապակցված անձինք
- դ) բանկի ղեկավարների հետ փոխկապակցված անձինք
- ե) վերոհիշյալ պատասխաններից ոչ մեկն էլ ճիշտ չէ:

Հ ա ր ց 4. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկը կարող է իր բաժնի պետին տրամադրել վարկ ավելի ցածր տոկոսադրույքով, քան այլ անձանց
- բ) բանկը կարող է իր բաժնի պետից ներգրավել ավանդ՝ ավելի բարձր տոկոսադրույքով, քան այլ անձանցից
- գ) ՀՀ կենտրոնական բանկն առանձին բանկի համար կարող է սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվ, քան այլ բանկերի համար
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 5. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Փոխկապակցված անձինք չեն համարվում.

- ա) ՍՊԸ-ն և նրա վարչության նախագահը
- բ) երկու պետական ձեռնարկություններ
- գ) ամուսինները
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 6. Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, հիմնական տնտեսական նորմատիվ է համարվում.

- ա) բանկի հիմնական կապիտալի նվազագույն մեծությունը
- բ) բանկի լրացուցիչ կապիտալի առավելագույն մասնակցությունը ընդհանուր կապիտալի հաշվարկում.
- գ) բանկի պարտատերերի զծով ռիսկի առավելագույն չափը.
- դ) բանկի ինվեստիցիոն գործունեության սահմանափակումները:

Հ ա ր ց 7 . Բանկի լրացուցիչ կապիտալի տարր են հանդիսանում մեկ 500 մլն դրամ գումարի չափով և 8 տարի մարման ժամկետով ստորադաս փոխառությունները: Փոխառությունների մարման ժամկետից 2 տարի առաջ դրանք լրացուցիչ կապիտալի հաշվարկում կընդգրկվեն.

- ա) 500 մլն դրամի չափով
- բ) 200 մլն դրամի չափով
- գ) 300 մլն դրամի չափով
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ր ց 8 . Բանկն ունի ռիսկով կշռված [ակտիվներ](#) 180 մլն դրամի չափով և ծախսերի հաշվին ձևավորվող ակտիվների հնարավոր կորուստների պահուստաֆոնդ՝ 80 մլն դրամի չափով: Բանկի հիմնական կապիտալի նվազագույն մեծությունը պետք է կազմի.

- ա) 8 մլն դրամ.,
- բ) 11 մլն դրամ.,
- գ) 12 մլն դրամ.,
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ր ց 9 . Բանկը այլ բանկում իր թղթակցային հաշվից տրամադրել է վարկ՝ ոսկու ստանդարտացված ձուլակտորների գրավի դիմաց: Այդ գործարքի հետևանքով՝

- ա) բանկի ռիսկով կշռված ակտիվների ընդհանուր գումարը կմնա մույնը
- բ) կփոքրանա բանկի ռիսկով կշռված ակտիվների ընդհանուր գումարը
- գ) կմեծանան իրացվելիության նորմատիվների փաստացի մեծությունները
- դ) կմեծանա բանկի ռիսկով կշռված ակտիվների ընդհանուր գումարը
- ե) բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 10 . Բանկի ընդհանուր կապիտալը կազմում է 1 մլրդ դրամ: Բանկի կարող է իր բաժնի պետի կնոջն անշարժ գույքի գրավի դիմաց վարկ տրամադրել առավելագույնը՝

- ա) 200 մլն դրամի չափով
- բ) 100 մլն դրամի չափով
- գ) 50 մլն դրամի չափով
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

ՎՈՒԽ 10. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել ՀՀ տարածքում վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման իրավական հիմքերը, պարզաբանել «վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում օգտագործող և վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորմանն առնչվող հիմնական հասկացությունները, վարկային կազմակերպությունների ֆինանսական գործառնությունները, ամփոփ ներկայացնել վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի տրամադրման կարգը, վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- ներկայացնել վարկային կազմակերպությունների իրավական կարգավորումը
- տալ «ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության տրամադրում», «սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում», «փոխկապակցված անձինք», «կապված անձինք», հասկացությունների սահմանումները
- բացատրել վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները՝ համաձայն Օրենքի
- տալ բանկերին և վարկային կազմակերպություններին թույլատրվող ֆինանսական գործառնությունների համեմատական բնութագիրը
- ներկայացնել վարկային կազմակերպությունների առանձին խմբերին (տիպերին) թույլատրվող ֆինանսական գործառնությունները՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 14-ի
- ներկայացնել վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը
- ներկայացնել վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը՝ կոնկրետ օրինակներով:

10.1. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով (հոդված 2, կետ 1):

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է, մասնավորապես, «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը, «Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը», «Վարկային կազմակերպությունների գործունեության օրինակելի կանոնակարգը», ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնք տարածվում են բանկերի և վարկային կազմակերպությունների վրա: Վերջիններս թվարկված են թեմա 1-ում:

10.2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենք) օգտագործվող և վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորմանն առնչվող հիմնական հասկացություններն են՝

- «Ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության տրամադրում»
- «Սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում»
- ❖ «Փոխկապակցված անձինք» (հոդված 11, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)
- ❖ «Կապված անձինք» (հոդված 11, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 39, կետ 2):

Ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության տրամադրում
 Այն գործարքի կնքումն ու կատարումը, որով պարտապանը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է և տվյալ գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար (հոդված 8, կետ 2):

Սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում
 Այն գործարքի կնքումն ու կատարումը, որով պարտապանը տվյալ գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես սպառողական նպատակներով, որոնք կապված չեն իր ձեռնարկատիրական գործունեության հետ (հոդված 8, կետ 2):

Օրենքի և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի իմաստով անձինք համարվում են փոխկապակցված կամ կապված անձինք, եթե նրանց կապակցվածությունը և (կամ) հարաբերությունները համապատասխանում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 39-րդ հոդվածների դրույթներին: Այդ դրույթների մասին արդեն խոսել ենք դասընթացի մախորդ թեմայում:


10.3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն Օրենքի 8-րդ հոդվածի՝ վարկային կազմակերպությունը տվյալ Օրենքով սահմանված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը, որոնք ներկայացված են ստորև բերված նկար 22-ում:

- ❖ Եթե համեմատենք բանկերին և վարկային կազմակերպություններին թույլատրվող ֆինանսական գործառնությունները, ապա կարելի է առանձնացնել հետևյալ տարբերությունները՝
- ❖ Բանկերին թույլատրվող ֆինանսական գործառնությունների շրջանակն ավելի լայն է, քան վարկային կազմակերպություններինը: Բանկերը բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել վարկային կազմակերպություններին թույլատրվող ֆինանսական գործառնությունները:
- ❖ ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը կարող են իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր ֆինանսական գործառնությունները, այն դեպքում, երբ վարկային կազմակերպությունների առանձին խմբեր կարող են իրականացնել Օրենքով նախատեսված ֆինանսական գործառնությունների մի մասը:

22. ՀՀ առևտրային բանկերին թույլատրվող ֆինանսական գործառնությունները

- ❖ Վարկային կազմակերպությունները չեն կարող ներգրավել ավանդներ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանցից, բացել և վարել հաճախորդների հաշիվներ:
- ❖ Վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ



փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Բանկերի համար նման սահմանափակումներ նախատեսված չեն:

❖ Կենտրոնական բանկը վարկային կազմակերպությունների գործունեության համար կարող է սահմանել որոշակի սահմանափակումներ՝ թույլատրելով կամ սահմանափակելով Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված (գծապատկեր 9.3) գործառնությունների մի մասը: Ընդ որում, այդ սահմանափակումները կարող են սահմանվել վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման և չափերի, միջոցների տեղաբաշխման և չափերի, ինչպես նաև այն անձանց շրջանակի համար, որոնցից վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ ներգրավել և (կամ) որոնց շրջանակում վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ տեղաբաշխել: Բանկերի համար նման սահմանափակումներ նախատեսված չեն:

Վարկային կազմակերպությունն իրավունք ունի փոխառություններ ներգրավել և (կամ) նմանատիպ գործարքներ կնքել բացառապես իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և իր մասնակիցների հետ, ընդ որում, Կենտրոնական բանկը կարող է սահմանել Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված սահմանափակումները (հոդված 8, կետ 3):

Չանաձայն ՅՊ ԿԲ-ի կանոնակարգ 14-ի՝

❖ Վարկային կազմակերպության մարմանը մինչև մեկ ամիս մնացող (այդ թվում՝ ցպահանջ) [ակտիվ](#)ների և մարմանը մինչև մեկ ամիս մնացող (այդ թվում՝ ցպահանջ) պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը պետք է լինի նվազագույնը 120 տոկոս:

❖ Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային հաշիվներ: Վարկային կազմակերպություններն անկանխիկ դրամական հաշվարկները կատարում են վարկային կազմակերպությանը սպասարկող բանկի միջոցով:

❖ Չաշվետեր վարկային կազմակերպությունները պարտավոր են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում հաշվի բացման մասին տասն շախատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել ՅՊ կենտրոնական բանկին:

❖ ՅՊ կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպության համար բացել և վարել հատուկ հաշիվներ՝ ապահովելու առանձին վճարահաշվարկային համակարգերում վերջնահաշվարկների կատարումը, եթե վարկային կազմակերպությունը տվյալ վճարահաշվարկային համակարգի մասնակից է, և վերջնահաշվարկները կատարվում են ՅՊ կենտրոնական բանկի միջոցով:

Վարկային կազմակերպությունների ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը և օգտագործումը, վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումն իրականացվում է բանկերի համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Շահութահարկի մասին» ՅՊ օրենքներին համապատասխան սահմանված կարգերով (հոդված 15, կետ 3):

10.4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԳՐՈՒՄԸ

Ինչպես արդեն նշել ենք, վարկային կազմակերպությունները սպառողական վարկեր և փոխառություններ կարող են տրամադրել միայն ՅՊ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Այդ կարգը սահմանված է ՅՊ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 396-Ն որոշմամբ:

Վարկային կազմակերպությունը առնվազն եռամսյակը մեկ, նվազագույնը 1000 տպաքանակ ունեցող մանուլում պետք է հրապարակի իր կողմից տրամադրվող սպառողական վարկերի վերաբերյալ տեղեկություններ, որտեղ պետք է նշված լինեն սպառողական վարկերի տրամադրման նվազագույն և առավելագույն ժամկետները, տոկոսադրույքները, պահանջվող ապահովության միջոցները, ինչպես նաև տրամադրվող սպառողական վարկերի վերաբերյալ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:


Վարկային կազմակերպությունը փոխառուին կամ վարկառուին կարող է սպառողական վարկ տրամադրել, եթե փոխառուն կամ վարկառուն համապատասխանում է վերը նշված կարգով և դրա հիման վրա ընդունված՝ վարկային կազմակերպության ներքին ակտերով սահմանված վարկունակության հետևյալ չափանիշներին՝

- ⇒ սպառողական վարկի մարման համար փոխառուի կամ վարկառուի բավարար եկամտի աղբյուրը
- ⇒ փոխառուի կամ վարկառուի բավարար հեռանկարային իրացվելիությունը, այդ թվում՝ սպառողական վարկի սպասարկման ընթացքում բավարար դրամական միջոցների առկայությունը
- ⇒ պարտավորության կատարման ապահովման միջոցների առկայությունը
- ⇒ փոխառուի կամ վարկառուի իրավունակությունը կամ գործունակությունը:

Վարկային կազմակերպությունն, իր հայեցողությամբ, կարող է սահմանել լրացուցիչ վարկունակության չափանիշներ. վարկառուի օրինավոր վարկային պատմությունը, բարոյական հատկանիշները, բարի համբավը և այլն: Վարկային կազմակերպության մասնակիցների համար կարող են սահմանվել վարկավորման այլ պայմաններ, քան սահմանված են վարկային կազմակերպության մասնակից չհանդիսացող անձանց համար:

Վարկային կազմակերպությունն իր ներքին ակտերով պետք է սահմանի իր կողմից տրամադրվող սպառողական վարկերի տրամադրման ընթացակարգը, որը պետք է համապատասխանի ՅՊ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի դրույթներին:

Վարկային կազմակերպությունները կարող են սպառողական վարկեր տրամադրել՝ պահպանելով վարկավորման հետևյալ փուլերը (նկար 23)։



Նկար 23. Վարկավորման փուլերը

Նախապատրաստման փուլը ներառում է վարկային հայտի ընդունումը, վարկառուի վարկունակության գնահատումը, սպառողական վարկի գումարի տրամադրման նախապայմանների բավարարման ստուգումը, իսկ վերահսկման փուլը՝ վճարումների և հետագա մարումների գրանցում, պարտավորությունների կատարման ապահովմանը վերաբերող փաստաթղթերի ու գրառումների վարում, վարկառուի մասին ֆինանսական և այլ տեղեկատվության ստացում, մշտական կապի պահպանում վարկառուի հետ, պայմանագրով նախատեսված լինելու դեպքում պարբերաբար այցելություններ վարկառուին և այլն: Յուրաքանչյուր փոխառուի կամ վարկառուի համար վարկային կազմակերպությունը բացում է վարում է վարկային գործ: Վարկային գործի կազմի մեջ է մտնում վարկային փաստաթղթերի փաթեթը:

10.5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի՝

- ⇒ Վարկային կազմակերպությունների համար սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով բանկերի համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները, բացառությամբ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից բացառված հիմնական տնտեսական նորմատիվների: Վարկային կազմակերպությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները պետք է սահմանեն կարգավորման ավելի մեղմ ռեժիմ, քան սահմանված է բանկերի համար: Հեղինակի կարծիքով, այս դրույթը չի պահպանվել կանոնադրական կապիտալի նվազագույն չափի սահմանման մասով. բանկերի համար այն սահմանված է 50 մլն դրամ, այն դեպքում, երբ ԿԲ կանոնակարգ 14-ով լիզինգային կազմակերպությունների համար այն 100 մլն դրամ է, իսկ ֆակտորինգային կազմակերպությունների և ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար՝ 150 մլն դրամ:
- ⇒ Հիմնական տնտեսական նորմատիվների հասկացությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:
- ⇒ Հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և պետք է նույնը լինեն միևնույն տիպի (խմբի) բոլոր վարկային կազմակերպությունների համար, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնք գործում են սույն օրենքով սահմանված սահմանափակումների շրջանակում:
- ⇒ Հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը և հաշվարկում մասնակցող տարրերի կազմը սահմանում է Կենտրոնական բանկը:
- ⇒ Կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը խստացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո:

⇒ Կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը մեղմացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից, եթե Կենտրոնական բանկն ավելի ուշ ժամկետ չի սահմանել:

Աղյուսակ 5 Հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաճապերը

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ	Վարկային միություններ	Խնայողական միություններ	Լիզինգային կազմակերպություններ	Ֆակտորինգային կազմակերպություններ	Ունիվերսալ վարկային կազմակերպություններ
կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	50 մլն դրամ	50 մլն դրամ	100 մլն դրամ	150 մլն դրամ	150 մլն դրամ
ընդհանուր կապիտալի նվազագույն չափը	50 մլն դրամ	100 մլն դրամ	200 մլն դրամ	250 մլն դրամ	300 մլն դրամ
ընդհանուր կապիտալի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ)	2%	6%	8%	10%	10%
մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3 նորմատիվ)	10%	20%	20%	20%	20%
արտարժույթային համախառն դիրքի և վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	30%	30%	30%	30%	30%

Լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափը ուժի մեջ է մտնում 2005 թվականի հունվարի 3-ից: Մինչև 2005 թվականի հունվարի 3-ը լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունների հիմնադրման, վարկային կազմակերպության գործունեություն իրականացնող կազմակերպությունների վերագրանցման (բացառությամբ՝ ստորև նշված դեպքի), բանկերի կողմից իրենց գործունեության տեսակը վարկային կազմակերպության վերափոխելու ժամանակ ընդհանուր կապիտալի չափը հավասար է կանոնադրական կապիտալի չափին:

Վարկային կազմակերպության գործունեություն իրականացնող վերագրանցվող կազմակերպությունները կանոնադրական և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը պետք է համալրեն գրանցումից և լիցենզավորումից հետո վեց ամսվա ընթացքում:

Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը համալրվում է բացառապես փողով՝ հայկական դրամով և արտարժույթով:

Վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկը գրեթե նույնությամբ կրկնում է բանկերի համար սահմանված համապատասխան նորմատիվների հաշվարկը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչո՞վ է կարգավորվում վարկային կազմակերպությունների գործունեությունը:
2. Ի՞նչ են նշանակում «ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության տրամադրում» և «սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում» հասկացությունները:
3. Ովքե՞ր են համարվում «փոխկապակցված անձինք», «կապված անձինք»:
4. Ինչպի՞սի ֆինանսական գործառնություններ կարող են իրականացնել վարկային կազմակերպությունները՝ համաձայն Օրենքի և ԿԲ կանոնակարգ 14-ի:
5. Ո՞րն է բանկերին և վարկային կազմակերպություններին բույլատրվող ֆինանսական գործառնությունների համեմատական բնութագիրը:
6. Ինչպե՞ս կարելի է բնութագրել վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը:
7. Որո՞նք են վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ. Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է.

- ա) նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով
- բ) միայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով
- գ) օրենքով նախատեսված դեպքերում նաև ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով
- դ) եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) ԿԲ-ն կարող է վարկային կազմակերպությունների համար սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան բանկերի համար
- բ) վարկային կազմակերպությունների համար չեն կարող սահմանվել բանկերի համար նախատեսված բոլոր հիմնական տնտեսական նորմատիվները
- գ) հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և պետք է նույնը լինեն միևնույն տիպի (խմբի) բոլոր վարկային կազմակերպությունների համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի
- դ) վարկային կազմակերպությունների համար հիմնական տնտեսական նորմատիվների հասկացությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Հ ա ր ց 3 . Համաձայն գործող օրենսդրության, վարկային կազմակերպության համար հիմնական տնտեսական նորմատիվ է համարվում նաև.

- ա) պարտադիր պահուստավորման նվազագույն չափը
- բ) վարկային կազմակերպության հիմնական կապիտալի նվազագույն մեծությունը
- գ) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը
- դ) իրացվելիության նորմատիվները
- ե) վերոհիշյալ բոլոր մեծությունները:

Հ ա ր ց 4 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Հիմնական միջոցների վերագնահատման հետևանքով.

- ա) չի փոխվի կապիտալի համարժեքության նորմատիվի փաստացի մեծությունը
- բ) կփոխվի ընդհանուր ակտիվների մեծությունը
- գ) չի փոխվի ռիսկով կշռված ակտիվների մեծությունը
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 5 . Երկարաժամկետ ստորադաս փոխառությունը.

- ա) կարող է տրամադրվել 3 տարի ժամկետով
- բ) վարկային կազմակերպության լուծարման կամ վերակազմավորման դեպքում ստորադաս է բաժնետերերի նկատմամբ վարկային կազմակերպության ունեցած պարտավորությունների նկատմամբ.
- գ) վարկային կազմակերպության լուծարման կամ վերակազմավորման դեպքում ստորադաս է վարկային կազմակերպության բոլոր այլ պարտավորությունների նկատմամբ
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ր ց 6 . Չուտ արտարժույթային դիրքը.

- ա) հաշվարկվում է որպես տվյալ խմբի արտարժույթների դիրքերի հանրագումար՝ հաշվի առնելով տվյալ դիրքի նշանը (կարճ կամ երկար)
- բ) հաշվարկվում է որպես արտարժույթների տարբեր խմբերի դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար
- գ) հաշվարկվում է որպես բոլոր արտարժույթների դիրքերի հանրագումար՝ հաշվի առնելով տվյալ դիրքի նշանը (կարճ կամ երկար)
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

ԳԼՈՒԽ 11. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՉԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կանխարգելման իրավական հիմքերը, բացատրել կասկածելի գործարքների սահմանումը, ներկայացնել բանկի և վարկային կազմակերպության պարտականությունները, նրանց կողմից ներկայացվող տեղեկանքները, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների նկատմամբ բանկերի ներքին հսկողությունը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 5-ի:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- ներկայացնել բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կանխարգելման իրավական հիմքերը
- բնութագրել կասկածելի գործառնությունը և դրա հետ կապված հասկացությունները
- ներկայացնել բանկի և վարկային կազմակերպության համար սահմանված պարտադիր պահանջները
- բացատրել կասկածելի գործառնության վերաբերյալ տեղեկանքի ձևը
- ներկայացնել բանկային հաշվի բացման համար բանկի կողմից պահանջվող տեղեկությունների օրինակելի ցանկը
- բացատրել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների նկատմամբ բանկերի ներքին հսկողությունը:

11.1. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՉԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ և «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածների՝

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների (փող, թանկարժեք մետաղներ և այլն) շրջանառությունը բանկերում՝ բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության, բանկում հաշիվ կամ ավանդային հաշիվ բացելու, դրանցով փոխանցում կատարելու կամ դրանցով այլ գործարքներ ու գործառնություններ իրականացնելու ձևով, արգելվում է: Կենտրոնական բանկը սահմանում է բանկերում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման կարգը: Կենտրոնական բանկը կարող է սահմանել կասկածելի գործառնությունների վերաբերյալ բանկերի կողմից ներկայացվող տեղեկանքների և հաշվետվությունների ներկայացման հատուկ կարգ և ձևեր, բանկային հաշվի բացման համար բանկի կողմից պահանջվող տեղեկությունների օրինակելի ցանկ, դադարեցնել այն հաշիվներով գործառնությունները, որոնց տերերը կասկածվում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կամ տեռորիզմի ֆինանսավորման մեջ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 926 հոդվածի, ինչպես նաև իրականացնել սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է բանկից, բանկի հաճախորդից, պարտատիրոջից, կոնտրազենտից, մասնակցից կամ մասնակցություն ձեռք բերող անձից պահանջել վերը նշված միջոցների ծագման օրինականության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկատվություն, որոնց ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը: Այդ միջոցների ծագման, շրջանառության օրինականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, եթե տվյալ անձը հակառակը չի ապացուցում, Կենտրոնական բանկն իրավասու է մերժել սույն օրենքով սահմանված նախնական համաձայնության, համաձայնության, հավանության, զրանցման կամ նման ցանկացած դիմում կամ միջնորդագիր, ինչպես նաև կիրառել սույն օրենքով նախատեսված պատժամիջոցներ:

Կենտրոնական բանկն իր կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, կարող է հանձնարարել բանկին՝ բանկի հաճախորդից, կոնտրազենտից, պարտատիրոջից, մասնակցից կամ մասնակցություն ձեռք բերող անձից պահանջել սույն հոդվածով նախատեսված միջոցների ծագման օրինականության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկատվություն, որոնց ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Ելնելով օրենքով իրեն վերապահված իրավասությունից՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը, նպատակ ունենալով կանխարգելել ՀՀ բանկային համակարգում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառությունը և տեռորիզմի ֆինանսավորումը, 2002թ. դեկտեմբերի 17-ի թիվ 442-Ն որոշմամբ հաստատել է՝

«Բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման մասին» կանոնակարգ 5-ը:

«Կասկածելի գործառնության վերաբերյալ» տեղեկանքի ձևը:

«Բանկային հաշվի բացման համար բանկի կողմից պահանջվող տեղեկությունների օրինակելի ցանկը»:

<p>Կասկածելի գործառնություն</p> <p>Գործառնությունը կասկածելի է, երբ հաճախորդը՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ իր բանկային հաշվին մուտքագրում և նույն բանկային օրվա ընթացքում փոխանցում կամ ելքագրում է մուտքագրված միջոցները ▪ իր բանկային հաշվին փոխանցում է այնպիսի գումար, որի չափն էապես չի համապատասխանում տվյալ հաշվին սովորաբար փոխանցվող գումարների չափին ▪ իր բանկային հաշվին կանխիկ մուտքագրում է այնպիսի գումար, որի չափն էապես չի համապատասխանում տվյալ հաշվին սովորաբար փոխանցվող գումարների չափին ▪ իր բանկային հաշվին արտասովոր հաճախականությամբ փոքրածավալ գումարներ է մուտքագրում, կամ այդ հաշվին արտասովոր հաճախականությամբ փոքրածավալ գումարներ են փոխանցվում ▪ հաճախորդը բանկի տարբեր մասնաճյուղերից իր բանկային հաշվին ոչ ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում (օրինակ՝ մեկ օրվա ընթացքում) մուտքագրում է որոշակի միջոցներ ▪ բանկի կամ վարկային կազմակերպության համար չի բացահայտում քննարկման առարկա գումարների իսկական պատկանելիությունը կամ չի հիմնավորում դրանց ծագման օրինականությունը ▪ բանկի կամ վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված կամ բանկի կամ վարկային կազմակերպության ղեկավարների և աշխատակիցների կասկածը հարուցող գործառնությունների իրականացման այլ դեպքերը կամ եղանակները: <p>Բանկային հաշվին փոխանցվող գումարների չափին էապես չհամապատասխանող փոխանցված գումարի չափ է համարվում այն գումարը, որը գերազանցում է տվյալ հաշվին բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածի ընթացքում փոխանցվող գումարների միջին չափի կրկնապատիկը:</p> <p>Բանկային հաշվին մուտքագրվող կամ փոխանցվող գումարների արտասովոր հաճախականություն է համարվում մուտքագրումների կամ փոխանցումների այն հաճախականությունը, որի քանակը գերազանցում է տվյալ հաշվին բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածի ընթացքում կատարված մուտքագրումների կամ փոխանցումների քանակի կրկնապատիկը:</p> <p>Փոքրածավալ գումար է համարվում այն գումարը, որը պակաս է մեկամսյա ժամանակահատվածի ընթացքում տվյալ հաշվի միջին մնացորդի 5 տոկոսից:</p>
--

Գործառնությունները կասկածելի չեն համարվում, եթե հաճախորդը բանկին է ներկայացրել վերջինիս համար ընդունելի բացատրություններ և պարզաբանումներ, որոնք խելամտության սահմաններում փարատում են բանկի կասկածները կամ բանկը, քաջատեղյակ լինելով հաճախորդի գործունեությանը, նկարագրին, գործարար համբավին, չի կասկածում հաճախորդի կատարած գործառնության օրինականությանը: Ընդ որում, բանկի համար ընդունելի բացատրություններ և պարզաբանումներ կարող են հանդիսանալ հաճախորդի կողմից ներկայացված այն բանավոր կամ գրավոր ապացույցները, որոնք բացահայտում են քննարկման առարկա գումարների ծագման օրինականությունը և իսկական պատկանելությունը:

11.2. ԲԱՆԿԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԳԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների և տեռորիզմի ֆինանսավորման աղբյուր հանդիսացող միջոցների շրջանառությունը բանկերում կամ վարկային կազմակերպություններում արգելվում է: Այդ կապակցությամբ ԿԲ կանոնակարգ 5-ով բանկի և վարկային կազմակերպության համար սահմանված են հետևյալ պարտականությունները.

- Բանկը և վարկային կազմակերպությունը՝
- ❖ Պարտավոր են վարել այնպիսի քաղաքականություն, որը հնարավորության սահմաններում կբացառի հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների և տեռորիզմի ֆինանսավորման աղբյուր հանդիսացող միջոցների ներդրումը կամ շրջանառությունը բանկում և վարկային կազմակերպությունում: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված՝ բանկի կամ վարկային կազմակերպության կողմից վարվող քաղաքականությունը պետք է արտացոլված լինի բանկի կամ վարկային կազմակերպության ներքին ակտերում:
 - ❖ Պետք է ունենան հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին ակտ (կարգ, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ): Ներքին ակտը պետք է սահմանի՝
 - այն պարտադիր ընթացակարգերը, որոնք բանկի կամ վարկային կազմակերպության ստորաբաժանումների և աշխատակիցների կողմից պետք է պահպանվեն բանկի կամ վարկային կազմակերպության հաճախորդների, պարտատերերի կամ կոնտրազենտների հետ ֆինանսական և այլ գործառնություններ կատարելիս
 - այն տեղեկությունները, որոնք բանկը կամ վարկային կազմակերպությունը հաճախորդից, պարտատերերից կամ կոնտրազենտից պահանջելու է ֆինանսական կամ այլ գործառնությունների կատարման ընթացքում
 - ներքին ակտով նախատեսված ընթացակարգերի և պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները:
 - ներքին ակտով նախատեսված ընթացակարգերի և պահանջների չպահպանման համար [բանկի ղեկավարների](#), աշխատակիցների և տվյալ կանոնակարգում նշված պատասխանատու ստորաբաժանման կամ աշխատակցի պատասխանատվությունը՝ ՀՀ օրենսդրության և բանկի ներքին ակտերի սահմաններում:

Ներքին ակտերից մեկական օրինակ բանկը կամ վարկային կազմակերպությունը դրանց հաստատման, ինչպես նաև դրանցում լրացումներ և փոփոխություններ կատարելու դեպքում, մեկշաբաթյա ժամկետում տրամադրում է Կենտրոնական բանկին:

- ❖ Պետք է ունենան հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գրանցման և պահպանման, ինչպես նաև կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման ներքին ակտեր (կարգ, ընթացակարգ, հրահանգ, կանոնակարգ):
- ❖ Պարտավոր են ունենալ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության, տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմանը զբաղվող կառուցվածքային ստորաբաժանում կամ աշխատակից կամ այդ պարտականությունները դնել այլ կառուցվածքային ստորաբաժանման կամ աշխատակցի վրա (օրինակ՝ իրավաբանական կամ անվտանգության վարչություն (բաժին)):
- ❖ Հաճախորդների, պարտատերերի կամ կոնտրագենտների վերաբերյալ բանկի կամ վարկային կազմակերպության հավաքագրած տեղեկությունները, այդ թվում՝ նրանց կողմից իրականացված կասկածելի գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, թրթային և (կամ) էլեկտրոնային եղանակով պետք է պահպանի առնվազն հինգ տարի:
- ❖ Հաճախորդի, պարտատիրոջ կամ կոնտրագենտի կողմից այլ անձի գործակալ, ներկայացուցիչ կամ լիազորված անձ հանդես գալու դեպքում պարտավոր է ճշտել այդ բանկային հաշվի կամ գործառնության իսկական բենեֆիցիարին և գործակալի, ներկայացուցչի կամ լիազորված անձի վերաբերյալ բանկի կամ վարկային կազմակերպության ներքին ակտերով նախատեսված տեղեկությունները: Նման հաշիվը կարող է բացվել, կամ նման գործառնությունը կարող է իրականացվել անհրաժեշտ տեղեկություններն ստանալուց և գրանցելուց հետո: Բանկային հաշվի կամ այլ գործարքի իսկական բենեֆիցիարին և գործակալի, ներկայացուցչի կամ լիազորված անձի վերաբերյալ բանկի կամ վարկային կազմակերպության տեղեկությունների ճշտումը պարտադիր չէ այն դեպքում, երբ որպես գործակալ, ներկայացուցիչ կամ լիազորված անձ է հանդես գալիս ֆինանսական շուկաներում որոշակի ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար լիցենզիա ունեցող անձը:
- ❖ Այն դեպքում, երբ հաճախորդը, պարտատերերը կամ կոնտրագենտը օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված և (կամ) գործող իրավաբանական անձ է, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ կամ ֆիզիկական անձ, պարտավոր է ճշտել այդ անձանց եկամտի աղբյուրները՝ իր ներքին ակտերով սահմանված կարգով:
- ❖ Պարտավոր են իրենց սահմանած հաճախականությանը և կարգով ճշտել հաճախորդներից, պարտատերերից կամ կոնտրագենտներից ստացված այն տեղեկությունները, որոնք բանկի կամ վարկային կազմակերպության ներքին ակտերով սահմանված կարգով հաճախորդներից, պարտատերերից կամ կոնտրագենտներից պահանջվել են ֆինանսական կամ այլ գործառնություններ կնքելիս:

Բանկը Կենտրոնական բանկի խորհրդի որոշման հիման վրա պարտավոր է դադարեցնել այն հաշիվներով գործառնությունները, որոնց տերերը կասկածվում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կամ տեռորիզմի ֆինանսավորման մեջ, իսկ վարկային կազմակերպությունը՝ դադարեցնել այն գործառնությունները, որոնց կողմերից թեկուզև մեկը կասկածվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կամ տեռորիզմի ֆինանսավորման մեջ:

11.3. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ

Կասկածելի գործառնության առկայության դեպքում բանկը կամ վարկային կազմակերպությունը ոչ ուշ, քան գործառնության իրականացմանը հաջորդող բանկային օրը, պարտավոր է փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնել կասկածելի գործառնության վերաբերյալ տեղեկանք՝ հետևյալ ձևով.

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքում նշվում են հաճախորդի կողմից իրականացված գործառնության՝

իրականացման ամսաթիվը	տեսակը	գումարն ու արժույթը	հաճախորդի ռեկվիզիտները	շահառուի ռեկվիզիտները (եթե առկա են)	կասկածելի լինելու հիմքը	կատարման վայրն ու եղանակը

«-----» բանկի գործադիր մարմնի ղեկավար՝ -----

----- ստորագրություն

----- ամսաթիվ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑՄԱԿ

Բանկը հաճախորդի համար բանկային հաշիվ բացելիս հաճախորդից կարող է ստանալ հետևյալ տեղեկությունները.

1. բանկային հաշիվ բացելու նպատակը
2. բանկային հաշիվ բացելու պատճառը
3. բանկային հաշվում ներդրվող միջոցների ծագման աղբյուրը
4. հաճախորդի գործունեության բնույթը և ոլորտը
5. հաճախորդի ռեզիդենտությունը՝ համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանման
6. բանկերում նրա ունեցած բանկային հաշիվների մասին տեղեկություններ:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑՄԱԿ

Հաճախորդի կամ պարտատիրոջ հետ պասիվային գործառնություն կնքելիս վարկային կազմակերպությունը հաճախորդից կարող է ստանալ հետևյալ տեղեկությունները.

1. ներդրվող միջոցների ծագման աղբյուրը
2. հաճախորդի գործունեության բնույթը և ոլորտը
3. հաճախորդի ռեզիդենտությունը՝ համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանման
4. բանկերում նրա ունեցած բանկային հաշիվների մասին տեղեկություններ:

11.4. ՀԱՆՑԱՎՈՐ ԾԱՆԱՊԱՐՀՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Որպես ներքին հսկողության նվազագույն պայմանի իրականացում, բանկի ներքին հսկողության ստորաբաժանումը (ներքին հսկող խումբը, վերահսկիչը կամ հսկիչը) պարտավոր է բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից սահմանված հաճախականությանը և կարգով ուսումնասիրել բանկի կողմից իրականացված բանկային (ֆինանսական) գործառնությունների, բանկի ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածին, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները կանխարգելելու նպատակով ընդունված ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, սույն կանոնակարգին և դրանց հիման վրա բանկի կառավարման իրավասու մարմինների կողմից հաստատված կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին):

Բանկի ներքին հսկողության ստորաբաժանումը ուսումնասիրության ավարտից հետո բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից սահմանված ժամկետում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ բանկի գործադիր մարմնին (բանկի իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև խորհրդին (տնօրենների կամ դիտորդ խորհրդին)) ներկայացնում է գրավոր հաշվետվություն:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կանխարգելման իրավական կարգավորման հիմքերը:
2. Որո՞նք են «միջոցներ», «միջոցների շրջանառություն կամ ներդրում», «բանկային հաշիվ», «կասկածելի գործառնություն» հասկացությունների բնորոշումները համաձայն ԿԲ կանոնակարգ 5-ի
3. Որո՞նք են բանկի և վարկային կազմակերպության համար սահմանված պարտադիր պահանջները:
4. Ինչպիսի՞ն է կասկածելի գործառնության վերաբերյալ տեղեկանքի ձևը:
5. Ինչպիսի՞ն է բանկային հաշվի բացման համար բանկի կողմից պահանջվող տեղեկությունների օրինակելի ցանկը:
6. Ինչպե՞ս է իրականացվում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների նկատմամբ բանկերի ներքին հսկողությունը:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Կենտրոնական բանկը չի կարող.

- ա) հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառությունը կանխարգելելու համար սահմանել բանկային գործառնությունների իրականացման կարգ
- բ) հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառությունը կանխարգելելու համար սահմանել բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների ներկայացման հատուկ կարգ
- գ) հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառությունը կանխարգելելու համար սահմանել բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների ներկայացման հատուկ ձևեր
- դ) բանկից, բանկի հաճախորդից կամ բանկի մասնակցից պահանջել միջոցների ծագման օրինականության վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն
- ե) բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ. Գործառնությունը կասկածելի է, երբ հաճախորդը.

- ա) իր բանկային հաշվին արտասովոր հաճախականությամբ փոքրածավալ գումարներ է մուտքագրում, կամ այդ հաշվին արտասովոր հաճախականությամբ փոքրածավալ գումարներ են փոխանցվում
- բ) իր բանկային հաշվին մուտքագրում և նույն բանկային օրվա ընթացքում փոխանցում կամ ելքագրում է մուտքագրված միջոցները,
- գ) իր բանկային հաշվին կանխիկ մուտքագրում է այնպիսի գումար, որի չափն էապես չի համապատասխանում սվյալ հաշվին սովորաբար փոխանցվող գումարների չափին
- դ) բանկի համար չի բացահայտում քննարկման առարկա գումարների իսկական պատկանելիությունը կամ չի հիմնավորում դրանց ծագման օրինականությունը
- ե) բոլոր պնդումներն էլ սխալ են:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) փոքրածավալ գումար է համարվում այն գումարը, որը պակաս է մեկամսյա ժամանակահատվածի ընթացքում սվյալ հաշվի միջին մնացորդի 15 տոկոսից
- բ) գործառնությունները կասկածելի չեն համարվում, եթե հաճախորդը բանկին է ներկայացրել վերջինիս համար ընդունելի բացատրություններ և պարզաբանումներ, որոնք խելամտության սահմաններում փարատում են բանկի կասկածները
- գ) գործառնությունները կասկածելի չեն համարվում, եթե բանկը, քաջատեղյակ լինելով հաճախորդի գործունեությանը, նկարագրին, գործարար համբավին, չի կասկածում հաճախորդի կատարած գործառնության օրինականությանը
- դ) բանկերը պետք է ունենան հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին ակտ
- ե) բանկերը պետք է ունենան հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գրանցման և պահպանման, ինչպես նաև կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման ներքին ակտեր:

ԳԼՈՒԽ 12. ՀՀ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԵՎ ԲԱՆԿԵՐԻ ՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել [բանկային ավանդի](#), բանկային հաշվի, փոխառության, վարկի, ֆակտորինգի, ֆինանսական վարձակալության (լիզինգի), գույքի հավատարմագրային կառավարման, գրավի, երաշխիքի և երաշխավորության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ Օրենսգրքը) սահմանված կանոնները, բացատրել դրանց գործնական կիրառումը կոնկրետ օրինակներով:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- բացատրել և կազմել բանկային ավանդի և բանկային հաշվի պայմանագրերը
- բացատրել բանկային ավանդների տեսակները
- ներկայացնել բանկային ավանդների դիմաց տոկոսների հաշվարկման և վճարման վերաբերյալ սահմանված կանոնները, բնութագրել բանկային գրքույկը
- ներկայացնել ավանդի վերադարձի ապահովման վերաբերյալ սահմանված կանոնները
- բացատրել բանկային հաշվի պայմանագրի կնքման վերաբերյալ սահմանված կանոնները
- ներկայացնել բանկի կողմից հաշվով կատարվող գործառնությունները և դրանց ժամկետները
- բացատրել բանկի և հաճախորդի հանդիպական պահանջների հաշվանցը
- ներկայացնել հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու հիմքերը և հերթականությունը
- ներկայացնել բանկային հաշվի պայմանագրի լուծման հիմքերը
- բացատրել և կազմել փոխառության և [վարկային պայմանագրերը](#)
- ներկայացնել փոխառության և վարկի իրավական տարբերությունները
- ներկայացնել փոխառության գումարը վերադարձնելու վերաբերյալ սահմանված կանոնները
- ներկայացնել փոխառուի՝ փոխառության գումարը և հաշվարկված տոկոսները փոխառուից վաղաժամկետ վերադարձնելու պահանջի հիմքերը
- բացատրել և կազմել ֆակտորինգի պայմանագիրը
- ներկայացնել ֆակտորինգի կազմակերպման սխեման
- ներկայացնել ֆակտորինգի գործարքի կողմերի իրավունքները և պարտականությունները
- բացատրել և կազմել ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը
- ներկայացնել ֆինանսական վարձակալության (լիզինգի) կազմակերպման սխեման
- ներկայացնել լիզինգի գործարքի իրավունքները և պարտականությունները
- բացատրել և կազմել գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը
- բնութագրել գրավը՝ որպես պարտավորությունների կատարման ապահովման եղանակ
- բնութագրել գրավով ապահովվող պահանջի ծավալը և գրավի առարկան
- բացատրել և կազմել գրավի պայմանագիրը
- ներկայացնել գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու կարգը
- բացատրել գրավի տեսակները և դրանց առանձնահատկությունները
- ներկայացնել հիփոթեքի վերաբերյալ սահմանված կանոնները
- տալ երաշխիքի և երաշխավորության հասկացությունները և դրանց համեմատական բնութագիրը
- բացատրել երաշխիքի առանձնահատկությունները և դադարման հիմքերը
- բացատրել համապարտ և սուբսիդիար պատասխանատվությունը
- բացատրել երաշխավորի պատասխանատվության տեսակները:

12.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Բանկային ավանդի պայմանագիրը և դրա ձևը

[Բանկային ավանդի \(դեպոզիտի\) պայմանագրով](#) մի կողմը (բանկը), ընդունելով մյուս կողմից (ավանդատուից) ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), պարտավորվում է ավանդատուին վերադարձնել ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից (հոդված 902):

Այսպիսով, բանկային ավանդի պայմանագրի սահմանումից բխում է, որ այն հատուցելի պայմանագիր է. բանկը ավանդի, այդ թվում՝ [գլպահանց ավանդի](#) դիմաց պետք է վճարի տոկոսներ:

Բանկային ավանդի պայմանագիրը, որով ավանդատուն քաղաքացի է, հրապարակային պայմանագիր է: Դա նշանակում է, որ բանկը պետք է բանկային ավանդի պայմանագրի կնքի յուրաքանչյուրի հետ, ով կղիմի իրեն: Քաղաքացուն մնան ծառայություններ մատուցելու հնարավորության դեպքում բանկը չի կարող հրաժարվել հրապարակային պայմանագրի կնքելուց:

Իրավաբանական անձինք իրավունք չունեն այլ անձանց փոխանցել իրենց ավանդներուն (դեպոզիտներուն) եղած դրամական միջոցները: Նրանք այդպիսի գործարքներ կարող են կատարել բանկային

(հաշվարկային) հաշիվներից:

Համաձայն Օրենսգրքի 903 հոդվածի՝ ավանդներում դրամական միջոցներ ներգրավելու իրավունք ունեն այն բանկերը, որոնց նման իրավունք տրամադրվել է օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությանը (լիցենզիային) համապատասխան: Նման իրավունք չունեցող անձի կողմից քաղաքացուց ավանդ ընդունելու կամ օրենքով կամ դրան համապատասխան ընդունված բանկային կանոններով սահմանված կարգի խախտմամբ այն ընդունելու դեպքում ավանդատուն կարող է պահանջել անհապաղ վերադարձնելու ավանդի գումարը, ինչպես նաև վճարելու բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսները և տոկոսների գումարից բացի՝ հատուցելու ավանդատուին պատճառված վնասները: Իսկ եթե նման անձը բանկային ավանդի պայմաններով դրամական միջոցներ է ընդունել իրավաբանական անձից, ապա նման պայմանագիրն անվավեր է:


Բանկերին վերաբերող վերը նշված կանոնները կիրառվում են նաև այն վարկային կազմակերպությունների նկատմամբ, որոնք, օրենքին համապատասխան, ավանդներ (դեպոզիտներ) են ընդունում իրավաբանական անձանցից: Հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ վարկային կազմակերպություններն իրավունք չունեն ներգրավել ավանդներ, այդ թվում՝ իրավաբանական անձանցից:

Ինչպես բանկային ավանդի, այնպես էլ բանկային հաշվի պայմանագիրը կնքվում է գրավոր: Բանկային ավանդի պայմանագրի գրավոր ձևը համարվում է պահպանված, եթե ավանդ մուծելը հավաստված է բանկային գրքույկով, բանկային կամ դեպոզիտային սերտիֆիկատով կամ բանկի կողմից ավանդատուին տրված այլ փաստաթղթով, որը համապատասխանում է օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով և բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով նման փաստաթղթերին առաջադրվող պահանջներին: Բանկային ավանդի կամ բանկային հաշվի պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է այդ պայմանագրի անվավերությանը: Նման պայմանագիրն առոչինչ է:

ԱՄՈՒՆԱԿԱՆ Առաջադրանք

Երկայացնել բանկային Օրենսգրքով բանկային գրքույկի վերաբերյալ սահմանված կանոնները: Ավանդների տեսակները

Բանկային ավանդի պայմանագիրը կնքվում է ավանդն առաջին իսկ պահանջով վերադարձնելու (ցպահանջ ավանդ) կամ ավանդը պայմանագրով սահմանված որոշակի ժամկետի ավարտից հետո վերադարձնելու (ժամկետային ավանդ) պայմաններով: Պայմանագրով կարող են նախատեսվել ավանդները վերադարձնելու՝ օրենքին չհակասող այլ պայմաններ (նկար 24): Օրինակ, ավանդները վերադարձնելը կարող է կապված լինել պայմանագրով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու հետ:



Նկար 24. Բանկային ավանդների տեսակները

Ցանկացած տեսակի բանկային ավանդի պայմանագրով, որով ավանդատուն քաղաքացի է, բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով:

Այն դեպքերում, երբ ժամկետային կամ այլ ավանդը, որը ցպահանջ չէ, ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուին տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով:

Այն դեպքերում, երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել [ժամկետային ավանդի](#) գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցպահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով (հոդված 905):

Բանկային ավանդի գումարի տոկոսները

Բանկն ավանդատուին ավանդի գումարից տոկոսներ է վճարում բանկային ավանդի պայմանագրով որոշված չափով: Օրենսգրքով հնարավոր է համարվում նաև պայմանագրում վճարվելիք տոկոսների չափի մասին պայմանի բացակայություն: Այս դեպքում բանկը պարտավոր է տոկոսներ վճարել բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսներ:

Օրենսգրքով (հոդված 906) նախատեսված են բանկի կողմից ավանդի տոկոսները փոփոխելու հետևյալ հիմքերը՝

- Բանկն իրավունք ունի փոփոխել ցպահանջ ավանդների համար վճարվող տոկոսների չափը, եթե այլ բան նախատեսված չէ բանկային ավանդի պայմանագրով: Բանկի կողմից վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է մինչև ավանդատուին տոկոսները նվազեցնելու մասին հաղորդումը ներդրված ավանդների նկատմամբ՝ համապատասխան հաղորդման օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

- Բանկային ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը քաղաքացիներըրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Իրավաբանական անձի հետ բանկի կնքած պայմանագրով սահմանված այդպիսի բանկային ավանդի տոկոսների չափը չի կարող միակողմանի փոփոխվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը (հոդված 907):

Բանկային ավանդի գումարից տոկոսներն ավանդատուին նրա պահանջով վճարվում են յուրաքանչյուր եռամսյակ՝ ավանդի գումարից առանձին, իսկ այդ ժամկետում չպահանջված տոկոսներն ավելանում են ավանդի գումարին, որին հավելագրվում են տոկոսներ, եթե այլ բան նախատեսված չէ բանկային ավանդի պայմանագրով: Ավանդը վերադարձնելիս վճարվում են այդ պահին հավելագրված բոլոր տոկոսները:

Ավանդի վերադարձն ապահովելը

Ավանդի վերադարձի ապահովման վերաբերյալ կանոնները սահմանված են ՀՀ ՔՕ-ի 908 հոդվածով: Համաձայն այդ կանոնների՝

Բանկերը պարտավոր են պարտադիր ապահովագրության միջոցով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ եղանակներով, ապահովել քաղաքացիների ավանդների վերադարձը: Ինչպես արդեն նշել ենք նախորդ 2-րդ թեմայում, քաղաքացիների ավանդների վերադարձի երաշխավորումը նախատեսված է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով: Այդ մեխանիզմը մանրամասն նկարագրված է 3-րդ թեմայում:

Բանկի կողմից իրավաբանական անձանց ավանդների վերադարձն ապահովելու եղանակները սահմանվում են բանկային ավանդի պայմանագրով:

Բանկային ավանդի պայմանագիր կնքելիս բանկը պարտավոր է ավանդատուին տեղեկատվություն տրամադրել ավանդի վերադարձի ապահովման մասին:

Օրենքով կամ բանկային ավանդի պայմանագրով նախատեսված ավանդը վերադարձնելու պարտականությունները բանկի կողմից չկատարելու, ինչպես նաև ապահովման կորստի կամ դրա պայմանների վատթարացման դեպքերում ավանդատուն իրավունք ունի բանկից պահանջել անհապաղ վերադարձնելու ավանդը, վճարելու դրա տոկոսները և հատուցելու պատճառված վնասները:

Օրենսգրքով ամրագրված են նաև ավանդատուի անունով երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները ավանդի հաշվում մուտքագրելու, ինչպես նաև երրորդ անձի անունով ավանդը ներդնելու իրավական հիմքերը:

12.2. ԲԱՆԿԱՅԻՆ ՀՍՇԻՎ

Բանկային հաշվի պայմանագիրը և այն կնքելը

Բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի (հաշվի տիրոջ) բացած հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները (հոդված 912):

Նույն հոդվածով բանկին իրավունք է վերապահվում օգտագործելու հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցները երաշխավորելով այդ միջոցներն անխոչընդոտ տնօրինելու իրավունքը: Ընդ որում, բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:

Բանկային հաշվի պայմանագիրը կնքելիս հաճախորդի կամ նրա նշած անձի համար, կողմերի միջև համաձայնեցված պայմաններին համապատասխան, բանկում բացվում է հաշիվ:

Բանկային հաշվի պայմանագիրը, ըստ էության, նույնպես հրապարակային պայմանագիր է: Բանկը պարտավոր է բանկային հաշվի պայմանագիր կնքել հաճախորդի հետ, որն առաջարկել է հաշիվ բացել տվյալ տեսակի հաշիվների համար բանկի հայտարարած պայմաններով, որոնք համապատասխանում են օրենքով նախատեսված պահանջներին և դրան համապատասխան սահմանված բանկային կանոններին: Բանկն իրավունք չունի մերժել հաշիվը բացելը, որով համապատասխան գործառնությունների կատարումը նախատեսված է օրենքով, բանկի կանոնադրությամբ և նրան տրված թույլտվությամբ (լիցենզիայով), բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդին մերժելը հետևանք է բանկային սպասարկում մատուցելու՝ բանկի հնարավորությունների բացակայության կամ թույլատրվում է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Բանկի կողմից բանկային հաշվի պայմանագիր կնքելուց անհիմն խուսափելու դեպքում հաճախորդն իրավունք ունի բանկին ներկայացնել Օրենսգրքի 461 հոդվածով սահմանված պահանջները: դիմել դատարան՝ պայմանագիրը կնքելուն հարկադրելու և դրանով իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

Բանկի կողմից հաշվով կատարվող գործառնությունները և դրանց ժամկետները

Բանկը պարտավոր է հաճախորդի համար կատարել տվյալ տեսակի հաշիվների համար օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով և բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով նախատեսված գործառնություններ, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով:

Բանկը պարտավոր է հաճախորդի հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե ավելի կարճ ժամկետ

նախատեսված չէ օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով: Հանախորդի անունով մուտք եղած դրամական միջոցները նրա հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք բանկի կողմից հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին հանախորդի ցուցումները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում բանկը պարտավոր է այդ գումարից տոկոսներ վճարել բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով:

Բանկը պարտավոր է հանախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ տալ կամ փոխանցել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե այլ ժամկետներ նախատեսված չեն օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով կամ բանկային հաշվի պայմանագրով:

Հանախորդն իրավունք ունի կարգադրել բանկին իր հաշվից դրամական միջոցներ դուրս գրել նաև երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ հանախորդի պարտավորությունների կատարման հետ: Բանկն ընդունում է այդ կարգադրությունները պայմանով, որ դրանցում գրավոր նշվեն անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում համապատասխան պահանջը ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

Համաձայն Օրենսգրքի 918 հոդվածի՝ բանկային հաշվի պայմանագրին համապատասխան, բանկը վճարում է հաշվից, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը (*հաշվի վարկավորում*), Նման վճար կատարելու օրվանից այն համարվում է հանախորդին համապատասխան գումարով վարկ տրամադրած: Հաշվի վարկավորման հետ կապված կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են փոխառության ու վարկի կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով:

Օրենսգրքով (հոդված 926) չի թույլատրվում հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու՝ հանախորդի իրավունքների սահմանափակումը, բացի օրենքով նախատեսված դեպքերում հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց:

Հաշվով գործառնություններ կատարելու համար բանկի ծախսերի համար վճարելը: Բանկի կողմից դրամական միջոցներ օգտագործելու համար տոկոսները

Համապատասխան կանոնները սահմանված են Օրենսգրքի Հոդված 919 և 920 հոդվածներով, որոնց համաձայն՝

- ❖ Բանկային հաշվի պայմանագրով նախատեսված դեպքերում հանախորդը բանկի ծառայությունների դիմաց վճարում է իր հաշվով կատարվող գործառնությունների համար: Այդ վճարը բանկը կարող է յուրաքանչյուր գործարքի ավարտից հետո վերցնել հանախորդի հաշվում եղած միջոցներից, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով:

- ❖ Հանախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար բանկը վճարում է տոկոսներ, որոնց գումարը մուտքագրվում է հաշվում, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով: Նշված տոկոսները բանկը վճարում է բանկային հաշվի պայմանագրով սահմանված չափով, իսկ պայմանագրում համապատասխան պայմանի բացակայության դեպքում՝ տվյալ բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափով:

- ❖ Տոկոսների գումարը հաշվում մուտքագրվում է պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ պայմանագրում նման ժամկետների բացակայության դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո:

Բանկի և հանախորդի հանդիպական պահանջների հաշվանցը

Համաձայն Օրենսգրքի 921 հոդվածի՝

- ❖ Բանկի դրամական պահանջները հանախորդից՝ կապված հաշվի վարկավորման և բանկի ծառայությունների համար վճարման հետ, ինչպես նաև դրամական միջոցների օգտագործման համար տոկոսներ վճարելու մասին հանախորդի պահանջները բանկին դադարում են հաշվանցով, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով: Նշված պահանջների հաշվանցն իրականացնում է բանկը:

- ❖ Բանկը պարտավոր է պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում հանախորդին տեղեկացնել կատարված հաշվանցի մասին, իսկ եթե կողմերը համապատասխան պայմանները չեն համաձայնեցրել, ապա այնպիսի կարգով ու ժամկետներում, որոնք սովորական են համապատասխան հաշվում դրամական միջոցների վիճակի մասին հանախորդին տեղեկացնելու բանկային գործունեության համար:

Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու հիմքերը և հերթականությունը

Բանկը հաշվից դրամական միջոցներ դուրս է գրում հանախորդի կարգադրության հիման վրա: Առանց հանախորդի կարգադրության, հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է դուրս գրել դատարանի վճռով, ինչպես նաև օրենքով սահմանված կամ բանկի և հանախորդի միջև պայմանագրով նախատեսված դեպքերում:

Համաձայն Օրենսգրքի 923 հոդվածի, հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում հանախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հանախորդի կարգադրությունները և նրան ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում հետևյալ հաջորդականությամբ.

առաջին՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հետ կապված, ինչպես նաև ալիմենտներ բռնագանձելու վերաբերյալ պահանջները բավարարելու համար կատարողական փաստաթղթով նախատեսված դրամական միջոցների փոխանցումները կամ վճարները

երկրորդ՝ աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրության վճարումների հաշվարկների համար կատարողական փաստաթղթով նախատեսված դրամական միջոցների փոխանցումները կամ վճարումները

երրորդ՝ վճարային փաստաթղթերով պետական բյուջե և համայնքային բյուջեներ կատարվող վճարները
չորրորդ՝ կատարողական փաստաթղթով նախատեսված այլ դրամական պահանջները բավարարելու համար վճարները

հինգերորդ՝ այլ փաստաթղթերով վճարները՝ ըստ դրանց ներկայացման օրացուցային հաջորդականությամբ:

Տվյալ հերթին պատկանող պահանջներով հաշվից միջոցները դուրս են գրվում փաստաթղթերի մուտք լինելու օրացուցային հաջորդականությամբ:

Բանկային հաշվի պայմանագրի լուծումը

Բանկային հաշվի պայմանագրի լուծման հիմքերը սահմանված են Օրենսգրքի 927 հոդվածով:

❖ Բանկային հաշվի պայմանագիրը հաճախորդի դիմումով լուծվում է ցանկացած ժամանակ:

❖ Եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով, դատարանը բանկի պահանջով կարող է լուծել բանկային հաշվի պայմանագիրը հետևյալ դեպքերում՝

1) երբ հաճախորդի հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է բանկային կանոններով կամ պայմանագրով նախատեսված նվազագույն չափից, եթե նման գումարը չի վերականգնվել այդ մասին բանկի զգուշացման օրվանից մեկ ամսվա ընթացքում

2) մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների բացակայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

❖ Հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ, հաճախորդի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:

❖ Բանկային հաշվի պայմանագրի լուծումը հիմք է հաճախորդի հաշիվը փակելու համար:

Բանկային հաշվի վերաբերյալ սահմանված կանոնները տարածվում են թղթակցային հաշիվների, թղթակցային ենթահաշիվների և բանկերի այլ հաշիվների վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ դրանց համապատասխան սահմանված բանկային կանոններով:

12.3. ՓՈՒՏԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐԿ

Փոխառության վարկի պայմանագրեր

Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել մինչև գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից (հոդված 877):

Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից (հոդված 887):

Ինչպես փոխառության, այնպես էլ վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության (վարկային) պայմանագրի անվավերության:

Փոխառության և վարկային պայմանագրերի իրավական սահմանումից, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված այլ դրույթներից բխում են փոխառության և վարկի միջև հետևյալ էական տարբերությունները՝

Առաջին, Վարկատուների շրջանակը զգալիորեն մեղ է փոխատուների շրջանակից. վարկեր կարող է տրամադրել միայն բանկը կամ այլ վարկային կազմակերպություն, իսկ փոխառություն՝ ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ: Այստեղ պետք է հիշել, որ, եթե փոխառություններ տրամադրելը ձեռնարկատիրական գործունեություն է, ապա, համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում նման գործունեությամբ կարող են զբաղվել միայն բանկերը և վարկային կազմակերպությունները:

Երկրորդ, Փոխառությունը կարող է լինել նաև առանց տոկոսի: Այն դեպքում, երբ վարկային պայմանագիրը միշտ հատուցելի պայմանագիր է, այսինքն՝ վարկառուն պետք է տոկոսներ վճարի վարկի դիմաց: Փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը:

Երրորդ, փոխառության տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը: Տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

Եվս մեկ կարևոր հանգամանք. վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Օրենսգրքով փոխառության գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

Օրենսգրքով (հոդված 889) սահմանված են վարկ տրամադրելուց կամ ստանալուց հրաժարվելու հիմքեր. *այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց: Այդպիսի հանգամանքներ, մեր կարծիքով,*

կարող են լինել, օրինակ, վարկառուի ֆինանսական վիճակի կտրուկ վատթարացումը, սնանկացումը, գործարար ծրագրից էական շեղումը, դժբախտ պատահարները, շուկայական անբարենպաստ փոփոխությունները և այլն:

Վարկատուն իրավունք ունի հրաժարվել վարկառուին վարկավորելուց նաև այն դեպքում, երբ վարկառուն խախտել է վարկային պայմանագրով նախատեսված վարկի նպատակային օգտագործման պարտականությունը:

Վարկառուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկն ստանալուց՝ այդ մասին մինչև պայմանագրով սահմանված վարկ տրամադրելու ժամկետը ծանուցելով վարկատուին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարկային պայմանագրով:

Փոխառության գումարը վերադարձնելը

Յամաձայն Օրենսգրքի 880 հոդվածի՝ փոխառությունը կարող է լինել ոչ միայն ժամկետային, այլ նաև ան- ժամկետ և ցպահանջ:

Փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը: Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից եռեսուրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Անտոկոս փոխառության գումարը փոխառուն կարող է վերադարձնել վաղաժամկետ: Տոկոսներով տրամադրված փոխառության գումարը կարող է վաղաժամկետ հետ վերադարձվել միայն փոխատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

Փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

Փոխառուի կողմից փոխառության գումարը սահմանված ժամկետում չվերադարձնելու դեպքում փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:

Եթե փոխառության պայմանագրով նախատեսված է փոխառությունը վերադարձնել մաս առ մաս (տարաժամկետ), ապա փոխառուի կողմից փոխառության հերթական մասը վերադարձնելու համար որոշված ժամկետը խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի պահանջել վերադարձնելու փոխառության մնացած ամբողջ գումարը՝ հասանելիք տոկոսների հետ միասին:

Փոխառուի կողմից փոխառության պայմանագրով նախատեսված փոխառության գումարը վերադարձնելու պարտավորության ապահովման պարտականությունները չկատարելու, ինչպես նաև նման ապահովման կորստի կամ դրա պայմանների վատթարացման այնպիսի հանգամանքներում, որոնց համար փոխատուն պատասխանատվություն չի կրում, վերջինս իրավունք ունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու փոխառության գումարը և վճարելու հասանելիք տոկոսները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Նպատակային փոխառություն

Փոխառության պայմանագրում կարող է նախատեսվել փոխառուի կողմից ստացված դրամական միջոցները որոշակի նպատակների համար օգտագործելու մասին պայման (նպատակային փոխառություն) (հոդված 884): Այս դեպքում փոխառուն պարտավոր է ապահովել վարկի գումարի նպատակային օգտագործման նկատմամբ վարկատուի վերահսկողության հնարավորությունը:


Նպատակային փոխառության ժամանակ անհրաժեշտ է փոխառության պայմանագրում հստակ նշել փոխառության նպատակը (նպատակները): Փոխառուի կողմից փոխառության գումարի նպատակային օգտագործման մասին վարկային պայմանագրի պայմանը չկատարելու, ինչպես նաև այն դեպքում, երբ փոխառուն չի ապահովում վարկի նպատակային օգտագործման նկատմամբ վարկատուի վերահսկողության իրականացման հնարավորությունը, վարկատուն (բանկը) իրավունք ունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու վարկի գումարը և վճարելու հասանելիք տոկոսները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

12.4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ԴԻՄԱՑ (ՖԱԿՏՈՐԻՆԳ)

Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր

Յամաձայն Օրենսգրքի՝ *դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով* մի կողմը (ֆինանսական գործակալը՝ ֆակտորը) մյուս կողմին (հաճախորդին) հանձնում կամ պարտավորվում է հանձնել դրամական միջոցներ՝ ի հաշիվ հաճախորդի (վարկատուի) երրորդ անձից (պարտապանից) ունեցած դրամական պահանջի, որը բխում է հաճախորդի կողմից երրորդ անձին ապրանքներ տրամադրելուց, նրա համար աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց, իսկ հաճախորդը ֆինանսական գործակալին զիջում է կամ պարտավորվում է զիջել այդ դրամական պահանջը: Ֆակտորինգի կազմակերպման սխեման բերված է նկար 25-ում:

Ֆակտորինգի պայմանագրով ֆինանսական գործակալի պարտավորությունները կարող են ներառել հաճախորդի համար հաշվապահական հաշվառում վարելը, ինչպես նաև հաճախորդին զիջման առարկա համարվող դրամական պահանջների հետ կապված այլ ֆինանսական ծառայություններ մատուցելը:



Նկար 25. Ֆակտորինգի կազմակերպման սխեման

Որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր կարող են կնքել բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, ինչպես նաև նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն (լիցենզիա) ունեցող այլ առևտրային կազմակերպությունները: Համաձայն գործող օրենսդրության, ներկայումս նման պայմանագրեր կարող են կնքել վարկային կազմակերպությունների որոշ տիպեր:

Տրամադրված ֆինանսավորման համար զիջման առարկա կարող է լինել ինչպես այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել (ներկա պահանջ), այնպես էլ դրամական միջոցներ ստանալու՝ ապագայում ծագելիք իրավունքը (ապագա պահանջ): Ընդ որում՝ ապագա դրամական պահանջի զիջման դեպքում այն համարվում է ֆինանսական գործակալին փոխանցված՝ պայմանագրով նախատեսված պահանջի զիջման առարկա դրամական միջոցները պարտապանից ստանալու իրավունքը ծագելուց հետո: Եթե դրամական պահանջի զիջումը պայմանավորված է որոշակի իրադարձությամբ, այն ուժի մեջ է մտնում այդ իրադարձությունը վրա հասնելուց հետո:

Պարտապանի նկատմամբ դրամական պահանջը հաճախորդը կարող է ֆինանսական գործակալին զիջել նաև վերջինիս հանդեպ իր պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով:

Եթե ֆինանսական գործակալին դրամական պահանջը զիջվել է նրա առջև հաճախորդի պարտավորության կատարման ապահովման նպատակով, և այլ բան նախատեսված չէ ֆակտորինգի պայմանագրով, ֆինանսական գործակալը պարտավոր է հաճախորդին հաշվետվություն ներկայացնել ու նրան հանձնել հաճախորդի պահանջի զիջմամբ ապահովված պարտքի գումարը գերազանցող մասը: Եթե պարտապանից ֆինանսական գործակալի ստացած դրամական միջոցները պակաս են ֆինանսական գործակալի հանդեպ հաճախորդի պահանջի զիջմամբ ապահովված պարտքի գումարից, հաճախորդն իր պարտքի մնացորդի համար պատասխանատվություն է կրում ֆինանսական գործակալի առջև:

Հաճախորդի պատասխանատվությունը ֆինանսական գործակալի հանդեպ

Օրենսգրքի 895 հոդվածով ֆինանսական գործակալի հանդեպ սահմանված է հաճախորդի հետևյալ պատասխանատվությունը.

- ❖ Հաճախորդը ֆինանսական գործակալի հանդեպ պատասխանատվություն է կրում զիջման առարկա դրամական պահանջն իրական լինելու համար, եթե այլ բան նախատեսված չէ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով: Ձիջման առարկա դրամական պահանջը համարվում է իրական, եթե հաճախորդն օժտված է դրամական պահանջի փոխանցման իրավունքով, և այդ պահանջի զիջման պահին նրան հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով պարտապանն իրավունք ունի չկատարել պահանջը:

- ❖ Հաճախորդը պատասխանատվություն չի կրում ֆինանսական գործակալի կողմից զիջման առարկա համարվող պահանջը պարտապանի կատարմանը ներկայացնելու դեպքում, վերջինիս կողմից չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե այլ բան նախատեսված չէ հաճախորդի և ֆինանսական գործակալի միջև կնքված պայմանագրով:

Եթե դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրի պայմաններով հաճախորդի ֆինանսավորումը կատարում է ֆինանսական գործակալը՝ հաճախորդից այդ պահանջը գնելու միջոցով, ֆինանսական գործակալն իրավունք է ձեռք բերում այն ամբողջ գումարի նկատմամբ, որը նա պահանջը կատարելու համար ստանալու է պարտապանից, իսկ հաճախորդը ֆինանսական գործակալի հանդեպ պատասխանատվություն չի կրում այն բանի համար, որ վերջինիս ստացած գումարը պակաս է եղել այն գնից, որով գործակալը ձեռք է բերել պահանջը (հոդված 899):

Պարտապանի կողմից ֆինանսական գործակալի դրամական պահանջը կատարելը

Համաձայն Օրենսգրքի 898 հոդվածի՝

- ❖ Պարտապանը պարտավոր է ֆինանսական գործակալին վճարել՝ պայմանով, եթե նա հաճախորդից կամ ֆինանսական գործակալից գրավոր ծանուցում է ստացել դրամական պահանջը տվյալ ֆինանսական գործակալին զիջելու մասին, և այդ ծանուցման մեջ սահմանված է կատարման ենթակա դրամական պահանջը, ինչպես նաև նշված է այն ֆինանսական գործակալը, ում պետք է վճարվի:

❖ Պարտապանի խնդրանքով ֆինանսական գործակալը պարտավոր է ողջամիտ ժամկետում նրան ապացույց ներկայացնել այն մասին, որ դրամական պահանջի զիջումը ֆինանսական գործակալին իրականում տեղի է ունեցել: Եթե ֆինանսական գործակալը չի կատարում այդ պահանջը, պարտապանն իրավունք ունի տվյալ պահանջով վճարել հաճախորդին՝ ի կատարումն վերջինիս հանդեպ ունեցած իր պարտավորության:

❖ Ֆինանսական գործակալի հանդեպ պարտապանի կողմից դրամական պահանջը կատարելը պարտապանին ազատում է հաճախորդի առջև համապատասխան պարտավորությունից:

Պարտապանն ունի նաև հաճախորդի հետ հանդիպական պահանջների հաշվանցման իրավունք (հոդված 900). «Ֆինանսական գործակալի կողմից վճարման պահանջով պարտապանին դիմելու դեպքում պարտապանն իրավունք ունի հաշվանցի ներկայացնել հաճախորդի հետ կնքված պայմանագրի վրա հիմնված իր դրամական պահանջները, որոնք պարտապանն ուներ այն ժամանակ, երբ ինքը ծանուցում էր ստացել պահանջը ֆինանսական գործակալին զիջելու մասին:


12.5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԼԻՉԻՆԳ)

Ֆինանսական վարձակալության գործառնության իրականացումը

Համաձայն Օրենսգրքի 677 հոդվածի՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատուը պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության առարկայի և վաճառողի ընտրության համար:

Ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վարձակալված գույքը, վարձակալության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտն, անցնում է վարձակալի սեփականությանը՝ վարձակալի կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:

Ի տարբերություն գործառնական լիզինգի, ֆինանսական վարձակալության դեպքում գույքի արժեքը վարձակալության պայմանագրի գործողության ժամանակահատվածում ամբողջությամբ վերադառնում է վարձատուին, որը ենթադրում է գույքի լրիվ ամորտիզացիայի (ծառայության) ժամկետի և լիզինգի պայմանագրի ժամկետի համընկնում: Վարձատուն պահպանում է վարձակալված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և ֆինանսական վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուն պես վերատիապետում է այն: Լիզինգային գործարքի ընդհանուր սխեման պատկերված է նկար 26-ում:



Նկար 26 Լիզինգային գործարքի ընդհանուր սխեման

Ներդրումների ֆինանսավորման այս ձևը վարձակալին թույլ է տալիս զգալիորեն կրճատել կապիտալ ներդրումները, խուսափել հիմնական միջոցների բարոյական մաշվածության արագացման հետ կապված կորուստներից, իսկ վարձատուին՝ փոքրացնել ակտիվային գործառնությունների ռիսկը՝ վարձակալի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում իրացնել վարձակալության պայմանագրի առարկան: Պետք է նշել, որ թեև լիզինգային գործառնությունները ծավալման մեծ հեռանկարներ ունեն մեր հանրապետությունում, սակայն դրան խոչընդոտող գործոն է այդ գործառնությունների հարկումը ավելացված արժեքի հարկով:

Ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է վարձատուն:

Հայաստանի Հանրապետությունում լիզինգի պայմանագրով վարձատու կարող է լինել բանկը կամ օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած մասնագիտացված վարկային կազմակերպություն: Հիշենք, որ

լիզինգային կազմակերպությունները հիմնադրվում են «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Ներկայումս ՀՀ կենտրոնական բանկից լիցենզիա է տրամադրվել մեկ լիզինգային կազմակերպության:

Ֆինանսական վարձակալության գործարքը ենթադրում է վարձատուի կողմից երկու տեսակի պայմանագրերի կնքում՝ վաճառողի հետ գույքի առուվաճառքի, իսկ վարձակալի հետ՝ լիզինգի պայմանագրի կնքում: Ֆինանսական վարձակալության պայմանագրի ստորագրումը սովորաբար նախորդում է առուվաճառքի պայմանագրին: Դրանով փոքրանում է վարձատուի ռիսկը:

Ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկան, այն վարձակալին հանձնելը

Համաձայն Օրենսգրքի, ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել ցանկացած չսպառվող գույք (մեքենաները, սարքավորումները, անշարժ գույք և այլն): Ընդ որում՝ անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

Վարձատուն, վարձակալի համար գույք ձեռք բերելիս, պետք է վաճառողին ծանուցի, որ գույքը նախատեսված է որոշակի անձի վարձակալության հանձնելու համար:

Ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկան վաճառողի կողմից հանձնվում է անմիջականորեն վարձակալին՝ վերջինիս գտնվելու վայրում, եթե այլ բան նախատեսված չէ ֆինանսական վարձակալության պայմանագրով: Այն դեպքում, երբ ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկան վարձակալին չի հանձնվել պայմանագրում նշված ժամկետում, իսկ եթե պայմանագրում ժամկետ նշված չէ՝ ողջամիտ ժամկետում, վարձակալն իրավունք ունի, եթե կետանցը թույլ է տրվել այնպիսի հանգամանքներում, որոնց համար պատասխանատվություն է կրում վարձատուն, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

Վարձակալված գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը վարձակալին է անցնում վարձակալված գույքը նրան հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ ֆինանսական վարձակալության պայմանագրով:

Վաճառողի և վարձատուի պատասխանատվությունը

Օրենսգրքի 684 հոդվածով սահմանված է հետևյալ պատասխանատվությունը՝

❖ *Վարձակալն իրավունք ունի գույքի որակի ու կոմպլեկտայնության, դրա մատակարարման ժամկետները խախտելու և վաճառողի կողմից պայմանագիրն անպատշաճ կատարելու դեպքերում անմիջականորեն վաճառողին ներկայացնել նրա և վարձատուի միջև կնքված առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներ: Ընդ որում, վարձակալը ձեռք է բերում գնորդի համար սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները և կրում է նրա պարտականությունները, բացի վաճառողի հետ առուվաճառքի պայմանագիրն առանց վարձատուի համաձայնության լուծելու իրավունքից ու ձեռք բերված գույքի համար վճարելու պարտականությունից:*

❖ *Վարձակալը և վարձատուն վաճառողի հետ հարաբերություններում համիրավ պարտատերեր են:*

❖ *Եթե այլ բան նախատեսված չէ ֆինանսական վարձակալության պայմանագրով, վարձատուն վարձակալի առջև պատասխանատվություն չի կրում առուվաճառքի պայմանագրից բխող պահանջները վաճառողի կողմից չկատարելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ վաճառող ընտրելու պատասխանատվությունը դրված է վարձատուի վրա: Վերջին դեպքում վարձակալն իրավունք ունի իր ընտրությամբ առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներն անմիջականորեն ներկայացնել ինչպես գույքը վաճառողին, այնպես էլ վարձատուին, որոնք համապարտ պատասխանատվություն են կրում վարձակալի առջև:*

❖ *Եթե այլ բան նախատեսված չէ ֆինանսական վարձակալության պայմանագրով, ապա վարձատուն վարձակալի առջև պատասխանատվություն չի կրում վարձակալության հանձնված գույքի թերությունների համար՝ գույքը վարձակալին փոխանցելուց հետո:*

12.6. ԳՈՒՅՔԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր

ՀՀ ԹՕ-ի 954-րդ հոդվածով գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի վերաբերյալ սահմանված են հետևյալ կանոնները՝

❖ *Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի) (հոդված 954):*


❖ *Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում հավատարմագրային կառավարչին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման: Դա նշանակում է, որ բանկին հավատարմագրային կառավարման հանձնված գույքի չի արտացոլվում նրա հաշվեկշռում:*

❖ *Հավատարմագրային կառավարչին իրավունք ունի գույքի հավատարմագրային կառավարում իրականացնելիս այդ գույքի նկատմամբ, հավատարմագրային կառավարման պայմանագրին համապատասխան և ի շահ շահառուի, կատարել ցանկացած իրավաբանական ու փաստացի գործողություններ:*

❖ *Հավատարմագրային կառավարչին հավատարմագրային կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքները կնքում է իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես նման գույքի կառավարիչ: Այդ պայմանը համարվում է պահպանված, եթե գրավոր ձևակերպում չպահանջող գործողությունները կատարելիս հավատարմագրային կառավարիչը մյուս կողմին տեղեկացրել է որպես հավատարմագրային կառավարիչ՝ դրանք կատարելու մասին, իսկ գրավոր փաստաթղթերում հավատարմագրային կառավարչի անունից կամ անվանումից հետո արվել է «Հ. Կ.» նշումը:*

❖ *Հավատարմագրային կառավարչի գործողությունների մասին ցուցումի բացակայության դեպքում նա երրորդ անձանց հանդեպ պարտավորվում է անձամբ և նրանց առջև պատասխանատվություն է կրում միայն իրեն պատկանող գույքով:*

Օրենսգրքով (հոդված 958) սահմանված են հավատարմագրային կառավարման պայմանագրի էական պայմաններ, որոնք բերված են նկար 27-ում:



Նկար 27. հավատարմագրային կառավարման պայմանագրի էական պայմաններ

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է գրավոր *մինչև հինգ տարի ժամկետով*: Հավատարմագրային կառավարմանը փոխանցվող գույքի առանձին տեսակների համար օրենքով կարող են սահմանվել պայմանագրի կնքման այլ սահմանային ժամկետներ:

Անշարժ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրա նկատմամբ հավատարմագրային կառավարման իրավունքը՝ պետական գրանցման:

Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո, այն դադարեցնելու մասին կողմերից որևէ մեկի դիմումի բացակայության դեպքում, պայմանագիրը համարվում է երկարաձգված այն ժամկետով և պայմաններով, որոնք նախատեսված են պայմանագրով:

Հավատարմագրային կառավարման հիմնադիրը գույքի սեփականատերն է, իսկ ՀՀ ՔՕ-ով նախատեսված դեպքերում այլ անձը:

Հավատարմագրային կառավարիչը կարող է լինել անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն: Այն դեպքերում, երբ գույքի հավատարմագրային կառավարումն իրականացվում է օրենքով նախատեսված հիմքերով, հավատարմագրային կառավարիչ կարող է լինել ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը: Հավատարմագրային կառավարիչը գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով չի կարող լինել շահառու:

Հավատարմագրային կառավարման օբյեկտը

Հավատարմագրային կառավարման *օբյեկտ* կարող են լինել անշարժ գույքի առանձին տեսակներ, արժեթղթեր, ոչ փաստաթղթային արժեթղթերով հավաստված իրավունքներ, բացառիկ իրավունքներ և այլ գույք: Դրանք չի կարող լինել հավատարմագրային կառավարման ինքնուրույն օբյեկտ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հավատարմագրային կառավարման հանձնված գույքն առանձանցվում է կառավարման հիմնադրի այլ գույքից, ինչպես նաև հավատարմագրային կառավարչի գույքից: Այդ գույքն արտացոլվում է հավատարմագրային կառավարչի առանձին հաշվեկշռում, որով կատարվում է ինքնուրույն հաշվառում: Հավատարմագրային կառավարման հետ կապված գործունեությամբ հաշվարկների համար բացվում է առանձին բանկային հաշիվ: Կառավարման հիմնադրի սնանկության դեպքում այդ գույքի հավատարմագրային կառավարումը դադարում է, և այն ընդգրկվում է մրցութային զանգվածի մեջ:

Գրավ դրված գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը գրավառուին չի զրկում այդ գույքի վրա բռնագանձում տարածելու իրավունքից: Հավատարմագրային կառավարիչը պետք է նախագգուշացվի, որ հավատարմագրային կառավարման հանձնված գույքը ծանրաբեռնված է գրառվ: Եթե հավատարմագրային կառավարիչը չգիտեր և չպետք է իմանար իրեն հավատարմագրային կառավարման հանձնված գույքը գրավ դրված լինելու մասին, ապա նա իրավունք ունի դատարանով պահանջել լուծելու գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը, հատուցելու իր կրած իրական վնասները և վճարելու համաչափ վարձատրություն:

Հավատարմագրային կառավարչի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը

Հավատարմագրային կառավարիչն օրենքով և գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված շրջանակներում հավատարմագրային կառավարմանը հանձնված գույքի նկատմամբ իրականացնում է սեփականատիրոջ լիազորություններ: Հավատարմագրային կառավարիչը կարող է անշարժ գույքը տնօրինել հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված դեպքերում:

Գույքի հավատարմագրային կառավարման հետ կապված գործողությունների արդյունքում հավատարմագրային կառավարչի ձեռք բերած իրավունքները ներառվում են հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կազմում: Հավատարմագրային կառավարչի նման գործողությունների արդյունքում առաջացած պարտականությունները կատարվում են այդ գույքի հաշվին:

Հավատարմագրային կառավարիչը գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում կառավարման հիմնադրին ու շահառուին:

Հավատարմագրային կառավարիչը գույքի հավատարմագրային կառավարումն իրականացնում է անձամբ, բացառությամբ հետևյալ դեպքերի. Հավատարմագրային կառավարիչը կարող է հանձնարարել այլ անձի՝ իր անունից կատարելու գույքի կառավարման համար անհրաժեշտ գործողությունները, եթե ինքը դրա համար լիազորված է գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով կամ ստացել է կառավարման հիմնադրի գրավոր համաձայնությունը կամ ստիպված է դա անել հանգամանքների ուժով՝ կառավարման հիմնադրի կամ շահառուի շահերն ապահովելու համար և հնարավորություն չունի ողջամիտ ժամկետում ստանալ կառավարման հիմնադրի ցուցումները:

Հավատարմագրային կառավարիչը պատասխանատվություն է կրում իր կողմից ընտրված հանձնակատարի գործողությունների համար, ինչպես իր սեփականի:

Գույքի հավատարմագրային կառավարման ժամանակ շահառուի կամ կառավարման հիմնադրի շահերի համար պատշաճ հոգատարություն չցուցաբերած հավատարմագրային կառավարիչը շահառուին հատուցում է գույքի հավատարմագրային կառավարման ընթացքում բաց թողնված օգուտը, իսկ կառավարման հիմնադրին՝ գույքի կորստի կամ վնասվածքի պատճառով հասցված վնասները՝ դրա բնական մաշվածության հաշվառմամբ, ինչպես նաև բաց թողնված օգուտը:

Հավատարմագրային կառավարիչը պատասխանատվություն է կրում պատճառված վնասների համար, եթե չի ապացուցում, որ այդ վնասներն առաջացել են անհաղթահարելի ուժի կամ շահառուի կամ կառավարման հիմնադրի գործողությունների հետևանքով:

Իրեն տրամադրված լիազորությունների գերազանցմամբ կամ դրանց համար սահմանված սահմանափակումների խախտմամբ կնքված գործարքով պարտավորությունները հավատարմագրային կառավարիչը կրում է անձամբ:

Գույքի հավատարմագրային կառավարման կապակցությամբ ծագած պարտավորություններով պարտքերը մարվում են այդ գույքի հաշվին: Նման գույքն անբավարար լինելու դեպքում բռնագանձումը կարող է տարածվել հավատարմագրային կառավարչի գույքի վրա, իսկ վերջինիս գույքի անբավարար լինելու դեպքում հավատարմագրային կառավարման հիմնադրի՝ հավատարմագրային կառավարման չհանձնված գույքի վրա:

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով հավատարմագրային կառավարիչը կարող է գրավը տրամադրել այն վնասների հատուցումն ապահովելու համար, որոնք կարող են պատճառվել կառավարման հիմնադրին կամ շահառուին հավատարմագրային կառավարման պայմանագիրն անպատշաճ կատարելու հետևանքով:

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի դադարելը

Բացի [պարտավորությունների](#) դադարման ընդհանուր հիմքերից, գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը դադարում է նաև որպես Օրենսգրքի 966 հոդվածով նշված հետևյալ հանգամանքների հետևանք՝

- 1) շահառու քաղաքացու մահվան կամ շահառու իրավաբանական անձի լուծարման, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով
- 2) շահառուի կողմից պայմանագրով ստացվող օգուտներից հրաժարվելու, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով
- 3) հավատարմագրային կառավարչի-քաղաքացու մահվան, նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ սնանկ ճանաչելու
- 4) հավատարմագրային կառավարչի կամ կառավարման հիմնադրի կողմից հավատարմագրային կառավարումից հրաժարվելու՝ կապված հավատարմագրային կառավարչի կողմից գույքի հավատարմագրային կառավարումն անձամբ իրականացնելու անհնարինության հետ
- 5) պայմանագրից կառավարման հիմնադրի հրաժարվելու՝ հավատարմագրային կառավարչին պայմանագրով պայմանավորված վարձատրությունը վճարելու պայմանով
- 6) կառավարման հիմնադիր-քաղաքացուն սնանկ ճանաչելու:

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրից կողմերից մեկի հրաժարվելու դեպքում մյուս կողմը, պայմանագիրը դադարելուց երեք ամիս առաջ, պետք է ծանուցվի այդ մասին, եթե ծանուցման այլ ժամկետ նախատեսված չէ պայմանագրով:

Հավատարմագրային կառավարման պայմանագիրը դադարելու դեպքում հավատարմագրային կառավարման հանձնված գույքը փոխանցվում է կառավարման հիմնադրին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

12.7. ԳՐԱՎ

Գրավը որպես պարտավորությունների կատարման ապահովման եղանակ

Գրավը վարկային պայմանագրով վարկառուին իր պարտավորությունների կատարման, վարկի գծով պարտքը պարտատիրոջը վերադարձման ապահովման առավել տարածված եղանակներից մեկն է:

Գրավը գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավատուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար: Այն լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավառու) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարելու դեպքում գույքի տիրոջ (գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Գրավառուն իրավունք ունի, նույն սկզբունքով, բավարարում ստանալ գրավ դրված գույքի կորստի կամ վնասվածքների ապահովագրական հատուցումից, անկախ այն բանից, թե այն ուն օգտին է ապահովագրված, եթե նման կորուստը կամ վնասվածքը չեն ծագել այնպիսի պատճառներից, որոնց համար պատասխանատու է գրավառուն:

Օրենսգրքի «Ընդհանուր դրույթներ գրավի մասին» պարագրաֆում պարունակվող գրավի մասին ընդհանուր կանոնները կիրառվում են [հիփոթեքի](#) նկատմամբ, եթե այլ կանոններ չեն սահմանված նույն օրենսգրքի հիփոթեքին վերաբերող պարագրաֆում:

Գրավի հիմնական տարբերությունն ապահովման մյուս եղանակներից նրա «կոնկրետ գույքային» բնույթն է: Երաշխավորությունը, օրինակ, նկատի չունի երաշխավորի որևէ կոնկրետ գույք, և տարածվում է նրա ամբողջ ունեցվածքի վրա: Մինչդեռ գրավը, որպես կանոն, կապված է կամ անհատապես որոշված իրի կամ կոնկրետ գույքային իրավունքի հետ: Գրավն ապահովման միակ եղանակն է, ըստ որի գրավով ապահովված պարտավորության պարտատերը այլ գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու ժամանակ պարտապանի մյուս պարտատերերի առջև ունի նախապատվության իրավունք:

Գրավով ծագում է պայմանագրի ուժով, ինչպես նաև օրենքի հիման վրա՝ դրանում նշված հանգամանքների երևան գալով: Օրենքում պետք է նախատեսվի այն գույքը, որը համարվում է պարտավորության կատարման ապահովման համար գրավ դրված:

Գործող օրենսդրությունը չի նախատեսում գրավի առարկա հանդիսացող գույքը որպես գրավառուի սեփականություն անմիջապես հանձնելու միջոցով պարտքի մարումն հնարավորություն:

Գրավով ապահովվող պահանջի ծավալը և գրավի առարկան

Գրավով ապահովվում են վարկատու-գրավառուի բոլոր պահանջները, որոնք առաջացել են փաստացի բավարարման պահին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ օրենքով: Այդ պահանջը մասնավորապես ներառում է.

- հիմնական պարտքի և տոկոսների գումարը
 - տուժանքը
 - կատարման ժամկետի կետանցով պարտատիրոջը (գրավատուին) պատճառված վնասների հատուցումը
 - գրավ դրված գույքը պահելու և պահպանելու համար՝ վարկատու-գրավառուի կատարած ծախսերի հատուցումը
 - գրավ դրված գույքը բռնագանձելու հետ կապված՝ վարկատու-գրավառուի ծախսերի հատուցումը:
- Այս բոլոր ծախսերը վերաբերում են գրավառուի հաշվին և ենթակա են հատուցման՝ գրավ դրված գույքի արժեքի հաշվին:

Օրենսգրքի գրավի առարկային վերաբերյալ սահմանված են հետևյալ կանոնները՝

- ❖ Գրավի առարկա կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ): Սակայն օրենսդրությամբ սահմանված են որոշակի սահմանափակումներ գրավի առարկայի նկատմամբ: Այսպես, գրավի առարկա չեն կարող լինել շրջանառությունից հանված գույքը, պարտապանի անձի հետ անխզելիորեն կապված պահանջները, ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջները և այն իրավունքները, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով: Այս ցանկի ընդհանուր իմաստն այն է, որ քաղաքացին չի կարող զրկվել այն ունեցվածքից (գույքից), որը ծառայում է նրա ամենօրյա, տարրական պահանջներին բավարարմանը:
- ❖ Այն գույքի գրավը, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման (անբաժանելի գույք), չի կարող գրավ դրվել մաս առ մաս:
- ❖ Առանց գույքի սեփականատիրոջ համաձայնության՝ վարձակալության իրավունքի գրավ չի թույլատրվում:
- ❖ Գույքի առանձին տեսակների գրավը, մասնավորապես՝ քաղաքացիներին պատկանող այն գույքի, որի վրա բռնագանձում տարածել չի թույլատրվում, կարող է արգելվել կամ սահմանափակվել օրենքով:
- ❖ Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել միայն բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ:
- ❖ Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում իր բաժինը գրավ դնել առանց մյուս սեփականատերերի համաձայնության:
- ❖ Գրավի իրավունքը տարածվում է ինչպես բուն գույքի, այնպես էլ դրա պատկանելիքների վրա (օրինակ, բնակարանի և նրա անբաժանելի սարքավորումների՝ կոնունդակների, դռների և այլն), եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- ❖ Գույքի պտուղների (օրինակ, գրավ դրված հողամասի բերքի) նկատմամբ գործում է դրույթ, ըստ որի գրավ դրված գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և [եկամուտների](#) նկատմամբ գրավի իրավունքը տարածվում է պայմանագրով նախատեսված դեպքերում: Այլ կերպ ասած՝ պտուղները, եկամուտները մտնում են գրավի զանգվածի մեջ միայն գրավի մասին պայմանագրում այդ մասին հատուկ նշված լինելու դեպքում:
- ❖ Օրենսգրքով (հոդված 236) թույլատրվում է միևնույն գույքը՝ երկու և ավելի գրավի առարկա դառնալու հնարավորություն: Գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա (*հաջորդող գրավ*): Ընդ որում, հաջորդող գրավը թույլատրվում է, եթե այն արգելված չէ դրան նախորդած գրավի պայմանագրերով: Հաջորդող գրավի դեպքում նոր գրավառուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավառուների պահանջները բավարարելուց հետո:

Գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքերում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից: Եթե գրավի առարկան, օրենքին կամ պայմանագրին համապատասխան, պետք է գտնվի գրավառուի մոտ, ապա գրավի իրավունքը ծագում է գրավի առարկան նրան հանձնելու պահից, իսկ եթե այն հանձնվել է մինչև պայմանագիրը կնքելը, ապա այն կնքելու պահից:

Օրենքով կամ գրավի պայմանագրով կարող է նախատեսվել գրավատուի կողմից ապագայում ձեռք բերվելիք գույքի և գույքային իրավունքների գրավ:

Գրավի առարկայի փոխարինում թույլատրվում է գրավառուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե գրավի առարկան ոչնչացել կամ վնասվել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքը դադարել է օրենքով սահմանված հիմքերով, ապա գրավատուն պարտավոր է ողջամիտ ժամկետում վերականգնել գրավի առարկան կամ այն փոխարինել այլ հավասարարժեք գույքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Գրավի պայմանագիրը և դրա ձևը

Օրենսգրքով նախատեսված դեպքերում գրավի պայմանագրերը (մասնավորապես՝ հիփոթեքի պայմանագրերը) ենթակա են նոտարական վավերացման: Պետական գրանցում պահանջվում է անշարժ գույքի հիփոթեքի համար:

Համաձայն Օրենսգրքի 234 հոդվածի՝ գրավի պայմանագրում պետք է նշվեն հետևյալ էական (պարտադիր) պայմանները.

- կողմերի (գրավատուի և գրավառուի) անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը)
- գրավի առարկան
- գրավով ապահովված պարտավորության էությունը
- պարտավորության չափը
- պարտավորության կատարման ժամկետը:

Վերոհիշյալ կանոնները չպահպանելը հանգեցնում է գրավի պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:

Գրավատուն այն անձն է, որն իր գույքը կամ գույքային իրավունքը հանձնում է գրավ: Համաձայն Օրենսգրքի 228 հոդվածի, գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականատերը: Գրավատու կարող է լինել ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը: Իրավունքի գրավատու կարող է լինել այն անձը, ում պատկանում է գրավ դրվող իրավունքը:

Գրավատուն իրավունք ունի օգտվել գրավի առարկայից դրա նշանակության համապատասխան, այդ թվում՝ դրանից ստանալ պտուղներ և եկամուտներ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Նա իրավունք ունի նաև օտարել գրավի առարկան, այն հանձնել վարձակալության կամ անհատույց օգտագործման կամ տնօրինել այլ կերպ միայն գրավառուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Գրավառու այն անձն է, ով ընդունում է գույքը կամ գույքային իրավունքը որպես գրավ, օրենքով կամ պայմանագրով սահմանված հիմքերով՝ գրավառուի գույքի նկատմամբ ունի գույքային իրավունք (գրավի իրավունք)՝ ի ապահովումն իր հանդեպ պարտապանի դրամական կամ այլ պարտավորության կատարման: Գրավառուն հանդիսանում է գրավով ապահովված պարտավորության պարտատեր:

Գրավառուն իրավունք ունի օգտվել իրեն հանձնված գրավի առարկայից միայն պայմանագրով նախատեսված դեպքերում: Նրա վրա պայմանագրով կարող է դրվել գրավի առարկայից պտուղներ և եկամուտներ քաղելու պարտականություն: Ինքնակամ պարտավորությունը մարելու նպատակով կամ ի շահ գրավատուի:

Գրավատուն կամ գրավառուն, կախված այն բանից, թե նրանցից ում մոտ է գտնվում գրավ դրված գույքը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, պարտավոր է ապահովագրել գրավ դրված գույքը, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այն պահպանելու համար, մյուս կողմին անհապաղ տեղեկացնել գույքի կորստյան կամ վնասվածքի սպառնալիքի ծագման մասին: Գրավատուն և գրավառուն իրավունք ունեն փաստաթղթերով ու փաստացի ստուգել մյուս կողմի մոտ գտնվող գրավ դրված գույքի առկայությունը, քանակը, վիճակը և պահպանման պայմանները:

Գրավատուն կրում է գրավ դրված գույքի պատահական ոչնչացման, կորստի կամ վնասվածքի ռիսկը, եթե այլ բան նախատեսված չէ գրավի մասին պայմանագրով:

Օրենսդրությամբ նախատեսվում են նաև դրույթներ գրավի առարկայի ոչնչացման, կորստի կամ վնասվածքի համար գրավառուի պատասխանատվության մասին (հոդված 239):

Գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելը և այն իրացնելը

Գրավառուն իրավունք ունի գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածել գրավատուի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար այնպիսի հանգամանքներում, որոնց համար պատասխանատվություն է կրում գրավատուն:

Առանց դատարան դիմելու՝ գրավ դրված գույքի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջները բավարարել, ինչպես նաև գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնել թույլատրվում է, եթե՝

1) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնությունը, պայմանով, որ գրավի պայմանագիր կնքելու համար չի պահանջվել երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, կամ առկա է գրավի պայմանագրի կնքման համար համաձայնություն կամ թույլտվություն տված

երրորդ անձի՝ նոտարական կարգով վավերացված համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին, կամ

2) դա նախատեսված է նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով, պայմանով, որ գրավի պայմանագիր կնքելու համար չի պահանջվել երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, կամ առկա է գրավի պայմանագրի կնքման համար համաձայնություն կամ թույլտվություն տված երրորդ անձի՝ նոտարական կարգով վավերացված համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

Գրավի առարկայի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն դատարանի վճռով, եթե գրավի առարկան օրենքով կամ այլ իրավական ակտով ճանաչված է հանրության համար նշանակալից պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեք ունեցող գույք:

Եթե գրավի առարկան հանրության համար նշանակալից պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեք ունեցող գույք է, ապա առանց դատարան դիմելու՝ գրավ դրված գույքի իրացման գումարի հաշվին գրավառուի պահանջները բավարարելու, ինչպես նաև գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու թույլտվությունը կամ համաձայնությունն առջինն է:

Վերը նշված համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Գրավ դրված գույքն իրացվում (վաճառվում) է հրապարակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով: Նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնությանը կարող է սահմանվել գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգ:

Սինչև հրապարակային սակարկությունների կազմակերպման և անցկացման կարգի, որը հաստատված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 78-83 հոդվածներով:

Աճուրդին ոչ մի գնորդ չներկայանալու կամ աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնին ավելացում չկատարվելու պատճառներով յուրաքանչյուր կրկնակի աճուրդ անցկացնելու դեպքում վաճառվող գույքի նախնական գինն իջեցվում է տասը տոկոսով: Երկրորդ աճուրդից հետո գույքը չվաճառելու դեպքում գույքն առաջարկվում է պահանջատիրոջը:

Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարի բաշխումը կարգավորվում է ՀՀ ՔՕ-ի 251 հոդվածով, որի համաձայն՝ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից՝ այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո, բավարարում են գրավառուի (բանկի) պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին:

Գրավով ապահովված պարտավորությունը վաղաժամկետ կատարելը, գրավի դադարելը

Օրենսգրքի 246 հոդվածում պարունակվում է այն հիմքերի ցանկը, որոնց ի հայտ գալու դեպքում գրավառուն կարող է պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը, իսկ այդ պահանջը չբավարարելու դեպքում՝ բռնագանձում տարածելու գրավի առարկայի վրա կամ միայն պահանջել պարտավորության վաղաժամկետ կատարում:

Գրավառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը, եթե՝


- ⇒ գրավատուի մոտ թողնված գրավի առարկան պայմանագրի պայմանների խախտմամբ դուրս է եկել նրա տիրապետությունից
 - ⇒ գրավատուն խախտել է գրավի առարկան փոխարինելու կանոնները
 - ⇒ գրավի առարկան կորել է այնպիսի հանգամանքներում, որոնց համար գրավառուն պատասխանատու չէ, իսկ գրավատուն չի օգտվել ՀՀ ՔՕ-ով նախատեսված՝ գրավի առարկան փոխարինելու իր իրավունքից:
- Գրավառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը, իսկ այդ պահանջը չբավարարելու դեպքում՝ բռնագանձում տարածելու գրավի առարկայի վրա, եթե՝
- ⇒ գրավատուն խախտել է հաջորդող գրավի կանոնը
 - ⇒ գրավատուն չի կատարել Օրենսգրքի 237 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պարտականությունները
 - ⇒ գրավատուն խախտել է գրավ դրված գույքի օգտագործման և տնօրինման կանոնները (հոդված 238, 1-ին և 2-րդ կետեր):

Համաձայն Օրենսգրքի 247 հոդվածի, գրավը դադարում է.

- գրավով ապահովված պարտավորությունը դադարելով
- գրավատուի պահանջով՝ գրավառուի կողմից իր պարտավորությունները կոպտորեն խախտելու դեպքում, որոնք ստեղծում են գրավ դրված գույքի կորստյան կամ վնասվածքի սպառնալիք
- գրավ դրված գույքի ոչնչացման կամ գրավ դրված իրավունքը դադարելու դեպքում, եթե գրավատուն չի օգտվել Օրենսգրքի 237 հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքից (գրավի առարկան փոխարինելու իր իրավունքից)
- գրավ դրված գույքը հրապարակային սակարկություններով վաճառվելու դեպքում:

Գրավի տեսակները և նրանց առանձնահատկությունները

Համաձայն Օրենսգրքի 253 հոդվածի, գրավի տեսակները յոթն են, որոնք բերված են նկար 28-ում:



Նկար 28. Գրավի տեսակները

Իրավունքի գրավի դեպքում գրավի առարկան օտարման ենթակա իրավունքն է, ներառյալ հողամասի, շենքի, շինության, բնակելի տան (բնակարանի) նկատմամբ վարձակալության իրավունքը, տնտեսական ընկերակցության կամ ընկերության գույքում բաժնեմասի իրավունքը, պարտքի պահանջները: Ժամկետային իրավունքը գրավի առարկա կարող է լինել միայն մինչև դրա գործողության ժամկետի ավարտը: Արժեթղթով հավաստված իրավունքի գրավի դեպքում արժեթուղթը հանձնվում է գրավառուին կամ բանկի կամ նոտարի դեպոզիտ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Դրամական միջոցները, որոնք հանդիսանում են գրավի առարկա, պահվում են բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում: Այդ գումարի վրա հաշվեգրվող տոկոսները պատկանում են գրավատուին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Կոշտ գրավ է համարվում այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով:

Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը: Գրավի այս տեսակը կարգավորվում է Օրենսգրքի հատուկ հոդվածով (հոդված 259) և ունի զգալի տարբերություններ գրավի մյուս տեսակների նկատմամբ: Դրանք են՝

- ❖ Գրավի առարկա հանդիսանում են ոչ թե կոնկրետ գույքը, այլ գրավատուի ընթացիկ տնտեսական շրջանառության մեջ օգտագործվող ապրանքները (ապրանքային պաշարներ, հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, պատրաստի արտադրանք և այլն): Այդ ապրանքները մնում են գրավատուի մոտ, որն իրավունք ունի փոխել դրանց կազմը և բնական ձևը, պայմանով, որ դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի մասին պայմանագրում նշվածից:

- ❖ Շրջանառության մեջ գտնվող գրավ դրված ապրանքների արժեքի նվազեցումը թույլատրվում է գրավով ապահովված պարտավորության կատարված մասին համաչափ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

- ❖ Գրավատուի կողմից օտարված՝ շրջանառության մեջ գտնվող ապրանքները ձեռք բերողի սեփականությանն անցնելու պահից դադարում են գրավի առարկա լինել, իսկ գրավի պայմանագրում նշված ապրանքները դառնում են գրավի առարկա՝ գրավատուի մոտ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից:

- ❖ Գրավատուն պարտավոր է վարել գրավների գրառման գիրք, որի մեջ գրառումներ են կատարվում վերջին գործառնության օրվա դրությամբ գրավի պայմանների և գրավ դրված ապրանքների կազմը կամ բնական ձևը փոփոխող բոլոր գործառնությունների մասին՝ ներառյալ դրանց վերամշակումը, եթե գրավատուի գործունեության նկատմամբ հսկողության այլ պայմաններ նախատեսված չեն պայմանագրով:

- ❖ Գրավատուի կողմից այս տեսակի գրավի պայմանները խախտելիս գրավառու իրավունք ունի գրավ դրված ապրանքների վրա իր նշանները դնելու միջոցով կասեցնել դրանց հետ կատարվող գործառնությունները մինչև խախտման վերացումը:

- ❖ Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը պարտավորության կատարման ապահովման հեռանկարային ձևերից մեկն է: Այն մի կողմից չի կապում գրավատուի ձեռքերը, նրան հնարավորություն տալով ազատ տնօրինել, օգտագործել և տիրապետել գրավ դրված ապրանքը, իրականացնելով դրա փոխարինումը նորով: Մյուս կողմից՝ պարտատիրոջ շահերը նույնպես ապահովվում են բավականին հուսալի, քանի որ գրավատուին եկած ցանկացած ապրանք դառնում է գրավի առարկա: Դրա համար էլ նույնիսկ գրավի առարկայի ոչնչացումը չի նշանակում գրավի դադարում, քանի որ այդպիսի առարկա դառնում է նոր մուտք եղած ապրանքը:

Գրավական է համարվում այն գրավը, որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը (հոդված 254): Որպես գրավական կարող են լինել գույքի տարբեր տեսակներ (ավտոտրանսպորտ, ոսկի, այլ թանկարժեք մետաղներ, արտարժույթ և այլն):

Հիփոթեք

Հիփոթեք է համարվում գրավը, որի առարկան, անկախ նրանից, այն անշարժ թե շարժական գույք է, մնում է գրավատուի կամ երրորդ անձի տիրապետման և օգտագործման ներքո:

Հիփոթեքի պայմանագրով մի կողմը՝ գրավառու, որը հիփոթեքով ապահովված վարկային պայմանագրով կամ այլ պարտավորությամբ (հիմնական պարտավորությամբ) պարտատերն է, այդ պարտավորությամբ գրավ

դրված գույքի արժեքից գրավատուի այլ պարտատերերի հանդեպ իր դրամական պահանջները բավարարելու նախապատվության իրավունք ունի:

Հիփոթեքի պայմանագրում պետք է նշված լինեն՝

⇒ կողմերի (գրավատուի և գրավառուի) անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը)

⇒ հիփոթեքի առարկան, հիփոթեքով ապահովված պարտավորության ելքունը, չափը և կատարման ժամկետը

⇒ այն իրավունքը, որի ուժով հիփոթեքի առարկա գույքը պատկանում է գրավատուին, և այդ իրավունքը գրանցած պետական մարմինը

⇒ հիփոթեքով ապահովված պարտավորությունը, դրա գումարը, ծագման հիմքերը և դրա կատարման ժամկետը:

Եթե պարտավորությունը հիմնված է որևէ պայմանագրի վրա, ապա պետք է նշվեն պայմանագրի կողմերը, կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը: Եթե հիփոթեքով ապահովված պարտավորության գումարը որոշվելու է ապագայում, ապա հիփոթեքի պայմանագրում պետք է նշվեն այն որոշելու կարգը և մյուս անհրաժեշտ պայմանները:

Եթե հիփոթեքով ապահովված պարտավորությունը պետք է կատարվի մաս առ մաս, ապա հիփոթեքի պայմանագրում պետք է նշվեն համապատասխան վճարների ժամկետները կամ պարբերականությունը, դրանց չափերը կամ այդ չափերը որոշելու համար անհրաժեշտ պայմանները:

Հիփոթեքի առարկան որոշվում է պայմանագրերում դրա անվանման, գտնվելու վայրի նշումով և այդ առարկայի նույնացման համար բավարար նկարագրությամբ:

Հիփոթեքի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր՝ գրավատուի և գրավառուի, ինչպես նաև պարտապանի, եթե գրավատուն պարտապանը չէ, ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

Հիփոթեքի պայմանագիրը պետք է վավերացնի նուտարը: Անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով գրավի իրավունքը ենթակա է գրանցման:

Յոթերորդի հիփոթեք: Հիփոթեքի պայմանագրով կարող են գրավ դրվել միայն քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը պատկանող հողամասերը:

Յոթերորդի նկատմամբ ընդհանուր սեփականության դեպքում հիփոթեք կարող է սահմանվել քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող այն հողամասի նկատմամբ, որը բնեղենով առանձնացված է ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասից:

Յոթերորդի հիփոթեքի դեպքում գրավի իրավունքը չի տարածվում այդ հողամասի վրա գտնվող կամ կառուցվող՝ գրավատու շենքերի և շինությունների վրա, եթե այլ պայման նախատեսված չէ հիփոթեքի պայմանագրում: Պայմանագրում նման պայմանի բացակայության դեպքում հողամասի վրա բռնագանձում տարածելիս գրավատուն պահպանում է այդ շենքի կամ շինության նկատմամբ իրավունքը և սահմանափակ օգտագործման (սերվիտուտի) իրավունք է ձեռք բերում հողամասի այն մասի նկատմամբ, որն անհրաժեշտ է շենքը կամ շինությունն իր նշանակությանը համապատասխան օգտագործելու համար: Յոթերորդի այդ մասն օգտագործելու պայմանները որոշվում են գրավատուի և գրավառուի համաձայնությամբ, իսկ վեճի դեպքում՝ դատարանով:

Յոթերորդի գրավատուն իրավունք ունի առանց գրավառուի համաձայնության, տնօրինել այդ հողամասի վրա գտնվող շենքերը և շինությունները, որոնց վրա գրավի իրավունքը չի տարածվում:

Եթե գրավատուի հողամասի վրա գտնվող կամ կառուցվող շենքը կամ շինությունը գրավ է դրված նույն գրավառուին, գրավատուն իրավունք ունի այդ շենքը կամ շինությունը տնօրինել միայն գրավառուի համաձայնությամբ: Գրավատուն իրավունք ունի առանց գրավառուի համաձայնության, հիփոթեքի պայմանագրով գրավ դրված հողամասի վրա սահմանված կարգով կառուցել շենքեր և շինություններ, ընդ որում այդ շենքի և շինությունների վրա գրավի իրավունքը չի տարածվում:

Եթե գրավ դրված հողամասի վրա գրավատուի շինարարությունը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել այդ հողամասի՝ հիփոթեքով գրավառուին տրամադրված ապահովության վատթարացման, գրավառուն իրավունք ունի պահանջել փոփոխելու հիփոթեքի պայմանագիրը, եթե դա անհրաժեշտ է՝ կառուցված շենքերի կամ շինությունների վրա հիփոթեք տարածելու միջոցով:

Եթե հիփոթեքը սահմանվել է այն հողամասի նկատմամբ, որի վրա գտնվող շենքը կամ շինությունը պատկանում է ոչ թե գրավատուին, այլ ուրիշ անձի, ապա այդ հողամասի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու դեպքում հողամասը ձեռք բերողին են անցնում այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք այդ անձի հանդեպ ունի գրավատուն:

Բնակելի տների (բնակարանների), շենքերի և շինությունների հիփոթեք:

Հիփոթեքի հիմնական սկզբունքներն ամբողջությամբ կիրառելի են բնակելի տների (բնակարանների), շենքերի և շինությունների հիփոթեքի նկատմամբ: Դրա հետ միասին հիփոթեքի այս տարատեսակն ունի իր առանձնահատկությունները:

Պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող բազմաբնակարան և անհատական բնակելի տների ու բնակարանների հիփոթեք չի թույլատրվում: Հյուրանոցները, հանրակացարանները, հանգստյան տները, ամառանոցները, այգետնակները և մշտական բնակության համար չնախատեսված այլ շենքերն ու շինությունները կարող են հիփոթեքի առարկա լինել ընդհանուր հիմունքներով:

Բազմաբնակարան շենքի բնակարանի, որի մասերը (հիմքը, տանիքը, աստիճանները) գտնվում են գրավատուի և այլ անձանց ընդհանուր բաժնային սեփականության ներքո, հիփոթեքի դեպքում բնակարանի հետ

միասին գրավ դրված է համարվում տան նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքում համապատասխան բաժինը:

Բնակելի տունը, շենքը կամ շինությունը կառուցելու համար վարկ տրամադրելիս [հիփոթեքի](#) պայմանագրում կարող է նախատեսվել պարտավորության ապահովում՝ անավարտ շինարարությամբ և գրավատուին պատկանող շինարարության համար ձեռք բերված նյութերով ու սարքավորումներով:

Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելը և այն իրացնելը հիմք չէ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձանց վտարելու համար, բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա) բնակելի տունը (բնակարանը) հիփոթեքի պայմանագրով գրավ է դրված՝ ի ապահովումն այդ տան (բնակարանի) ձեռքբերման կամ շինարարության համար տրամադրված վարկի վերադարձման

բ) բնակելի տարածության իրավունք ունեցող անձինք, մինչև հիփոթեքի պայմանագիրը կնքելը, ստանձնել են նոտարական կարգով վավերացված պարտավորություն այդ իրավունքից հրաժարվելու մասին:

Նման դեպքերում, գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց և այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը: Գրավ դրված բնակելի տունը կամ բնակարանն իրացվելիս գրավ տանը կամ բնակարանում մինչև հիփոթեքի պայմանագիր կնքելը բնակելի տարածության վարձակալության պայմանագրի պայմաններով բնակվող անձինք ենթակա չեն վտարման, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

12.8. ԵՐԱՇԽԻՔ

[Երաշխիքի հասկացությունը](#)

Չամաձայն Օրենսգրքի 383 հոդվածի՝ *երաշխիքի* ուժով երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

Երաշխիքն ապահովում է բենեֆիցիարի (պարտատիրոջ) հանդեպ պրինցիպալի պարտավորության (հիմնական պարտավորության) պատշաճ կատարումը: Երաշխիք տալու համար պրինցիպալը երաշխիք տված անձին վճարում է պայմանավորված վարձատրությունը:

Տվյալ իրավահարաբերություններում միշտ մասնակցում են 3 անձինք.

- երաշխիք տվող անձը՝ բանկ, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն
- պրինցիպալ՝ անձ, որի խնդրանքով տրվում է երաշխիքը
- բենեֆիցիար՝ պրինցիպալի պարտատերը, որի օգտին վճարվում է տրված երաշխիքով նախատեսված գումարը՝ նրա կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

Եթե խոսքը վարկի վերադարձի ապահովման մասին է, ապա փոխառուն (պրինցիպալը) դիմում է բանկին (երաշխիք տվող անձ) բանկ-փոխառուին (բենեֆիցիարին) երաշխիքային նամակ ներկայացնելու խնդրանքով, որը պարունակում է երաշխիք տվող անձի պարտավորությունը վճարելու այնտեղ նշված գումարը՝ պրինցիպալի կողմից ստացված վարկը չվերադարձնելու դեպքում:

Պարտավորությունների կատարման ապահովման այս եղանակի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երաշխիքն իրավաբանորեն կապված չէ դրանով ապահովված հիմնական պարտավորության հետ, այսինքն՝ երաշխիքով նախատեսված պարտավորությունն ինքնուրույն է և անկախ հիմնական պարտավորությունից, որի կատարման ապահովման համար այն տրվել է, եթե նույնիսկ երաշխիքում վկայակոչվում է այդ պարտավորությունը: Դա նշանակում է, որ երաշխիքը չի դադարում նույնիսկ հիմնական պարտավորությունը անվավերության դեպքում: Դա նրան դարձնում է պարտավորությունների կատարման ապահովման առավել արդյունավետ եղանակներից մեկը, և դրա համար էլ, ըստ երևույթին՝ առավել թանկը: Երաշխիք տվող անձը պատասխանատվություն է կրում իր կողմից տրված երաշխիքով, անկախ հիմնական պարտապանի (պրինցիպալի) պատասխանատվությունից:

[Երաշխիքի առանձնահատկությունները](#)

ՀՀ ՔՕ-ով (հոդվածներ 386-388) նախատեսված են պարտավորությունների կատարման ապահովման այս ձևի հետևյալ առանձնահատկությունները՝ անհետկանչելիությունը, երաշխիքով իրավունքների անփոխանցելիությունը և ուժի մեջ մտնելու պահը:

Երաշխիքը չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

Երաշխիք տված անձի հանդեպ բենեֆիցիարին պատկանող պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

Այսպիսով, բուն երաշխիքի տեքստում կարող է նախատեսվել որոշակի հանգամանքներում երաշխիքը հետ կանչելու, ինչպես նաև պահանջի իրավունքի զիջման (ցեսիայի) հնարավորություն:

Երաշխիքն ուժի մեջ է մտնում այն տալու օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով: Գործնականում երաշխիքում կարող են նախատեսվել նրա ուժի մեջ մտնելու այլ դեպքեր, այդ թվում՝

- ⇒ փոխառուի կողմից միջնորդավճարը երաշխիք տված անձին փոխանցելուց հետո
- ⇒ փոխառուի կողմից ստացված վարկի ամբողջ գումարը նրա կողմից նշված հաշվին գրանցելու պահից

⇒ միայն վարկը վարկային պայմանագրով նախատեսված նպատակներով օգտագործելու դեպքում:

Պահանջներ ներկայացնելը

ՀՀ Օրենսգրքով կարգավորվում են երաշխիքներով պահանջներ ներկայացնելու վերաբերյալ կանոնները (հոդված 389):

Այն դեպքում, երբ պարտապանը (պրինցիպալը) խախտում է իր պարտավորությունները, պարտատերը (բենեֆիցիարը) պետք է գրավոր դիմի երաշխիք տված անձին՝ համապատասխան դրամական գումարը վճարելու մասին պահանջով՝ կցելով երաշխիքում նշված փաստաթղթերը: Բենեֆիցիարը պահանջի կամ դրա հավելվածի մեջ պետք է նշի, թե որն է պրինցիպալի կողմից հիմնական պարտավորության խախտումը, որի ապահովման համար տրված է երաշխիքը: Տվյալ գրավոր պահանջը երաշխիք տված անձին պետք է ներկայացվի մինչև երաշխիքով սահմանված ժամկետի ավարտը, որով այն տրվել է:

Երաշխիք տված անձը, իր հերթին, պարտավոր է՝

- բենեֆիցիարի պահանջն ստանալուց հետո անհապաղ տեղեկացնել պրինցիպալին և նրան հանձնել պահանջի պատճենը՝ դրան վերաբերող բոլոր փաստաթղթերով
- երաշխիքում նշված ժամկետում, իսկ դրա բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում և բարեխիղճ հոգատարությամբ քննարկել բենեֆիցիարի պահանջը՝ դրան կից փաստաթղթերով և պարզել պահանջի ու դրան կից փաստաթղթերի համապատասխանությունը երաշխիքի պայմաններին:

Եթե երաշխիքի գործողության ժամկետը բավարար չէ այդ փաստաթղթերը հավաքելու համար, ապա նա վճարը նույնպես չի կարող գանձել:

Օրենսգրքով նախատեսված են այն նաև այն դեպքերը, երբ երաշխիք տված անձը որոշակի հանգամանքներում կարող է հրաժարվել երաշխիքով բենեֆիցիարի պահանջը բավարարելուց (հոդված 389):

ա) եթե այդ պահանջը կամ դրան կից փաստաթղթերը չեն համապատասխանում երաշխիքի պայմաններին

բ) դրանք երաշխիք տված անձին ներկայացվել են երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Այս դեպքում երաշխիք տված անձը պարտավոր է բենեֆիցիարին անհապաղ տեղեկացնել նրա պահանջը մերժելու մասին:

Եթե մինչև բենեֆիցիարի պահանջը բավարարելը երաշխիք տված անձին հայտնի է դարձել, որ երաշխիքով ապահովված հիմնական պարտավորությունը լրիվ կամ համապատասխան մասով արդեն կատարվել է, դադարել է այլ հիմքերով կամ անվավեր է, նա պետք է այդ մասին անհապաղ տեղեկացնի բենեֆիցիարին և պրինցիպալին: Նման հաղորդումից հետո բենեֆիցիարից ստացած կրկնակի պահանջը բավարարվում է երաշխիք տված անձի կողմից:

Օրենքով նախատեսվում են բենեֆիցիարի (պարտատիրոջ) առջև երաշխիք տված անձի պարտավորության սահմանները, որը սահմանափակվում է այն գումարով, որով տրված է երաշխիքը: Սակայն երաշխիքը տված անձի կողմից երաշխիքով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար երաշխիք տված անձի պատասխանատվությունը բենեֆիցիարի առջև չի սահմանափակվում այն գումարով, որով տրված է երաշխիքը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով (ՀՀ ՔՕ, հոդված 392):

Երաշխիքի դադարելը

Օրենսգրքով սահմանվում են երաշխիքի (բենեֆիցիարի առջև երաշխիք տված անձի պարտավորության) դադարման հետևյալ դեպքերը՝

1. բենեֆիցիարին վճարվել է այն գումարը, որով տրված է երաշխիքը
2. երաշխիքով որոշված ժամկետի ավարտը, որով այն տրված է
3. բենեֆիցիարը հրաժարվում է երաշխիքով իր իրավունքներից և երաշխիքը վերադարձվում է երաշխիք տված անձին
4. բենեֆիցիարը հրաժարվում է երաշխիքով իր իրավունքներից, երաշխիք տված անձին պարտավորություններից ազատելու մասին գրավոր դիմում տալու միջոցով:

Եթե երաշխիք տված անձին հայտնի է դարձել երաշխիքը դադարելու մասին, ապա այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնի պրինցիպալին:

Երաշխիք տված անձն իրավունք ունի պրինցիպալից (փոխառուից) պահանջել հետադարձ պահանջի կարգով հատուցելու այն գումարները, որոնք երաշխիքի հիման վրա վճարվել են բենեֆիցիարին (պարտատիրոջը): Դա սահմանվում է երաշխիք տված անձի և պրինցիպալի միջև համաձայնությամբ:

Հայաստանում ներկայումս լայնորեն կիրառվում է մի բանկի կողմից մեկ այլ բանկին երաշխիքի տրամադրումը՝ վերջինիս կողմից առաջին բանկի հաճախորդին վարկ տալու ժամանակ: Նման իրավիճակն առաջանում է իր հաճախորդին վարկ տրամադրելու համար բանկի ազատ ռեսուրսների բացակայության հետ կապված, կամ երբ խոշոր գումարով վարկի տրամադրումը խախտում է նրա հաշվեկշռի իրացվելիությունը:

Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկերի կողմից տրված երաշխիքները (ինչպես նաև երաշխավորությունները) ունեն 100% ռիսկ, իսկ գումարը սահմանափակվում է բանկի ընդհանուր (սեփական) կապիտալի նկատմամբ որոշակի տոկոսով:

12.9. ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորության հասկացությունը:

Երաշխավորությունը պարտավորությունների կատարման ապահովման առավել տարածված եղանակներից մեկն է: Երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար (հոդված 375):

Ի տարբերություն երաշխիքի, երաշխավորության գծով փոխհարաբերությունները ձևակերպելու համար երաշխավորի և վարկատու բանկի միջև կնքվում է երաշխավորության պայմանագիր:

Երաշխավորության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է երաշխավորության պայմանագրի անվավերության:

Երաշխավորություն կարող են տալ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք: Վարկի վերադարձման ապահովման այս ձևը պահանջում է երաշխավորի վճարունակության մանրակրկիտ վերլուծություն:

Գործող օրենսդրությունը պարունակում է դրույթ նաև ապագայում ծագելիք պարտավորության ապահովման համար երաշխավորության պայմանագիր կնքելու հնարավորության մասին (հոդված 375): Այդ դրույթը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում վարկային գծեր բացելու մասին պայմանագրերի համար, քանի որ վարկային գծի մասին պայմանագրով ստացված վարկը վերադարձնելու՝ փոխառուի պարտավորությունն այս դեպքում ծագում է նման պայմանագիր կնքելուց հետո, այսինքն՝ ապագայում: Այս դեպքում երաշխավորությունը կարող է տրվել ինչպես վարկային գծի բացելու մասին պայմանագիր կնքելիս, ապահովելով ապագա պարտավորությունը, այնպես էլ վարկային գծի շրջանակներում կոնկրետ վարկ տրամադրելու ժամանակ:

Երաշխավորությունը մեծացնում է վարկային պայմանագրով պարտավորությունների կատարման հավանականությունը, քանի որ փոխառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում բանկը իրավունք ունի պահանջ ներկայացնել երաշխավորին:


Երաշխավորության պայմանագրում պետք է նշվեն այն պայմանները, որոնք թույլ են տալիս որոշել, թե որ պարտավորության կատարման համար է տրված երաշխավորությունը: Երաշխավորությունը կարող է լինել լրիվ (վարկի ամբողջ գումարի և դրա գծով տոկոսների համար) կամ մասնակի (օրինակ, միայն տոկոսների գծով): Պայմանագրում նախատեսվում են կարգը և այն հանգամանքները, որոնց դեպքում երաշխավորը պարտավոր է կատարել իր պարտավորությունները:

Երաշխավորի պատասխանատվության տեսակները:

Օրենքով սահմանվում է երաշխավորի պատասխանատվությունը: Համաձայն Օրենսգրքի 377 հոդվածի, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվությունը նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

Համապարտ պատասխանատվության դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջել վարկի մարումը ինչպես պարտապանից (փոխառուից) և երաշխավորից համատեղ, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրից առանձին, ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Համապարտ պարտապաններից (փոխառուից կամ երաշխավորը) մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապանից: Թե՛ փոխառուն և թե՛ երաշխավորը պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

Եթե երաշխավորության պայմանագիրը կնքվում է ի ապահովման վարկային պայմանագրով պարտավորության կատարման, ապա երաշխավորության պայմանագրով համապարտ պատասխանատվությունը կարելի է ներկայացնել ստորև բերված նկար 29-ի միջոցով:



Նկար 29. Համապարտ պատասխանատվություն

Վարկատու բանկն իրավունք ունի պահանջել մարելու վարկի գծով պարտքը ինչպես վարկառուից և երաշխավորից համատեղ, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրից, ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:


Պահանջների ներկայացման այլ մեխանիզմ է կիրառվում սուբսիդիար պատասխանատվության դեպքում: Օրենսգրքի 415 հոդվածի կանոնները երաշխավորության նկատմամբ կիրառելիս, բխում է հետևյալը՝

⇒ Մինչև երաշխավորին պահանջ ներկայացնելը, որը, համաձայն երաշխավորության պայմանագրի, լրացուցիչ պատասխանատվություն (սուբսիդիար պատասխանատվություն) է, պարտատերը պետք է պահանջ ներկայացնի հիմնական պարտապահին (օրինակ, վարկառուին):


⇒ Եթե հիմնական պարտապահը (վարկառուն) հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց, կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը, ապա այդ պահանջը կարող է ներկայացվել երաշխավորին:

⇒ Պարտատերն իրավունք չունի հիմնական պարտապահին ուղղված իր պահանջի բավարարումը պահանջել երաշխավորից, եթե այն կարող է բավարարվել հիմնական պարտապահի դեմ ուղղված հակընդդեմ պահանջի հաշվանցով:

Եթե երաշխավորության պայմանագիրը կնքվում է ի ապահովումն վարկային պայմանագրով պարտավորության կատարման, ապա երաշխավորության պայմանագրով սուբսիդիար պատասխանատվությունը կարելի է ներկայացնել ստորև բերված նկար 30-ի միջոցով:



- 1) Սկզբից պահանջ է ներկայացվում վարկառուին
- 2) Դրանից հետո պահանջ է ներկայացվում երաշխավորին, եթե վարկառուն հրաժարվել է վարկատուի՝ բանկի պահանջները բավարարելուց կամ վարկատու բանկը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացրած պահանջի պատասխանը:



Նկար 30. Սուբսիդիար պատասխանատվություն

Երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապահը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապահի կողմից պարտավորություն չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով (հոդված 377): Սակայն պայմանագրով կարող է սահմանվել երաշխավորի սահմանափակ պատասխանատվություն՝ երաշխավորության գումարը որոշելիս կամ երաշխավորի կողմից վնասների որոշակի մասի վճարումը (օրինակ, չվճարված տոկոսների գումարը) նշելու միջոցով:

Երաշխավորի իրավունքները: Օրենքով երաշխավորը կրում է ոչ միայն պատասխանատվություն, այլ նաև օգտվում է որոշակի իրավունքներից:

Երաշխավորը պարտապահին մատուցած ծառայությունների համար ունի վարձատրության իրավունք, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Երաշխավորի իրավունքն է պարտատիրոջ պահանջի դեմ անել այնպիսի առարկություններ, որոնք կարող էր ներկայացնել պարտապահը, եթե այլ բան չի բխում երաշխավորության պայմանագրից: Երաշխավորը չի կորցնում առարկելու իրավունքը նույնիսկ այն դեպքում, երբ պարտապահը դրանից հրաժարվել է կամ ընդունել է իր պարտքը:

Պարտավորությունը կատարած երաշխավորին են անցնում այդ պարտավորությամբ պարտատիրոջ իրավունքները և պարտատիրոջ՝ որպես գրավառուի պատկանող իրավունքներն այն ծավալով, որով երաշխավորը բավարարել է պարտատիրոջ պահանջը: Երաշխավորն իրավունք ունի նաև պարտապահից պահանջել հատուցելու պարտատիրոջը վճարած գումարի տոկոսներն ու պարտապահի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ, իր կրած այլ վնասները:

Երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը կատարած պարտապահը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել երաշխավորին պարտավորությունը (պարտատիրոջ պահանջը կրկնակի անգամ կատարելուց խուսափելու համար): Հակառակ դեպքում, իր հերթին պարտավորությունը կատարած երաշխավորն իրավունք ունի պարտատիրոջից բռնագանձել անհիմն ստացածը կամ հետադարձ պահանջ ներկայացնել պարտապահին: Վերջին դեպքում պարտապահը կարող է անհիմն ստացածը վերադարձնելու պահանջ ներկայացնել պարտատիրոջը:

Պարտավորությունը երաշխավորի կողմից կատարելուց հետո պարտատերը պարտավոր է երաշխավորին հանձնել պարտապահի դեմ ունեցած իր պահանջը հավաստող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջը

ապահովող իրավունքները: Այս կանոնները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ երաշխավորի և պարտապանի միջև կնքված պայմանագրով և չի բխում նրանց հարաբերություններից:

Երաշխավորությունը դադարելու: Օրենսգրքով նախատեսված են երաշխավորությունը դադարելու հետևյալ դեպքերը.

- դրանով ապահովված պարտավորությունը դադարելու, ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների
 - երաշխավորությամբ ապահովված պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար
 - եթե պարտատերը հրաժարվել է ընդունել պարտապանի կամ երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը
 - երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով, որով այն տրվել է: Նման ժամկետի բացակայության դեպքում երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը, երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, երաշխավորի դեմ հայց չի հարուցել
 - եթե պարտատերը երաշխավորության պայմանագիրը կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել, երբ հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշվել է պահանջի պահով:
- Երաշխիքի և երաշխավորության միջև կան որոշակի տարբերություններ.
- երաշխիքը (ի տարբերություն երաշխավորության) կախված չէ հիմնական պարտավորությունից, որի կատարման ապահովման համար այն տրվել է
 - օրենքով որպես երաշխիք տվող անձ կարող են հանդես գալ բանկերը, այլ վարկային հաստատությունները և ապահովագրական կազմակերպությունները, իսկ որպես երաշխավորներ՝ տարբեր իրավաբանական անձինք և քաղաքացիները
 - ըստ հարաբերությունների հաստատման ձևի. երաշխիք տվող բանկը վարկատու բանկի հետ կնքում է բանկային երաշխիքի պայմանագիր կամ նրան է ուղարկում երաշխիքային նամակ: Երաշխավորության հարաբերությունները հաստատվում են վարկատու բանկի և երաշխավորի միջև երաշխավորության պայմանագիր կնքելու հետևանքով:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչպե՞ս կարելի է բնութագրել [բանկային ավանդի](#) և բանկային հաշվի պայմանագրերը:
2. Որո՞նք են բանկային ավանդների տեսակները:
3. Ի՞նչ իրավունքներ ունի քաղաքացի ավանդատուն:
4. Ինչպե՞ս է կատարվում բանկային ավանդների դիմաց տոկոսների հաշվարկումը և վճարումը:
5. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկային գրքուկը:
6. Ի՞նչ կանոններ են սահմանված ավանդի վերադարձի ապահովման վերաբերյալ:
7. Ի՞նչ կանոններ են սահմանված բանկային հաշվի պայմանագրի կնքման վերաբերյալ:
8. Ի՞նչ կանոններ են սահմանված բանկի կողմից հաշվով գործառնությունների կատարման և ժամկետների վերաբերյալ:
9. Ինչպե՞ս է բանկի և հաճախորդի հանդիպական պահանջների հաշվանցը:
10. Որո՞նք են հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու հիմքերը և հերթականությունը:
11. Որո՞նք են բանկային հաշվի պայմանագրի լուծման հիմքերը:
12. Ինչպե՞ս կարելի է բնութագրել փոխառության և վարկային պայմանագրերը:
13. Որո՞նք են փոխառության և վարկի իրավական տարբերությունները:
14. Ի՞նչ կանոններ են սահմանված փոխառության գումարը վերադարձնելու վերաբերյալ:
15. Որո՞նք են փոխատուի՝ փոխառության գումարը և հաշվարկված տոկոսները փոխառուից վաղաժամկետ վերադարձնելու պահանջի հիմքերը:
16. Ինչպե՞ս կարելի է բնութագրել ֆակտորինգի պայմանագիրը:
17. Ինչպե՞ս կարելի է պատկերել ֆակտորինգի կազմակերպման սխեման:
18. Որո՞նք են ֆակտորինգի գործարքի կողմերի իրավունքները և պարտականությունները:
19. Ինչպե՞ս կարելի է բնութագրել ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը:
20. Ինչպե՞ս կարելի է պատկերել լիզինգի կազմակերպման ընդհանուր սխեման:
21. Որո՞նք են լիզինգի գործարքի իրավունքները և պարտականությունները:
22. Ինչպե՞ս կարելի է բնութագրել գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը:
23. Ինչպե՞ս կարելի է բնութագրել գրավը՝ որպես պարտավորությունների կատարման ապահովման եղանակ:
24. Ինչպե՞ս կարելի է բնութագրել գրավով ապահովվող պահանջի ծավալը և գրավի առարկան:
25. Ինչպե՞ս կարելի է բնութագրել գրավի պայմանագիրը:
26. Ո՞րն է գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու կարգը:
27. Որո՞նք են գրավի տեսակները և նրանց առանձնահատկությունները:
28. Որո՞նք են հիփոթեքի վերաբերյալ սահմանված կանոնները:
29. Որո՞նք են երաշխիքի և երաշխավորության հասկացությունները և դրանց համեմատական բնութագիրը:

- 30. Որո՞նք են երաշխիքի առանձնահատկությունները և դադարման հիմքերը:
- 31. Ինչպե՞ս կարելի է բացատրել համապարտ և սուբսիդիար պատասխանատվությունը:
- 32. Որո՞նք են երաշխավորի պատասխանատվության տեսակները:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) ցպահանջ բանկային ավանդի պայմանագրով բանկը կարող է տոկոսներ չվճարել դրանից
- բ) բանկային ավանդի պայմանագիրը, որով ավանդատուն քաղաքացի է, հրապարակային պայմանագիր է
- գ) հրավաքանական անձինք իրավունք չունեն այլ անձանց փոխանցել իրենց ցպահանջ ավանդներում (դեպոզիտներում) եղած դրամական միջոցները
- դ) քաղաքացու հետ կնքված ժամկետային բանկային ավանդի պայմանագրով բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով:

Հ ա ր ց 2. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից առաջին հերթին բավարարվում են.

- ա) գրավատուի պահանջները
- բ) գրավառուի պահանջները
- գ) գրավառուի պահանջները, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով
- դ) պահվում են այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարները:

Հ ա ր ց 3. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկը չի կարող հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել
- բ) բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները
- գ) հաճախորդն իրավունք չունի կարգադրել բանկին իր հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ հաճախորդի պարտավորությունների կատարման հետ
- դ) ճիշտ են բոլոր պատասխանները:

Հ ա ր ց 4. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) հիփոթեքի առարկա կարող է լինել շարժական գույքը, որը մնում է գրավատուի կամ երրորդ անձի տիրապետման և օգտագործման ներքո
- բ) անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրով գրավի իրավունքներ ենթակա է գրանցման
- գ) գրավատուն իրավունք ունի, առանց գրավառուի համաձայնության, հիփոթեքի պայմանագրով գրավ դրված հողամասի վրա կառուցել շենքեր
- դ) գրավ դրված բնակելի տան վրա բռնագանձում տարածելուց և այդ գույքն իրացնելուց հետո գրավատուի ընտանիքի բոլոր անդամները պարտավոր են ազատել զբաղեցրած տարածքը, բոլոր դեպքերում:

Հ ա ր ց 5. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) գրավով ապահովված պահանջը ներառում է միայն վարկի գումարը և տոկոսները
- բ) գրավի պայմանագրի էական պայմաններից է գրավով ապահովված պարտավորության կատարման ժամկետը
- գ) գրավի առարկա կարող է լինել ցանկացած գույք, առանց բացառության
- դ) գրավի առարկաները պետք է պատկանեն միայն պարտապահին:

Հ ա ր ց 6. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) երկարաժամկետ վարկային պայմանագրով կարող է նախատեսվել վճարների ինդեքսավորում կողմերի վերապահած պայմաններով
- բ) վարկի տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ վարկային պայմանագրով
- գ) նպատակային վարկավորման ժամանակ անհրաժեշտ է վարկային պայմանագրում նշել վարկի նպատակայնությունը
- դ) վարկի գումարը համարվում է վերադարձված այն վարկատու բանկին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, անկախ պայմանագրով այլ բան նախատեսված լինելուց:

Հ ա ր ց 7. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) փոխառության վերաբերյալ սահմանված բոլոր կանոնները կիրառվում են նաև [վարկային պայմանագրի](#) նկատմամբ
- բ) եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները շարունակվում են հաշվարկվել
- գ) նպատակային փոխառության դեպքում փոխառուն պարտավոր չէ ապահովել փոխառության գումարի նպատակային օգտագործման նկատմամբ փոխատուի վերահսկողության հնարավորությունը

դ) փոխառուի կողմից փոխառության գումարի նպատակային օգտագործման մասին փոխառության պայմանագրի պայմանը չկատարելու դեպքում փոխատուն իրավունք չունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու փոխառության գումարը և վճարելու հասանելիք տոկոսները
ե) բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

Հ ա ղ ց 8. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Վարկային պայմանագրի էական պայմաններից չէ՝

- ա) վարկի չափը
- բ) վարկի արժույթը
- գ) տուժանքը
- դ) վարկի տոկոսների հաշվարկման կարգը:

Հ ա ղ ց 9. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) փոխառության պայմանագիրը չի կարող լինել անտոկոս
- ա) փոխառության պայմանագիր կարող է կնքվել նաև երկու քաղաքացիների միջև
- բ) փոխառության տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը
- դ) փոխառության տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հ ա ղ ց 10. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) բանկային հաշվի պայմանագրին համապատասխան, բանկը կարող է վճարում կատարել հաճախորդի հաշվից, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը (հաշվի վարկավորում)
- բ) հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար բանկը վճարում է տոկոսներ, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով
- գ) բանկը կարող է հաշվից դրամական միջոցներ դուրս է գրել նաև առանց հաճախորդի կարգադրության՝ բանկի և հաճախորդի միջև պայմանագրով նախատեսված դեպքերում
- դ) բոլոր պնդումներն էլ սխալ են:

ԳԼՈՒԽ 13. ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ: ԲԱՆԿԵՐԻ ԱՈՒԴԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկային գործունեության վերահսկողության իրավական հիմքերը և ձևերը, բացատրել բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց լրացման կարգերը, ներկայացման ժամկետները և ֆինանսական հաշվետվությունների հրապարակման կարգը, բանկերում վերստուգումների իրականացման ընթացակարգը, բանկերի գործունեության գնահատման «**ՔԱՍԵԼՍ**» համակարգը, բանկերի աուդիտային ստուգումը՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- ներկայացնել բանկային գործունեության վերահսկողության իրավական հիմքերը
- բացատրել բանկային գործունեության փաստաթղթային և տեսչական վերահսկողության ձևերը
- ներկայացնել բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բացատրել դրանց լրացման կարգերը, ներկայացման ժամկետները
- ներկայացնել բանկերի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման կարգը
- բացատրել բանկերում նպատակային և համալիր վերստուգումները
- նկարագրել բանկերում վերստուգումների իրականացման ընթացակարգը
- ներկայացնել բանկերում վերստուգումների իրականացման ռազմավարությունը
- բացատրել բանկերի գործունեության գնահատման «**ՔԱՍԵԼՍ**» համակարգը
- ներկայացնել բանկերի աուդիտային ստուգումը:

13.1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐԸ

Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողությունը կանոնակարգվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով և դրանցով նախատեսված դեպքերում՝ իրավասու մարմինների նորմատիվ իրավական ակտերով:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 36 և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածների, բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողությունը Կենտրոնական բանկի բացառիկ իրավասությունն է: Դա նշանակում է, որ պետական իրավասու այլ (հարկային, սոցիալական ապահովագրության և այլն) մարմինները չունեն նման իրավունք: Նրանք կարող են ստուգել իրենց իրավասությանը վերաբերող հարցերը, մասնավորապես՝ հարկերի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման և վճարման համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին:

Կենտրոնական բանկը բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Բանկերում վերստուգումներ անցկացնելու կարգի ու հաճախականության, արտահերթ վերստուգումներ իրականացնելու մասին որոշում կայացնելը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի իրավասություններից են («ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ «իա»):

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի՝

Բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ են ներկայացնում տարեկան և ֆինանսական հաշվետվություններ: Կենտրոնական բանկը կարող է սահմանել հաշվետվությունների ներկայացման նաև այլ պարբերականություն: Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանք ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանում է Կենտրոնական բանկը՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները:

Կենտրոնական բանկի վերոհիշյալ իրավասությունը ամրագրված է նաև «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում: Համաձայն այդ օրենքի՝

❖ ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է՝ բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից կենտրոնական բանկին ներկայացվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները (հոդված 23, կետ 2):

❖ Բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերն իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (հոդված 24, կետ 1):

Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, բանկերի տարածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) գործունեության վերահսկողությունը իրականացվում է երկու ձևով՝

1. փաստաթղթային (off-site) վերահսկողության (բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների տվյալների վերլուծության և ամփոփման միջոցով)
2. տեղերում վերստուգումների անցկացման (on-site վերահսկողության):

Վերահսկողության այդ ձևերն իրականացնելու համար ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է՝

⇒ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը

⇒ «Բանկերում վերստուգումների իրականացումը» կանոնակարգ 4-ը:

13.2. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկերը ԳԳ կենտրոնական բանկ են ներկայացնում թվով 26 հաշվետվություններ, որոնց անվանումները և ներկայացման պարբերականությունները բերված են ստորև (աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններ

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	Հաշվեկշիռ	1	ամսական, տարեկան
2	Հաշվեկշիռ	2	շաբաթական
3	Հաշվետվություն Ն1 ¹ , Ն1 ² , Ն2 ¹ , Ն2 ² , Ն ³ , Ն4 ¹ , Ն4 ² և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ	3	ամսական
4	Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ	4	14-օրյա
5	Հաշվետվություն բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ	5	ամսական, եռամսյակային, տարեկան
6	Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ	6	ամսական
7	Հաշվետվություն արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ	7	շաբաթական
8	Հաշվետվություն ներգրավված և տեղաբաշխված միջոցների ծախսատարության և եկամտաբերության վերաբերյալ	8	ամսական
9	Հաշվետվություն <u>ակտիվ</u> ների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ	9	ամսական
10	Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ	10	ամսական
11	Հաշվետվություն նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ	11	ամսական, եռամսյակային, տարեկան
12	Հաշվետվություն բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ	12	եռամսյակային, տարեկան
13	Հաշվետվություն դրամարկղային շրջանառության վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	13	ամսական
14	Հաշվետվություն «խոշոր» փոխառուների վերաբերյալ	14	ամսական
15	Հաշվետվություն «խոշոր» պարտատերերի վերաբերյալ	15	ամսական
16	Հաշվետվություն արտասահմանյան և հայրենական բանկերի հետ «լրոտ» և «նոստրոտ» հաշիվների վերաբերյալ	16	ամսական
17	Հաշվետվություն նախորդող շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույթների վերաբերյալ	17	շաբաթական
18	Հաշվետվություն բանկի և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ	18	եռամսյակային
19	Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ	19	օրական
20	Հաշվետվություն հաճախորդների, նրանց հաշիվների, կատարված փոխանցումների, մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ	20	ամսական
21	Հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ	21	յուրաքանչյուր թողարկման համար
22	Հաշվետվություն բանկի կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ	22	տարեկան

23	Հաշվետվություն բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների , ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև այլ անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարների վերաբերյալ	23	ամսական
24	Հաշվետվություն ֆիզիկական անձանց անունով բանկերի միջոցով արտերկրից մուտք եղած և արտերկիր ուղարկված գումարների վերաբերյալ	24	եռամսյակային
25	Հաշվետվություն բանկի աշխատակազմի վերաբերյալ	25	եռամսյակային
26	Հաշվետվություն երաշխիքային վճարումների հաշվարկման և բանկի ավանդատուների քանակի ու ավանդների երաշխավորված գումարի վերաբերյալ	26	եռամսյակային
27	Հրապարակվող հաշվետվություն տնտեսական նորմատիվների վերաբերյալ	27	եռամսյակային

Աղյուսակ 6-ի. շարունակությունը

Կախված հաշվետվություններից, դրանք ներկայացվում են տարբեր հաճախականությամբ՝ օրական, շաբաթական, 14-օրյա, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան, յուրաքանչյուր փոփոխության դեպքում:

Բանկերը հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները, բացառությամբ թիվ 21 և 22 ձևերի, ներկայացնում են բացառապես էլեկտրոնային փոստով՝ ՍիԲիԷյնեթ համակարգի միջոցով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան: Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ շաբաթական հաշվետվություններում նշվում է կիրակի օրվա ամսաթիվը, իսկ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում՝ ամսվա վերջին օրվա ամսաթիվը):

Մի շարք հաշվետվությունների լրացումը կապված է բանկերի գործունեությունը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերի հետ: Այսպես՝

Շաբաթական, ամսական և տարեկան հաշվեկշիռները լրացվում են «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանին» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգին» համապատասխան հազար դրամներով (կանոնակարգ 3, կետ 6):

«I խմբի արտարժույթ» և «II խմբի արտարժույթ» սյունակներում արտարժույթի խմբավորումը, թիվ 3 և 4 հաշվետվությունների լրացումն իրականացվում է համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի:

Թիվ 6 հաշվետվությունում «II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկվող պահուստների չափը» և «III. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի չափը» աղյուսակներում վարկերի, միջբանկային ավանդների, դեբիտորական պարտքերի, վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների և արժեթղթերի դասերի հաշվառումը ու դրանց գծով պահուստների ձևավորումը կատարվում է «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» և «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգին» համապատասխան:

Ուսումնական առաջադրանք

Բացատրել բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը:

13.3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հաշվետվությունները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում: Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է հանգստյան օրվա հետ, ապա հաշվետվությունը ներկայացվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Եթե ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվության առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա բանկը ներկայացնում է գրություն՝ նշելով չներկայացվող ձևերը:

Բացի թիվ 19 հաշվետվությունից, բանկերը պարտավոր են միջբանկային շուկայում իրականացված ՀՀ դրամով արտարժույթի առք ու վաճառքի յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ «Միջբանկային արտարժույթային շուկայում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկացման համակարգի» միջոցով Կենտրոնական բանկ ուղարկել տեղեկանք՝ նշելով գործարքի տեսակը (առք/ վաճառք), գործարքի կնքման ժամը, գործարքի արժույթը (արժույթի տեսակը, կամֆիլի/անկամֆիլի), գործարքի ծավալը և փոխարժեքը:

Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ մեխանիկական թերություն: Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման տվյալ բանկի համապատասխան վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև

առանձին վերլուծական նպատակներից ելնելով, ծանուցման միջոցով բանկերից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ: Բանկը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմանը պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար:

Հաշվի առնելով բանկի գտնվելու վայրը՝ բանկին ծանուցումը կարող է տրվել հեռախոսի (հեռախոսագրի), ՍիԲիէյնթ ցանցի էլեկտրոնային փոստի կամ կապի՝ սահմանված այլ պահուստային միջոցներով: Այդ փաստաթղթով բանկի լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանում հաշվետվությունների վերաբերյալ պարզաբանումներ ու մեկնաբանումներ տալու համար:

Ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետները սահմանված են, ելնելով բանկերի մասնաճյուղերի քանակից (աղյուսակ 7) :

Աղյուսակ 7. Բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման ժամկետները

Հաշվետվություններն՝ ըստ ներկայացման հաճախականության	Ներկայացման ժամկետները
Ամսական և եռամսյակային հաշվետվություններ	
մասնաճյուղեր չունեցող և մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝	մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ)
16 և ավելի մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝	մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ)
Տարեկան հաշվետվություններ	
մասնաճյուղեր չունեցող և մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝	մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը
16 և ավելի մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝	մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը
Շաբաթական հաշվետվություններ	մինչև հաշվետու շաբաթվա հաջորդող երկրորդ աշխատանքային (բանկային) օրը
Երկշաբաթյա հաշվետվություններ	մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ աշխատանքային (բանկային) օրը

Ընդ որում, եթե պահանջվում է տվյալ հաշվետվությունը ներկայացնել և ամսական, և եռամսյակային պարբերականությամբ, ապա պետք չէ ներկայացնել երրորդ ամսվա ամսական հաշվետվությունը, այլ պետք է ներկայացնել միայն եռամսյակային հաշվետվությունը:

Եթե հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը կամ 30-ը համընկնում է ոչ աշխատանքային (ոչ բանկային) օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը վերոհիշյալ ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային (բանկային) օրն է:

Թիվ 10 հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 6-րդ աշխատանքային (բանկային) օրը, իսկ թիվ 21 հաշվետվությունը՝ արժեթղթերի թողարկման ավարտից ոչ ուշ, քան 10 օր հետո:

Թիվ 26 եռամսյակային հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ): Եթե հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-րդ աշխատանքային օրը համընկնում է ոչ աշխատանքային (ոչ բանկային) օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը վերոհիշյալ ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային (բանկային) օրն է:

«Հաշվետվություն արտարժույթի առք և վաճառքի գործառնությունների վերաբերյալ» թիվ 19 (օրական) հաշվետվությունը, անկախ իրականացված գործարքի ծավալի մեծությունից, ներկայացվում է Կենտրոնական բանկի ռիսկերի կառավարման վարչություն: Մինչև ժամը 16:00 կայացած գործարքները ներկայացվում են յուրաքանչյուր օր, մինչև ժամը 17:00 (հաշվետվությունում արտացոլված տվյալները կարող են հաղորդվել նաև կապի միջոցներով՝ ֆաքս, հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն): Ժամը 16:00-ից հետո իրականացված գործարքները պետք է ներկայացվեն հաջորդ օրը ներկայացվող հաշվետվությունում՝ որպես առանձին հաշվետվություն: Բանկերը պարտավոր են միջբանկային շուկայում իրականացված ՀՀ դրամով արտարժույթի առքի կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ տեղեկանքը Կենտրոնական բանկ ուղարկել գործարքի կնքումից հետո 15 րոպեի ընթացքում՝ «Միջբանկային արտարժույթային շուկայում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկացման համակարգով», իսկ վերջիններիս ամսառք լինելու դեպքում՝ հեռախոսով կամ ֆաքսով:

13.4. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Առնվազն եռամսյակը մեկ բանկերը պարտավոր են նվազագույնը 1000 տպաքանակ ունեցող մամուլում տեղեկատվություն հրապարակել հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման (ըստ ձև 27-ի), ավանդների ընդունման և վարկերի տրամադրման պայմանների՝ տոկոսադրույքների, ժամկետների, տոկոսագումարների վճարման կարգի վերաբերյալ: Ձև 27 հաշվետվությունում ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները:

Բանկերի կողմից պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը մամուլում հրապարակվելուց հետո 5-օրյա ժամկետում բանկերը պարտավոր են Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման համապատասխան բաժին ներկայացնել այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

Բանկերը տարեկան ֆինանսական հաշվետվություններն արտաքին աուդիտի եզրակացությամբ օրենքով սահմանված կարգով մամուլում հրապարակելուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր են Կենտրոնական բանկ վերաներկայացնել նախորդ տարվա տարեկան, նախորդ տարվա վերջին ամսական և վերջին եռամսական թիվ 1, 3, 5, 6, 11, 12 հաշվետվությունները, ինչպես նաև հաշվետու տարվա սկզբից մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը թիվ 1, 3, 5, 6, 11, 12 հաշվետվությունները՝ ներառյալ վերահաշվարկած հիմնական տնտեսական նորմատիվները: Հաշվետվությունները վերաներկայացվում են միայն, եթե բանկի արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքում բանկը խախտում է հիմնական տնտեսական նորմատիվները, ի հայտ են գալիս բանկի անվճարունակության և սնանկության հիմքերը, կամ վերոհիշյալ հաշվետվություններում արտացոլված ցուցանիշները փոփոխվում են 5 տոկոս և ավելի չափով:

Բանկերը պարտավոր են նվազագույնը 1000 (հազար) օրինակ տպաքանակ ունեցող մամուլում վերահրապարակել ճշգրտված թիվ 27 հաշվետվությունները տարվա սկզբից մինչև արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում նախկինում հրապարակված թիվ 27 հաշվետվությունները, եթե տեղի են ունեցել վերը նկարագրված դեպքերը:

Ուսումնական առաջադրանք

Ինչպիսի՞ պարտադիր տեղեկատվություն պետք է պարունակեն հրապարակվող՝ հաշվեկշիռը եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ հաշվետվությունը դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվությունը:

3.5. ԲԱՆԿԵՐՈՒՄ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի, Կենտրոնական բանկի ծառայողները վերստուգումներ են կատարում բանկերում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և հաճախակաճությամբ: Արտահերթ վերստուգումներն իրականացվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Բոլոր բանկերը և մասնաճյուղերը պարտավոր են ընդունել և աջակցել Կենտրոնական բանկի ծառայողներին: Վերահսկողություն և վերստուգումներ իրականացնելիս արգելվում է ծառայողների օրինական գործողություններին խոչընդոտելը կամ միջամտելը:

Բանկերում վերստուգումների ընթացակարգը սահմանված է Կենտրոնական բանկի կանոնակարգ 4-ով: Ստորև բերենք այդ կանոնակարգով սահմանված հիմնական դրույթները:

Բանկերում վերստուգումներն իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ղեկավարման կողմից, բացառապես կանոնակարգ 4-ով սահմանված կարգով:

Վերստուգում իրականացնելու մասին ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հրամանում (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ) նշվում են վերստուգվող բանկի անվանումը, վերստուգման տեսակը և նպատակը, իսկ լիազորագրում՝ վերստուգող խմբի կազմը, այդ թվում՝ ղեկավարը, վերստուգում անցկացնելու սկիզբը և ավարտը:

Վերստուգող խմբի անդամների թիվը չի կարող 2-ից պակաս լինել: Վերստուգումների ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ղեկավարման տնօրենի (տնօրենի տեղակալի) լիազորագրով կարող են փոփոխություններ կատարվել աշխատանքային խմբի կազմում և թվաքանակում:

Վերստուգումներն անցկացվում են բանկի հիմնադիր փաստաթղթերի, դրանցում կատարված փոփոխությունների, կառավարման մարմինների որոշումների, բանկի ղեկավար մարմինների հրամանների, կարգադրությունների, կատարված գործառնությունների արդյունքում կազմված հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, ֆինանսական հաշվետվությունների, պայմանագրերի (ակտերի, արձանագրությունների և այլն), ինչպես նաև համակարգիչներում և էլեկտրոնային կրիչների վրա պահպանվող տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության միջոցով:

Կանոնակարգի 2.6-2.15 կետերով սահմանվում են վերստուգող բանկի ղեկավարների ու աշխատակիցների և վերստուգող աշխատանքային խմբի իրավունքներն ու պարտավորությունները վերստուգում իրականացնելիս:

Ուսումնական առաջադրանք

Ներկայացնել վերստուգող բանկի ղեկավարների և աշխատակիցների, ինչպես նաև վերստուգող աշխատանքային խմբի իրավունքներն ու պարտականությունները բանկում վերստուգում իրականացնելիս:

Վերստուգումները լինում են՝

ա) համալիր վերստուգումներ, այդ թվում՝

- հերթական
- արտահերթ

բ) նպատակային վերստուգումներ:

Համալիր վերստուգումներ: Բանկերում համալիր վերստուգումներն իրականացվում են բանկերի գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական ակտերի պահանջներին բանկի կողմից իրականացվող գործունեության համապատասխանությունը, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատությունը պարզելու, ֆինանսական վիճակը, արդյունքները, ռիսկերը և վերստուգման արդյունքներով CAMELS համակարգով բանկը գնահատելու նպատակով:

Բանկերի համալիր վերստուգումների ժամանակ պարտադիր կատարվում է ամփոփ վերլուծություն և գնահատում հետևյալ ուղղություններով՝ կապիտալի համարժեքություն, ակտիվների որակ, կառավարում, ֆինանսական արդյունքներ (եկամուտներ և ծախսեր), իրացվելիություն, ռիսկերի գնահատում, օրենսդրության պահանջների պահպանում: Համալիր վերստուգումների ընթացքում կատարվում է բանկի ընդհանուր ակտիվների առնվազն 70%-ի, բայց ոչ պակաս, քան եկամտաբեր ակտիվների (վարկային, ինվեստիցիոն ներդրումներ և այլն) առնվազն 70 %-ի ուսումնասիրություն:

Համալիր վերստուգումների ժամկետը կախված է բանկի ակտիվների ծավալից, տարածքային ստորաբաժանումների քանակից և, որպես կանոն, սահմանվում է մինչև 60 օր: Անհրաժեշտության դեպքում վերստուգումների տևողությունը մինչև 30 օր ժամկետով կարող է երկարաձգվել բանկային վերահսկողության ղեկարար-տամենտի տնօրենի (տնօրենի տեղակալի) կողմից՝ համաձայնեցնելով բանկային վերահսկողության ղեկարար-տամենտի տնօրենի հետ:

Համալիր վերստուգումները չեն փոխարինում բանկերի աուդիտային ստուգումներին:

Արտահերթ վերստուգումների իրականացման հիմք կարող են հանդիսանալ՝

- հիմնական տնտեսական նորմատիվների պարբերաբար խախտումները
- CAMELS-ի ցուցանիշներում վտանգավոր միտումների ի հայտ գալը
- ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ղեկարարտամենտի հիմնավորումը:

Համալիր վերստուգումների ավարտից հետո, մեկշաբաթյա ժամկետում, բանկի ղեկավարների, վերստուգող խմբի անդամների և ԿԲ կողմից ներկայացված ցուցակում ներառված բանկի մասնակիցների մասնակցությամբ անցկացվում է վերստուգման արդյունքների նախնական քննարկում:

Համալիր վերստուգման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո, երկշաբաթյա ժամկետում, վերստուգման արդյունքների և քննարկման արդյունքների հիման վրա վերստուգող խմբի կողմից կազմվում է հաշվետվություն: Անհրաժեշտության դեպքում բանկային վերահսկողության ղեկարարտամենտի տնօրենի թույլտվությամբ այդ ժամկետը կարող է երկարաձգվել մեկ շաբաթով:

Վերստուգման հաշվետվությունը կազմվում է 2 օրինակից, որոնք վերստուգող խմբի կողմից ստորագրվում և հանձնվում են բանկի ղեկավարությանը: Բանկի ղեկավարությունը մեկ շաբաթվա ընթացքում ծանոթանում է հաշվետվությանը, և բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահը) ստորագրում է այն՝ «Հաշվետվության հետ ծանոթացել եմ» մակագրությամբ և մեկ օրինակը վերադարձնում վերստուգող խմբին: Բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահը) կարող է հաշվետվությանը կից ներկայացնել իր առարկություններն ու բացատրությունները: Վերստուգող խումբը հաշվետվությունը բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) առարկությունների և բացատրությունների հետ միասին ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ղեկարարտամենտի համապատասխան բաժնի պետին:

Նպատակային վերստուգումներ: Նպատակային վերստուգումներն իրականացվում են հիմք ընդունելով.

- ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում արտացոլված տվյալների անարժանահավատության կամ կատարված գործառնությունների օրինականության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ղեկարարտամենտի հիմնավորումը

- ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից ներկայացվող հիմնավորված առաջարկությունները

- պետական մարմինների առաջարկությունները
- բանկի հաճախորդների կամ մասնակիցների բողոքները:

Նպատակային վերստուգումները, որպես կանոն, իրականացվում են առանց բանկին նախապես ծանուցելու և ըստ հետևյալ հիմնական ուղղությունների՝

- հիմնադիր փաստաթղթերում կատարված փոփոխությունների օրինականության վերստուգում
- բանկի ընդհանուր կապիտալի մեծության գնահատում
- բանկի իրացվելիության գնահատում
- ակտիվների վերլուծություն, դասակարգում և գնահատում
- բանկի կառավարման որակի գնահատում
- բանկի ֆինանսական արդյունքների (եկամուտներ և ծախսեր) գնահատում
- ռիսկերի առանձին տեսակների գնահատում
- դրամական միջոցների հոսքերի գնահատում

- ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերստուգում
 - ՀՀ կենտրոնական բանկի հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի վերստուգում
 - ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների օրինականության վերստուգում:
- Նպատակային վերստուգումների իրականացման ժամկետները, որպես կանոն, սահմանվում են մինչև 15 օր: Վերստուգումների ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, բանկի ղեկավարների, վերստուգող խմբի անդամների և կենտրոնական բանկի ներկայացված ցուցակում ներառված բանկի մասնակիցների կողմից անցկացվում է վերստուգման արդյունքների քննարկում:

ԿԲ կանոնակարգ 4-ի առանձին հավելվածով սահմանված է նաև բանկերում համալիր վերստուգումների իրականացման ռազմավարությունը:

Ուսումնական առաջադրանք

Ներկայացնել բանկերում համալիր վերստուգումների իրականացման ռազմավարությունը :

13.6. ԳՆԱՀԱՏՄԱՆ «ՔԱՍԵԼՍ» ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայումս ՀՀ գործող բանկային օրենսդրությամբ կարևոր նշանակություն է տրվում «ՔԱՍԵԼՍ» համակարգով ստացված բանկերի գործունեության գնահատման ամփոփ ցուցանիշին: Այսպես, եթե բանկի գնահատման ամփոփ ցուցանիշը ցածր է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն չափից, ապա ՀՀ կենտրոնական բանկը կարող է՝

- ⇒ բանկին ճանաչել անվճարունակ («Բանկերի վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենք, հոդված 2, ենթակետ «1գ»),
- ⇒ տվյալ բանկի համար սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան սահմանված են այլ բանկերի համար («Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 44, կետ 4),
- ⇒ համարել որպես օրենսդրության խախտում և բանկի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ («Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 60 և 61):

Բանկերի գործունեության գնահատման ամերիկյան ՔԱՍԵԼՍ համակարգն իրենից ներկայացնում է այդ համակարգի հիմքում ընկած հիմնական վերլուծվող հասկացությունների (բաղադրիչների) սկզբնատառերի համակցություն:

- Ք - **capital adequacy**, կապիտալի համարժեքություն: Այն բնութագրում է բանկի կապիտալի այն մեծությունը, որն անհրաժեշտ է ավանդատուների շահերը պաշտպանելու համար:
- Ա - **asset quality**, [ակտիվ](#)ների որակ: Բնութագրում է բանկի ակտիվների վերադարձելիության աստիճանը և դրանց ազդեցությունը բանկի ֆինանսական գործունեության վրա:
- Մ - **management**, կառավարում (մենեջմենթ): Բնութագրում է բանկային մենեջմենթի որակը: Լավ մենեջմենթ ունեցող բանկը պետք է ունենա բավարար կապիտալ, շահույթ, իրացվելիություն և ակտիվների լավ որակ:
- Ե - **earnings**, եկամտաբերություն (շահութաբերություն): Բնութագրում է բանկի հետագա զարգացման (այդ թվում նրա կապիտալիզացիայի) համար եկամտաբերության բավարարությունը:
- Լ - **liquidity**, իրացվելիություն: Բնութագրում է բանկի կողմից ցանկացած պահին իր հաճախորդների հանդեպ պարտավորություններ կատարելու ունակությունը:
- Ս - **solvency**, շուկայի փոփոխությունների նկատմամբ զգայունությունը շուկայական, տոկոսային և այլ ռիսկերի փոփոխությունների նկատմամբ

Բանկի գործունեության ամփոփ գնահատականը (ռեյտինգ) ստանալու համար 6 ցուցանիշները զուգարկվում են և բաժանվում 5-ի: «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՍԵԼՍ) հաշվարկման, հաստատման և իրապարակման կարգը» հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի օգոստոսի 12-ի թիվ 281-Ն որոշմամբ:

ՔԱՍԵԼՍ-ի և դրա տարրերի գնահատումն իրականացվում 1-5 բալային համակարգով, որտեղ լավագույն գնահատականը 5-ն է, իսկ վատագույնը՝ 1-ը: Յուրաքանչյուր տարրի համար հաշվարկվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականներ, որոնց միջինը այդ տարրի գնահատականն է: ՔԱՍԵԼՍ-ի տարրերի օբյեկտիվ գնահատականները ձևավորվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան հարաբերակցությունների (ցուցանիշների) գնահատականների որոշման միջոցով: Հարաբերակցության (ցուցանիշի) գնահատականը որոշվում է դրա հաշվարկված մեծության հիման վրա՝ համաձայն սահմանված միջակայքերի: Եթե բանկի ընդհանուր կապիտալի միջին ամսական մեծությունը փոքր է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն ընդհանուր կապիտալի չափից, ապա Ք տարրի օբյեկտիվ գնահատականը հավասար է 1-ի: ՔԱՍԵԼՍ-ի տարրերի սուբյեկտիվ գնահատականը ձևավորվում է դրանց օբյեկտիվ գնահատականների ճշգրտման վերահաշվարկման միջոցով՝ հաշվի առնելով ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան տարրերը պայմանավորող գործոնները:

13.6. ԲԱՆԿԵՐԻ ԱՈՒԴԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Յանաձայն ՀՀ ԲՕ-ի 58 հոդվածի, յուրաքանչյուր տարի [բանկերը](#) ստուգվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորային կազմակերպության կողմից:

Անկախ աուդիտային կազմակերպություն նշանակում է բանկը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Անկախ աուդիտային կազմակերպությունը՝

ա) օժանդակում է բանկի ֆինանսական հաշվետվությունների պատշաճ ձևակերպմանը

բ) պատրաստում և (կամ) ստուգում է տարեկան ֆինանսական հաշվետվությունները և ներկայացնում է աուդիտային եզրակացություն այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ են արտահայտում բանկի ֆինանսական վիճակը

գ) ստուգում է բանկի վերստուգիչ հանձնաժողովի կազմակերպման և գործունեության համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին:

Աուդիտային ստուգումները չեն փոխարինում ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերում իրականացվող վերստուգումներին:

Կենտրոնական բանկի պահանջով անկախ աուդիտային կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, անգամ, եթե դրանք առևտրային, բանկային կամ այլ զաղտնիք կազմեն: Այդ պարտավորությունների չկատարման համար աուդիտային կազմակերպությունը կրում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Կենտրոնական բանկը կարող է պարտադրել բանկին վեց ամսվա ընթացքում հրավիրել աուդիտային գործունեություն իրականացնող անկախ աուդիտային կազմակերպություն և հրապարակել նրա եզրակացությունը:

Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում բանկերի տարեկան հաշվետվության ներկայացումից հետո վեցամսյա ժամկետում:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկային գործունեության վերահսկողության իրավական հիմքերը:
2. Ինչպե՞ս կարելի է բացատրել բանկային գործունեության փաստաթղթային և տեսչական վերահսկողության ձևերը:
3. Որո՞նք են բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց լրացման կարգերը, ներկայացման ժամկետները:
4. Որո՞նք են բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը, դրանց լրացման, հրապարակման կարգը և ժամկետները:
5. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկերում նպատակային և համալիր վերստուգումները:
6. Ինչպիսի՞ն է բանկերում վերստուգումների իրականացման ընթացակարգը:
7. Ինչպիսի՞ն է բանկերում վերստուգումների իրականացման ռազմավարությունը,
8. Ի՞նչ է իրենից ներկայացնում բանկերի գործունեության գնահատման «ԲԱՍԵԼՍ» համակարգը:
9. Ինչպե՞ս է իրականացվում բանկերի աուդիտային ստուգումը:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) ԿԲ-ն կարող է վերստուգման արդյունքով համապատասխան բանկի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունները հայտնել այլ երկրի բանկերի նկատմամբ բացառիկ վերահսկողության իրավունք ունեցող համապատասխան պետական մարմնին
- բ) արտահերթ վերստուգումներն իրականացվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ
- գ) որոշ պայմանների ապահովման դեպքում ԿԲ-ն կարող է բանկում համալիր վերստուգում իրականացնել երեք տարին մեկ անգամ
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 2 . Անկախ աուդիտային կազմակերպությանն նշանակում է.

- ա) ԴՅ կենտրոնական բանկը
- բ) ինքը՝ բանկը՝ ԴՅ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով
- գ) ԴՅ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ր ց 3 . Համաձայն գործող օրենսդրության, բանկերի գործունեության վերահսկողությունն իրականացնում է.

- ա) միայն ԴՅ կենտրոնական բանկը
- բ) նաև հարկային մարմինները
- գ) նաև անկախ աուդիտորական կազմակերպությունը
- դ) վերոհիշյալ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 4 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ. Ամիսը մեկ անգամ ՀՀ ԿԲ է ներկայացվում՝

- ա) արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ հաշվետվությունը
- բ) ԴՅ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ հաշվետվությունը
- գ) h_1 , h_1^2 , h_2^1 , h_2^2 , h_3 , h_4^1 , h_4^2 և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը
- դ) ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետային կառուցվածքի վերաբերյալ հաշվետվությունը:

Հ ա ր ց 5 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են հաշվետու շաբաթվան հաջորդող երեքշաբթի օրը
- բ) երկշաբաթյա հաշվետվությունը ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երեքշաբթի օրը
- գ) տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 15 (ներառյալ) մասնաձյուղ ունեցող բանկերի համար սահմանվում է մինչև հաջորդող տարվա հունվարի 30-ը
- դ) կանոնադրական հիմնադրամի ձևավորման վերաբերյալ հաշվետվությունը փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի մեծության կամ կառուցվածքի փոփոխության դեպքում ներկայացվում է փոփոխությունը կատարվելուց ոչ ուշ, քան 30 օր հետո
- ե) բոլոր պնդումներն էլ սխալ են:

ՔԼՈՒԽ 14. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ: ԱՌԳԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել վարկային կազմակերպությունների գործունեության վերահսկողության իրավական հիմքերը, բացատրել վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացման ժամկետները և ֆինանսական հաշվետվությունների հրապարակման կարգը, վարկային կազմակերպությունների աուդիտային ստուգումը՝ համաձայն ՀՀ բանկային օրենսդրության:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- ներկայացնել վարկային կազմակերպությունների գործունեության վերահսկողության իրավական հիմքերը
- ներկայացնել վարկային կազմակերպությունների գործունեության վերահսկողության ձևերը
- ներկայացնել վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բացատրել դրանց լրացման կարգերը, ներկայացման ժամկետները
- ներկայացնել վարկային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հրապարակման կարգը
- ներկայացնել վարկային կազմակերպությունների աուդիտային ստուգումը:

14.1. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողությունը կանոնակարգվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով և դրանցով նախատեսված դեպքերում՝ իրավասու մարմինների նորմատիվ իրավական ակտերով:

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13 - րդ հոդվածի՝

❖ *Վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է իր սահմանած կարգով:*

Դա նշանակում է, որ պետական իրավասու այլ (հարկային, սոցիալական ապահովագրության և այլն) մարմինները չունեն նման իրավունք. նրանք կարող են ստուգել իրենց իրավասությանը վերաբերող հարցերը, մասնավորապես՝ հարկերի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման և վճարման համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին:

❖ *Կենտրոնական բանկի ծառայողները վարկային կազմակերպություններում ստուգումներն ու վերստուգումները կատարում են Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ժամկետներում, դեպքերում և հաճախականությամբ: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կենտրոնական բանկը դեռևս չի սահմանել վարկային կազմակերպություններում ստուգումների ու վերստուգումների իրականացման կարգ, ինչպիսին սահմանված է բանկերի համար:*

Ինչպես բանկերի, այնպես էլ վարկային կազմակերպությունների գործունեության վերահսկողությունն իրականացվում է երկու ձևով՝

1. փաստաթղթային (off-site) վերահսկողության (կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների տվյալների վերլուծության և ամփոփման միջոցով)
2. տեղերում վերստուգումների անցկացման (on-site վերահսկողության):

Համաձայն նույն օրենքի 15-րդ հոդվածի՝

❖ *Վարկային կազմակերպությունները Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ են ներկայացնում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած այլ հաշվետվություններ: Ելնելով օրենքով իրեն վերապահված իրավասությունից, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը 2002թ. դեկտեմբերի 13-ի թիվ N 407-Ն հաստատել է «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը:*

14.2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն ԿԲ կանոնակարգ 15-ի, վարկային կազմակերպությունները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում թվով 20 հաշվետվություններ, որոնց ամվանումները և ներկայացման պարբերականությունները բերված են ստորև (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններ

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համար	Ներկայացված հաճախականությունը
1	Հաշվեկշիռ	1	ամսական, տարեկան
2	Հաշվետվություն N1 ¹ , N3 և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ	3	ամսական
3	Հաշվետվություն վարկային կազմակերպության եկամուտների և ծախսերի վերաբերյալ	5	ամսական, տարեկան
4	Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ	6	ամսական
5	Հաշվետվություն արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ	7	շաբաթական
6	Հաշվետվություն <u>ակտիվների</u> և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ	9	ամսական
7	Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ	10	կիսամյակային և յուրաքանչյուր փոփոխության դեպքում
8	Հաշվետվություն նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ	11	եռամսյակային, տարեկան
9	Հաշվետվություն վարկային կազմակերպության դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ	12	տարեկան
10	Հաշվետվություն դրամարկղային շրջանառության վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	13	ամսական
11	Հաշվետվություն նախորդող շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ	17	շաբաթական
12	Հաշվետվություն վարկային կազմակերպության և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ	18	եռամսյակային
13	Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ	19	օրական արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ կատարելու դեպքում
14	Վարկային կազմակերպության կողմից մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ	20	ամսական
15	Հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ	21	յուրաքանչյուր թողարկման համար տարեկան
16	Հաշվետվություն վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ	22	տարեկան
17	Հաշվետվություն վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, ինչպես նաև բանկերի և վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարների վերաբերյալ	24	ամսական
18	Տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերած ֆիզիկական անձի վերաբերյալ	25	բաժնետիրոջ կամ մասնակցի յուրաքանչյուր փոփոխման դեպքում
19	Տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերած իրավաբանական անձի վերաբերյալ	26	բաժնետիրոջ կամ մասնակցի յուրաքանչյուր փոփոխման դեպքում
20	Հաշվետվություն վարկային կազմակերպության աշխատակազմի վերաբերյալ	28	եռամսյակային
21	Հրապարակվող հաշվետվություն տնտեսական նորմատիվների վերաբերյալ	30	եռամսյակային

Վերը բերված հաշվետվություններից բացի, վարկային կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկի պահանջով ներկայացնել լրացուցիչ հաշվետվություններ:

Կախված հաշվետվություններից, դրանք ներկայացվում են տարբեր հաճախականությամբ՝ օրական, շաբաթական, 14-օրյա, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան, յուրաքանչյուր փոփոխության դեպքում:

Վարկային կազմակերպությունները հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները, բացառությամբ թիվ 21 և 22 ձևերի, ներկայացնում են բացառապես «Սի Բի Էյ Նեթ» համակարգի միջոցով՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան: Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպություններին ուղարկված պաշտպանված ֆայլերով, որոնց փոփոխելն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ շաբաթական հաշվետվություններում նշվում է կիրակի օրվա ամսաթիվը, իսկ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում՝ ամսվա վերջին օրվա ամսաթիվը):

Մի շարք հաշվետվությունների լրացումը կապված է վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերի հետ: Այսպես՝

Հաշվեկշիռը լրացվում են «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանին» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգին» համապատասխան հազար դրամներով:

«I խմբի արտարժույթ» և «II խմբի արտարժույթ» սյունակներում արտարժույթի խմբավորումը, թիվ 3 հաշվետվության լրացումն իրականացվում է համաձայն «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի:

Թիվ 6 հաշվետվությունում «II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկվող պահուստների չափը» և «III. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի չափը» աղյուսակներում վարկերի, միջբանկային ավանդների, դեբիտորական պարտքերի, վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների և արժեթղթերի դասերի հաշվառումը ու դրանց գծով պահուստների ձևավորումը կատարվում է «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» և «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգին» համապատասխան:

Ուսումնական առաջադրանքներ

1. *Համեմատել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը:*
2. *Բացատրել վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը:*

14.3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում: Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է հանգստյան օրվա հետ, ապա հաշվետվությունը ներկայացվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Եթե ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվության առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա վարկային կազմակերպությունը ներկայացնում է գրություն՝ նշելով չներկայացվող ձևերը:

Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ մեխանիկական թերություն:

Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման՝ տվյալ վարկային կազմակերպության համապատասխան վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական նպատակներից ելնելով, ծանուցման միջոցով վարկային կազմակերպություններից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

Վարկային կազմակերպությունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար:

Հաշվի առնելով վարկային կազմակերպության գտնվելու վայրը՝ վարկային կազմակերպությանը ծանուցումը կարող է տրվել հեռախոսի (հեռախոսագրի), «Սի Բի Էյ Նեթ» ցանցի էլեկտրոնային փոստի կամ կապի սահմանված այլ պահուստային միջոցներով: Այդ փաստաթղթով վարկային կազմակերպության լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել բանկային վերահսկողության վարչություն հաշվետվությունների վերաբերյալ պարզաբանումներ ու մեկնաբանումներ տալու համար:

Վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման սահմանված ժամկետները բերված են ստորև (աղյուսակ 9) :

Աղյուսակ 9. Վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման ժամկետները

Հաշվետվությունները՝ ըստ ներկայացման հաճախականության	Ներկայացման ժամկետները
Ամսական և եռամսյակային հաշվետվություններ	մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ)
Տարեկան հաշվետվություններ	մինչև հաջորդող տարվա հունվարի 20-ը
Շաբաթական հաշվետվություններ	մինչև հաշվետու շաբաթվա հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:
Թիվ 10 հաշվետվությունը փաստացի համալրված կանոնադրական կապիտալի մեծության կամ կառուցվածքի փոփոխության	փոփոխությունը կատարվելուց ոչ ուշ, քան 30 օր հետո:
Թիվ 19 հաշվետվություն	արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ կատարելու դեպքում
Թիվ 21 հաշվետվություն	աղծերթերի թողարկման ավարտից ոչ ուշ, քան 10 օր հետո:

Ընդ որում, եթե հունվարի 20-ը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը հունվարի 20-ին հաջորդող առաջին աշխատանքային օրն է:

«Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ» թիվ 19 (օրական) հաշվետվությունը, անկախ իրականացված գործարքի ծավալի մեծությունից, ներկայացվում է Կենտրոնական բանկի ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանում: Մինչև ժամը 16:00 կայացած գործարքները ներկայացվում են յուրաքանչյուր օր, մինչև ժամը 17:00 (հաշվետվությունում արտացոլված տվյալները կարող են հաղորդվել նաև կապի միջոցներով՝ ֆաքս, հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն): Ժամը 16:00-ից հետո իրականացված գործարքները պետք է ներկայացվեն հաջորդ օրը ներկայացվող հաշվետվությունում՝ որպես առանձին հաշվետվություն:

Թիվ 20 հաշվետվությունը չեն ներկայացնում այն վարկային կազմակերպությունները, որոնք չեն իրականացնում հաշվետվության մեջ նշված գործարքները:

Կենտրոնական բանկի կողմից հաշվետվությունների գործող ձևերը փոխելու կամ հաշվետվությունների նոր ձևեր սահմանելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հրապարակման պահից երեք ամիս հետո, եթե Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ առավել ուշ ժամկետ նախատեսված չէ:

Ուսումնական առաջադրանք

Համեմատել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման ժամկետները:

14.4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Առնվազն եռամսյակը մեկ վարկային կազմակերպությունները պարտավոր են նվազագույնը 1000 տպաքանակ ունեցող մամուլում տեղեկատվություն հրապարակել հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման (համաձայն ձև 30-ի), փոխառությունների ներգրավման և վարկերի տրամադրման պայմանների՝ տոկոսադրույքների, ժամկետների, տոկոսագումարների վճարման կարգի վերաբերյալ:

Ձև 21 հաշվետվությունում ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները:

Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության՝ մամուլում հրապարակումից հետո 5-օրյա ժամկետում վարկային կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության վարչության համապատասխան բաժին ներկայացնել այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

Վարկային կազմակերպությունները արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններն օրենքով սահմանված կարգով մամուլում հրապարակելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, պարտավոր են Կենտրոնական բանկ վերաներկայացնել նախորդ տարվա տարեկան, նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում ներկայացված բոլոր հաշվետվությունները, ինչպես նաև հաշվետու տարվա սկզբից մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը սույն կանոնակարգով ներկայացվող բոլոր հաշվետվությունները՝ ներառյալ վերահաշվարկած հիմնական տնտեսական նորմատիվները: Հաշվետվությունները վերաներկայացվում են այն դեպքում, եթե վարկային կազմակերպության արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները տարբերվում են Կենտրոնական բանկ ներկայացված նախորդ տարվա տարեկան, նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում ներկայացված հաշվետվություններից:

Վարկային կազմակերպությունները պարտավոր են ճշգրտել և նվազագույնը 1000 տպաքանակ ունեցող մամուլում վերահրապարակել տարվա սկզբից մինչև արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում նախկինում հրապարակված թիվ 30 հաշվետվությունները, եթե տեղի են ունեցել կանոնակարգ 14-ի 39-րդ կետով նկարագրված դեպքերը:

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16 - ռդ հոդվածի՝

Յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունն ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից, որին նշանակում է վարկային կազմակերպությունը:

Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Ուսումնական առաջադրանք

Համեմատել բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կարգը:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են վարկային կազմակերպության գործունեության վերահսկողության իրավական հիմքերը:
2. Որո՞նք են վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց լրացման կարգը, ներկայացման ժամկետները:
3. Որո՞նք են վարկային կազմակերպությունների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը, դրանց լրացման, հրապարակման կարգը և ժամկետները:
4. Ինչպե՞ս է իրականացվում բանկերի աուդիտային ստուգումը:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1 . Անկախ աուդիտային կազմակերպությանն նշանակում է.

- ա) ՀՀ կենտրոնական բանկը
- բ) ինքը՝ նշանակում է վարկային կազմակերպությունը
- գ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունն ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից
- բ) անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը վարկային կազմակերպությունը չի ներկայացնում Կենտրոնական բանկ
- գ) անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում
- դ) բոլոր պնդումներն էլ սխալ են::

Հ ա ր ց 3 . Համաձայն գործող օրենսդրության, վարկային կազմակերպությունների գործունեության վերահսկողությունն իրականացնում են.

- ա) նաև հարկային մարմինները
- բ) նաև անկախ աուդիտական կազմակերպությունը
- գ) միայն ՀՀ կենտրոնական բանկը
- դ) վերոհիշյալ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 4 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև հաջորդող տարվա հունվարի 20-ն է
- բ) շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են հաշվետու շաբաթվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը
- գ) ամսական մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ)
- դ) բոլոր պնդումներն էլ սխալ են:

ԳԼՈՒԽ 15. ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ԽԱՒՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել օրենսդրության խախտումները և դրանց համար բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, պատժամիջոցների կիրառման իրավական հիմքերը և ընթացակարգը, պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման հետևանքները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- բնութագրել բանկերի կողմից թույլ տրված օրենսդրության խախտումները
- բնութագրել վարկային կազմակերպությունների կողմից թույլ տրված օրենսդրության խախտումները
- ներկայացնել և բնութագրել օրենսդրության խախտումների համար բանկերի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները
- ներկայացնել բանկերի կողմից պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման հետևանքները
- ներկայացնել և բնութագրել օրենսդրության խախտումների համար վարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները
- ներկայացնել օրենսդրության խախտումների համար բանկերի և վարկային կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ պատժամիջոցների կիրառման հիմքերը
- ներկայացնել օրենսդրության խախտումների համար բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառման ընթացակարգը:

15.1. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Չայտնի է, որ իրավական նորմերի կիրառումը հարցականի տակ կլինեն, եթե սահմանված չլինեն դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն և համապատասխան պատժամիջոցների կիրառում: Պատասխանատվության միջոցների սահմանումը և կիրառումը կարևոր է հատկապես բանկերի պարագայում, հաշվի առնելով դրանց՝ որպես առանձնահատուկ ֆինանսական միջնորդի դերը, հասարակության լայն խավերի խնայողությունները ներգրավելու բացառիկ իրավունքը:

Չամաձայն «Չայաստանի Չանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի, կենտրոնական բանկն օրենքով նախատեսված դեպքերում կարող է բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառել:

Կենտրոնական բանկի կողմից բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցներ կարող են կիրառվել, եթե բանկերը թույլ են տվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածով, իսկ վարկային կազմակերպությունները՝ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով սահմանված խախտումները:

Օրենքով սահմանված խախտումների համար ՀՀ կենտրոնական բանկը կարող է բանկերի նկատմամբ կիրառել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածով, իսկ վարկային կազմակերպությունների նկատմամբ՝ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածով սահմանված պատժամիջոցները:

Իրավական հարաբերությունների կարգավորման տվյալ ոլորտում ներկայումս գործող բանկային օրենսդրության էական յուրահատկություններից է այն, որ յուրաքանչյուր խախտման համար բանկից գանձվող տուգանքի չափը սահմանում է կենտրոնական բանկը: Փաստորեն պատժամիջոցի սահմանումը և դրա կիրառումը կատարվում է նույն մարմնի՝ կենտրոնական բանկի կողմից: Դրա հետ կապված օրենքը սահմանում է բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող տուգանքի առավելագույն չափը (կանոնադրական կապիտալի սահմանված նվազագույն չափի նկատմամբ տոկոսներով):

Ելնելով վերը նշված իրավասությունից, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է «Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին» կարգը: Ընդ որում, տվյալ կարգը այլևս չունի հատուկ մաս (ինչպես կար նախկինում գործող կանոնադրում), որով սահմանված էին բանկային օրենսդրության խախտումների համար բանկերի նկատմամբ կոնկրետ պատժամիջոցները, բանկի և բանկի ղեկավարների նկատմամբ նշանակվող տուգանքների չափերը:

15.2. ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ԽԱՒՏՈՒՄՆԵՐԸ

Օրենսդրության խախտումները բերված են ստորև ներկայացված աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Օրենսդրության խախտումները

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎՈՂ ԽԱՒՏՈՒՄՆԵՐ	ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎՈՂ ԽԱՒՏՈՒՄՆԵՐ
խախտվել են սույն օրենքի, բանկային գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները	վարկային կազմակերպությունը ֆինանսական գործառնություններ է իրականացրել օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով

Աղյուսակ 10-ի շարունակությունը

խախտվել են բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները կամ, Կենտրոնական բանկի կարծիքով, բանկն իրականացրել է այնպիսի գործողություններ (գործունեություն), որոնք կարող են վտանգել ավանդատուների կամ բանկի այլ պարտատերերի շահերը	խախտվել են վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները
խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները, և (կամ) այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ	խախտվել են հաշվեկշռի, ֆինանսական հաշվետվությունների, այլ հաշվետվությունների ներկայացման և հրապարակման կարգն ու պայմանները, և (կամ) այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ տվյալներ
բանկը չի կատարել Կենտրոնական բանկի կողմից օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականը	վարկային կազմակերպությունը չի կատարել նախատեսված Կենտրոնական բանկի կողմից տրված հանձնարարականը
բանկի կանոնադրական հիմնադրամը կամ ընդհանուր կապիտալի այլ տարրերը համալրվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով	X
բանկի, մասնաճյուղի կանոնադրությունը փոփոխվել և լրացվել են օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով	X
բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից	X
բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի կատարել <u>բանկային ավանդ</u> ների երաշխիքային հիմնադրամին երաշխիքային վճարների վճարումը	X

ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին» կարգին և տվյալ կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան ընդունված Կենտրոնական բանկի անհատական բնույթի իրավական ակտերի իմաստով բանկային օրենսդրության խախտում է համարվում

ա) «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործունեությունը, գործողությունները կամ անգործությունը

բ) «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ կետում նշված պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու փաստը

գ) բանկի ղեկավարի կողմից՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ կետում և 64-րդ հոդվածում նշված գործունեությունը, գործողությունները կամ անգործությունը:

15.3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցները ներկայացված են նկար 31-ում:



Նկար 31. Օրենսդրության խախտումների համար բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները

Վերը նշված պատժամիջոցների կիրառումը բանկերին, վարկային կազմակերպություններին և նրանց ղեկավարներին չի ազատում օրենքներով, այլ իրավական ակտերով և պայմանագրերով նախատեսված պատասխանատվությունից:

Յամածայն «Վարկային կազմակերպությունների» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ կետի՝ վարկային կազմակերպությունների և դրանց ղեկավարների նկատմամբ օրենքով սահմանված պատժամիջոցները կիրառվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, հիմքերով, սահմաններում և կարգով: Բացի այդ հիմքերից, վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած կարող է ճանաչվել, եթե դրա գրանցման և լիցենզավորման ընթացքում ներկայացվել են կեղծ տվյալներ: Հիշենք, որ բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը չի համարվում բանկի նկատմամբ կիրառվող պատժամիջոց:

Կենտրոնական բանկը կարող է օրենսդրության յուրաքանչյուր խախտման համար բանկի և (կամ) բանկի ղեկավարի (բացառությամբ խորհրդի անդամների) նկատմամբ միաժամանակ կիրառել նախազգուշացում՝ խախտումները վերացնելու հանձնարարականով, և (կամ) տուգանք՝ բանկի կամ ղեկավարի նկատմամբ, և (կամ) բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկում:

Նախազգուշացումը և տուգանքը որպես պատժամիջոց կարող է կիրառվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածով նախատեսված հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում:

Նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տված խախտումը և խախտում թույլ տված բանկը տեղեկացվում է խախտման անթույլատրելիության մասին: Նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տված խախտումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում վերացնելու և (կամ) ապագայում նման խախտումը կանխելու ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական (և) կամ բանկի կողմից կնքվող որոշակի գործարքների, գործառնությունների դադարեցում, դրանց պայմանների փոփոխություն: Հանձնարարականի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացած բանկի համար:

Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի որոշմամբ այն դեպքում, երբ բանկը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Գումարը գանձվում է բանկի թղթակցային հաշվից՝ հոգուտ պետական բյուջեի:

Յամածայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 3-րդ կետի՝ ա) տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար, Կենտրոնական բանկի ներկայացվող հաշվետվություններն ուշացնելու համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 5 տոկոսը: Սույն դրույթը չի տարածվում պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման վրա:

բ) բանկային օրենսդրության յուրաքանչյուր այլ խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 1 տոկոսը:

Այսպիսով, «ա» կետում նշված խախտումների համար տուգանքի առավելագույն չափը ներկայումս կազմում է 2,5 մլն դրամ (50 մլն դրամի 5%-ը), իսկ «բ» կետում նշված խախտումների համար՝ 0,5 մլն դրամ (50 մլն դրամի 1%-ը): Ընդ որում, տուգանքի գումարի չափը չպետք է հանգեցնի տուգանվող բանկի ծանր ֆինանսական կացությանը:

15.4. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԵ ԿԻՐԱՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Օրենքով նախատեսվում է այնպիսի արդյունավետ պատժամիջոցների կիրառում, ինչպիսիք են բանկերի և վարկային կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ տուգանքի նշանակում և ղեկավարներին որակավորման վկայականից զրկում: Ընդ որում, կոնկրետ նշվում են նման պատժամիջոցների կիրառման հիմքերը, ինչպես նաև տուգանքի առավելագույն չափը (սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, այսինքն՝ 1 000 x 1 000 = 1 000 000 դրամ):

Կենտրոնական բանկը բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների) նկատմամբ կարող է նշանակել տուգանք՝

- բանկի կողմից չհիմնավորված ռիսկային գործունեություն վարելու
- մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի կամ բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը տրման պահին խախտելու
- հաշվետվություններն ուշ ներկայացնելու կամ դրանցում անարժանահավատ տեղեկություններ արտացոլելու
- Կենտրոնական բանկի վերստուգումներին խոչընդոտելու կամ օրենքով սահմանված կարգով տրված Կենտրոնական բանկի հանձնարարականները չկատարելու համար:

Վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ որպես լրացուցիչ պատասխանատվության միջոց կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կիրառվել նաև տուգանք, որի չափը նույնպես չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի որոշմամբ, եթե բանկի (վարկային կազմակերպության) ղեկավարը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Նշված անձանց վրա դրված տուգանքները գանձվում են նրանց անձնական միջոցներից՝ հոգուտ պետական բյուջեի:

Կենտրոնական բանկի՝ բանկի ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից այդ անձին ՀՀ օրենսդրությամբ, բանկի կանոնադրությամբ և այլ ներքին փաստաթղթերով տրված լիազորությունները դադարում են:

- Բանկի ղեկավարները զրկվում են որակավորման վկայականից Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե նրանք՝
- ✓ միտումնավոր կերպով խախտել են օրենքները և այլ իրավական ակտերը
- ✓ պաշտոնավարման ընթացքում վարել են անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել են վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին
- ✓ կատարել են այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով բանկը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս
- ✓ գործունեության ընթացքում նրանք կատարել են անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են բանկի կամ բանկի հաճախորդների շահերին
- ✓ անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք են դրսևորել իրենց ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ բանկի և բանկի հաճախորդների նկատմամբ ստանձնած հավատարմագրային պարտականությունների նկատմամբ
- ✓ չեն համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված որակավորման չափանիշներին.
- ✓ չեն կատարել ԿԲ-ի հանձնարարականը կամ անտեսել են Կենտրոնական բանկի նախազգուշացումը:

15.5. ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ԽԱՆՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Համաձայն «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկը կարող է բանկին անվճարունակ ճանաչել նաև այն դեպքում, երբ բանկը պարբերաբար խախտել է պարտադիր պահուստավորման նորմատիվը:

Ինչպես տեսանք վերը, բանկերի նկատմամբ պատժամիջոցների ցանկը սահմանված է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ընդ որում՝ այդ ցանկում ընդգրկված է տույժը, որը բանկից զանձվում է պարտադիր պահուստավորման նորմատիվը խախտելու համար: Տույժը, որպես Կենտրոնական բանկի կողմից բանկի վրա ներգործելու միջոց, նախատեսված է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 5-րդ կետով, համաձայն որի՝ պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում Կենտրոնական բանկը բանկից տույժ է գանձում: Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափով, բայց ոչ ավելի, քան միջին հաշվով պակաս պահուստավորված յուրաքանչյուր օրվա համար պակաս պահուստավորված գումարի մեկ տոկոսը: Այսպիսով, ի տարբերություն այլ հիմնական տնտեսական նորմատիվների, պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում Կենտրոնական բանկի կողմից բանկի նկատմամբ նշանակվող տույժի չափը կարող է գերազանցել սահմանված կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը:

15.6. ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 65 հոդվածի,

Լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե՝

- ա) խախտվել են տվյալ օրենքի, [բանկային գործունեությունը](#) կարգավորող այլ օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները
- բ) բանկը լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում բանկային գործունեություն չի իրականացրել
- գ) բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականը
- դ) դադարել է բանկի գործունեությունը:

Բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ բացառապես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշման ուժի մեջ մտնելու պահից բանկը զրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից՝ բացառությամբ տվյալ օրենքով նախատեսված գործարքների, որոնք ուղղված են նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը, և օրենքով սահմանված կարգով լուծարվում է: Բանկի բանկային

գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը դատարանը չի կասեցնում այդ որոշման գործողությունը գործի ողջ դատական քննության ընթացքում:

15. 7. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՍԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ


ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկերի նկատմամբ պատժամիջոցների կիրառման ընթացակարգը սահմանված է ՀՀ Կենտրոնական բանկի «Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին» կարգով: Այդ ընթացակարգի փուլերը բերված են ստորև (նկար 32):

Բանկի կամ բանկի ղեկավարի կողմից խախտում թույլ տալու դեպքում Կենտրոնական բանկը կարող է կիրառել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին կետում նշված մեկ պատժամիջոց՝ բանկի նկատմամբ և (կամ) «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին կետում նշված մեկ պատժամիջոց՝ ղեկավարի նկատմամբ, իսկ հաշվետու ժամանակաշրջանում բանկի կողմից փաստացի պահուստավորված միջոցների՝ պահուստավորման ենթակա հաշվարկային միջինից փոքր լինելու դեպքում բանկի նկատմամբ կիրառվում է «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ կետում նշված տույժը՝ հաշվետու ժամանակաշրջանում միջին հաշվով պակաս պահուստավորված գումարի մեկ տոկոսի չափով՝ յուրաքանչյուր չպահուստավորված օրվա համար:

Կենտրոնական բանկը հայտնաբերված խախտման համար կարող է համապատասխան պատժամիջոց կիրառել խախտման արձանագրման պահից մեկ տարվա ընթացքում:

Անվճարունակության գործընթացում գտնվող բանկերի նկատմամբ տուգանքների և տույժերի ձևով պատժամիջոցներ չեն կիրառվում:

Կենտրոնական բանկի և խախտումներ թույլ տված բանկի միջև, բանկի ֆինանսական վիճակի բարելավման և բնականոն գործունեության ապահովման նպատակով, կարող է կնքվել *պայմանագիր*: Այդ պայմանագրի կնքման պահից պայմանագիրը կնքած բանկի նկատմամբ սկսված վարույթները կարող են կասեցվել կամ կարճվել, բանկի նկատմամբ նշանակված տուգանքի, տույժի գանձումը կարող է հետաձգվել, կամ տուգանք կամ այլ պատժամիջոց չկիրառվել, տուգանքի, տույժի չափը կարող է նվազեցվել, կամ տուգանքի, տույժի գանձման ժամանակացույց սահմանվել:



Նկար 32. Պատժամիջոցների կիրառման ընթացակարգը

Պայմանագրով կարող են նախատեսվել հետևյալ պայմանները՝ որոշակի ժամանակաշրջանում բանկի ֆինանսական առողջացման, վերակազմավորման կամ զարգացման ծրագրի իրագործում, բանկի կողմից խախտման վերացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում, շահաբաժինների վճարման կասեցում, ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվների սահմանում, բանկի ղեկավարների աշխատավարձի նվազեցում և պարզևավճարների դադարեցում, [ակտիվ](#)ային ու պասիվային առանձին գործառնությունների դադարեցում կամ ծավալային սահմանափակում:

Եթե բանկը կատարել է սույն կանոնով նախատեսված պայմանագրի պայմանները, ապա նրա նկատմամբ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է պատժամիջոց չկիրառվել:

ՀՀ կենտրոնական բանկի վերոհիշյալ կարգով սահմանված են նաև վարույթը կարճելու, կասեցնելու, տուգանքի, տույժի գանձումը հետաձգելու, տուգանքը կամ այլ պատժամիջոց չկիրառելու կամ տուգանքը, տույժը մեղմացնելու հիմքերը:

Ուսումնական առաջադրանքներ

1. Մանրամասն նկարագրել բանկերի նկատմամբ պատժամիջոցների կիրառման ընթացակարգը:
2. Ներկայացնել վարույթը կարճելու հիմքերը:
3. Ներկայացնել վարույթը կասեցնելու հիմքերը:
4. Ներկայացնել տուգանքի, տույժի գանձումը հետաձգելու, տուգանքը կամ այլ պատժամիջոց չկիրառելու կամ տուգանքը, տույժը մեղմացնելու հիմքերը:

Ինքնատուզման հարցեր

1. Որո՞նք են համարվում բանկերի կողմից թույլ տրված օրենսդրության խախտումներ:
2. Որո՞նք են համարվում վարկային կազմակերպությունների կողմից թույլ տրված օրենսդրության խախտումներ:
3. Որո՞նք են օրենսդրության խախտումների համար բանկերի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները և դրանց կիրառման հիմքերը:
4. Որո՞նք են բանկերի կողմից պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման հետևանքները:
5. Որո՞նք են օրենսդրության խախտումների համար վարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները և դրանց կիրառման հիմքերը:
6. Որո՞նք են օրենսդրության խախտումների համար բանկերի և վարկային կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ պատժամիջոցների կիրառման հիմքերը:
7. Ինչպիսի՞ն է օրենսդրության խախտումների համար բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառման ընթացակարգը:
8. Որո՞նք են վարույթը կարճելու և կասեցնելու հիմքերը:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ. Կենտրոնական բանկի կողմից բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կարող են կիրառվել նաև այն դեպքում, եթե՝

- ա) բանկը չի կատարել ԿԲ-ի կողմից տրված հանձնարարականը
- բ) բանկի ցուցանիշների ամփոփ զնահատականը ցածր է ԿԲ-ի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ զնահատականի չափից
- գ) խախտվել են [բանկային գաղտնիքի](#) մասին օրենքի պահանջները
- դ) խախտվել են հիմնական տնտեսական նորմատիվները:

Հ ա ր ց 2. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) պարտադիր պահուստավորման նորմատիվը խախտելու համար բանկի նկատմամբ նշանակվող տույժի գումարը չի կարող գերազանցել կանոնադրական կապիտալի նվազագույն չափի 5 տոկոսը
- բ) հիմնական տնտեսական նորմատիվները խախտելու համար բանկը կարող է տուգանվել 3 մլն դրամի չափով
- գ) բանկային օրենսդրության խախտման համար բանկի նկատմամբ նշանակվող տուգանքը կարող է կազմել ցանկացած մեծություն
- դ) բանկային օրենսդրության խախտման համար կենտրոնական բանկը առհասարակ չի կարող տուգանք նշանակել բանկի ղեկավարների նկատմամբ
- ե) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 3. Բանկերի կողմից հաշվետվություններն ուշ ներկայացնելու կամ դրանցում անարժանահավատ տեղեկություններ արտացոլելու համար Կենտրոնական բանկը կարող է դատարան դիմել.

- ա) նաև բանկի ստորաբաժանումների ղեկավարների նկատմամբ տուգանք նշանակելու համար
- բ) նաև բանկի վերստուգիչ հանձնաժողովի անդամի նկատմամբ տուգանք նշանակելու համար
- գ) նաև բանկի մասնաճյուղերի կառավարիչների նկատմամբ տուգանք նշանակելու համար
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 4. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկային գործունեության լիցենզիան անվավեր է ճանաչում դատարանը
- բ) բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչում դատարանը
- գ) կապիտալի համարժեքության նորմատիվները խախտելու համար բանկի նկատմամբ նշանակվող տուգանքը կարող է գերազանցել նվազագույն կանոնադրական կապիտալի մեկ տոկոսը
- դ) որակավորման վկայականից զրկվելու դեպքում բանկի ղեկավարը կարող է իրականացնել օրենսդրությամբ նախատեսված իր իրավասությունները:

Հ ա ր ց 8. Բանկի ղեկավարների նկատմամբ տուգանքը կարող է կազմել.

- ա) 800 հազար դրամ
- բ) 1.2 մլն դրամ
- գ) 3 մլն դրամ
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ր ց 9. Օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով կատարված ֆինանսական գործառնությունների համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի առավելագույն չափը կազմում է՝

- ա) 400 000 դրամ
- բ) 500 000 դրամ
- գ) 2 500 000 դրամ
- դ) 400 000 դրամ
- ե) ճիշտ պատասխանը նշված չէ:

ՓԼՈՒԽ 16. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՄՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ պարզաբանել բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվների և ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգերում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները, դրանց դասակարգման, անհուսալի ճանաչման և հաշվեկշռից դուրսգրման, պահուստներին հատկացումների գումարների որոշման և պարտքերի վերականգնման հաշվառման կարգերը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- տալ ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգերի իրավական հիմքերը և նպատակները
- տալ ակտիվների հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգերում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները
- ներկայացնել ակտիվների դասակարգումն ըստ ռիսկի դասերի
- ներկայացնել ակտիվներն անհուսալի ճանաչելու և հաշվեկշռից դուրս գրելու կանոնները
- բացատրել հաշվարկված տոկոսների ու տույժերի հաշվեգրման դադարեցման դուրսգրման կանոնները
- բացատրել պահուստին հատկացումներ կատարելու և պահուստի օգտագործման կարգերը
- բացատրել ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվների և տոկոսների դուրսգրումը
- ներկայացնել ինվեստիցիոն արժեթղթերի սահմանումը, դրանց դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների
- բացատրել ինվեստիցիոն արժեթղթերի գծով պահուստին հատկացումների գումարների որոշման կանոնները
- բացատրել ինվեստիցիոն արժեթղթերի անհուսալի ճանաչումը և հաշվեկշռից դուրսգրումը
- պայմանական թվերի հիման վրա դասակարգել ակտիվները և որոշել պահուստներին կատարվող հատկացումների գումարների չափը:

16.1. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՄՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Յիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 57-րդ և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածները, ՀՀ կենտրոնական բանկը և ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարությունը սահմանել են՝

1. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» և
2. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգերը:

Վերը նշված կարգերի գործողությունը տարածվում է նաև վարկային կազմակերպությունների վրա. «Վարկային կազմակերպությունների ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը և օգտագործումը, վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումն իրականացվում է բանկերի համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներին համապատասխան սահմանված կարգերով» («Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 3): Նշենք, որ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հրապարակվելուց հետո «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում համապատասխան լրացում կատարվեց կես տարի անց, որը լիարժեք իրավական հիմք տվեց վարկային կազմակերպություններին՝ իրենց ակտիվները դասակարգելու և պահուստներ ձևավորելու համաձայն բանկերի համար սահմանված համապատասխան կարգերի: Ուստի, այսուհետ սույն թեմայի տեքստում ամենուրեք «բանկ» հասկացության տակ պետք է հասկանալ «բանկ և վարկային կազմակերպություն»:

- Կարգերի նպատակներն են՝
- ⇒ շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանել համախառն եկամտի նվազեցումները՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով
 - ⇒ բանկային գործունեությունը կարգավորող տնտեսական նորմատիվների հաշվարկման համար օգտագործվող բանկի ընդհանուր կապիտալի և ակտիվների մեծության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացումը, այսինքն՝ բանկերի հաշվեկշռը «մաքրել» վատորակ ակտիվներից, իրական պատկերացում ստանալ հաշվեկշռի վերաբերյալ:

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի, բանկերի և վարկային կազմակերպությունների ծախսերի կառուցվածքի առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանց կազմում ընդգրկվում են նաև վարկերի, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստին կատարվող հատկացումները: Դա նշանակում է, որ տվյալ պահուստը ձևավորում է ոչ թե

շահութահարկի վճարումից հետո (զուտ շահույթի հաշվին), այլ մինչև շահութահարկը վճարելը: Պահուստներին կատարվող հատկացումների չափերը կախված չեն հաշվետու ժամանակաշրջանում ստացված եկամուտների մեծությունից և կատարվում են համապատասխան կարգերով սահմանված [ակտիվ](#)ների ռիսկերի դասակարգման համաձայն: Պահուստների միջոցներն օգտագործվում են տվյալ կարգով սահմանված անհուսալի ակտիվների կամ ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների դուրսգրման համար:

16.2. ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՈՒ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՄՏՆԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ

Կարգում օգտագործվող հիմնական սահմանումները

Կարգում օգտագործվող հիմնական սահմանումներն են՝

- «Ակտիվներ (կետ 2.1)
- «Ակտիվների դասակարգում» (կետ 2.2)
- «Ընդհանուր պահուստ» (կետ 2.3)
- «Յատուկ պահուստ» (կետ 2.4)
- «Չճանաչված տոկոսային եկամուտ (և (կամ) տուժանք)» (կետ 2.5)
- «Չաշխատող ակտիվներ» (կետ 2.6)
- «Ապահովվածություն չունեցող (բլանկային) ակտիվներ» (կետ 2.7)
- «Տոկոսների կապիտալացում» (կետ 2.8)
- «Վերանայված պայմաններով ակտիվներ» (կետ 2.9)
- «Վերաֆինանսավորված ակտիվներ» (կետ 2.10):

Ուսումնական առաջադրանք

Տալ վերոհիշյալ հասկացությունների բնորոշումները՝ համաձայն գործող կարգի:

Ստորև ներկայացնենք որոշ մեկնաբանություններ և պահեր, որոնց վրա ունկնդիրը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի:

⇒ Կարգով տրված է ակտիվների լայն սահմանում. ակտիվներ են համարվում ոչ միայն վարկերը, հաշվեկշռային մի շարք այլ հոդվածներ, այլ նաև կանխավճարները, բանկային [երաշխիք](#)ների և [ակրեդիտիվ](#)ների գծով պահանջները, ինչպես նաև բանկի կամ վարկային կազմակերպության համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները:

⇒ Տվյալ կարգի իմաստով ակտիվներ են համարվում արժեթղթերում ներդրումներից՝ միայն մուրհակների գծով ստացվելիք գումարները: Բաժնետոմսերի և պարտատոմսերի պահուստավորումը կատարվում է այլ կարգով:

⇒ Տոկոսների հաշվեգրման դադարեցման համար չաշխատող ակտիվների գումարը հաշվարկելիս հիմք է ընդունվում պարտքի հիմնական գումարի գծով փոխառուի չմարված պարտավորության գումարը, այլ ոչ թե վերջինիս ժամկետանց մասը:

⇒ Չաշխատող են համարվում ոչ միայն այն ակտիվները, որոնց հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից, այլ նաև այն ակտիվները, որոնց տոկոսային վճարները գումարվել են չմարված փոխատվության (վարկի) գումարին կամ վճարման պայմանները վերանայվել (վերաֆինանսավորվել) կամ էլ փոխանցվել են նոր փոխատվության (վարկի) գումարին: Առաջ անցնելով նշենք, որ չաշխատող ակտիվները համարվում են ակտիվների դասակարգման օբյեկտիվ չափանիշ, հետևաբար, բանկը կամ վարկային կազմակերպությունը չի կարող, օրինակ, վարկային պայմանագրի ժամկետը երկարաձգելու կամ պայմանները փոխելու միջոցով արհեստականորեն լավացնել ակտիվների որակը:

⇒ ՀՀ կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով բանկի կողմից ակտիվի (կամ դրա մասի) դասակարգումը կարող է փոխվել:

Ակտիվների դասակարգումը

Համաձայն կարգի, բանկի և վարկային կազմակերպության ակտիվները (այդ թվում՝ վարկերը) խմբավորվում են 5 դասի՝

1. ստանդարտ
2. *հսկվող*
3. ոչ ստանդարտ
4. կասկածելի
5. անհուսալի:

Բանկերը ձևավորում են ընդհանուր պահուստ՝ ստանդարտ ակտիվների համար և հատուկ պահուստ՝ հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի ակտիվների համար: Յուրաքանչյուր բանկ ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվներ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար:

Բանկերն առնվազն 30 օրը մեկ անգամ պետք է միաժամանակ դասակարգեն բոլոր ակտիվները՝ բանկի կողմից սահմանված ներքին կանոնակարգին համապատասխան, ընդ որում, դասակարգման օր պետք է լինի նաև հաշվետու ամսվա վերջին բանկային օրը: Յուրաքանչյուր ակտիվ պետք է դասակարգվի որպես ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի: Ակտիվների դասակարգումը հիմնված է տվյալ կարգում սահմանված օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների վրա (աղյուսակ 11):

Այն դեպքում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում առկա են տարբերություններ, պաշտպանի համար առաջնային է առավել խիստ չափանիշը:

Սուբյեկտիվ չափանիշները հիմնված են բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ծառայության դատողությունների և մասնագիտական կարծիքի վրա: Վերոհիշյալ դատողությունները պետք է համարժեք լինեն կարգում սահմանված ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի ակտիվների սահմանումների հետ:

Աղյուսակ 11. Ակտիվների դասակարգման չափանիշները

Ակտիվի դասը	Օբյեկտիվ չափանիշ	Սուբյեկտիվ չափանիշ
Ստանդարտ	Ակտիվն աշխատող է և գտնվում է սպասարկման ընթացքում համաձայն պայմանագրի	Ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և խնդրահարույց չեն: Որպես կանոն, ստանդարտ ակտիվներին բնորոշ են հետևյալ հայտանիշները. ա) փոխառուի (պարտապանի) ֆինանսական կացությունը կասկած չի հարուցում, և բ) առկա է ակտիվը մարելու (սպասարկելու) փոխառուի (պարտապանի) բավարար ունակությունը: Ստանդարտ ակտիվներն ունեն բավարար ապահովվածություն ինչպես հիմնական գումարի, այնպես էլ տոկոսային պարտքի գծով:
Հսկվող	Չաշխատող է մինչև 90 օր	Հսկվող են դասակարգվում այն ակտիվները, որոնք ամբողջությամբ համապատասխանում են ստանդարտ ակտիվների սահմանմանը, սակայն դրանց հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից մինչև 90 օր:
Ոչ ստանդարտ	Չաշխատող է 91-180 օր	Ոչ ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կապված փոխառուի (պարտապանի) ֆինանսական վիճակից կամ նրա պարտքը մարելու ունակությունից: Ոչ ստանդարտ ակտիվների մեջ ներառվում են ա) ժամկետային ակտիվները, որոնց մարումը ժամկետում հնարավոր չէ փոխառուի (պարտապանի) դրամական միջոցների անբավարար հոսքի պատճառով բ) սեփական կապիտալի և ներգրավված միջոցների միջև հարաբերակցության բանկի կողմից սահմանված ներքին կանոնակարգին համաձայն, անբավարար աստիճան ունեցող փոխառուի (պարտապանի) վարկերը, կանխավճարները և փոխառուի (պարտապանի) նկատմամբ այլ պահանջները գ) այն ակտիվները, որոնք փոխառուն (պարտապանը) չի կարող մարել նախնական պայմանավորվածության համաձայն, և որոնք փոխառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով վերանայումների ու դրանց շուրջ տարվող բանակցությունների առարկա են: Այսինքն՝ ակտիվի մարման առաջնային աղբյուրները բավարար չեն, և բանկը պետք է դիմի այն մարելու երկրորդային աղբյուրներին, որպիսիք են՝ գրավի, գույքի վաճառքը, պայմանների վերանայումը (վերաֆինանսավորումը) կամ կապիտալի նոր աղբյուրների հայթայթումը և այլն: Ոչ ստանդարտ ակտիվներն ունեն ակնհայտ թերություններ, որոնք վտանգում են պարտքի ամբողջությամբ մարելը: Ոչ ստանդարտ ակտիվներին կարող են դասվել նաև այն ակտիվները, որոնց հետ կապված է սովորականից ավելի մեծ ռիսկ կապված փոխառուի ընթացիկ ֆինանսական տեղեկատվության կամ գրավի վերաբերյալ համարժեք փաստաթղթերի բացակայության հետ:
Կասկածելի	Չաշխատող է 181-270 օր	Կասկածելի ակտիվներն ունեն ոչ ստանդարտ ակտիվների բոլոր հատկանիշները, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար: Կասկածելի ակտիվների դեպքում զգալի կորուստների հավանականությունը բարձր է, բայց կորուստների չափերը պարզ չեն, ինչը հիմնականում պայմանավորված է մի շարք կարևոր և հատուկ գործոններով, որոնք կարող են բարելավել այս ակտիվի վիճակը: Այսպիսով, այս ակտիվի դասակարգումը որպես անհուսալի հետաձգվում է մինչև վերջինիս հետ կապված հանգամանքների հստակեցումը:
Անհուսալի	Չաշխատող է 271 և ավելի օր	Անհուսալի ակտիվներն անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված ակտիվներն են, որոնց հաշվառումը հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ: Այս դասակարգումը չի նշանակում, որ ակտիվը հնարավոր չէ վերականգնել ապագայում, բայց դրա հաշվապահական ճանաչումը տվյալ պահին պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ:

Ապահովվածություն չունեցող (բլանկային) ակտիվները տրաման պահին դասակարգվում են անհուսալի: Ուստի այն բանկերը, որոնք ընդհանուր կապիտալը հազիվ պահպանում են սահմանված նվազագույն չափի վրա, կունենան լուրջ հիմնախնդիրներ՝ առանց ապահովվածության (բլանկային) վարկեր տրամադրելիս:

Բանկերը ձևավորում են ընդհանուր պահուստ՝ ստանդարտ ակտիվների գումարի 1%-ի չափով և հատուկ պահուստ՝ յուրաքանչյուր հսկվող ակտիվի՝ 10%-ի, ոչ ստանդարտ ակտիվի՝ 20%-ի, կասկածելի ակտիվի՝ 50%-ի և անհուսալի ակտիվի՝ 100%-ի չափով:

Ելնելով բանկի կողմից սահմանված ներքին կանոնակարգից, բանկերը ինքնուրույն, առանց ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ծառայության միջամտության, կարող են ավելացնել հատկացումները

ընդհանուր պահուստին՝ ստանդարտ ակտիվների համար՝ մինչև 2%-ը, իսկ հատուկ պահուստին՝ հետևյալ չափերով.

- ա) հսկվող ակտիվի համար՝ մինչև 15%-ը
- բ) ոչ ստանդարտ ակտիվի համար՝ մինչև 25%-ը
- գ) կասկածելի ակտիվի համար՝ մինչև 70%-ը:

ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ծառայությունը կարող է վերահսկողության արդյունքում պարտավորեցնել բանկին ճշգրտելու ակտիվների դասակարգումը և պահուստավորումը՝ համաձայն կարգի:

Եթե ակտիվը ճանաչվում է անհուսալի, այն նույն օրվա ընթացքում պետք է դուրս գրվի բանկի հաշվեկշից՝ «հատուկ պահուստի» հաշվին:

Գործնական աշխատանք

Պայմանական ելակետային տվյալների հիման վրա կատարել վարկերի դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների և որոշել դրանց գծով պահուստին ուղղվող գումարների չափը համաձայն կարգի:

Տոկոսի (և (կամ) տուժանքի) հաշվեգրման դադարեցումը

Չաշխատող ակտիվները, այդպիսին դասակարգվելուց սկսած, պետք է հաշվառվեն ոչ կուտակային մեթոդով. ինչը նշանակում է, որ այն տոկոսը (և (կամ) տուժանքը), որը կուտակվել է, բայց չի հավաքագրվել, այլևս չի կարող գրանցվել որպես տոկոսային եկամուտ (և (կամ) տուժանք): Այդ ակտիվների գծով հաշվեգրված տոկոսները (և (կամ) տուժանքները) պետք է գրանցվեն «չճանաչված տոկոսային եկամտի (և (կամ) տուժանքի)» հաշվին: Տոկոսի (և (կամ) տուժանքի) հաշվեգրումը շարունակվում է, սակայն այն այդուհետ չի գրանցվում որպես տոկոսային եկամուտ մինչև դրա վճարումը:

Այն տոկոսները (և (կամ) տուժանքները), որոնք արդեն հաշվեգրվել են, սակայն չեն հավաքագրվել մինևույն (հաշվետու) ժամանակաշրջանի ընթացքում, պետք է «տոկոսային եկամուտներ (և (կամ) տուժանքներ)» հաշվից փոխանցվեն «չճանաչված տոկոսային եկամուտ (և (կամ) տուժանք)» հաշվին:

Այն տոկոսները (և (կամ) տուժանքները), որոնք հաշվեգրվել են նախորդ ժամանակաշրջանի ընթացքում, սակայն չեն հավաքագրվել, ճանաչվում են որպես ծախս՝ գրանցվելով «չճանաչված տոկոսային եկամուտ (և (կամ) տուժանք)» հաշվին:

Չաշխատող ակտիվի նկատմամբ հաշվեգրման սկզբունքը վերականգնվում է միայն ժամկետանց հիմնական գումարի և տոկոսների, ինչպես նաև տուժանքների ամբողջովին մարելու դեպքում:

Հաշվեգրված, բայց դեռևս չգանձված տոկոսները (և (կամ) տուժանքները), որոնք գրանցվում են «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվում, ենթակա են հաշվեկշից դուրսգրման համապատասխան ակտիվը անհուսալի ճանաչելու (կամ ամբողջությամբ մարելու) պահին: Հաշվեկշից դուրս գրելուց հետո բանկը հաշվառում է դրանք ծանուցման հաշիվներում և կարող է շարունակել տոկոսների (և (կամ) տուժանքների) հաշվեգրումը:

Եթե ակտիվի մարման պահին նրա գծով հաշվարկված տոկոսները գրանցված են «տոկոսային եկամուտներ (և (կամ) տուժանք)» հաշվին, ապա ակտիվի մարման պահից սկսած ակտիվի գծով հաշվեգրված տոկոսները կանոնակարգի 2.6 կետում նախատեսված պայմանները տեղի ունեալուց հետո դուրս են գրվում հաշվեկշից, և դրանց հաշվեգրումը կարող է շարունակվել ծանուցման հաշիվներում:

Ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվների և տոկոսների դուրս գրումը

Ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվների դիմաց վճարում (փոխհատուցում) ստանալիս.

– հաշվեկշիցում վերականգնվում է դուրս գրված ակտիվը կամ դրա մի մասը՝ թղթակցելով «հատուկ պահուստ» հաշվի հետ

– վերականգնված ակտիվը մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ:

Ակտիվների հեթոսական դասակարգումը և պահուստների ճշգրտումներն իրականացնելիս, բանկը ընդհանուր և հատուկ պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է եկամուտների հաշվին:

Ծանուցման հաշիվներում հաշվառվող տոկոսների դիմաց վճարում (փոխհատուցում) ստանալիս.

– հաշվեկշիցում վերականգնվում է դուրս գրված տոկոսը կամ դրա մի մասը՝ թղթակցելով «տոկոսային եկամուտ» հաշվի հետ

– վերականգնված տոկոսը մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ:

Ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվները և տոկոսները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում ծանուցման հաշիվներից.

– բանկի կողմից ակտիվի և տոկոսների (կամ դրանց մի մասի) զիջելու (կամ ներելու) կամ՝

– ակտիվի և տոկոսների (կամ դրանց մի մասի) նկատմամբ պահանջի իրավունքի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը լրանալու դեպքում:

Եթե բանկի հաշվեկշիցում հաշվառվող ակտիվները և տոկոսները (կամ դրանց մի մասը) բանկի կողմից այլ անձի անհատույց զիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշից դուրս գրվելը, դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ:

Վերը նշված դեպքերում բանկը պարտավոր է 7-օրյա ժամկետում այդ մասին հայտնել ՀՀ պետական եկամուտների նախարարության համապատասխան տարածքային հարկային տեսչությանը:

16.2. ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԱՐԺԵՔՊԵՐՈՒՄ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՄՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Արժեթղթերի դասակարգումը

Կարգի նպատակներով ինվեստիցիոն արժեթղթեր են համարվում`

- ⇒ բաժնետոմսերը
- ⇒ ոչ պետական պարտատոմսերը
- ⇒ ներդրումներն այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում:

Այսպիսով, կարգի գործողությունը տարածվում է նաև այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում մասնակցության (փայամասնակցության) վրա, անկախ դրանց կազմակերպականիրավական ձևից:

Կարգի նպատակներով արժեթղթերը ստորաբաժանվում են`

1. ըստ ժամկետայնության – ժամկետային և անժամկետ արժեթղթեր
2. ըստ նպատակայնության – վերավաճառքի նպատակով ձեռք բերված, վաճառքի համար նախատեսվող, մինչև մարման ժամկետի ավարտը պահվող արժեթղթեր
3. ըստ գնահատման եղանակի (միայն բաժնետոմսերի համար) - գնանշվող և չգնանշվող բաժնետոմսեր:

Ուսումնական առաջադրանքներ

1. *Տալ արժեթղթերի բնորոշումները` համաձայն կարգի:*
2. *Թվարկել այն չափանիշները, որոնց միաժամանակ պետք է բավարարեն գնանշվող բաժնետոմսերը` համաձայն կարգի:*

Պահուստի ձևավորումը

Ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը կատարվում է համաձայն կարգի 2-րդ բաժնում սահմանված կանոնների:

Մասնավորապես`

- ❖ Հնարարավոր կորուստների պահուստ ձևավորվում է մինչև մարման ժամկետի ավարտը պահվող ժամկետային և անժամկետ արժեթղթերի գծով:
 - ❖ Պահուստ չի ձևավորվում վերավաճառքի նպատակով ձեռք բերված կամ վաճառքի համար նախատեսվող ինչպես ժամկետային, այնպես էլ անժամկետ արժեթղթերի գծով:
 - ❖ Պահուստ չի ձևավորվում մինչև մարման ժամկետի ավարտը պահվող ժամկետային և անժամկետ արժեթղթերի գծով ստացվելիք գումարների (զեղչատոկոս, հավելավճար, շահաբաժիններ) համար: Բանկի [եկամուտներին](#) հաշվեգրված այդ գումարների դուրսգրումը կատարվում է կարգի 4.3 կետին համապատասխան:
- ժամկետային արժեթղթերի պահուստին* մասհանումները կատարվում են աղյուսակ 12-ում նշված չափերով:

Աղյուսակ 12. Ժամկետային արժեթղթերի պահուստին կատարվող մասհանումները չափերը

Արժեթղթերի դասակարգումն ըստ դրանց մարման ժամկետը լրանանալուց հետո ժամկետանց օրերի	Պահուստին կատարվող մասհանումների սահմանաչափերը (%)
Արժեթղթերի ձեռքբերման պահին	ոչ ռիսկային (2)
Արժեթղթի մարման ժամկետը լրանալու պահից մինչև 60-րդ օրը ներառյալ	ռիսկային (2-20)
Արժեթղթի մարման օրվան հաջորդող 61-րդ օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ	միջին ռիսկային (20-70)
Արժեթղթերի մարման օրվան հաջորդող 91-րդ օրվանից մինչև 180-րդ օրը ներառյալ	բարձր ռիսկային (70-100)
Արժեթղթի մարման օրվան հաջորդող 181-րդ օրվանից	անհուսալի (100)

Ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները, աղյուսակում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են ինքնուրույն՝ ելնելով դրանց մարման ժամկետի ավարտից հետո ժամկետանց օրերի թվից և թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումից:

ՀՀ կենտրոնական բանկը, բանկի արժեթղթերի վերստուգման արդյունքների հիման վրա կարող է բանկին պարտավորեցնել պահուստին ուղղվող մասհանումները կատարել ընդհուպ մինչև գործակցի առավելագույն չափով, ինչպես նաև ճշտել արժեթղթի ռիսկայնությունը՝ ելնելով կարգի 2.4.2 կետից:

Գործնական աշխատանք

Պայմանական տվյալների հիման վրա ներկայացնել ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը` համաձայն 2.4. կետի:

Գնանշվող բաժնետոմսերի պահուստի ձևավորման կարգը սահմանված է կարգի 2.5 կետի կանոններով:

Յուրաքանչյուր թողարկողի բաժնետոմսերի գծով ձևավորվող պահուստի մեծությունը ճշտվում է ոչ ուշ, քան վերջին աշխատանքային օրվա դրությամբ:

Ուսումնական-մեթոդական նյութի հեղինակի կարծիքով, հնարավոր չէ գնանշվող արժեթղթերի հնարավոր պահուստին մասհանումների կատարումը թողարկողի բաժնետոմսերի *ամբողջ պորտֆելի գծով*: Բանն այն է, որ բանկն իր վրա է վերցնում միայն իր կողմից ձեռք բերված արժեթղթերին համապատասխան ռիսկ:

Ուսումնական առաջադրանք

Մանրամասն ուսումնասիրել և նկարագրել գնանշվող արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը՝ համաձայն կարգի 2.5 կետի:

Գործնական աշխատանք

Պայմանական ելակետային տվյալների հիման վրա ներկայացնել գնանշվող բաժնետոմսերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը՝ համաձայն 2.5 կետի:

Չգնանշվող բաժնետոմսերի (ներդրումների) պահուստի ձևավորման կարգը սահմանված է 2.6 կետի դրույթներով: Ուսումնամեթոդական նյութի հեղինակի կարծիքով, այս դեպքում նույնպես հիմնավորված չէ պահուստին կատարվող մասհանումների գումարի որոշման բանաձևում տվյալ թողարկողի բաժնետոմսերի քանակի օգտագործումը էլեմենտը նախորդ դիտողության մեջ տրված նկատառումից: Չգնանշվող բաժնետոմսերի և (կամ) ներդրումների գնահատման ու պահուստի մեծության ճշտումը բանկերն իրականացնում են ինքնուրույն, իրենց կողմից ընտրված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ (թողարկողի ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով):

Ուսումնական առաջադրանք

Մանրամասն ուսումնասիրել և նկարագրել չգնանշվող արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը՝ համաձայն կարգի 2.6 կետի:

Գործնական աշխատանք

Պայմանական ելակետային տվյալների հիման վրա ներկայացնել չգնանշվող բաժնետոմսերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը՝ համաձայն 2.6 կետի:

Ինվեստիցիոն արժեթղթերի անհուսալի ճանաչումը

Ժամկետային արժեթղթերն անհուսալի են ճանաչվում ժամկետանց դառնալու 181-րդ օրը, ինչպես նաև այն դեպքում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել, լուծարվել է առանց իրավահաջորդության կամ վավերացվել է վերջինիս կողմից պարտքի մարման անհնարինությունը՝ անկախ արժեթղթերի մարման ժամկետը լրանալուց և նպատակայնությունից:

Անժամկետ արժեթղթերն անհուսալի են ճանաչվում, եթե թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել կամ լուծարվել է առանց իրավահաջորդության:

Պահուստի օգտագործման կարգը

Պահուստի միջոցներն օգտագործվում են բացառապես տվյալ կարգի համաձայն անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրման համար: Եթե տվյալ արժեթղթի ձևավորված պահուստի միջոցները չեն բավարարում դրանց արժեքի դուրսգրման համար, ապա այդ տարբերության չափով լրացուցիչ մասհանում է կատարվում պահուստին, և այնուհետև անհուսալի ճանաչված արժեթղթերի արժեքը դուրս է գրվում պահուստի միջոցների հաշվին:

Անհուսալի ճանաչված արժեթղթերը դուրս են գրվում «Ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստ» հաշվի միջոցներից՝ անհուսալի դառնալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը:

Մինչև մարման ժամկետի ավարտը պահվող ժամկետային և անժամկետ արժեթղթերի գծով ստացվելիք այն գումարները, որոնք սահմանված կարգի համաձայն հաշվեգրվել են բանկի եկամուտներին, սակայն չեն մարվել (վճարվել) նախատեսված ժամկետներում դուրս են գրվում՝

դրանց ժամկետանց դառնալու օրվանից հաշված 90-րդ օրը

անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրման օրը:

Թողարկողի անվճարունակության հետևանքով անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրումը բանկի հաշվեկշիռից չի համարվում այդ պարտավորության անվավեր ճանաչում:

Չհաշվեկշռից դուրս գրված անհուսալի արժեթղթերը դուրսգրման պահից սկսած ամսվազն 5 տարի հաշվառվում են համապատասխան ծանուցման հաշիվներում (բացառությամբ այն դեպքի, երբ պարտապանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվել է) և այդ ընթացքում չմարվելու դեպքում միայն կարող են դուրս գրվել նաև ծանուցման հաշիվներից:

Արժեթղթերի գծով պարտավորության լրիվ կամ մասնակի մարման կամ դրանց օտարման դեպքում համապատասխան չափով ճշտվում է պահուստի ընդհանուր մեծությունը՝ կատարված մասհանումների գումարներն ուղղելով տվյալ հաշվետու ժամանակահատվածի եկամուտներին:

Անհուսալի ճանաչված և պահուստի հաշվին դուրսգրված արժեթղթերի, ինչպես նաև կարգի համաձայն դուրսգրված գումարների (կուտակված եկամուտների) գծով պարտավորությունների լրիվ կամ մասնակի մարման դեպքում վերականգնված գումարներն ամբողջությամբ հաշվեգրվում են բանկի տվյալ հաշվետու ժամանակահատվածի եկամուտներին:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են [ակտիվ](#)ների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգերի իրավական հիմքերը և նպատակները:
2. Որո՞նք են ակտիվների հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները:
3. Ինչպե՞ս կարելի է դասակարգել ակտիվներն ըստ ռիսկի դասերի, որո՞նք են դասակարգման չափանիշները:
4. Որո՞նք են ակտիվներն անհուսալի ճանաչելու և հաշվեկշռից դուրս գրելու կանոնները:
5. Ինչպե՞ս են կատարվում պահուստին հատկացումները և պահուստի օգտագործումը:

- 6. Որո՞նք են հաշվարկված տոկոսների ու տույժերի հաշվեգրման դադարեցման դուրսգրման կանոնները:
- 7. Որո՞նք են պարտքերի վերականգնման հաշվառման կանոնները:
- 8. Որո՞նք են համարվում ինվեստիցիոն արժեթղթեր:
- 9. Ի՞նչ են իրենցից ներկայացնում ինվեստիցիոն արժեթղթերը, ինչպե՞ս են դրանք դասակարվում ըստ տարբեր հատկանիշների:
- 10. Ո՞ր արժեթղթերի գծով է ձևավորվում, ո՞ր արժեթղթերի և գումարների գծով չի ձևավորվում պահուստ:
- 11. Որո՞նք են համարվում ոչ ռիսկային, ռիսկային, միջին ռիսկային, բարձր ռիսկային և անհուսալի ժամկետային արժեթղթեր և որքա՞ն են դրանց գծով պահուստին ուղղվող մասհանումների սահմանաչափերը:
- 12. Ինչպե՞ս է կատարվում գնանշվող բաժնետոմսերի պահուստի ձևավորումը:
- 13. Ինչպե՞ս է կատարվում չգնանշվող բաժնետոմսերի (ներդրումների) պահուստի ձևավորումը:
- 14. Ինչպե՞ս է կատարվում պահուստի օգտագործումը:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Ակտիվների հնարավոր կորուստների պահուստը.

- ա) ձևավորվում է բանկի տրամադրության տակ մնացած զուտ շահույթի հաշվին
- բ) արտացոլվում է արտահաշվեկշռային հաշիվներում
- գ) պահուստին հատկացումներ կատարելիս բանկի ընդհանուր կապիտալը մնում է անփոփոխ
- դ) պահուստը պահվում է 33 կենտրոնական բանկում
- ե) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) մախկինում բանկի հաշվեկշռից դուրս գրված վարկի մարումը համարվում է եկամուտ
- բ) ժամկետային վարկի մարումը համարվում է եկամուտ
- գ) ցանկացած վարկ տրամադրելիս բանկը պարտավոր է հատկացումներ կատարել [ակտիվների հնարավոր կորուստների պահուստին](#)
- դ) բանկերը պահուստին հատկացումներ կատարում են նաև իրենց կողմից տրամադրված երաշխիքների գծով:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. Ստանդարտ ակտիվների գծով.

- ա) բանկերը պահուստ չեն ձևավորում
- բ) բանկերը ձևավորում են հատուկ պահուստ
- գ) բանկերը ձևավորում են ընդհանուր պահուստ՝ ակտիվների 25 %-ի չափով
- դ) բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 4 . Բանկը պարտավոր է անհուսալի զնահատված վարկը հաշվեկշռից դուրս գրել.

- ա) երեք բանկային օրվա ընթացքում
- բ) տասնօրյա ժամկետում
- գ) նույն օրվա ընթացքում
- դ) մեկշաբաթյա ժամկետում:

Հ ա ր ց 5 . Համաձայն գործող կարգի, բանկերը պետք է դասակարգեն ակտիվները.

- ա) յուրաքանչյուր բանկային օրվա ավարտին
- բ) առնվազն եռամսյակը մեկ անգամ
- գ) առնվազն 30 օրը մեկ անգամ
- դ) առնվազն կիսամյակը մեկ անգամ:

Հ ա ր ց 6 . Անժամկետ արժեթղթերը.

- ա) անհուսալի են ճանաչվում, եթե թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել,կամ լուծարվել է առանց իրավահաջորդության
- բ) անհուսալի են ճանաչվում բանկի հայեցողությամբ
- գ) անհուսալի ճանաչվել չեն կարող
- դ) անհուսալի են ճանաչվում բանկի 33 ԿԲ-ի թույլտվությամբ:

Հ ա ր ց 7 . Ժամկետային արժեթղթերը անհուսալի են ճանաչվում նաև.

- ա) ժամկետանց դառնալու 120-րդ օրը
- բ) ժամկետանց դառնալու 181-րդ օրը
- գ) ժամկետանց դառնալու 60-րդ օրը
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

Հ ա ր ց 8 . Բանկի կողմից անհուսալի ճանաչված արժեթղթերը ենթակա են դուրսգրման.

- ա) տասնօրյա ժամկետում
- բ) եռօրյա ժամկետում
- գ) անհուսալի դառնալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը
- դ) ժամկետանց դառնալու օրը:

ՊԱՌԻՍ 17. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել արժութային կարգավորման և վերահսկողության իրավական հիմքերը, պարզաբանել ՀՀ տարածքում ընթացիկ հաշվի և կապիտալի շարժի հետ կապված գործարքների իրականացումը կարգավորող դրույթները, բանկերում հաշիվների բացումը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից արժութային դիլերների և արտարժույթի փոխանակման կետերի, արտարժույթի սակարկությունների կազմակերպմամբ զբաղվող կազմակերպությունների լիցենզավորման, գործունեության կարգավորման և վերահսկողության իրավական նորմերը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- ներկայացնել արժութային կարգավորման և վերահսկողության իրավական հիմքերը
- ներկայացնել արժութային գործառնությունների իրականացման ընդհանուր սկզբունքները
- տալ արժութային օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները
- տալ ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունները արժութային կարգավորման բնագավառում
- բացատրել ՀՀ տարածքում ընթացիկ հաշվի և կապիտալի շարժի հետ կապված գործարքների իրականացումը կարգավորող դրույթները
- բացատրել արտարժույթի հաշվարկային փոխարժեքի որոշման մեթոդիկան
- ներկայացնել արտարժույթի փոխանակման կետերի լիցենզավորման և գործունեության կարգավորման և վերահսկման կանոնները
- ներկայացնել արժութային դիլերների լիցենզավորման և գործունեության կարգավորման և վերահսկման կանոնները
- ներկայացնել արտարժույթի սակարկությունների կազմակերպմամբ զբաղվող կազմակերպությունների լիցենզավորման և գործունեության կարգավորման և վերահսկման կանոնները:

17.1. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորվում են հետևյալ նորմատիվ իրավական ակտերով՝

- ⇒ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 142, 143, 356, 470, 852, 877, 946, 1239 և 1240,
- ⇒ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 5, 6, 36, գլուխներ 6 և 7
- ⇒ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք
- ⇒ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 17, 34, 40, 44, և 52
- ⇒ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 8, 14
- ⇒ «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1
- ⇒ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2
- ⇒ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3
- ⇒ «Բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման մասին» կանոնակարգ 5
- ⇒ «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման համար գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության պահանջները, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռք բերումը» կանոնակարգ 13
- ⇒ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14
- ⇒ «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15
- ⇒ «Հայաստանի Հանրապետության տարածքում արժութային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8
- ⇒ «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10
- ⇒ «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11
- ⇒ «Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12
- ⇒ այլ նորմատիվ իրավական ակտեր:

17.2. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում (հոդված 1) օգտագործվող հասկացություններն են՝

- «Հայաստանի Հանրապետության արժույթ»
- «Արժեթղթեր Հայաստանի Հանրապետության արժույթով»
- «Արժուքային արժեքներ»
- «Արտարժույթ»
- «Ռեզիդենտներ»
- «Ոչ ռեզիդենտներ»
- «Արժուքային գործառնություններ»
- «Ընթացիկ արժուքային գործառնություններ»
- «Կապիտալի և վարկի շարժման հետ կապված արժուքային գործառնություններ»
- «Լիազոր բանկեր»:

Ուսումնական առաջադրանք

Տալ վերը բերված հասկացությունների բնորոշումը՝ համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի:

Ստորև ներկայացնենք մեր մեկնաբանությունները և նկատառումները վերը բերված մի քանի հասկացությունների վերաբերյալ:

Գործող օրենսդրության մեջ հավասարապես կիրառվում են «հայկական դրամ» և «Հայաստանի Հանրապետության դրամ» տերմինները: Բանն այն է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 142 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում դրամական միավորը Հայաստանի Հանրապետության դրամն է, իսկ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է:

Առկա է որոշակի անհամապատասխանություն՝ «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և ԿԲ կանոնակարգ 8-ի միջև՝ «ընթացիկ հաշվի գործարքների» և «կապիտալի շարժի հետ կապված գործարքների» սահմանումների մասով:

Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, լիազոր բանկերը ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթով գործառնությունների իրականացման լիցենզիայի հիման վրա ՀՀ տարածքում գործող բանկերն են՝ անկախ սեփականության ձևից: Մինչև 1996 թ. հոկտեմբեր ամիսը, ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերին տրամադրում էր երեք տեսակի լիցենզիաներ՝ ՀՀ դրամով բանկային գործառնություններ իրականացնելու, արտարժույթով հաշիվներ բացելու և վարելու (արտարժուքային սպասարկման լիցենզիա), արտարժույթով ավանդներ ներգրավելու միջոցները տեղաբաշխելու (արտարժուքային գլխավոր լիցենզիա): 1996թ. կարելի է բնութագրել որպես ՀՀ բանկային օրենսդրության դաշտի զարգացման կարևոր փուլ. դրանում կատարվեցին մի շարք էական փոփոխություններ: Մասնավորապես, ՀՀ տարածքում գործող և նոր ստեղծվող բանկերին տրվում է բանկային գործունեության միասնական լիցենզիա, որը նրանց հնարավորություն է տալիս ֆինանսական գործառնություններն իրականացնելու ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով: Նշենք, որ միասնական լիցենզիա է տրվում նաև վարկային կազմակերպություններին:

17.3. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխի դրույթների, ՀՀ կենտրոնական բանկը՝

- ❖ տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները
- ❖ հանդիսանում է ՀՀ արժուքային գործակալը և լիազորված է իրականացնելու արժուքային քաղաքականություն
- ❖ կարող է հանդես գալ հայտարարություններով և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ իր կողմից իրականացվող արժուքային քաղաքականության վերաբերյալ
- ❖ սահմանում է արտարժուքային գործառնությունների իրականացման, արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորման կարգը:
- ❖ Կենտրոնական բանկն իրավունք ունի՝
 - սահմանել արժուքային գործառնությունների իրականացման կարգն ու պայմանները, ընդունել արժուքային գործառնությունները կարգավորող որոշումներ և կանոններ
 - հսկել և կարգավորել արժուքային գործառնություններ իրականացնող դիլերների, ներառյալ բանկերի, գործունեությունը
 - սահմանել արժուքային դիլերների, ներառյալ բանկերի, արտարժույթի տնօրինման նորմատիվը
 - սահմանել հայկական դրամի փոխարժեքի որոշման մեթոդները
 - իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

- ❖ Կենտրոնական բանկի և կառավարության լիազորած մարմնի լիցենզավորած արժութային դիլերներից, ներառյալ բանկերից, կարող է պահանջել պարբերական հաշվետվություններ նրանց գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ արտարժույթի տնօրինման չափը ամեն մի արժույթի գծով
- ❖ սահմանում է արտարժույթի գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման կարգը
- ❖ կարող է տիրապետել, օգտագործել և տնօրինել՝
 - ոսկուց և այլ քանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներ և ստանդարտացված ձուլակտորներ
 - արտարժույթ
 - այլ պետությունների, կենտրոնական և այլ առաջնակարգ բանկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա առաջնակարգ բանկերի թողարկած կամ երաշխավորած արժեթղթեր:
- ❖ կարող է սահմանել այն փոխարժեքը, որով գնում կամ վաճառում է արտարժույթը, կամ այլ գործարքներ է իրականացնում արտարժույթով:

ՀՀ կենտրոնական բանկը վարում է բավականին ազատականացված արժութային քաղաքականություն, որը, մասնավորապես, դրսևորվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետությունում արժութային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ի հետևյալ դրույթներով.

 - Ընթացիկ հաշվի գործարքների նկատմամբ որևէ սահմանափակում չի կիրառվում: ՀՀ ռեզիդենտների կողմից կապիտալի շարժի հետ կապված գործարքները կարող են իրականացվել առանց սահմանափակումների, եթե հետագայում Կենտրոնական բանկի կողմից այլ բան չի նախատեսվի:
 - Ընթացիկ հաշվի գործարքների դիմաց վճարումները, կողմերի համաձայնությամբ, կարող են իրականացվել ՀՀ դրամով կամ արտարժույթով, կանխիկ կամ անկանխիկ ձևով՝ բանկային պրակտիկայում կիրառվող վճարումների ցանկացած եղանակով: Ընդ որում, ՀՀ տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ապրանքների իրացման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) դիմաց կանխիկ եղանակով վճարումներն իրականացվում են միայն ՀՀ դրամով:
 - ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները կարող են ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններն իրականացնել Կենտրոնական բանկի և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց՝ բանկերի, արժութային դիլերների, փոխանակման կետերի, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի միջոցով՝ առանց որևէ սահմանափակման:
 - Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձինք ՀՀ ֆինանսական շուկայում արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններն իրականացնում են իրենց համար նախընտրելի առք ու վաճառքի փոխարժեքով և սահմանաքանակներով (լոտերով):
 - Կենտրոնական բանկն արժութային շուկայի դիլերներից մեկն է, որը, ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից, իր գործունեությունն իրականացնում է անուղղակի ազդեցության գործիքներով՝ հաշվի առնելով պետական արժութային պահուստների մակարդակը:
 - ՀՀ ռեզիդենտները միջազգային ֆինանսական շուկաներում կարող են իրականացնել գործառնություններ՝ առանց սահմանափակումների:
 - ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները կարող են առանց որևէ սահմանափակման Հայաստանի Հանրապետություն փոխադրել, առաքել և ներմուծել օտարերկրյա դրամանիշեր՝ արտահայտված բանկային տոմսերի, զանձատան թղթադրամների և մետաղադրամների տեսքով, և արտարժույթով արտահայտված արժեթղթեր:
 - Ֆիզիկական անձինք իրավունք ունեն առանց որևէ փաստաթղթի առկայության Հայաստանի Հանրապետությունից արտահանել արտարժույթով արտահայտված արժեթղթեր և մինչև 10.000 ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք այլ կանխիկ արտարժույթ՝ արտահայտված բանկային տոմսերի, զանձատան թղթադրամների և մետաղադրամների տեսքով: Այդ գումարը գերազանցելու դեպքում արտահանումն իրականացվում է բանկային փոխանցումների միջոցով:
 - ՀՀ ռեզիդենտները կարող են օտարերկրյա ոչ ռեզիդենտ բանկերում բացել միջազգային բանկային պրակտիկայում ընդունված հաշիվներ:
 - Կենտրոնական բանկը հայտարարում է արտարժույթի ամենօրյա առք ու վաճառքի փոխարժեքները նախորդ օրը ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա, որոնց միջնակետը (միջին մեծությունը) համարվում է հաշվարկային փոխարժեք: Բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, արժութային դիլերները, փոխանակման կետերը և տնտեսվարող այլ սուբյեկտները հաշվառման և վերագնահատման նպատակով օգտագործում են Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքը:

17.4. ԱՐՏԱՐԺՈՒԹՅԻ ԱՈՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶՎՈՐՈՒՄԸ

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ լիցենզավորման ենթակա գործունեություն են համարվում նաև արտարժույթի առուվաճառքի, արժույթի դիլերային առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման գործառնությունները: Նման գործառնությունների իրականացման համար լիցենզիա է տրամադրում ՀՀ կենտրոնական բանկը՝ իր կողմից սահմանված կարգերին համապատասխան (ԿԲ կանոնակարգեր 10, 11 և 12):

ԿԲ կանոնակարգ 10-ը սահմանում է արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող արտարժույթի փոխանակման կետերի լիցենզավորման և կարգավորման ընթացակարգերը: *Արտարժույթի փոխանակման կետն* իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, որը ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել արտարժույթի առք ու վաճառքի կանխիկ գործառնություններ: Հայաստանի Հանրապետության դրամով:

Արժութային դիլերը իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, որն իրականացնում է արտարժույթի առք ու վաճառք՝ անմիջապես կամ տարածանկետ վճարելու, որոշակի ժամկետից հետո որոշակի գնով հետ գնելու կամ արտարժույթով փոխանակելու իրավունքով կամ պարտականությամբ, կամ որևէ այլ պայմանով և (կամ) հանդես է գալիս նման գործարքներ իրականացնելու առաջարկությամբ: Նշված գործարքները արժութային դիլերը կարող է իրականացնել անկանխիկ՝ իր անունից և իր հաշվին, այլ անձանց անունից և այլ անձանց հաշվին ու հանձնարարությամբ, իր անունից և այլ անձանց հաշվին ու հանձնարարությամբ, այլ անձանց անունից և իր հաշվին (ԿԲ կանոնակարգ 12):

Գործառնական օրվա ցանկացած պահին լիցենզավորված անձի (արտարժույթի փոխանակման կետի կամ արժութային դիլերի) դրամարկղում և (կամ) ցպահանջ և ժամկետային հաշիվներում միջոցների գումարը չի կարող պակաս լինել 1.0 մլն դրամից և/կամ դրան համարժեք առաջին խմբի (եվրո, անգլիական ֆունտ ստեռլինգ, ԱՄՆ դոլար, ճապոնական իեն, դանիական կրոն, շվեյցարական ֆրանկ, կանադական դոլար, շվեդական կրոն և ավստրալիական դոլար) արտարժույթից: Լիցենզավորված անձը պարտավոր է լրացնել և հաճախորդին տալ արտարժույթի առք ու վաճառքի գործարքի կատարման վերաբերյալ անդորրագիր:

Աշխատանքի ընթացքում լիցենզավորված անձի աշխատակիցները պարտավոր են ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և կրել լուսանկարով այցեքարտ, որտեղ պետք է նշված լինեն լիցենզավորված անձի անվանումը, աշխատողի անունը, ազգանունը:

Լիցենզավորված անձի պարտավոր են հաճախորդներին ապահովել պիտանի (ոչ հնամաշ) ՀՀ դրամանիշերով:

Ուսումնական առաջադրանքներ

Ներկայացնել արտարժույթի փոխանակման կետի լիցենզավորման ընթացակարգը, գործունեության կանոնակարգման և վերահսկողության կանոնները:

Ներկայացնել արժութային դիլերի լիցենզավորման ընթացակարգը, գործունեության կանոնակարգման և վերահսկողության կանոնները:

17.5. ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱԾԱՌՔԻ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորման, կարգավորման և վերահսկողության ընթացակարգերը սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ով:

Համապատասխան լիցենզիաները, Կենտրոնական բանկի սահմանած պահանջներին բավարարելու դեպքում, անժամկետ տրամադրվում են այն ինքնակարգավորվող կազմակերպություններին, որոնք ՀՀ օրենսդրության համապատասխան իրավունք ունեն իրականացնել արտարժույթի, որպես ֆոնդային ապրանքի, առուվաճառքի սակարկությունների կազմակերպում:

Հայտատուներն արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- ա) լիցենզիա տրամադրելու հայտ
- բ) ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությունը
- գ) ինքնակարգավորվող կազմակերպության կողմից հաստատված՝ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման ներքին կանոնակարգը՝ աճուրդների կազմակերպման կանոններն ու արարողակարգը
- դ) լիցենզիա ստանալու համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը
- ե) ինքնակարգավորվող կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման մասին
- զ) ինքնակարգավորվող կազմակերպության գրանցման վկայականը:

Վերոհիշյալ փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը տալիս է արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզիա կամ որոշում է կայացնում լիցենզիա ստանալու հայտը մերժելու մասին: Եթե նշված ժամկետում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում, ապա այն համարվում է բավարարված, և դիմող անձն այդ օրվանից իրավունք ունի զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեությամբ՝ անկախ նրան լիցենզիա տրամադրելու կամ չտրամադրելու հանգամանքից:

Լիցենզիա տրամադրելու կամ լիցենզիա ստանալու հայտի մերժման վերաբերյալ որոշումները կայացնում է Կենտրոնական բանկի խորհուրդը: Լիցենզավորված անձին լիցենզիա տրամադրելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունումից հետո մեկօրյա ժամկետում Կենտրոնական բանկը տալիս է լիցենզիա: Լիցենզիայի հետ տրամադրվում են նաև գործունեության ընթացքում պարտադիր պահպանման ենթակա նորմերի ու կանոնների և պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերի ցանկերը:

Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է լիցենզիա ստանալու հայտը, եթե՝
ա) ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված

բ) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրության այլ պահանջներին

գ) դիմող անձն օրենքի համաձայն իրավունք չունի զբաղվել արտարժույթի առուվաճառքով:

Լիցենզիայի հայտը մերժելու դեպքում հայտատուն իրավունք ունի լիցենզիա ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով: Հայտը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը:

Արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզիա ստացած ինքնակարգավորվող կազմակերպությունները պարտավոր են սակարկությունների անցկացման օրը, մինչև ժամը 17:00-ն Կենտրոնական բանկ ներկայացնել սակարկությունների ընթացքում արտարժույթի առուվաճառքի ծավալների և ձևավորված փոխարժեքների վերաբերյալ հաշվետվություն: Նշված ժամից հետո իրականացված սակարկությունների ընթացքում արտարժույթի առուվաճառքի ծավալների և ձևավորված փոխարժեքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է հաջորդ օրը ներկայացվող հաշվետվության հետ մեկտեղ: Ինքնակարգավորվող կազմակերպություններն ապահովում են վերոհիշյալ տեղեկությունների հրապարակայնությունը:

Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է կազմակերպել նաև ստուգումներ:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են արժույթային կարգավորման և վերահսկողության իրավական հիմքերը:
2. Որո՞նք են արժույթային օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները:
3. Որո՞նք են ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունները արժույթային կարգավորման բնագավառում:
4. Որո՞նք են ՀՀ տարածքում ընթացիկ հաշվի և կապիտալի շարժի հետ կապված գործարքների իրականացումը կարգավորող դրույթները:
5. Որո՞նք են ԿԲ կանոնակարգ 8-ով սահմանված հիմնական դրույթները:
6. Ինչպե՞ս է հաշվարկվում արտարժույթի հաշվարկային փոխարժեքը և ե՞րբ են այն օգտագործում:
7. Ինչպե՞ս է իրականացվում արտարժույթի փոխանակման կետերի լիցենզավորումը, գործունեության կարգավորումը և վերահսկումը:
8. Ինչպե՞ս է իրականացվում արժույթային դիլերների լիցենզավորումը, գործունեության կարգավորումը և վերահսկումը:
9. Ինչպե՞ս է իրականացվում արտարժույթի սակարկությունների կազմակերպմանը զբաղվող կազմակերպությունների լիցենզավորումը, գործունեության կարգավորումը և վերահսկումը:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) ՀՀ ռեզիդենտ բանկի՝ արտասահմանում գտնվող մասնաճյուղը համարվում է ՀՀ ոչ ռեզիդենտ
- բ) վերագնահատման նպատակով բանկը կարող է օգտագործել միայն հաշվարկային փոխարժեքը,
- գ) հաճախորդը կարող է օտարերկրյա բանկում հաշիվ բացել՝ ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) ընթացիկ հաշվի գործարքների նկատմամբ որևէ սահմանափակում չի կիրառվում
- բ) կապիտալի շարժի հետ կապված գործարք չի համարվում կարծաժամկետ վարկի տրամադրումը
- գ) ՀՀ տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ապրանքների իրացման դիմաց կանխիկ եղանակով վճարումները կարող են իրականացնել նաև արտարժույթով
- դ) ՀՀ ռեզիդենտները միջազգային ֆինանսական շուկաներում կարող են իրականացնել գործառնություններ՝ առանց սահմանափակումների:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) քաղաքացին կարող է ՀՀ-ից դուրս արտահանել 20000 ԱՄՆ դոլար՝ բանկային փոխանցումների միջոցով
- ա) քաղաքացին կարող է ՀՀ-ից դուրս արտահանել 10000 ԱՄՆ դոլար ԿԲ-ի թույլտվությամբ
- գ) ԿԲ-ն արժույթային վերահսկողությունը չի կարող իրականացնել արժույթային գործակալների միջոցով
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 4 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) արտարժույթի փոխանակման կետը կարող է իրականացնել նաև արտաժույթի առուվաճառքի անկանխիկ գործառնություններ
- բ) լիցենզավորված անձը պարտավոր չէ լրացնել և հաճախորդին տալ արտարժույթի առք ու վաճառքի գործարքի կատարման վերաբերյալ անդորրագիր
- գ) գործառնական օրվա ցանկացած պահին լիցենզավորված անձի դրամարկղում և (կամ) ցպահանջ և ժամկետային հաշիվներում միջոցների գումարը կարող է պակաս լինել 1.0 մլն դրամից և/կամ դրան համարժեք առաջին խմբի արտարժույթից:
- դ) արժույթային դիլերը կարող է իրականացնել արտարժույթի առք ու վաճառք նաև տարածանկետ վճարելու, որոշակի ժամկետից հետո որոշակի գնով հետ գնելու պարտականությամբ:

ԳԼՈՒԽ 18. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՍՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել ՀՀ դրամի վճարունակության, բանկերում ՀՀ դրամանիշերի փոխանակման և փորձաքննության, փաթեթավորման, կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետխալների վերականգնման, բանկերում կանխիկ դրամի և այլ արժեքների ինկասացիայի, կանխիկ դրամով գործառնությունների իրականացման վերաբերյալ սահմանված կանոնները՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 9-ի:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- տալ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները
- ներկայացնել ՀՀ դրամի վճարունակության հատկանիշները
- ներկայացնել բանկերում ՀՀ դրամանիշերի փոխանակման և փորձաքննության վերաբերյալ սահմանված կանոնները
- բացատրել բանկերում ՀՀ թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորման կանոնները
- ներկայացնել բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետխալների վերականգնման կանոնակարգումը
- բացատրել բանկային հաշիվներից կանխիկ դրամի դուրսգրումը
- ներկայացնել բանկերում կանխիկ դրամի և այլ արժեքների ինկասացիայի վերաբերյալ սահմանված կանոնները
- բացատրել բանկերում դրամարկղային գործառնությունների իրականացումը:

Բուլդոլիմ վերջերս ընդունվել է «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսված են զնումների ժամանակ կանխիկ դրամով գործառնությունների ծավալների գծով սահմանափակումներ՝ սկսած 2003 թ. հուլիսի 1-ից: Նշենք, որ այդ օրենքի գործողությունը չի տարածվում բանկերի և վարկային կազմակերպությունների վրա:

Կանոնակարգի հիմնական դրույթները ճիշտ ընկալելու համար ունկնդիրը պետք է իմանա դրամում օգտագործվող հետևյալ հիմնական հասկացությունների բնորոշումները՝ բանկ, կանխիկ դրամ, այլ արժեքներ, կանխիկ դրամի վերահաշվում, հաշվետխալ, ինկասացիա, ինկասացիոն ծառայություն, բանկի հաճախորդ:

18.1. ՀՀ ԴՐԱՍԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Վճարունակ են համարվում Կենտրոնական բանկի թղթարկած այն թղթադրամներն ու մետաղադրամները, որոնք համապատասխանում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված նկարագրին, որոնց ամբողջականությունը պահպանված է, և իսկությունը կասկած չի հարուցում:

Ֆիզիկական և իրավաբանական անձինք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց պարտավոր են վճարման ընդունել նաև վճարունակ՝

⇒ այն թղթադրամները, որոնք ունեն աննշան ծակոտիներ, պատռվածքներ, մաշվածություն, բծեր, գրառումներ

⇒ այն թղթադրամները, որոնք չնչին ներկոտված են, սակայն ծածկված չեն դրամանիշերի հիմնական պատկերները և պաշտպանական հատկանիշները, ունեն աննշան այրվածքներ, բայց պահպանված է դրամանիշի ամբողջականությունը

⇒ այն մետաղադրամները, որոնք ձևափոխված են, ծակոտված, կրել են քիմիական ազդեցություն, սակայն պահպանվել են պատկերները և արժենիշը արտահայտող թվերը

⇒ թանկարժեք մետաղներից պատրաստված այն մետաղադրամները, որոնք չունեն վնասվածքներ, և պահպանված է նրանց նախնական ամբողջական տեսքն ու քաշը:

Իրավաբանական անձինք նշված վնասվածքներով դրամանիշերը և մետաղադրամները պարտավոր են առանձնացնել, շրջանառության մեջ չդնել և հանձնել սպասարկող բանկերին:

Այն թղթադրամները, որոնք՝

❖ չեն պահպանել ամբողջականությունը, սակայն ակնհայտորեն պահպանված է թղթադրամի մակերեսի առնվազն 60 %-ը, և պահպանված մասը թույլ է տալիս որոշել թղթադրամի իսկությունը

❖ պատռված և միմյանց կացված են նույն թղթադրամին անվիճելիորեն պատկանող ոչ ավելի, քան 3 մասերը

❖ ներկոտվել կամ գունաթափվել են, սակայն տեսանելի են պատկերները և պաշտպանական հատկանիշները, որոնք թույլ են տալիս որոշել թղթադրամի իսկությունը

❖ այն մետաղադրամները, որոնք փոխել են նախնական ձևը (ծնված, տափակացված, կտրված), կրել են բարձր ջերմության կամ քիմիական ազդեցություն (գունաթափված, մասամբ հալված, քայքայված), և որոնց իսկությունը կասկած չի հարուցում, համարվում են վճարունակ, սակայն կարող են փոխանակվել միայն բանկերում:

Վճարունակ թղթադրամները, դրանց մաշվածության կամ վնասվածության աստիճանից ելնելով, համարվում են շրջանառության համար ոչ պիտանի և որակվում են որպես *հնամաշ*, եթե՝

- բացակայում է թղթադրամի մակերեսի նկատելի մասը
- պատռվածքի երկարությունը գերազանցում է 1 սմ-ը
- պատռված և սոսնձված են

- քիմիական ազդեցության հետևանքով գունաթափված են
- կեղտոտվածության և մաշվածության հետևանքով պահպանված չէ թղթադրամի պատկերների ու գույների հստակությունը
- թղթադրամի գերմաշվածությունն ակնհայտ է
- ներկոտված և գրառումներով մակերեսը թղթադրամի վրա նկատելի մաս է կազմում
- առկա են այրվածքներ
- առկա են ծակոտիներ:

Բանկերը պարտավոր են շրջանառության համար պիտանի դրամանիշերից առանձնացնել հնամաշ թղթադրամներն ու մետաղադրամները, տեսակավորել, շրջանառության մեջ բաց չթողնել և սահմանված կարգով հանձնել Կենտրոնական բանկ:

18.2. ԲԱՆԿԵՐՈՒՄ ՀՀ ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանկերը պարտավոր են հաճախորդներից և ֆիզիկական անձանցից ընդունել և փոխանակել հնամաշ ու վնասված ՀՀ դրամանիշերը, որոնք պահպանել են վճարունակության հատկանիշները: Ընդ որում, հնամաշ և վնասված դրամանիշերը տեղում փոխանակվում են պիտանի դրամանիշերով՝ առանց հատուկ հաշվապահական ձևակերպումների և անվճար:

Պատռված և չորս ու ավելի մասերից սոսնձված, այրված, արժենիշի և պատկերների բացակայությամբ, պաշտպանական հատկանիշները միտումնավոր փչացված թղթադրամները բանկերը առանձին փաթեթավորմամբ ուղարկում կամ հանձնում են Կենտրոնական բանկ՝ փորձաքննությամբ նրանց վճարունակությունը և փոխանակման հնարավորությունը որոշելու համար:

Բանկ ներկայացված թղթադրամները, որոնք որակվում են անվճարունակ, հաճախորդին չեն վերադարձվում և հաճախորդի ցանկությամբ (պահանջով) ուղարկվում են Կենտրոնական բանկ փորձաքննության՝ նշելով հաճախորդի անունը, ազգանունը և հասցեն՝ փորձաքննության եզրակացությունը հայտնելու համար, որի դիմաց հաճախորդին տրվում է անդորրագիր, որտեղ նշվում է բանկ հանձնված թղթադրամների քանակը, [անվանական](#) արժեքը, սերիան և համարը:

Բանկերը պարտավոր են հաճախորդներից և ֆիզիկական անձանցից ընդունել և նրանց ցանկությամբ փոխանակել մեկ անվանական արժեքի թղթադրամները մեկ այլ անվանական արժեքի թղթադրամներով՝ անվճար:

Այն թղթադրամները, որոնց իսկությունը կասկած է հարուցում, նույնպես ուղարկվում են (ինկասացիոն ծառայության կամ բանկի ներկայացուցչի միջոցով) Կենտրոնական բանկ՝ փորձաքննությամբ նրանց վճարունակությունը և փոխանակման հնարավորությունը որոշելու համար: Թղթադրամներին կից ուղարկվում է նաև դրանց ուղեկցող ցուցակ, որի մեջ նշվում են թղթադրամի անվանական արժեքը, հնարավորության դեպքում՝ համարը, սերիան, գումարը և այդ թղթադրամը հանձնած հաճախորդի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հասցեն:

Այն դրամանիշերը, որոնց իսկությունը կասկած չի հարուցում, սակայն որոնք գործարանային խտտան են, փոխանակվում են միայն Կենտրոնական բանկում փորձաքննություն անցնելուց հետո:

Փորձաքննության արդյունքների դրական եզրակացության դեպքում ներկայացված դրամանիշերը փոխանակվում են: Բացասական եզրակացության դեպքում դրանք չեն վերադարձվում և չեն փոխանակվում, դրամանիշի վրա դրվում է Կենտրոնական բանկի փորձագետի դրոշմը, այն համարվում է ոչնչացված և ենթակա և պահվում է առանձին, 6 ամիս ժամկետով, որի ընթացքում հանձնողը իրավունք ունի ծանոթանալ այդ թղթադրամներին:

18.3. ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՇՎԵՍԽԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Կանոնակարգով սահմանված են նաև բանկերում ՀՀ թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորման և կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետախալների վերականգնման կանոնները: Մասնավորապես՝

❖ Բանկերում թղթադրամները և մետաղադրամները փաթեթավորվում են բացառապես տվյալ կանոնակարգի պահանջներով:

❖ Բանկերը միմյանց տրամադրած կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետախալների դեպքերը կարգավորում են պայմանագրային հիմունքներով: Բանկերի միջև կնքվող՝ միմյանց դրամարկղային սպասարկման մասին պայմանագրերը չպետք է հակասեն ԿԲ կանոնակարգ 9-ին: Կնքվող պայմանագրերը պարտադիր կարգով պետք է ընդգրկեն միմյանց տրամադրած կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետախալների կարգավորման մեխանիզմները:

❖ Բանկերի կողմից իրենց հաճախորդների դրամարկղային սպասարկումը, այդ թվում՝ նաև կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետախալների դեպքերը, կարգավորվում են երկկողմանի կնքվող պայմանագրերով:

❖ Կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ կեղծ դրամանիշեր հայտնաբերվելու դեպքում պարտադիր կարգով կազմվում է չորս օրինակից ակտ, որը ստորագրվում է կեղծ դրամանիշը հայտնաբերող գանձապահի, իսկիչ գանձապահի (կամ հաճախորդի) և բանկի դրամարկղային հանգույցի ղեկավարի կողմից: Ակտի մեկ օրինակը կեղծ դրամանիշերի հետ միասին հանձնվում է ՀՀ ներքին գործերի նախարարության տարածքային ստորաբաժանմանը: Ակտի երկրորդ օրինակը ուղարկվում է Կենտրոնական բանկ՝ կեղծված դրամանիշերի

հատկանիշների մանրամասն նկարագրության հետ միասին: Ակտում նշվում է փաթեթավորող բանկի կամ դրամանիշերը բանկ հանձնող հաճախորդի անվանումը, ամսաթիվը, կեղծման ձևը, դրամանիշի սերիան, համարը և [անվանական](#) արժեքը: Ակտի երրորդ օրինակը հանձնվում է կանխիկ դրամը հանձնող հաճախորդին, իսկ չորրորդ օրինակը մնում է կեղծ դրամանիշերը հայտնաբերող բանկում:

❖ Կանխիկ դրամի վերահաշվման ընթացքում հայտնաբերված՝ իսկության մեջ կասկած առաջացնող դրամանիշերը ուղարկվում են Կենտրոնական բանկ փորձաքննության:

Ուսումնական առաջադրանքներ

1. Մանրամասն նկարագրել բանկերում ԶԶ թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը:
2. Մանրամասն նկարագրել բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետխալների վերականգնման կանոնակարգումը:

18.4. ԲԱՆԿԵՐԻՑ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ

Բանկերը պարտավոր են հաճախորդների ցանկությամբ, անկախ նպատակից և բանկային հաշվի տեսակից, նրանց բանկային հաշիվներում առկա միջոցների սահմաններում բաց թողնել կանխիկ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով:

Կենտրոնական բանկը բանկերին կանխիկ դրամի ամրացումները իրականացնում է ըստ Կենտրոնական բանկի և տվյալ բանկի միջև կնքված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում թղթակցային հաշվի բացման և սպասարկման» ու «Դրամարկղային սպասարկման մասին» պայմանագրերի:

18.5. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՆԿԱՍԱՑԻԱՆ

Հայտնի է, որ կանխիկ դրամի տեղափոխումը կապված է որոշակի ռիսկի հետ, որի փոքրացման ուղիներից է *ինկասացիոն* կազմակերպությունների ծառայություններից օգտվելը: Այդ նպատակով ԿԲ կանոնակարգ 9-ով սահմանված են ինկասացիոն ծառայություններից օգտվելու դեպքերը, այդ ծառայության կողմից կանխիկ դրամի և այլ արժեքների ընդունման և հանձնման ձևերը, բանկերում կանխիկ դրամի փոխադրումների, դրանց փաստաթղթային ձևակերպումների, ինկասատորների պատասխանատվությանը պահպանված կանխիկ դրամը կամ այլ արժեքները բանկի դրամարկղ հանձնելու վերաբերյալ կանոնները:

Ստորև թվարկենք դրանցից մի քանիսը.

- ❖ Հինգ մլն դրամ գումարը գերազանցող կանխիկ դրամի և այլ արժեքների (բացառությամբ վճարահաշվարկային փաստաթղթերի) միջբանկային, այդ թվում՝ ներբանկային (նույն բանկերի մասնաճյուղերի) բոլոր փոխադրումներն իրականացվում են միայն ինկասացիոն ծառայությունների միջոցով:
- ❖ Բանկի և հաճախորդի միջև կանխիկ դրամի և այլ արժեքների փոխադրման ձևերն ու միջոցները որոշվում են պայմանագրային հիմունքներով: Եթե բանկի և հաճախորդի միջև կանխիկ դրամի (հինգ մլն դրամ գումարը գերազանցող) և այլ արժեքների փոխադրման պատասխանատվությունը պայմանագրերի համաձայն դրված է բանկի վրա (արժեքների փոխադրման պատասխանատվությունը կրում է բանկը), ապա կանխիկ դրամի և այլ արժեքների ինկասացիոն իրականացվում է միայն ինկասացիոն ծառայությունների միջոցով:
- ❖ Բանկերում կանխիկ դրամն ինկասացիոն ծառայությանը կարող է հանձնվել՝
 - կապարակնքվող պարկերով (կամ հատուկ փակվող արկղերով)
 - թղթադրամներն ու մետաղադրամները՝ սահմանված ձևով փաթեթավորված
 - թղթադրամները՝ թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատերով հաշվելով:
- ❖ Բանկերում ինկասացիոն ծառայությունից կանխիկ դրամի ընդունումը, կախված հանձնման ձևերից, համապատասխանաբար իրականացվում է.
 - կնքված պարկերով (կամ կնքված հատուկ փակ արկղերով)
 - թղթադրամները՝ կապոցներով
 - թղթադրամները՝ թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատերով հաշվելով:
- ❖ Կանխիկ դրամի միջբանկային (միջմասնաճյուղային) փոխադրումներն իրականացվում են բանկի կողմից ինկասացիոն ծառայությանը տրված կարգադրերի հիման վրա, որոնք ստորագրված են բանկի այն պաշտոնատար անձանց կողմից, որոնց ստորագրությունների նմուշներն առկա են կանխիկ դրամը տրամադրող բանկում և վավերացված են բանկի կնիքով: Կարգադրերի ձևը սահմանվում է բանկի կողմից՝ պահպանելով անհրաժեշտ վավերապայմանները, համաձայնեցված ինկասացիոն ծառայության հետ:
- ❖ Ինկասացիոն ծառայության կողմից կանխիկ դրամը բանկում ստանալու համար դրամարկղին ներկայացվում են կարգադիրը և տվյալ ինկասատորի անունով ինկասացիոն ծառայության կողմից տրված լիազորագիրը (վստահագիրը), որոնց հիման վրա կանխիկ դրամի ելքը ձևակերպվում է տվյալ բանկում սահմանված դրամարկղային գործառնությունների կարգին համապատասխան:
- ❖ Կանոնակարգով սահմանված են ինկասացիոն ծառայության կողմից բանկերում այլ արժեքների՝ արժեթղթերի, վճարահաշվարկային փաստաթղթերի, բանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների՝ ընդունման և հանձնման ձևերի առանձնահատկությունները:
- ❖ Բանկի լիազոր անձի միջոցով մեկ այլ բանկից փոխադրվող կանխիկ դրամը և այլ արժեքները ստանալիս կամ այն մեկ այլ բանկ հանձնելիս բանկի լիազոր անձին (անձանց) կարող են ուղեկցել ինկասացիոն ծառայության աշխատակիցները: Ինկասացիոն ծառայության կողմից բանկի պատասխանատու անձին արժեքների հետ միասին ուղեկցելու գործառնությունը պետք է նախատեսված լինի բանկի և ինկասացիոն ծառայության միջև կնքված պայմանագրում, որտեղ հստակ պետք է նշված լինեն նաև արժեքների համար կողմերի պատասխանատվությունը և պարտականությունները:

Բանկերի հաճախորդների պատասխանատու անձանց ուղեկցումը կանխիկ դրամի կամ այլ արժեքների փոխադրման ժամանակ կարգավորվում է հաճախորդի և ինկասացիոն ծառայության միջև կնքված պայմանագրերով:

❖ Բանկում սահմանված աշխատանքային օրվա ավարտից հետո ինկասացված կանխիկ դրամը կամ այլ արժեքները, եթե բանկը չունի երեկոյան դրամարկղ, կարող են պահպանվել ինկասատորների պատասխանատվությամբ: Կանխիկ դրամը կամ այլ արժեքները հաջորդ աշխատանքային օրը հանձնվում են բանկի դրամարկղ:

18.6. ԲԱՆԿԵՐՈՒՄ ԴՐԱՍԱՐԿՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Բանկերում դրամարկղային գործառնությունները իրականացվում են բանկերի կողմից սահմանվող կարգերի պահանջներով: Բանկերի կողմից ընդունված դրամարկղային գործառնությունները սահմանող կարգերը չպետք է հակասեն ԿԲ կանոնակարգի 9-ի և Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին:

ՀՀ տարածքում գործող բանկերը դրամարկղային գործառնությունները կանոնակարգող կարգերի մեկական օրինակները մեկամսյա ժամկետում, այդ թվում՝ փոփոխություններն ու լրացումները, տրամադրում են Կենտրոնական բանկին, իսկ նոր բացված բանկերը այդ կարգերի մեկական օրինակները Կենտրոնական բանկին են տրամադրում եռամսյա ժամկետում:

Ինքնատուգման հարցեր

1. Որո՞նք են կանոնակարգ 9-ում օգտագործվող հիմնական հասկացությունների բնորոշումները:
2. Ինչպե՞ս է որոշվում ՀՀ դրամի վճարունակությունը:
3. Որո՞նք են բանկերում ՀՀ դրամանիշերի փոխանակման և փորձաքննության վերաբերյալ սահմանված կանոնները:
4. Որո՞նք են բանկերում ՀՀ թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորման կանոնները:
5. Ինչպե՞ս է կանոնակարգվում բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեփալների վերականգնումը:
6. Ինչպե՞ս է կատարվում բանկային հաշիվներից կանխիկ դրամի դուրսգրումը:
7. Որո՞նք են բանկերում կանխիկ դրամի և այլ արժեքների ինկասացիայի վերաբերյալ սահմանված կանոնները:
8. Ինչպե՞ս են իրականացվում բանկերում դրամարկղային գործառնությունները:

ԹԵՄԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկը կարող է չորս մլն կանխիկ դրամ տեղափոխել մեկ այլ բանկ՝ առանց ինկասացիոն ծառայության
- բ) բանկը չի կարող մեկ օրվա ընթացքում քսան մլն կանխիկ դրամ տեղափոխել մեկ այլ բանկ՝ առանց ինկասացիոն ծառայության
- գ) բանկերի վրա տարածվում է նաև «Դրամարկղային գործառնությունների» մասին ՀՀ օրենքը
- դ) բանկը պարտավոր չէ ընդունել հաճախորդի կողմից ներկայացված հնամաշ, սակայն վճարունակ ՀՀ դրամը
- ե) հնամաշ և վնասված դրամանիշերը տեղում փոխանակվում են պիտանի դրամանիշերով՝ վճարի դիմաց:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) բանկերում թղթադրամները և մետաղադրամները փաթեթավորվում են բացառապես ԿԲ կանոնակարգ 9-ի պահանջներին համապատասխան
- բ) բանկերը միմյանց տրամադրած կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեփալների դեպքերը կարգավորում են պայմանագրային հիմունքներով
- գ) բանկերը պարտավոր են հաճախորդների ցանկությամբ, անկախ նպատակից և բանկային հաշվի տեսակից, նրանց բանկային հաշիվներում առկա միջոցների սահմաններում բաց թողնել կանխիկ դրամ, եթե այլ բան նախատեսված չէ բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով
- դ) բանկերում դրամարկղային գործառնությունները իրականացվում են բանկերի կողմից սահմանվող կարգերի պահանջներով
- ե) բոլոր պնդումներն էլ սխալ են:

ԳԼՈՒԽ 19. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի (այսուհետ տվյալ թեմայի տեքստում՝ վարկատու) հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի (այսուհետ թեմայի տեքստում՝ վարկային ռեգիստր) ստեղծման իրավական հիմքը և նպատակը, վարկային ռեգիստրին վարկատուների մասնակցության կարգն ու պայմանները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- ներկայացնել վարկային ռեգիստրի ստեղծման իրավական հիմքը և հիմնական նպատակը
- տալ վարկային ռեգիստրի և վարկի սահմանում՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի սահմանած կարգի
- ներկայացնել վարկատուների կողմից վարկային ռեգիստրին տրամադրվող տեղեկատվությունը
- բնութագրել վարկային ռեգիստրի տեղեկատվության օգտագործողներին
- ներկայացնել վարկային ռեգիստրի կողմից տրամադրվող տեղեկատվությունը
- բնութագրել վարկային ռեգիստրից տեղեկատվության ստացման առնչությամբ վարկատուների և վարկառուների փոխհարաբերությունները
- ներկայացնել վարկային ռեգիստրի կողմից տրամադրվող տեղեկատվության ամբողջականության և ճշմարտացիության համար օրենքով սահմանված պատասխանատվությունը
- ներկայացնել կարգի պահանջները խախտելու համար վարկատուների պատասխանատվությունը:

19.1. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով Կենտրոնական բանկում ստեղծվում է բանկերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ՝ վարկային ռեգիստր, որին պարտադիր մասնակցում են ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը, իսկ 20-րդ հոդվածի «լ» կետի, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը սահմանում է բանկերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգին՝ վարկային ռեգիստրին վարկային կազմակերպությունների մասնակցության կարգը և պայմանները:

Ելնելով օրենքով իրեն վերապահված իրավասությունից, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը 2002 թ. նոյեմբերի 18-ի թիվ N 363-Ն որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը»:

ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակը վարկային ռիսկի նվազեցումն է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ ապահովելով այնպիսի տեղեկատվական համակարգի առկայություն, որում ներառվող տվյալների հիման վրա հնարավոր կլինի խուսափել անպարտաճանաչ վարկառուներից:

Վարկային ռեգիստրը վերը նշված կարգով ստեղծված համակարգ է, որտեղ կուտակվում, պահպանվում և պահանջի դեպքում վարկատուներին է տրամադրվում տարբեր վարկառուների և նրանց տրամադրված վարկերի վերաբերյալ տվյալ կարգով սահմանված տեղեկատվություն, որը հնարավորություն է ընձեռում նախնական պատկերացում կազմել վարկառուի վարկարժանության մասին, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկին վերահսկել վարկառուի հարաբերությունները վարկատուների հետ:

Նույն կարգով տրվում է «վարկ» հասկացության ավելի լայն սահմանում, քան տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով. կարգի իմաստով՝ վարկ է համարվում վարկատուի նկատմամբ առաջացած այն պարտավորությունը, որն առաջացել է վարկի (այդ թվում՝ վարկային գծի), ֆինանսական վարձակալության (լիզինգի), ֆակտորինգի, երաշխավորության, [ակրեդիտիվի](#) պայմանագրերից, երաշխիքի կամ վարկային քարտի տրամադրումից, հաշվի վարկավորումից (օվերդրաֆտ), ինչպես նաև ցանկացած գործարքից, որից դրամական պատասխանատվություն է առաջանում վարկատուի պարտապանի համար, որը, սակայն, կապված չէ պարտապանի կողմից վարկատուին ապրանքներ (նաև՝ արտարժույթ և արժեթղթեր) վաճառելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու կամ վարկատուի կողմից պարտապանի թողարկած արժեթղթերը ձեռք բերելու հետ:

Համաձայն կարգի «Անցումային դրույթներ» բաժնի,

- ❖ Բանկ հանդիսացող վարկատուները վարկային ռեգիստրին տեղեկատվություն են տրամադրում կարգի ուժի մեջ մտնելու պահի դրությամբ սպասարկվող վարկերի մասին (այդ թվում՝ ժամկետանց)՝ ներառյալ նաև արտահաշվեկշռային վարկերը:
- ❖ Վարկային ռեգիստրը վարկատուներին տեղեկատվություն է տրամադրում 2003 թվականի ապրիլի 1-ից:
- ❖ Վարկատուները պարտավոր են ՄԲԱՆետ ցանցում բացել համապատասխան անվանումներով փոստարկղեր և Կենտրոնական բանկին գրավոր հայտնել բացված փոստարկղի անվանումը: Անվանման փոփոխման դեպքում վարկատուն պարտավոր է փոփոխելուց 10 օր առաջ գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ նշելով նոր անվանումը:
- ❖ Վարկային կազմակերպություն հանդիսացող վարկատուները վարկային ռեգիստրին տեղեկատվություն են տրամադրում իրենց գրանցման և լիցենզավորման պահից:

19.2. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վարկային ռեգիստրին տեղեկատվություն տրամադրվում է իրավաբանական անձանց (բացառությամբ՝ վարկատուների), ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ, որոնք վարկատուի հանդեպ ստանձնել են սույն վարկի գծով նշված պարտավորություններից որևէ մեկը:

Վարկային ռեգիստրին տրամադրվում է վարկառուի կողմից տվյալ վարկատուի հանդեպ ստանձնած կամ արդեն իսկ կնքված պայմանագրով ստանձնելիք, երեք օրացուցային օրից ավելի ժամկետայնությամբ կամ մինչև երեք օրացուցային օր ժամկետայնությամբ, սակայն ժամանակին չնարված, 2.5 մլն ՀՀ դրամին համարժեք գումարը գերազանցող (2003թ. հոկտեմբերի 1-ից՝ 1,5 մլն ՀՀ դրամին համարժեք գումարը գերազանցող) բոլոր տեսակի պարտավորությունների մասին տեղեկություններ, որոնք սահմանված են կարգի թիվ 1 և թիվ 2 հավելվածներում(աղյուսակներ 13 և 14): Մեկ վարկառուի՝ միևնույն վարկատուից ստացված կամ արդեն իսկ կնքված պայմանագրով ստացվելիք մի քանի վարկերի առկայության դեպքում վարկային ռեգիստրին տրամադրվում է տեղեկատվություն՝ դրանց ընդհանուր արժեքը 2.5 մլն ՀՀ դրամին համարժեք գումարը գերազանցելու (2003թ. հոկտեմբերի 1-ից՝ 1,5 մլն ՀՀ դրամին համարժեք գումարը գերազանցելու) դեպքում, առանձին-առանձին բոլոր վարկերի վերաբերյալ, ըստ սահմանված կարգի: 2003թ. հոկտեմբերի 1-ից սկսած վարկատուները պարտավոր են վարկային ռեգիստրին տրամադրել տեղեկատվություն բոլոր այն վարկերի վերաբերյալ, որոնք ունեն պայմանագրով նախատեսված ժամկետին չվճարված գումար կամ տոկոս և ըստ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» օբյեկտիվ չափանիշներով դասակարգված են որպես հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի՝ անկախ վարկերի մեծություններից:

Վարկատուի կողմից վարկային ռեգիստրին տեղեկատվությունը տրամադրվում է վարկային պայմանագրի ուժի մեջ մտնելու կամ վարկի օբյեկտիվ չափանիշներով դասակարգման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Տվյալ վարկի վերաբերյալ վարկային ռեգիստր արդեն իսկ մուտքագրված տվյալների յուրաքանչյուր փոփոխության դեպքում (ներառյալ դասակարգված վարկերի փոփոխությունը) վարկատուն պարտավոր է վարկային ռեգիստր ներկայացնել այդ փոփոխությունները՝ դրանք կատարելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկային գծի և օվերդրաֆտի դեպքում տեղեկատվությունը ներկայացվում է յուրաքանչյուր շաբաթվա երրորդ օրը (ոչ աշխատանքային լինելու դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը), նախորդ շաբաթվա կիրակի օրվա տվյալներով: Վարկային քարտի դեպքում վարկային ռեգիստրին տեղեկատվություն տրամադրվում է միայն այն դեպքում, երբ առաջանում է ժամկետանց պարտավորություն վարկատուի նկատմամբ: Փոխառության վերաբերյալ տեղեկատվությունը ժամկետանց օրերի գծով համարվում է փոփոխված, եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» 3.11 կետի օբյեկտիվ չափանիշի հիման վրա տեղի է ունեցել ակտիվի դասի փոփոխություն:

Աղյուսակ 13. Վարկային ռեգիստր ներկայացվող հիմնական տեղեկատվությունը վարկառուի վերաբերյալ

1	Տեղեկատվությունը ներկայացնող վարկատուի (տարածքային ստորաբաժանման) կոդը		
2	Պայմանագրի համարը		
3	Պայմանագրի ամսաթիվը		
4	Վարկառու		
4.1	Վարկառուի կարգավիճակը		
4.2	Վարկառուի անվանումը		
4.3	Վարկառուի ռեզիդենտությունը		
4.4	Վարկառուի հարկային կոդը (ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի տվյալները)		
4.5	Վարկառուի գտնվելու վայրը		
4.6	Սեփականության ձևը		
4.7	այլ նշումներ		
5	Վարկատուի հետ կապվածությունը (ըստ բանկային օրենսդրության)		

6	Մասնակիցների տվյալները	X	
6.1	Մասնակիցների կարգավիճակը		
6.2	Անվանումը (ֆիզիկական անձանց անուն, ազգանուն, հայրանունը), կազմակերպական իրավական տեսակը		
6.3	Հարկային կոդը (ֆիզիկական անձանց անձնագրի տվյալները)		
6.4	Գտնվելու վայրը		
6.5	Ռեզիդենտությունը		
6.6	Սեփականության ձևը		
6.7	այլ նշումներ		
7	Գործադիր տնօրենը (անուն, ազգանուն, անձնագրի տվյալները և այլն)	X	
8	Վարկառուի հետ փոխկապակցված անձանց կողմից տվյալ վարկատուի հանդեպ ստանձնած և դեռևս չմարված պարտավորությունների առկայության դեպքում (ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունները) փոխկապակցված անձանց տվյալները		
8.1	Փոխկապակցված անձի կարգավիճակը		
8.2	Անվանումը (ֆիզիկական անձանց անուն, ազգանուն, հայրանունը)		
8.3	Հարկային կոդը (ֆիզիկական անձանց անձնագրի տվյալները)		
8.4	Գտնվելու վայրը		
8.5	Ռեզիդենտությունը		
8.6	Սեփականության ձևը		
8.7	այլ նշումներ		
9	Փոխկապակցված անձի վարկի կողմ վարկային ռեզիստորում		
10	Վարկի տրամադրման ամսաթիվը (փաստացի)		
11	Վարկի տեսակը		
12	Վարկի մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)		
13	Վարկի մարման ամսաթիվը (վերջին գումարի փաստացի մարում)		
14	Վարկի տրամադրման աղբյուրը (միջազգային ծրագրով է, թե ոչ)		
15	Պայմանները		
16	Վարկի օգտագործման վայրը		
17	Վարկի օգտագործման ոլորտը		
18	Գրավի գնահատված արժեքը (ըստ գրավի պայմանագրի)		
19	Գրավի առարկան		
20	Գրավի վերաբերյալ այլ նշումներ		
21	Երաշխավորողի տվյալները		
21.1	Երաշխավորողի կարգավիճակը		
21.2	Երաշխավորողի անվանումը (ֆիզիկական անձանց անուն, ազգանուն, հայրանունը)		
21.3	Երաշխավորողի հարկային կոդը (ֆիզիկական անձանց անձնագրի տվյալները)		
21.4	Երաշխավորողի գտնվելու վայրը		
21.5	Ռեզիդենտությունը		
21.6	Սեփականության ձևը		
21.7	այլ նշումներ		
22	Երաշխիքի գումարը		
23	Վարկային ռիսկի դասը		
24	Մասհանձան գումարը		
25	Վարկի վիճակը		
26	Վարկի վերաբերյալ այլ նշումներ		

Աղյուսակ 14. Վարկային ռեզիստը ներկայացվող հիմնական տեղեկատվությունը վարկի վերաբերյալ

Աղյուսակի կոդը	Պայմանագրով նախատեսված		Փաստացի										
	Գումարը		Տարեկան դրույքը (%)	Տրամադրված գումարը		Մարված գումարը		Փաստացի մնացորդը		Ժամկետանց պարտավորությունները		Ժամկետանց տոկոսը	
				Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		
	Արտարժույթ	Դրամ		Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ	Դրամ
AMD		Ռ*		Ռ		Ռ		Ռ		Ռ		Ռ	
USD		Ռ		Ռ		Ռ		Ռ		Ռ		Ռ	
RUR		Ռ		Ռ		Ռ		Ռ		Ռ		Ռ	
EUR		Ռ		Ռ		Ռ		Ռ		Ռ		Ռ	

* Հաշվարկվում է ռեզիստորի կողմից:

Ուսումնական առաջադրանք

Բացատրել 13 և 14 աղյուսակների լրացման կարգերը:

19.3. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՍԱԴՐՈՒՄԸ

Վարկային ռեգիստրի տեղեկատվության օգտագործողներն են Կենտրոնական բանկը, վարկատուները և վարկառուները:

Վարկային ռեգիստրը վարկատուներին տեղեկատվություն է տրամադրում կարգի հավելվածներով սահմանված ձևերով (աղյուսակներ 19.3 և 19.4), կամ վարկառուի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն, որն առկա է վարկային ռեգիստրում:

Աղյուսակ 15 Վարկային ռեգիստրի կողմից տրամադրվող երաշխիք տեղեկատվություն

		1														2	
1		Վարկառուի անվանումը/անուն ազգանունը, կազմակերպական իրավական տեսակը															
2		Հարկային կոդը/անձնագրի տվյալները															
3		Վարկառուի ռեզիդենտությունը															
4		Վարկ (գործող) տրամադրած վարկատուների քանակը															
5		ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը /ամսաթիվը															
Գործող	Քերթախան համար	Վարկի տեսակը	Վարկի օգտագործման ընթացքում	Տարիական տոկոսադրույք	Կրտստության կարգ	Պայմանագրային միավոր	Փաստացի տրամադրված գումար	Մարված հիմնական գումար	Հիմնական գումարի մնացորդ	Ժամկետանց գումարը	Ժամկետանց տոկոսը	Ապահովվածության միավոր	Ապահովվածություն տեսակը	Վարկի տրամադրման ամսաթիվը	Վարկի մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)	Վարկի փաստացի մարման ամսաթիվը	Վերածանկերպումների քանակը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Մարված	1																
	2	x	x	x	x						x	x	x	x	x	x	x
	1																
	2	x	x	x	x						x	x	x	x	x	x	x

Տրամադրված երաշխիքներ			
Գործող	Հերթական համար	Երաշխիքի գումարը	Վարկի տրամադրման ամսաթիվը
	1	2	3
	1		
	2		
	...		
			x
			x

Վարկառուի հետ փոխկապակցված անձանց պարտավորությունները բանկային համակարգի նկատմամբ			
1	Վարկերի քանակը		
2	այդ թվում ժամկետանց		
3	Ընդհանուր գումարը		
4	այդ թվում ժամկետանց		

Աղյուսակ 16. Վարկային ռեզիստի կողմից տրամադրվող ելքային պարբերական տեղեկատվություն

	Հաճախորդ		Վարկեր, որտեղ հաճախորդը վարկառու է			Վարկեր, որտեղ հաճախորդը երաշխավորող է			Վարկեր, որտեղ հաճախորդը փոխ կապակցված անձ է			
	Հարկային կողմ / անձնագրի համար	Անուն (անվանում) / ազգանուն	Վարկերի քանակ / կայանման գրված գումար	Մարված գումար / կատարած մնացորդ	Ժամկետանց գումար / տոկոս	Երաշխիքի գումար	Վարկերի քանակ / կայանման գրված գումար	Մարված գումար / կատարած մնացորդ	Ժամկետանց գումար / տոկոս	Վարկերի քանակ / կայանման գրված գումար	Մարված գումար / կատարած մնացորդ	Ժամկետանց գումար / տոկոս
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.												
2.												

Ուսումնական առաջադրանք

Բացատրել 15 և 16 աղյուսակների լրացման կարգերը:

Տեղեկատվության փոխանակումը կատարվում է տեղեկատվությունը տիրապետելու իրավունք ունեցող Կենտրոնական բանկի և վարկատուի աշխատակիցների կողմից:

Վարկային ռեզիստի կողմից տրամադրվող տեղեկատվությունը բաժանվում է երկու մասի՝ ընթացիկ (աղյուսակ 19.3), որը ներառում է տեղեկատվություն տվյալ վարկատուին վարկ ստանալու համար դիմած առանձին անձի մասին և պարբերական (աղյուսակ 19.4)՝ վարկատուի բոլոր վարկառուների մասին ամսվա վերջի դրությամբ, որը վարկատուներին է տրամադրվում հաջորդ ամսվա 7-րդ աշխատանքային օրը:

Ընթացիկ տեղեկատվությունը բաժանվում է երեք խմբի՝

- ⇒ ներկա ժամանակաշրջանի պարտքի վերաբերյալ
- ⇒ վարկային ռեզիստում գրանցված նախորդ ժամանակաշրջանի ընթացքում բոլոր վարկատուների հանդեպ վարկառուի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ
- ⇒ վարկային ռեզիստում առկա այլ տեղեկատվություն վարկառուի վերաբերյալ:

Ընթացիկ տեղեկատվությունը ստանալու համար վարկատուն կարգով սահմանված ձևով, էլեկտրոնային եղանակով վարկային ռեզիստ է ներկայացնում համապատասխան հարցում: Վարկային ռեզիստի կողմից տեղեկատվությունը պետք է վարկատուին տրամադրվի հարցումը ստանալուց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այլ տեղեկատվության, որը վարկային ռեզիստի կողմից վարկատուին տրամադրվում է ոչ ուշ, քան հարցումը ստանալու օրվանից 1 ամսվա ընթացքում:

Վարկային ռեզիստի կողմից տրամադրված տեղեկատվությունը վարկատուն պետք է օգտագործի բացառապես վարկառուին վարկ տրամադրելիս կամ վարկառուի վարկարժանությունը գնահատելու նպատակով: Վարկատուն կարող է տեղեկատվություն պահանջել միայն վարկ ստանալու նպատակով իրեն դիմած կամ վարկատուից ստացված և չնարված վարկ (որի մայր գումարը կամ տոկոսներն ամբողջությամբ մարված չեն վարկառուի կողմից) ունեցող անձանց մասին:

Վարկատուն պարտավոր է պահպանել բոլոր այն վարկառուների վերաբերյալ փաստաթղթերը (որոնք հավաստիացնում են, որ տվյալ անձը դիմել է վարկատուին վարկ ստանալու նպատակով), որոնց վերաբերյալ վարկատուն վարկային ռեզիստից տեղեկատվություն է ստացել կամ հարցում է կատարել տեղեկատվություն ստանալու համար:

Կենտրոնական բանկի նախագահին իր որոշմամբ կարող է վարկային ռեզիստի տեղեկատվությունից օգտվելու համար սահմանել սակագներ և դրանց վճարման կարգը, որոնցով տարբեր ծառայությունների և օգտագործողների համար կարող են նախատեսվել տարբեր վճարներ:

Վարկատուների կողմից կատարված բոլոր հարցումները գրանցվում են վարկային ռեզիստի կողմից: Յուրաքանչյուր ամիս, մինչև հաջորդ ամսվա 7-րդ աշխատանքային օրը, Կենտրոնական բանկը վարկատուներին է ներկայացնում վարկատուի կողմից վարկային ռեզիստի տեղեկատվության օգտագործման վերաբերյալ արձանագրության քաղվածք (հավելված թիվ 7), որը հաստատվում է վարկատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից և վերադարձվում է Կենտրոնական բանկ՝ մինչև նույն ամսվա 20-ը:

Վարկային ռեզիստին տրամադրված տեղեկատվությունը վարկատուն պետք է պահպանի էլեկտրոնային եղանակով՝ առնվազն 5 տարի:

Վարկատուները տեղեկատվությունը մուտքագրում են Կենտրոնական բանկի կողմից մշակված ծրագրի միջոցով: Վարկատուները կարող են տեղեկատվությունը փոխանցել նաև՝ ձևավորելով ԱՍԹԻՖ ֆայլեր:

19.4. ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարկային ռեզիստից հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում վարկատուն պարտավոր է տվյալ հաճախորդի պահանջի դեպքում նրան տրամադրել վարկային ռեզիստից ստացված տեղեկատվությունը:

Վարկառուն իրավասու է նաև վարկային ռեզիստից ստանալ իր մասին վարկային ռեզիստում գտնվող տեղեկատվությունը՝ վճարելով այդ ծառայության համար հաստատված սակագներով սահմանված վճարը:

Վարկային ռեզիստից տեղեկատվության ստացման համար անձը պարտավոր է ներկայացնել գրավոր դիմում՝ կից ներկայացնելով արդեն իր մասին վարկատուից ստացված տեղեկատվությունը: Վարկային ռեզիստի կողմից դիմումը բավարարվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում: Դիմողը տեղեկատվությունը ստանում է առձեռն կամ փոստով: Առձեռն ստանալու դեպքում վարկառուն պարտավոր է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ լիազորագիր:

19.4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տրամադրված տեղեկատվության ամբողջականության և ճշմարտացիության համար օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում տեղեկատվությունը տրամադրող վարկատուն:

Կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում այն դեպքում, երբ իր կողմից տրամադրված տեղեկատվությունը չի համապատասխանում վարկատուի կողմից վարկային ռեզիստից տրամադրված տեղեկատվությանը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Վերը նշված կարգի պահանջները խախտելու համար բանկ և օտարերկրյա [բանկի մասնաճյուղ](#) հանդիսացող վարկատուները պատասխանատվություն են կրում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ, վարկային կազմակերպություն հանդիսացող վարկատուները՝ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ 5-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է վարկային ռեզիստի ստեղծման իրավական հիմքը և հիմնական նպատակը:
2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում վարկային ռեզիստը և վարկը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի սահմանած կարգի:
3. Վարկատուների կողմից ինչպիսի՞ տեղեկատվություն է տրամադրվում վարկային ռեզիստին:
4. Ովքե՞ր են վարկային ռեզիստի տեղեկատվության օգտագործողները:
5. Ինչպիսի՞ տեղեկատվություն է տրամադրվում վարկային ռեզիստի կողմից:
6. Ինչպիսի՞ն են վարկատուների և վարկառուների փոխհարաբերությունները:
7. Ո՞վ է և ինչպե՞ս է պատասխանատվություն կրում վարկային ռեզիստի կողմից տրամադրվող տեղեկատվության ամբողջականության և ճշմարտացիության համար:
8. Ինչպիսի՞ պատասխանատվություն է սահմանված վարկատուների համար՝ կարգի պահանջները խախտելու դեպքում:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) վարկային կազմակերպությունները պարտավոր են իրենց վարկառուների մասին տեղեկատվություն տրամադրել վարկային ռեզիստին
- բ) կարգի իմաստով երաշխիքի կամ վարկային քարտի տրամադրումից առաջացած պարտավորությունը համարվում է վարկ
- գ) վարկատուի կողմից վարկային ռեզիստին տեղեկատվությունը տրամադրվում է վարկային պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում
- դ) վարկային քարտի դեպքում վարկային ռեզիստին տեղեկատվություն տրամադրվում է միայն այն դեպքում, երբ առաջանում է ժամկետանց պարտավորություն վարկատուի նկատմամբ:
- ե) վարկային զծի և օվերդրաֆտի դեպքում տեղեկատվությունը ներկայացվում է յ ուրաքանչյուր շաբաթվա երրորդ օրը:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) վարկային ռեզիստի կողմից տրամադրված տեղեկատվությունը վարկատուն պետք է օգտագործի բացառապես վարկառուին վարկ տրամադրելիս կամ վարկառուի վարկաթժանությունը գնահատելու նպատակով
- բ) վարկային ռեզիստի տեղեկատվության օգտագործողներն են միայն ՀՀ ԿԲ-ն և բանկերը
- գ) վարկային ռեզիստը չի կարող վարկատուներին տրամադրել վարկառուի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որն առկա է վարկային ռեզիստում
- դ) վարկատուն կարող է տեղեկատվություն պահանջել ցանկացած անձի մասին
- ե) բոլոր պնդումներն էլ սխալ են:

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) Կենտրոնական բանկի նախագահին իր որոշմամբ կարող է վարկային ռեզիստի տեղեկատվությունից օգտվելու համար սահմանել սակագներ և դրանց վճարման կարգը
- բ) վարկային ռեզիստին տրամադրված տեղեկատվությունը վարկատուն պարտավոր չի պահպանել էլեկտրոնային եղանակով
- գ) տրամադրված տեղեկատվության ամբողջականության և ճշմարտացիության համար օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում տեղեկատվությունը տրամադրող վարկատուն
- դ) վարկառուն իրավասու է նաև վարկային ռեզիստից ստանալ իր մասին վարկային ռեզիստում գտնվող տեղեկատվությունը՝ վճարելով այդ ծառայության համար հաստատված սակագներով սահմանված վճարը:

ԳԼՈՒԽ 20. ԲԱՆԿԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

Տնտեսական կյանքը բնութագրվում է նաև անկումներով կամ ճգնաժամներով, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտները կրում են կորուստներ և ի վերջո նշված կամ այլևայլ պատճառներով նշված սուբյեկտները սնանկանում են: Բանկերի պարագայում վերակազմավորման կամ լուծարման գործընթացն ունի առանձնահատկություններ, որի էությունն է պաշտպանել ներդրողների շահերը: Սա, իր հերթին, ենթադրում է նշված գործընթացների առավելագույս կանոնակարգումը և անորոշությունների բացառումը:

Սույն *թեմայի նպատակն* է՝ տալ բանկի վերակազմակերպման, և լուծարման իրավական բնորոշումները, ներկայացնել այդ ընթացակարգերի առանձնահատկությունները:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- տալ կազմակերպության վերակազմակերպման բնորոշումը
- ներկայացնել բանկերի վերակազմակերպման առանձնահատկությունները
- նկարագրել բանկերի միացման ընթացակարգը
- նկարագրել բանկերի վերակազմավորման ընթացակարգը
- տալ կազմակերպության լուծարման բնորոշումը
- ներկայացնել բանկի լուծարման առանձնահատկությունները
- նկարագրել բանկի լուծարման ընթացակարգը
- ներկայացնել լուծարվող բանկի պարտավորությունների մարման հերթականությունը:

20.1. ԲԱՆԿԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կազմակերպության վերակազմակերպումը


Կազմակերպության վերակազմակերպումը կազմակերպության միացումն է, միաձուլումը այլ կազմակերպության հետ, նրա առանձնացումը, բաժանումը, վերակազմավորումը՝ առանց լուծարման ընթացակարգ անցնելու: Այն կատարվում է կազմակերպության հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի որոշման հիման վրա: Այս գործընթացի գլխավոր առանձնահատկությունն իրավահաջորդության մեջ է, որը ենթադրում է վերակազմակերպվող կազմակերպության բոլոր իրավունքների և պարտականությունների փոխանցում պահպանվող, առանձնացվող, բաժանվող կամ էլ կազմակերպական-իրավական նոր ձևի կազմակերպությանը:

Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկը, ի տարբերություն իրավաբանական անձանց այլ տեսակների, կարող է վերակազմակերպվել բանկի միայն մեկ այլ բանկի հետ միացման և բանկի վերակազմավորման միջոցով: Բանկերի վերակազմակերպման եղանակների նման սահմանափակումը հիմնականում պայմանավորված է դրանց ավանդներ ներգրավելու բացառիկ մենաշնորհային իրավունքով և ուղղված է բանկի ֆինանսական վիճակի էական վտանգմանը, վերակազմակերպման հետևանքով բանկերից որևէ մեկի ավանդատուների և այլ պարտատերերի շահերի վտանգմանը կանխելուն: Այդ պատճառով էլ բանկերի միացման ողջ գործընթացն ի սկզբանե գտնվում է ՀՀ կենտրոնական բանկի հսկողության ներքո. միացման գործարքի կնքումը հնարավոր է միայն վերջինիս նախնական համաձայնության առկայության դեպքում:

Բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ կոոպերատիվի ձևով ստեղծված բանկի վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշում ընդունելը բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունն է:

Բանկերի միացման ընթացակարգը

Բանկի միացումը կատարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով: Այդ գործընթացի փուլերը սխեմատիկորեն բերված են նկար 33-ում:



Նկար 33. Բանկերի միացման ընթացակարգը

Բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացող բանկերը կնքում են միացման պայմանագիր ՀՀ կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու դեպքում:

Միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար բանկը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած ձևով, կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները:

- Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19.03.2002թ. թիվ 68 որոշման, բանկերի միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու նպատակով միացող բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
- ✓ բանկերի միացման գրավոր գործարքի էական պայմանները, որոնք պետք է ընդգրկեն միացման կարգը, պայմաններն ու ժամկետները
 - ✓ բանկերի միացման ծրագիրը
 - ✓ պահպանվող բանկի նոր կանոնադրության կամ կանոնադրության փոփոխությունների լրացումներն ու փոփոխությունները
 - ✓ միացող բանկի կառավարման բարձրագույն մարմնի միանալու մասին որոշումը կամ նիստի արձանագրությունից քաղված՝ վավերացված և կնքված բանկի կնիքով և խորհրդի նախագահի կամ ժողովի նախագահի ստորագրությամբ
 - ✓ պահպանվող բանկի մասնակիցների ամբողջական ցուցակը՝ մասնակցությունների համապատասխան չափերով (քանակական և տոկոսային)
 - ✓ բանկերի միացման արդյունքում պահպանվող բանկում նոր նշանակալից մասնակցություն կամ մասնակցություններ առաջանալու դեպքում պահպանվող բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի (անձանց) և նրա (նրանց) հետ փոխկապակցված անձանց նշանակալից մասնակցությանը նախնական համաձայնություն ստանալու դիմումը (դիմումները) և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկություններն ու փաստաթղթերը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը համապատասխան գործարքի էական պայմանները, անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, կայացնում է նախնական հավանություն տալու կամ չտալու մասին որոշում:

ՀՀ կենտրոնական բանկի նախնական հավանությունն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, միացող բանկերը միջնորդագրին կից ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հաստատման են ներկայացնում *միացման պայմանագիրը* և ՀՀ կենտրոնական բանկի սահմանած այլ փաստաթղթեր: Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում և գրանցում է միացման պայմանագիրն այն ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում, եթե պայմանագիրը համապատասխանում է ստացված նախնական հավանության պայմաններին:

Միացման ծրագրում ընդգրկվում են պահպանվող բանկի՝

- անվանումն ու գտնվելու վայրը
- կանոնադրական կապիտալի չափը
- ներքին կազմակերպական կառուցվածքը
- նախատեսվող ֆինանսական գործառնությունների և գործունեության հիմնական ուղղությունները
- ակտիվների և պասիվների կանխատեսվող կազմն ու կառուցվածքը
- գործունեության առաջիկա երկու տարվա կանխատեսվող ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված յուրաքանչյուր տարվա վերջին օրվա դրությամբ:

Միացող բանկերը կարող են միացման ծրագրում ներառել նաև այլ տեղեկություններ:

Միացման պայմանագրում սահմանված ժամկետներում միացման մասին որոշում ընդունած բանկերն իրականացնում են միացման պայմանագրով նախատեսված միջոցառումները, հաստատում փոփոխման ակտը:

Պահպանվող բանկի կանոնադրությունը կամ դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելու պահից միացված բանկի գործունեության դադարման վերաբերյալ բանկերի գրանցման մատյանում կատարվում է գրառում: Այդ գրառման պահից պահպանվող բանկը համարվում է վերակազմակերպված:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է հավանություն չտալ միացման պայմանագրի կնքմանը, եթե՝

ա) բանկի (բանկերի) վերակազմակերպումը կամ ներկայացված փաստաթղթերը հակասում են ՀՀ օրենսդրությանը, պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել պատշաճ կարգով և ձևով կամ ներկայացվել են թերի

բ) միացման արդյունքում պահպանվող բանկի ֆինանսական վիճակն էականորեն կվտանգվի (օրինակ՝ մեծ վնասով աշխատող բանկը շահույթով աշխատող բանկին միանալու դեպքում վերջինիս ֆինանսական վիճակը կարող է էականորեն վատթարանալ)

գ) միացման արդյունքում բանկը բանկային շուկայում ձեռք կբերի գերիշխող կամ մենաշնորհի դիրք (օրինակ՝ համեմատաբար խոշոր բանկը մեկ այլ խոշոր բանկին միանալու դեպքում վերջինիս կարող է բանկային շուկայում ձեռք բերել գերիշխող, որը նրան հնարավորություն կտա կանխորոշել ֆինանսական գործառնությունների շուկայական սակագները կամ պայմանները),

դ) գործարքի արդյունքում կողմերից որևէ մեկի ավանդատուների, այլ պարտատերերի շահերը կվտանգվեն:

Բանկի վերակազմավորումը

Բանկի վերակազմավորումը (կազմակերպական - իրավական ձևի փոփոխությունը) կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Մեկ կազմակերպական-իրավական ձևի բանկը մեկ այլ ձևի կազմակերպական - իրավական ձևի բանկի վերակազմավորվելու դեպքում նոր առաջացած բանկին են անցնում վերակազմավորված բանկի իրավունքները և պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

Փոխանցման ակտը, որը հաստատում են վերակազմակերպման մասին որոշում ընդունած բանկի մասնակիցները, պետք է դրույթներ պարունակի վերակազմակերպված բանկի գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները:

Փոխանցման ակտը կանոնադրությունների հետ միասին ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկ՝ նոր առաջացած բանկը գրանցելու կամ գոյություն ունեցող բանկերի կանոնադրություններում փոփոխություններ մտցնելու համար:

Կանոնադրությունների հետ միասին փոխանցման ակտը չներկայացնելը, ինչպես նաև դրանցում վերակազմակերպված բանկի գույքի և պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթների բացակայությունը կամ գույքի և պարտավորությունների անհամամասնական բաշխումը հիմք է վերակազմակերպման պայմանավորված պետական գրանցումների մերժման համար:

Քանի որ բանկի վերակազմակերպումը շոշափում է նաև նրա պարտատերերի շահերը, օրենքով բանկի վերակազմակերպման մասին որոշում ընդունած մարմնի համար սահմանված է բանկի բոլոր պարտատերերին այդ մասին գրավոր տեղեկացնելու պարտականություն: Վերջիններս իրավունք ունեն պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ դադարեցնել վերակազմակերպումը կամ վաղաժամկետ կատարելու պարտավորությունը, որով պարտապանը վերակազմակերպվող բանկն է, և հատուցելու վնասները:

Համաձայն գործող օրենսդրության, բաժնետիրական ընկերության ձևով ստեղծված բանկն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ առևտրային կոոպերատիվի, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ բաժնետիրական ընկերության:

Բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի վերակազմավորումը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վերակազմավորման մասին որոշումը պետք է ընդունվի վերակազմավորման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում, որը հաստատում է վերակազմավորման կարգը և պայմանները, վերակազմակերպվող բանկի բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը նոր ստեղծվող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) և (կամ) այլ արժեթղթերի, ինչպես նաև փոխանցման ակտը:

Վերակազմավորման արդյունքում ստեղծվող բանկի կանոնադրությունը հաստատվում է նոր ստեղծվող բանկի հիմնադիր ժողովում, որը որոշումներ է ընդունում նաև ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող այլ հարցերի վերաբերյալ:

Վերակազմավորմանը պայմանավորված գրանցումների կատարման նպատակով փոխանցման ակտը և օրենքով սահմանված մյուս անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկ:

20.2. ԲԱՆԿԵՐԻ ԼՈՒՑԱՐՈՒՄԸ

Բանկի լուծարումը և լուծարման հիմքերը

Բանկի, ինչպես ցանկացած այլ *կազմակերպության լուծարումը*, մի գործընթաց է, որի միջոցով բանկը դադարեցնում է իր գոյությունը որպես իրավաբանական անձ: Բանկի լուծարմանը նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ բանկի (բանկերի) անցնելու:

Ընդունված է տարբերել կամավոր լուծարում (ինքնալուծարում), որն իրականացվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի հիման վրա, և հարկադրական լուծարում, որը նախաձեռնվում է ՀՀ կենտրոնական բանկի կամ դատարանի կողմից (բանկային գործունեության լիցենզիան անվավեր, ուժը կորցրած ճանաչելու, բանկին սնանկ ճանաչելու միջոցով): Օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվում է լուծարային կառավարիչ կամ լուծարային հանձնաժողով, որը վաճառում է բանկի ակտիվները և ստացված հասույթով մարում պարտքերը:

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի, բանկը լուծարվում է՝

ա) բանկային գործունեության լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում

բ) բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում

գ) «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում: Սնանկ ճանաչված բանկը լուծարվում է տվյալ օրենքով սահմանված կարգով, որը բերված է սույն դասընթացի հաջորդ թեմայում

դ) բանկի ինքնալուծարման դեպքում

ե) օրենքներով նախատեսված այլ հիմքերով:

Պետք է նշել, որ լիցենզիան անվավեր ճանաչելը, ի տարբերություն լիցենզիան ուժը կորցրած ճանաչելուն, չի համարվում բանկային օրենսդրության խախտումների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի նկատմամբ կիրառվող պատժամիջոց: Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված 1-ին կետի, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է բանկային գործունեության լիցենզիան անվավեր ճանաչել, եթե բանկը լիցենզիա է ստացել լիցենզավորման ընթացակարգում ներկայացրած կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա:

Կեղծ են համարվում այն տեղեկությունները կամ փաստաթղթերը, որոնց հիման վրա ՀՀ կենտրոնական բանկը կայացրել է որոշում, բայց որը չէր կայացվի, եթե այդ տեղեկությունները կամ փաստաթղթերը լինեին ճիշտ և (կամ) արժանահավատ: Հետևաբար, տվյալ անձն ի սկզբանե իրավունք չունեի զբաղվելու բանկային գործունեությամբ:

Բանկային գործունեության լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերով: Այդ հիմքերի, ինչպես նաև բանկի բանկային գործունեության լիցենզիան անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու իրավական հետևանքների մասին արդեն խոսել ենք նախորդ թեմաներից մեկում:

Բանկի բանկային գործունեության լիցենզիան անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բացառապես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Այլ օրենքներով լիցենզիան անվավեր (ուժը կորցրած) ճանաչելու վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում գործում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթները: Իրավական նման նորմի անհրաժեշտությունը պայմանավորված է բանկի ակտիվների պահպանման, ավանդատուների և այլ պարտատերերի շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Բանկային գործունեության լիցենզիան անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումն անմիջապես հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներում: Լիցենզիան անվավեր ճանաչելու մասին ՀՀ կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից բանկը ենթակա է լուծարման օրենքով սահմանված կարգով:

Բանկի բանկային գործունեության լիցենզիան անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը դատարան չի կասեցնում այդ որոշման գործողությունը գործի ողջ դատական քննության ընթացքում:

Բանկերի ինքնալուծարումը

Բանկի ինքնալուծարումը կապված է բանկի անվճարունակության, ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկի բանկային գործունեության լիցենզիան անվավեր ճանաչելու կամ օրենսդրության խախտման համար բանկի նկատմամբ որպես պատժամիջոց լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հետ:

Բանկը չի կարող ինքնալուծարվել՝ առանց ՀՀ կենտրոնական բանկի թույլտվության: Բանկերի ինքնալուծարման այս առանձնահատկությունը պայմանավորված է ինչպես բանկի ինքնալուծարման դեպքում պարտատերերի պահանջների լրիվ բավարարման, այնպես էլ ՀՀ բանկային համակարգի ապակայունացման կանխման անհրաժեշտությամբ:

Բանկի ինքնալուծարման մասին բանկի կառավարման բարձրագույն մարմինը (մասնակիցների ընդհանուր ժողովը) ընդունում է որոշում և ինքնալուծարման թույլտվություն ստանալու համար դիմում ՀՀ կենտրոնական բանկ՝ կցելով ինքնալուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է մերժել ինքնալուծարման մասին դիմումը, եթե ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով՝

ա) բանկի ինքնալուծարման դեպքում բանկը ի վիճակի չի լինի լրիվ բավարարել իր պարտատերերի պահանջները (այսինքն՝ բանկը փաստացի անվճարունակ է)

բ) ինքնալուծարումը կարող է հանգեցնել ՀՀ բանկային համակարգի ապակայունացմանը: Այս դեպքում ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երկարաձգել [բանկի գործունեությունը](#) մինչև երկու տարի ժամկետով:

Բանկի ինքնալուծարման դեպքում բանկի կառավարման բարձրագույն մարմինն ընդունում է լուծարման նախագիծ, որի համաձայն իրականացվում է բանկի լուծարումը: Լուծարման նախագիծը պետք է հաստատվի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից:

Եթե ինքնալուծարվող բանկի գույքի արժեքն անբավարար է բանկի պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա բանկը լուծարվում է սնանկության միջոցով:

Լուծարային հանձնաժողովը և նրա գործողությունները

Բանկի լուծարային հանձնաժողովը, որը կազմվում է առնվազն երեք անդամից, ստեղծվում է դատարանի կամ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն հնգօրյա ժամկետում, բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ բանկը լուծարելու, նրա գույքը վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Բանկի լուծարային հանձնաժողովը չստեղծվելու դեպքում այն ստեղծվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող բանկի կառավարման լիազորությունները: Լուծարվող բանկի անունից դատարանում հանդես է գալիս լուծարային հանձնաժողովը:


Լուծարային հանձնաժողովը ստեղծվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում ՀՀ կենտրոնական բանկին բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:

- Լուծարային հանձնաժողովը իր նշանակումից հետո երկշաբաթյա ժամկետում՝
- ⇒ հաշվեգրում և գնահատում է լուծարվող բանկի [ակտիվներն](#) ու պասսիվները
- ⇒ հայտնաբերում է բանկի պարտապաններին և սահմանում է լուծարվող բանկի կողմից տրված վարկերի ժամկետից շուտ վերադարձնելու կարգը
- ⇒ միջոցներ է ձեռնարկում լուծարվող բանկի ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար
- ⇒ միջոցներ է ձեռնարկում լուծարվող բանկի նկատմամբ առկա [պարտավորությունների](#) ապահովման ուղղությամբ
- ⇒ որոշում է բանկի պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները մասնակիցների միջև բաշխելու կարգը:

Պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո լուծարային հանձնաժողովը կազմում է *լուծարման միջանկյալ հաշվեկշիռ*, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող բանկի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը:

Եթե լուծարվող բանկի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարային հանձնաժողովը բանկի գույքը վաճառում է հրապարակային սակարկություններով: Պարտատերերի պահանջները բավարարվում են լուծարային միջոցների՝ սեփականության իրավունքով բանկին պատկանող գույքի (միջոցների) հաշվին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի՝ բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են նկար 34-ում բերված հերթականությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո:



Նկար 34. Լուծարվող բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը

Լուծարային հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջների բավարարումը մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև բանկի լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի հայց հարուցել ընդդեմ լուծարման հանձնաժողովի: Ընդ որում՝ լուծարային հանձնաժողովի կողմից պահանջներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո պարտատիրոջ ներկայացրած պահանջները բավարարվում են լուծարված բանկի գույքից, որը մնացել է պարտատերերի՝ ժամանակին ներկայացված պահանջները բավարարելուց հետո:

Լուծարային հանձնաժողովի կողմից մերժված պարտատերերի պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են մարված:

Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո բանկի լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ, որը հաստատում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը: Լուծարման հաշվեկշիռը բանկի հաշվետու հաշվեկշիռն է, որը բնութագրում է լուծարվող բանկի գույքային վիճակը այն ամսաթվի դրությամբ, որով բանկը դադարեցնում իր գոյությունը որպես իրավաբանական անձ:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է առնվազն ամիսը մեկ անգամ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել հաշվետվություն՝ իր գործունեության վերաբերյալ:

Լուծարային միջոցների բաշխումից հետո լուծարային հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկին՝ իր գործունեության արդյունքների վերաբերյալ: Ներկայացված հաշվետվությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատվելուց հետո բանկը համարվում է լուծարված, իսկ լուծարային հանձնաժողովն ազատվում է բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից:

Բանկի լուծարման մասին ՀՀ կենտրոնական բանկում վարվող բանկերի գրանցումների մատյանում և իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնում համապատասխան գրառում է կատարվում, իսկ լուծարային հանձնաժողովը բանկի լուծարման վերաբերյալ տեղեկանք է հրապարակում:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում կազմակերպության վերակազմակերպումը:
2. Որո՞նք են բանկերի վերակազմակերպման առանձնահատկությունները:
3. Ինչպե՞ս է իրականացվում բանկերի միացումը:
4. Ինչպե՞ս է իրականացվում բանկերի վերակազմավորումը:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում կազմակերպության լուծարումը:
6. Որո՞նք են բանկի լուծարման առանձնահատկությունները:
7. Ինչպե՞ս է իրականացվում բանկի լուծարումը:
8. Ի՞նչ հերթականությամբ են բավարարվում լուծարվող բանկի պարտավորությունները:
9. Ի՞նչ են իրենից ներկայացնում բանկի անվճարունակությունը և սնանկությունը:
10. Որո՞նք են բանկին անվճարունակ և սնանկ ճանաչելու հիմքերը և իրավական հետևանքները:
11. Որո՞նք են բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի խնդիրները և իրավասությունները:
12. Ի՞նչ կանոններ են սահմանված անվճարունակ ճանաչված բանկի պարտատերերի սառեցման և բանկի գործարքների անվավերության վերաբերյալ:
13. Ի՞նչ է իրենից ներկայացնում բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը:
14. Որո՞նք են բանկի սնանկության առանձնահատկությունները:
15. Ինչպե՞ս է իրականացվում սնանկ ճանաչված բանկի լուծարումը:
16. Ի՞նչ հերթականությամբ է մարվում սնանկ ճանաչված լուծարվող բանկի պարտավորությունները:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1 . Բանկը կարող է ինքնալուծարվել.

- ա) բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ և Կենտրոնական բանկի խորհրդի թույլտվությամբ
- բ) օրենքով սահմանված դեպքերում՝ դատարանի որոշմամբ
- գ) ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ
- դ) բանկի հիմնադիրների որոշմամբ:

Հ ա ր ց 2 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) բանկը կարող է վերակազմակերպվել բանկի՝ մեկ այլ բանկի հետ միացման և վերակազմավորման միջոցով
- բ) մեկ բանկի միացումը մեկ այլ բանկի հետ իրականացվում է միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով
- գ) բանկի վերակազմավորումը (կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը) կատարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով
- դ) բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքով բանկի լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը կարող է ձևավորել նաև ՀՀ կենտրոնական բանկը

Հ ա ր ց 3 . Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է դատարանի կամ ԿԲ-ի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից առնվազն մեկամսյա ժամկետում
- բ) լուծարման նախագիծը պետք է հաստատվի ԿԲ-ի խորհրդի կողմից
- գ) լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան չեն անցնում լուծարվող բանկի կառավարման լիազորությունները
- դ) ԿԲ խորհուրդը չի կարող բանկի ինքնալուծարման դեպքում երկարաձգել նրա գործունեությունը մինչև երկու տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 21. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՆԱՆԿԱՑՈՒՄԸ

Թեմայի նպատակն է՝ տալ բանկի սնանկացման պատճառները, հասկացության իրավական բնորոշումը, ներկայացնել այդ ընթացակարգի առանձնահատկությունները՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

Ուսուցիչների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան

- ներկայացնել բանկերի սնանկացման հիմնական պատճառները
- տալ բանկի անվճարունակության և սնանկության բնորոշումները
- ներկայացնել բանկին անվճարունակ ճանաչելու հիմքերը և իրավական հետևանքները
- ներկայացնել բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի իրավասությունները
- ներկայացնել անվճարունակ ճանաչված բանկի պարտատերերի սառեցման և բանկի գործարքների անվավերության վերաբերյալ կանոնները
- նկարագրել բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը
- ներկայացնել բանկի սնանկության առանձնահատկությունները
- նկարագրել սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը:

21.1. ԲԱՆԿԵՐԻ ՄՆԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կան երեք գլխավոր հանգամանքներ, որոնք կարող են լինել բանկի սնանկացման պատճառ. վարկերի չվերադարձը կամ այլ [ակտիվ](#)ների արժեքի կորուստը, ոչ իրացվելիությունը և հիմնական գործունեությունից կրած վնասները:

Ակտիվների կորուստը: Առևտրային բանկերի ակտիվների ընդհանուր ծավալի 30-50 տոկոսը կազմում են վարկային ներդրումները: Հետևաբար, վարկավորման բնագավառում լուրջ անհաջողություններին ուղեկցում են զգալի կորուստները և, ի վերջո, բանկի սնանկացումը: Վարկը դառնում է խնդրահարույց, եթե վարկառուն չի կարողանում պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել տոկոսները կամ մարել փոխառության գումարը:

Ակտիվների կորուստների տեսակներից է նաև բանկի կողմից ձեռք բերված ներդրումային արժեթղթերի (բաժնետոմսերի և պարտատոմսերի) արժեզրկումը՝ դրանք ձեռք բերելու պահից մինչև վաճառքի պահն ընկած ժամանակաշրջանում: Այսպես, ԱՄՆ-ում 1930-1933 թվականներին բանկերի սնանկության հիմնական պատճառը դրանց պարտատոմսերի շուկայական արժեքի անկումն էր: Այդ ժամանակահատվածում ավելի քան 9000 բանկ դադարեցրեցին իրենց գործունեությունը:

Ինչպես արդեն գիտենք նախորդ թեմաներից, համաձայն բանկերի կողմից տրամադրված վարերի, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերում կատարված ներդրումների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգերի, բանկերը պարտավոր են սահմանված ժամկետներում դասակարգել իրենց ակտիվները, իսկ դրանք անհուսալի ճանաչվելու դեպքում՝ դուրս գրել հաշվեկշռից: Բանկի ակտիվների ընդհանուր գումարը փոքրանում է անհուսալի ճանաչված և դուրս գրված ակտիվների գումարով: Հետևաբար, նույն գումարով պակասում է նաև բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը:

Եվ, վերջապես, բանկերի ակտիվների կորուստները կարող են կապված լինել բանկի ակտիվների հափշտակումների հետ: Խնդիրն այն է, որ իրենք՝ բանկի ծառայողներն են գողանում կամ հափշտակում բանկի ակտիվները: Հիշենք մեր հանրապետության խոշոր բանկերից մեկի մասնաճյուղի կառավարչի արարքը, որը ստացավ հասարակական մեծ հնչեղություն, իսկ բանկը՝ հետագա գործունեության անսպասելի շարունակություն:

Ոչ իրացվելիությունը որպես բանկի սնանկության պատճառ: Ինչպես հայտնի է, բանկերը պետք է ունենան բավարար իրացվելիություն՝ պարտատերերի պահանջները ժամանակին բավարարելու համար: Բանկի իրացվելիությունը կախված է նրա ակտիվների և պասիվների ընթացիկ հավասարակշռվածության աստիճանից: Իրացվելիության անբավարարությունը հաճախ պայմանավորված է ներգրավված և տեղաբաշխված միջոցների՝ ըստ ժամկետների և գումարի անհավասարակշռված տեղաբաշխմամբ, ավանդների անսպասելի արտահոսքով: Երբ բանկի իրացվելի միջոցների աղբյուրները գերազանցում են իրացվելի միջոցների օգտագործումը, բանկն ունի իրացվելիության բացասական ճեղքվածք, որը հաճախ հետևանք է բանկի ներգրավված և տեղաբաշխված միջոցների անհավասարակշռված կառավարման: Նման ռիսկի հետ բախվող բանկերը հաճախ ստիպված են լինում կանխիկ միջոցների նկատմամբ ընթացիկ պահանջները բավարարելու համար շտապ ներգրավել շատ բարձր տոկոսադրույքներով միջոցներ, որը հանգեցնում է շահույթի փոքրացման կամ վնասների առաջացման, հետևապես՝ բանկի կապիտալի փոքրացման:

Հիմնական գործունեությունից վնասները: Բանկի սնանկության պատճառ կարող են լինել նաև նրա հիմնական գործունեությունից առաջացած վնասները: Վնասով աշխատող բանկի սեփական կապիտալը փոքրանում է, երբ այդ վնասները շարունակվում են բավականին երկար ժամանակ, դրանք կարող են հանգեցնել կապիտալի զգալի կամ ամբողջովին սպառման և բանկի սնանկացման: Բանկի սեփական կապիտալը փոքրանում է այն դեպքերում, երբ բանկը պարտավոր է կատարել ավելի շատ վճարումներ, քան նրա ակտիվների ներհոսքն է: Նման դեպքերում բանկի ակտիվների ընդհանուր գումարը փոքրանում է պարտավորությունների նկատմամբ, դրանով իսկ նվազում է բանկի սեփական կապիտալը:

21.2. ԲԱՆԿԵՐԻ ՄԱՆԿԱՑՈՒՄԸ

Բանկի անվճարունակության հիմքերը և առանձնահատկությունները

Անվճարունակությունը՝ կազմակերպության այնպիսի վիճակ է, որի դեպքում նրա պարտավորությունները գերազանցում են [ակտիվ](#)ների արժեքը և նա ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները: Կազմակերպության նման վիճակը նշանակում է, որ նրա սեփական կապիտալը բացասական մեծություն է: Անվճարունակ անձն ի վիճակի չէ կուտակված պարտավորությունները մարելու իր ակտիվների վաճառքի հասույթներից: Անվճարունակությունը հաճախ բերում է սնանկացման կամ լուծարման, թեև ոչ միշտ: Եթե չկա անվճարունակ կազմակերպության ֆինանսական առողջացման իրատեսական ծրագիր, ապա դատարանը կարող է անվճարունակ կազմակերպությանը սնանկ ճանաչել և սկսել դրա լուծարման գործընթացը:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ժե» ենթակետի, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին ճանաչում է անվճարունակ, հարուցում դրա սնանկության վարույթը, իրականացնում այդ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ընդունում է բանկերի վերակազմակերպման հետ կապված օրենքով իր իրավասությանը վերապահված որոշումները:

ՀՀ տարածքում գործող *բանկերի անվճարունակության և սնանկության* հասկացություններն ու հատկանիշները, անվճարունակության և սնանկության կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաև բանկերի սնանկության հետևանքով նրանց լուծարման ընթացակարգը սահմանվում են «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ սովյալ թեմայի տեքստում՝ ՀՀ ԲՎԿՍՕ):

Անվճարունակ բանկերի ֆինանսական առողջացման ընթացակարգը կարգավորվում է վերը նշված օրենքով, այլ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 7-ով և այլ իրավական ակտերով, բանկի ֆինանսական առողջացման ծրագրով:

ՀՀ տարածքում գործող բանկերի անվճարունակության և սնանկության գործընթացները բնութագրվում են հետևյալ էական առանձնահատկություններով.

1) Բանկին անվճարունակ (սնանկ) ճանաչելու հիմքերով: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ հոդվածի, իրավաբանական անձը կարող է սնանկ ճանաչվել միայն մեկ հիմքով, եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Մինչդեռ ՀՀ ԲՎԿՍՕ-ի օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված են բանկին անվճարունակ (սնանկ) ճանաչելու չորս հիմքեր. բանկը համարվում է անվճարունակ, եթե՝

ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը և ավելին, կամ՝

բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները, կամ՝

գ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից, կամ՝

դ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը: Խախտման պարբերականությունը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը, և պետք է միևնույնը լինի ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերի համար:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 7-ի, բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ([ՔԱՄԵԼՍ](#)) 2 միավորից ցածր լինելու կամ պարտադիր պահուստավորման նորմատիվը 3 ամսվա ժամանակահատվածում 3 անգամ խախտելու դեպքում բանկը ճանաչվում է անվճարունակ:

2) Բանկի [անվճարունակությունը](#) ճանաչվում է վերը նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝ բացառապես ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Բանկի պարտատերերն իրավունք չունեն բանկին անվճարունակ (սնանկ) ճանաչելու հայցով դիմել ՀՀ կենտրոնական բանկ կամ դատարան: Բանկի աուդիտն իրականացնող կազմակերպությունը, բանկի անվճարունակության հիմքերից որևէ մեկի հայտնաբերման դեպքում կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկին անմիջապես տեղեկացնել դրա մասին՝ կցելով բոլոր փաստաթղթերը:

3) Բանկի անվճարունակությունը ճանաչելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը դատական կարգով բողոքարկման ենթակա չէ: (Այդպիսի իրավական նորմի առկայությունը, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ ոչ մի մարմին չի տիրապետում բանկերի վերաբերյալ այնքան մանրամասն տեղեկատվության, որքան ՀՀ կենտրոնական բանկը):

4) Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը (որի ձևը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը) ադմինիստրացիայի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Մինչդեռ պարտապան այլ կազմակերպության «ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, ինչպես նաև պարտապանի կանոնադրական հիմնադրամի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք» («Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկության) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենք, հոդված 49, կետ 2):

5) Ադմինիստրացիա նշանակելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը՝ ադմինիստրացիայի ղեկավարի միջնորդությամբ կամ իր հաստատած ծրագրով, իրավունք ունի ադմինիստրացիայի գործողության ամբողջ (կամ անհրաժեշտության դեպքում՝ կարճ) ժամանակահատվածով սառեցնել բանկի պարտատերերի պահանջների բավարարումը:

6) Ադմինիստրացիայի ղեկավարն իր նշանակումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարող է դիմել դատարան՝ բանկի համար ոչ շահավետ պայմաններով գործարքները կամ նախկինում ստանձնած պարտավորությունների դիմաց բանկի կատարած վճարումները անվավեր ճանաչելու համար:

7) ադմինիստրացիայի ղեկավարը պետք է ունենա մասնագիտական որակավորման վկայական (արտոնագիր), որը տրվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ 3 տարի ժամկետով: Նրա կողմից պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը ուժը կորցրած է ճանաչում ադմինիստրացիայի ղեկավարի որակավորման վկայականը:

Ադմինիստրացիայի նշանակումը և դրա իրավական հետևանքները: Ադմինիստրացիայի ղեկավարի իրավասությունները

Բանկի անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը երկ-շաբաթյա ժամկետում՝

ա) նշանակում է ժամանակավոր ադմինիստրացիա և հաստատում է բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը, կամ

բ) բանկի սնանկության մասին դիմում է ներկայացնում դատարան:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 7-ի 10-րդ կետի՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը նշանակում է ադմինիստրացիա և հաստատում բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը, եթե՝

ա) ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացված եզրակացությամբ և ֆինանսական առողջացման ծրագրի նախագծով հիմնավորվում է բանկի ֆինանսական առողջացման հնարավորությունը, և (կամ)

բ) բանկի լուծարմամբ ՀՀ բանկային համակարգի՝ ամբողջությամբ վերցրած միասնականությունը և սահունությունը չի պահպանվի, և (կամ)

գ) ադմինիստրացիայի՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված խնդիրների իրագործման միջոցով հնարավոր է առավելագույնս բավարարել բանկի պարտապահների պահանջները և (կամ) նվազագույնի հասցնել ավանդների երաշխավորման հիմնադրամի ծախսերը, և (կամ)

դ) հնարավոր է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 21-րդ, 22-րդ կամ 23-րդ հոդվածներով սահմանված միջոցառման (միջոցառումների) իրականացման միջոցով ֆինանսապես առողջացնել բանկը: Ընդ որում, բանկի մասնակիցների և (կամ) այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները պետք է իրականացվեն բանկի ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահից եռամսյա ժամկետում, կամ այդ ժամկետի ընթացքում պետք է բանկի մասնակիցների և (կամ) այլ անձանց և ՀՀ կենտրոնական բանկի միջև ձեռք բերվի համաձայնություն՝ ֆինանսական օգնության և (կամ) լրացուցիչ միջոցների ներդրման մասին:

Ժամանակավոր ադմինիստրացիան բանկի կառավարման հատուկ մարմին է, որի ղեկավարին և անդամներին նշանակում է ՀՀ կենտրոնական բանկը՝ բանկին անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Այն կարող է լինել միանձնյա կամ կոլեգիալ:

Համաձայն ԲՎԿՍՕ-ի 5-րդ հոդվածի 2-րդ կետի, ադմինիստրացիայի նշանակման խնդիրն է՝

- ❖ բանկի վերակազմակերպման միջոցով նրա ավանդատուների ու բանկային հաշվի անվանատերերի պահանջների բավարարումը, և (կամ)
 - ❖ բանկի [ակտիվ](#)ները կամ բանկն ամբողջությամբ (որպես միասնական և գործող միավոր՝ իր բոլոր ակտիվներով և պասիվներով) վաճառելու միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)՝ (նման գործարք համեմատաբար վերջերս կատարվեց «Լիդշինբանկի» ակտիվների և պարտավորությունների նկատմամբ, - Ս.Ն.)
 - ❖ բանկի ակտիվները հնարավոր կարճ ժամկետում հավաքագրելու (իրացնելու) միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)
 - ❖ բանկի կանոնադրական կապիտալն ավելացնելու կամ օրենքով սահմանված կարգով փոխառությունների միջոցով ներդրումների ներգրավմամբ բանկի ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)
 - ❖ բանկի ստանձնած պարտավորությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ անձի փոխանցելու միջոցով նրա ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)
 - ❖ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և պայմաններով՝ [բանկային գործունեության լիցենզիայի](#) մեկ տարատեսակը այլ տարատեսակի վերափոխելու միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը, և (կամ)
 - ❖ բանկի ֆինանսական առողջացմանն ուղղված օրենքով չարգելված այլ միջոցառումների իրականացումը: Ադմինիստրացիա նշանակելու մասին որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է միաժամանակ հաստատել նաև բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը: Ադմինիստրացիան գործում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ֆինանսական առողջացման ծրագրին համապատասխան:
- Ադմինիստրացիայի նշանակումը հանգեցնում է որոշակի իրավական հետևանքների՝ ադմինիստրացիայի գործունեության ընթացքում.
- բանկի կառավարման բոլոր մարմինների լիազորություններն ամբողջությամբ անցնում են ադմինիստրացիայի ղեկավարին

- բանկի կառավարման մարմիններն իրավունք չունեն ընդունել որոշումներ՝ օրենքով, բանկի հիմնադիր և ներքին փաստաթղթերով իրենց իրավասությանը վերապահված հարցերով
- արգելվում է բանկի մասնակցի պահանջի բավարարումը բանկի կանոնադրական կապիտալում նրա ունեցած բաժնի առանձնացման մասով կապված բանկի հիմնադիրների կազմից նրա դուրս գալու հետ
- արգելվում է նաև բանկի մասնակիցների պարտադիր (պարտատերերի) պահանջով բանկի կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու մպատակով այդ բաժնեմասն առանձնացնելը կամ բաժնեմասին համապատասխան բանկի միջոցներից վճարում կատարելը
- բանկի նկատմամբ պահանջները կարող են զիջվել միայն ադմինիստրացիայի համաձայնությամբ, եթե դա նախատեսված է ֆինանսական առողջացման ծրագրով:

Ադմինիստրացիա նշանակելու և բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու (ընդունման) պահից բանկի կառավարման մարմինների լիազորությունները կասեցվում են, իսկ գործադիր տնօրենի կամ նման պարտականություններ կատարող կառավարման այլ մարմնի լիազորությունները դադարեցվում: Բանկի կառավարման մարմինները պարտավոր են անմիջապես ադմինիստրացիայի ղեկավարին հանձնել բանկի կնիքը, դրոշմակնիքները, ադմինիստրացիայի հետ համաձայնեցված ժամկետներում՝ հաշվապահական և այլ փաստաթղթերը, բանկի նյութական և այլ արժեքները, իսկ [բանկի ղեկավարները](#) և այլ աշխատակիցները՝ կատարել ադմինիստրացիայի ղեկավարի օրինական հանձնարարականները:

Ադմինիստրացիայի գործունեության ժամկետը կախված է կոնկրետ անվճարունակ բանկի ֆինանսական առողջացման հնարավորություններից և սահմանվում է բանկի ֆինանսական առողջացման ծրագրով՝ մինչև երեք տարի ժամկետով: Ընդ որում, ֆինանսական առողջացման ծրագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո ՀՀ կենտրոնական բանկը կարող է այն երկարաձգել ևս երեք տարով:

Ադմինիստրացիայի ղեկավարը գործում է բանկի անունից՝ առանց լիազորագրի: ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ նա կարող է ադմինիստրացիայի անդամներին տալ լիազորագրեր: Ադմինիստրացիայի ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ԲՎԿՍՕ-ի 10-րդ հոդվածով:

Ադմինիստրացիայի ղեկավարը պատասխանատվություն է կրում ադմինիստրացիայի գործունեության համար՝ օրենքով սահմանված կարգով: Նա իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում բանկի նկատմամբ կրում է պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Ադմինիստրացիայի ղեկավարը անձնական գույքային պատասխանատվություն է կրում իր ոչ օրինաչափ և (կամ) ռիսկային գործողությունների հետևանքով բանկին պատճառած վնասի համար:

Բանկի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կամ դրանց իրականացման ընթացքում բանկի ադմինիստրացիայի ղեկավարը պատավոր է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել գրավոր միջնորդություն:

- բանկի ֆինանսական առողջացման անհնարինության դեպքում՝ բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու և բանկի նկատմամբ սնանկության վարույթ սկսելու միջնորդությամբ դատարան դիմելու անհրաժեշտության մասին, կամ՝

- բանկի ֆինանսական առողջացման դեպքում՝ ադմինիստրացիայի գործունեությունը դադարեցնելու և բանկը մասնակիցների կառավարմանը վերադարձնելու մասին:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը՝ տասնհինգօրյա ժամկետում, քննարկում է միջնորդությունը և կայացնում որոշում՝ այն մերժելու կամ բավարարելու մասին:

Բանկի պարտատերերի պահանջների սառեցումը: Գործարքներն անվավեր ճանաչելը

Բանկի ֆինանսական առողջացման համար էական նշանակություն ունեն նրա պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիումը) և նախկինում կնքված՝ բանկի համար անշահավետ մի շարք գործարքների անվավեր ճանաչումը: Այս առումով բանկի ֆինանսական առողջացման գործընթացը կարելի է համեմատել հիվանդի ապաքինման հետ, որը ենթադրում է դրա համար նպաստավոր պայմանների ապահովում:

Մորատորիումի գործողությունը տարածվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, որոնք առաջացել են ադմինիստրացիայի նշանակումից առաջ, ինչպես նաև ստորև թվարկված պարտավորությունների և գործողությունների վրա: Մորատորիումի գործողության ընթացքում (ԲՎԿՍՕ, հոդված 14).

ա) կասեցվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը

բ) չի թույլատրվում կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով որևէ բռնագանձում կամ գանձում

գ) կասեցվում է գույքային բռնագանձումներով կատարողական փաստաթղթերի կատարումը (բացառությամբ օրենքով սահմանված գումարների բռնագանձման մասին կատարողական փաստաթղթերի), եթե դրանց վերաբերյալ կայացված դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտել մինչև ադմինիստրացիայի նշանակումը:

Բանկի պարտատերերի պահանջների սառեցման ժամկետի ավարտից հետո չեն հաշվարկվում, վճարվում, գանձվում կամ բռնագանձվում պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար օրենքներով կամ պայմանագրերով նախատեսված տուժանքները կամ ֆինանսական այլ պատժամիջոցները: Բանկի պարտատերերի պահանջների սառեցման ժամկետի ավարտից հետո դրամական պարտավորություններով կամ պարտադիր վճարումների գծով պարտավորությունների գումարի վրա ենթակա են հաշվեգրման միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթի

չափով տոկոսները, եթե դրանք չեն գերազանցում օրենքով կամ պայմանագրով սահմանված տոկոսների չափը: Դրանով կանխորոշվում է փոխարկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսները, դրանով կանխորոշվում է փոխարկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսները, դրանով կանխորոշվում է փոխարկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսները, դրանով կանխորոշվում է փոխարկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսները:

Դրանով կանխորոշվում է փոխարկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսները հաշվարկվում են միայն բանկի պարտատերերի պահանջների սահմանում ժամկետից հետո ընկած ժամանակահատվածի համար: Նշված տոկոսները չեն հաշվեգրվում պարտավորության գումարի վրա հաշվեգրված տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև տոկոսների գումարների վրա:

Սորատորիումի գործողությունը չի տարածվում

ա) քաղաքացիների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետևանքով առաջացած պահանջների

բ) արձակման նպաստների և աշխատավարձերի վճարման, հեղինակային պայմանագրերով պարգևատրումների հետ կապված քաղաքացիների պահանջների

գ) բանկի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ընթացիկ ծախսերի (օրինակ, կապի, էլեկտրաէներգիայի, պահպանության) վճարման գծով պահանջների վրա:

Աղմինիստրացիայի ղեկավարը, 30 օր առաջ տեղյակ պահելով իր մտադրության մասին, իրավունք ունի միակողմանիորեն լուծել բանկի կնքած այն պայմանագրերը, որոնք ուղղակիորեն կապված չեն բանկի բանկային գործունեության հետ, եթե դրանք ակնհայտորեն ոչ շահավետ պայմաններ են ստեղծել բանկի համար կամ դրանցով ստանձնած պարտավորությունների կատարումը կբերի բանկի [ակտիվ](#)ների էական նվազմանը: Այդ պայմանագրերի լուծման դեպքում աղմինիստրացիայի ղեկավարը չի ազատվում մինչև պայմանագրի լուծման մասին մյուս կողմին ծանուցելը պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական առողջացման ծրագրով դրանց կատարման վրա սահմանված է մորատորիում:

Աղմինիստրացիայի ղեկավարի դիմումի հիման վրա դատարանը կարող է անվավեր ճանաչել.

❖ աղմինիստրացիայի նշանակմանը նախորդող 3 տարվա ընթացքում`

– բանկի կնքած այն գործարքները, որոնցով բանկի ղեկավարը, մասնակիցները կամ նրանց հետ [փոխկապակցված անձինք](#) բանկից անհատույց կամ ակնհայտորեն շահավետ պայմաններով ստացել են որոշակի գույք (ներառյալ շահաբաժինները)

– բանկի մասնակիցներին բաշխված շահաբաժինները, նրանց կամ այլ անձանց օգտին անհատույց օտարված գույքը

– կատարված այն գործարքները, որոնց արդյունքում բանկի կողմից տրամադրված գույքի իրական շուկայական արժեքն էականորեն գերազանցել է փոխարենն ստացված գույքի իրական շուկայական արժեքը, կամ այն գործարքները, որոնք ակնհայտորեն անշահավետ են եղել բանկի համար

❖ աղմինիստրացիայի նշանակմանը նախորդող 90 օրվա ընթացքում բանկի` նախկինում ստանձնած պարտավորությունների դիմաց բանկի կատարած վճարումները կամ գույքի օտարումը, բացառությամբ բանկի բնականոն գործունեության համար ընթացիկ վճարումների:

Չամաձայն «Պետական տուրքի մասին» ԴՀ օրենքի 22-րդ հոդվածի «ի» ենթակետի, դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ժամանակավոր աղմինիստրացիայի (վարչակազմի) ղեկավարը և լուծարային կառավարիչը` «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ԴՀ օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով:

Աղմինիստրացիայի հաշվետվությունը և նրա գործունեության դադարեցումը

Չամաձայն ԴՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 7-ի, անվճարունակ բանկի աղմինիստրացիայի ղեկավարը, մինչև յուրաքանչյուր շաբաթվա երկրորդ աշխատանքային օրվա վերջը, ԴՀ կենտրոնական բանկ է ներկայացնում նախորդ շաբաթվա ստեղծված պարտավորությունների և արտարժույթային դիրքերի վերաբերյալ հաշվետվությունները, անվճարունակ բանկի ծախսերի, հատույթների, պարտավորությունների կազմի, չափերի և ֆինանսական ծրագրում սահմանված ծրագրային ցուցանիշներին հասնելու կանխատեսումների վերաբերյալ հաշվետվությունը: Բանկի աղմինիստրացիայի ղեկավարը ԴՀ կենտրոնական բանկ է ներկայացնում նաև ԴՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, եթե ԴՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով ֆինանսական առողջացման ծրագրով այլ հաշվետվական ձևեր, ներկայացման հաճախականություն, կարգ և պայմաններ սահմանված չեն:

Աղմինիստրացիայի գործունեությունը դադարեցվում է ԴՀ կենտրոնական բանկի կողմից` ԲՎԿՍՕ-ի 18-րդ հոդվածով սահմանված հետևյալ դեպքերում.

ա) եթե ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից հետո կամ դրա գործողության ընթացքում ցանկացած պահին իրականացվել են ծրագրով նախատեսված նպատակները, և ԴՀ կենտրոնական բանկի խորհուրդը կայացրել է համապատասխան որոշում, կամ`

բ) եթե ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից հետո կամ դրա գործողության ընթացքում ցանկացած պահին ԴՀ կենտրոնական բանկի դիմումի համաձայն` դատարանը որոշում է կայացրել բանկի սնանկության և լուծարային կառավարիչ նշանակելու մասին:

Աղմինիստրացիայի գործունեությունը դադարեցնելու մասին ԴՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Այդ պահից բանկի կառավարման մարմինների և ղեկավարների լիազորությունները համարվում են վերականգնված, բացառությամբ բանկի գործադիր տնօրենի կամ նման պարտականություններ կատարող կառավարման այլ մարմնի լիազորությունների, որոնք վերականգնման ենթակա չեն:


Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը

Բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի ԲՎԿՍՕ-ի 19-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթները: Այդ ծրագրի ձևը, դրանում ներառվող պարտադիր այլ դրույթները սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը: Վերջինս իրականացնում է նաև բանկի ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունը՝ իր սահմանած կարգով:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 7-ի հավելված 2-ի, բանկի ֆինանսական առողջացման ծրագրի կառուցվածքը կարելի է ներկայացնել ստորև բերված նկար 35-ի միջոցով: Այդ ծրագրում կարող են ներառվել ԲՎԿՍՕ-ի 19-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջոցառումները:

«Բանկի ֆինանսական առողջացման ծրագրի իրավական հիմքերը» գլխում, մասնավորապես, նշվում են բանկում ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը և անվճարունակ ճանաչելու հիմքը, ֆինանսական առողջացման ծրագրի նպատակը, ադմինիստրացիայի գործունեության հիմքը:

«Բանկի ֆինանսական վիճակի ամփոփ գնահատականը գլխում» տրվում են բանկի [ակտիվները](#), այն վարկային ներդրումները, որոնք ենթակա են դասակարգման որպես անհուսալի, վարկային ներդրումների կառուցվածքը, խոշոր վարկերի մարման ժամկետները և ադմինիստրացիայի կողմից դրանց գնահատականները, բանկի պարտավորությունները, այդ թվում ռեզիդենտ ֆիզիկական անձանց գծով, ռեզիդենտ իրավաբանական անձանց գծով, միջազգային ծրագրերի գծով, ռեզիդենտ բանկերի գծով և այլ պարտավորությունները, ծանուցման հաշիվներում հաշվառվող դուրս գրված վարկերը, տոկոսները, ղեքիտորական պարտքերը:



Նկար 35. Բանկի ֆինանսական առողջացման ծրագրի կառուցվածքը

Բանկի մասնակիցների և այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները կարող են իրականացվել ԲՎԿՍՕ-ի 20-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ձևերով:

Բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցները, ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ, բանկի պարտատիրոջ կողմից կարող են ուղղվել բանկի կանոնադրական կապիտալի մեծացմանը:

Բանկին ցույց տրվող ֆինանսական օգնության ձևերի և պայմանների մասին որոշումներն ընդունվում են բանկի և ֆինանսական օգնություն ցույց տվող անձի կողմից: Այդ որոշումներն ադմինիստրացիայի ղեկավարը պարտավոր է նախապես համաձայնեցնել ՀՀ կենտրոնական բանկի հետ:

Բանկի մասնակիցների, այդ թվում նոր մասնակիցների կողմից տրամադրվող միջոցները, կարող են ուղղվել բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը կամ այն ակտիվների վերականգնմանը, որոնց արժեզրկմամբ է պայմանավորված բանկի ֆինանսական վիճակի վատթարացումը: Ներդրման կոնկրետ եղանակը որոշում է ադմինիստրացիան՝ համաձայնեցնելով ՀՀ կենտրոնական բանկի հետ: Այլ անձանց մասնակցության

եղանակները բանկի ֆինանսական վիճակի վերականգնման հարցում որոշում է ադմինիստրացիայի ղեկավարը՝ համաձայնեցնելով ՀՀ կենտրոնական բանկի հետ:

Ադմինիստրացիան պարտավոր է իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ վարչական ծախսերի (աշխատավարձի և դրա գծով հաշվարկված հարկերի, պարտադիր այլ վճարների, գործուղման, կապի և հաղորդակցման, պահպանության, կոմունալ, գրասենյակային և տնտեսական, փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման, այլ ծախսեր) կրճատման ուղղությամբ՝ դրանց ամսական սահմանաչափերը հասցնելով ծրագրով սահմանվող մեծություններին: Ընդ որում, ֆինանսական առողջացման ծրագրով կարող է սահմանվել, ծախսային հոդվածներում խնայողություններ ունենալու դեպքում, այդ խնայողությունների օգտագործման կարգը, ուղղությունները:

«Լրացուցիչ եկամուտների ստացմանն ուղղված միջոցառումներում» նախատեսվում է օտարել բանկի սեփականություն հանդիսացող գույքն ըստ անհրաժեշտության, ընդ որում, առաջնահերթ պետք է վաճառվի այն գույքը, որն ուղղակիորեն կապված չէ բանկի գործունեության հետ: Գույքի իրացումը պետք է իրականացվի երկու տարբերակով.

ա) ուղղակի վաճառք

բ) հիմնական միջոցների զիջում (փոխանցում) պարտատերերին՝ բանկի նկատմամբ վերջիններիս պահանջների դիմաց ՀՀ կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով:

«Տարածամեծության վարկերի և դեբիտորական պարտքերի վերադարձմանն ուղղված միջոցառումները» գլխում նշվում են ադմինիստրացիայի իրավունքները [ակտիվների](#) դրակի բարելավման և միջոցների ավելի հեշտ հավաքագրման ու պարտավորությունների ավելի արագ կատարման նպատակով պահանջի իրավունքի զիջման և պարտքի փոխանցման գործարքներ կնքելու վերաբերյալ, ինչպես նաև այդ գործարքների ուղղությունները՝ ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 7-ով սահմանված ձևերով:

Բանկի ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահից բանկը դուրս է գալիս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված տնտեսական նորմատիվների կարգավորման դաշտից և գործում է ֆինանսական առողջացման ծրագրով սահմանված նորմատիվների կարգավորման դաշտում:

Բանկի ակտիվների և պասսիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել ԲՎԿՍՈ-ի 21-րդ հոդվածով սահմանված միջոցառումների իրականացում:

«Բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությանն ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները» գլխում նշվում են ադմինիստրացիայի գործունեության և ծրագրի գործողության ընթացքում բանկի կառավարման բոլոր մարմինների լիազորությունները կասեցման և դրանք ամբողջությամբ ադմինիստրացիայի ղեկավարին անցնելու մասին: Դրանում կարող են նշվել նաև ադմինիստրացիայի ղեկավարի կառավարչական գործառնությունների բաշխման կարգը ադմինիստրացիայի անդամների միջև՝ սահմանելով ադմինիստրացիայի անդամներից յուրաքանչյուրի կառավարման ոլորտները, դրանց հետ կապված լիազորությունները, իրավունքները և պարտականությունները:

Բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը կարող է իրականացվել.

- ⇒ բանկի աշխատակիցների թվաքանակի և կազմի փոփոխությամբ
- ⇒ բանկի կառուցվածքի փոփոխությամբ
- ⇒ տարածքային կամ կառուցվածքային ստորաբաժանումների լուծարմամբ
- ⇒ այլ միջոցներով, որոնք կարող են նպաստել բանկի ֆինանսական առողջացմանը:

Բանկի վերակազմակերպումն իրականացվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Բանկի ֆինանսական առողջացման ծրագրով կարող է նախատեսվել բանկի կազմակերպական-իրավական ձևի փոփոխություն, որն իրականացվում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

21.3. ԲԱՆԿԻ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Բանկի սնանկության վարույթի առանձնահատկությունները

Բանկի սնանկությունը բացառապես ՀՀ կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա [անվճարունակությունը](#) է: Նման դեպքում բանկը ենթակա է լուծարման՝ ԲՎԿՍՈ-ով սահմանված կարգով:

Չամաձայն այդ օրենքի, բանկի սնանկության մասին դիմումով ՀՀ կենտրոնական բանկը դատարան է դիմում (սեփական նախաձեռնությամբ կամ պարտատերերի միջնորդությամբ), եթե՝

ա) առկա է բանկի անվճարունակության նախատեսված հիմքերից որևէ մեկը, կամ

բ) ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ՀՀ կենտրոնական բանկին ակնհայտ է դառնում, որ բանկը լուծարելու դեպքում հնարավոր է պահպանել բանկի միջոցների առավել մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս, կամ չի հաջողվում վերականգնել բանկի կայուն վճարունակությունը:

Այսպիսով, բանկին անվճարունակ ճանաչելու դեպքում ադմինիստրացիայի նշանակումը պարտադիր փուլ չէ. գործնականում չեն բացառվում այն դեպքերը, երբ, ելնելով բանկի ակտիվների առավել մեծ քանակ պահպանելու, հետևապես բանկի պարտատերերի պահանջներն առավել լրիվ բավարարելու անհրաժեշտությունից, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է որոշում ընդունել բանկի սնանկության մասին դիմումը դատարան ներկայացնելու վերաբերյալ:

Բանկի պարտատերերը բանկի սնանկության մասին դիմումը դատարան ներկայացնելու միջնորդությամբ ՀՀ կենտրոնական բանկի դիմելիս միջնորդությանը պետք է կցեն բանկի դրամական պարտավորությունների առկայությունը և նրանց չափը հիմնավորող փաստաթղթերը: ՀՀ կենտրոնական բանկը բանկի պարտատերերի

միջնորդությունը քննարկում է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին:

Բանկի պարտատերերն իրավունք ունեն նաև ՀՀ կենտրոնական բանկ կամ դատարան ներկայացնել լուծարային կառավարչի թեկնածություն:

Բանկի անվճարունակության հիմքերի առկայության դեպքում.

❖ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը քննարկում և որոշում է կայացնում բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին

❖ բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ հնգօրյա ժամկետում, ՀՀ կենտրոնական բանկը դատարան է ներկայացնում բանկի սնանկության մասին դիմում՝ առաջարկելով լուծարային կառավարչի թեկնածություն (թեկնածություններ) և կցելով օրենքով սահմանված փաստաթղթերը:

Բանկերի սնանկության վարույթի կարևորագույն առանձնահատկություններից են նաև ԲԿԿՕ-ի IV գլխով նախատեսված հետևյալ դրույթները.

⇒ բանկի նկատմամբ սնանկության վարույթ հարուցվում է բացառապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ նրա խորհրդի որոշմամբ

⇒ բանկերի սնանկության մասին գործերը քննվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, եթե «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չէ

⇒ դատարանի կողմից բանկի սնանկության մասին գործի քննության ժամանակ կիրառվում է միայն լուծարային վարույթ

⇒ բանկերի սնանկության վարույթի ընթացքում հաշտության համաձայնություն չի կարող կնքվել

⇒ բանկի սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձինք են պարտապան բանկը, ՀՀ կենտրոնական բանկը և լուծարային կառավարիչը

⇒ ՀՀ կենտրոնական բանկի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը քննում է գործը եռօրյա ժամկետում: Դատարանը որոշում է կայացնում ՀՀ կենտրոնական բանկի դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ: Դատարանը մերժում է ՀՀ կենտրոնական բանկի դիմումը, եթե ՀՀ կենտրոնական բանկը որոշում է կայացրել տվյալ օրենքով սահմանված ընթացակարգի խախտումներով: Բանկի սնանկության մասին որոշում կայացնելիս դատարանը նշանակում է նաև լուծարային կառավարիչ՝ ՀՀ կենտրոնական բանկի կամ պարտատերերի կողմից ներկայացված թեկնածուների թվից:

Դատարանի կողմից ՀՀ կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից (ԲԿԿՕ, հոդված 29)

ա) լուծարային կառավարչին են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները

բ) դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունների դիմաց տոկոսների և այլ նմանատիպ հատուցումների, օրենքով կամ պայմանագրով նախատեսված բոլոր տեսակի տուժանքների, տուգանքների, տույժերի, տոկոսների հաշվարկումը և գանձումը, վարձակալական վարույթները: Կասեցված կամ կարճված վարույթների հետ կապված պահանջները պարտատերերը կարող են ներկայացնել լուծարային կառավարչին՝ օրենքով սահմանված կարգով

գ) սառեցվում են բանկի բոլոր, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող հաշիվները և թույլատրվում են միայն բանկին կատարվող վճարումները

դ) դատարաններում կարճվում են բոլոր այն գործերի վարույթները, որտեղ բանկը ճանաչվել է պատասխանող, ինչպես նաև կասեցվում են բանկի գույքի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանների, միջնորդ դատարանների վճիռների, որոշումների կատարողական վարույթները: Կասեցված կամ կարճված վարույթների հետ կապված պահանջները պարտատերերը կարող են ներկայացնել լուծարային կառավարչին՝ օրենքով սահմանված կարգով

ե) լուծարային կառավարչի դիմումի հիման վրա պետական լիազորված մարմինը դիմումն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարվող բանկի ֆիրմային անվանման մեջ կատարում է փոփոխություն՝ ներառելով «լուծարվող բանկ» բառերը:

ՀՀ կենտրոնական բանկի դիմումը մերժելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ տասնօրյա ժամկետում, ՀՀ կենտրոնական բանկը վերականգնում է բանկի բանկային գործունեության լիցենզիան, վերականգնվում են բանկի բոլոր կառավարման մարմինների, ղեկավարների՝ մինչև այդ կասեցված կամ դադարեցված լիազորությունները, բացառությամբ գործադիր տնօրենի կամ նման այլ պարտականություններ կատարող կառավարման մարմնի, որի լիազորությունները չեն վերականգնվում:

Սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը

Սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգը սահմանված է ԲԿԿՕ-ի V գլխում:

Դատարանի կողմից սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգն սկսում է դատարանը, որը նշանակում է նաև բանկի լուծարային կառավարիչ:

Բանկի լուծարային կառավարիչը պետք է ունենա մրցութային կառավարչի լիցենզիա, որը տրվում է պետական լիազորված մարմնի (ՀՀ արդարադատության նախարարության) կողմից, ինչպես նաև պետք է համապատասխանի ՀՀ կենտրոնական բանկի սահմանած որակավորման պահանջներին:

Լուծարային կառավարիչը.

⇒ իր նշանակումից հետո՝ եռօրյա ժամկետում, մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի և վայրի մասին տեղեկություններ:

Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից և գերազանցել վեցամսյա ժամկետը

⇒ պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ բանկին ի պահ հանձնված գույքը դրա սեփականատերերին վերադարձնելու և այդ կապակցությամբ վերջնական հաշվարկներ կատարելու ուղղությամբ

⇒ ժանուցումներ է ուղարկում գույքի սեփականատերերին՝ նշելով ժամկետը, որի ընթացքում նրանք կարող են պահանջել այդ գույքը: Նշված ժամկետը չի կարող լինել մեկ ամսից ավելի: Լուծարային կառավարչի ժանուցումն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, գույքի սեփականատերերը պարտավոր են վերցնել բանկին ի պահ հանձնված գույքը: Եթե այդ ժամկետում գույքի սեփականատերերը չեն դիմում բանկ, ապա լուծարային կառավարիչը գույքը հանձնում է ի պահ օրենքով սահմանված կարգով կնքելով պայմանագիր

⇒ պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ բանկի պարտատերերին հայտնաբերելու և բանկի դեբիտորական պարտքերն ստանալու ուղղությամբ


⇒ պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված տեղեկություններ

⇒ պարտատերերի պահանջները բավարարում է վերը նշված օրենքով սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշիռին համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից

⇒ պարտավոր է լուծարվող բանկի ֆիրմային անվանման մեջ փոփոխություն կատարելուց հետո ողջամիտ ժամկետում փոխել լուծարվող բանկի կնիքը, դրոշմակնիքը, կապարակնիքը, ձևաթղթերը՝ ներառելով «Լուծարվող բանկ» բառերը:

Գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ:

Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին՝ ԲՎԿՍՕ-ի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որը բերված է նկար 36-ում:



Նկար 36. Սնանկ ճանաչված բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը

Այդ հերթականության սահմանման տրամաբանության մեջ, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել հետևյալ կարևորագույն պահերը՝

- ❖ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226 հոդվածի 3-րդ կետի, գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավառու) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարելու դեպքում գույքի տիրոջ (գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Հետևապես, լուծարվող բանկի գույքի գրավով ապահովված պարտավորությունները պետք է բավարարվեն գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ:

- ❖ հայտնի է, որ անվճարունակ բանկին վարկ կամ ավանդ տրամադրելը ներդրողի համար կապված է մեծ ռիսկի հետ: Մյուս կողմից, նման ներդրումը կարող է վճռական նշանակություն ունենալ անվճարունակ բանկի ֆինանսական առողջացման համար: Ելնելով դրանից, օրենքով նախատեսվում է այդ պարտատերերի պահանջների ավելի վաղ բավարարում

- ❖ սոցիալական, բնակչության համեմատաբար անապահով խավի խնայողությունների պաշտպանության առումով անվճարունակ բանկի պարտավորությունների կատարման հերթականության մեջ, արդարացված է բանկի խոշոր ավանդների հանդեպ փոքր ավանդների վերադարձմանն առաջնայություն տալը

- ❖ վճարահաշվարկային համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովման համար վճարահաշվարկային և թղթակցային հարաբերություններից բխող՝ բանկերի պահանջները բավարարվում են ավելի վաղ, քան միջբանկային վարկերից բխող պահանջները

- ❖ հաշվի առնելով բանկի ֆինանսական վիճակի վրա ազդելու (հետևապես՝ նաև բանկին անվճարունակության հասցնելու) բանկի հետ կապված անձանց մեծ հնարավորությունը, օրենքով նախատեսվում է դրանց նկատմամբ բանկի պարտավորությունների բավարարումը վերջին հերթում:

Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ:

Օրենքով՝ պարտատերերի պահանջների բավարարման հերթականության սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են վերջում:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ: Այդ պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո: Եթե լուծարային միջոցները չեն բավարարում որևէ հերթի բոլոր պարտատերերի պահանջներն ամբողջությամբ, ապա դրանք բավարարվում են համամասնորեն:

Եթե պարտատերը պահանջ է ներկայացրել պարտատերերի պահանջների ներկայացման օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, ապա նրա պահանջը բավարարվում է լուծարային այն միջոցների հաշվին, որոնք կմնան պարտատերերի ժամանակին ներկայացված պահանջների բավարարումից հետո:

Լուծարային կառավարչի կողմից մերժված պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են ներված: Եթե պարտատերը ներկայացրել է պահանջը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո, և պահանջը հնարավոր չէ բավարարել լուծարային միջոցները չբավարարելու պատճառով, ապա նրա պահանջը համարվում է մարված անգամ, եթե առկա է տվյալ պահանջը ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Բանկին պարտադիր ցուցում տալու կամ նրա գործողություններն այլ ձևերով կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցների ուղղակի կամ անուղղակի գործողությունների հետևանքով բանկի սնանկության դեպքում այդ անձինք բանկի պարտավորությունների համար կրում են սուբսիդիար պատասխանատվություն: Սուբսիդիար պատասխանատվություն որոշելու հայցով դատարան կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկը և լուծարային կառավարիչը:

Բանկի լուծարային միջոցների մեջ ընդգրկվում են՝ սեփականության իրավունքով բանկին պատկանող գույքը (միջոցները, ներառյալ՝ պահանջի իրավունքները), գրավի առարկա համարվող գույքը՝ պայմանագրով նախատեսված բանկի պարտավորության դրամական արժեքը գերազանցող մասով, լուծարային կառավարչի հայցով դատարանի կողմից գործարքի անվավեր ճանաչման հետևանքով բանկին վերադարձված միջոցները, բանկի մասնակիցների և ղեկավարների միջոցները՝ ԲՎԿՍՕ-ով և այլ օրենքներով սահմանված լրացուցիչ պատասխանատվության չափով, օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներ:

Դատարանի կողմից բանկի սնանկության և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարային կառավարիչը ՀՀ տարածքում գործող բանկերից մեկում բացում է բանկի լուծարային հաշիվ, որի վրա հաշվեգրվում են բանկի բոլոր դրամական միջոցները, ինչպես նաև բանկի լուծարային միջոցների իրացումից ստացված գումարները: Լուծարային հաշվի բացման, վարման, ինչպես նաև այլ բանկերում հաշիվների փակման կարգը սահմանված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի ապրիլի 30-ի թիվ 128 որոշմամբ:

Բանկի լուծարային կառավարիչը բանկի պարտատերերի պահանջներն առավելագույն չափով բավարարելու նպատակով իրականացնում է ԲՎԿՍՕ-ի 33-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունները:

Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային կառավարիչը կազմում է լուծարման հաշվեկշիռը և այն հաստատելու դիմումով ներկայացնում է դատարան: Դատարանը տասնօրյա ժամկետում կայացնում է լուծարման հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը:

Դատարանի կողմից լուծարման հաշվեկշիռը չհաստատելու դեպքում լուծարային կառավարիչն իրավունք ունի տասնօրյա ժամկետում վերացնել դատարանի կողմից լուծարման հաշվեկշիռի հաստատումը մերժելու հիմքերը և լուծարման հաշվեկշիռն հաստատելու մասին նոր դիմում ներկայացնել դատարան: Դատարանի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին դատարանի որոշումն ստանալու պահից եռօրյա ժամկետում, ՀՀ կենտրոնական բանկը լուծարվող բանկը գրանցումից հանելու մասին գրառում է կատարում բանկերի գրանցումների մատյանում, որից հետո բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած: ՀՀ կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկերի սնանկության պատճառները:
2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում բանկի [անվճարունակությունը](#) և [սնանկությունը](#):
3. Որո՞նք են բանկին անվճարունակ և սնանկ ճանաչելու հիմքերը և իրավական հետևանքները:
4. Որո՞նք են բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի խնդիրները և իրավասությունները:
5. Ի՞նչ կանոններ են սահմանված անվճարունակ ճանաչված բանկի պարտատերերի սառեցման և բանկի գործարքների անվավերության վերաբերյալ:
6. Ի՞նչ է իրենցից ներկայացնում բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը:
7. Որո՞նք են բանկի սնանկության առանձնահատկությունները:
8. Ինչպե՞ս է իրականացվում սնանկ ճանաչված բանկի լուծարումը:
9. Ի՞նչ հերթականությամբ է կատարվում սնանկ ճանաչված լուծարվող բանկի պարտավորությունների մարումը:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) բանկի սնանկությունը՝ կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
- բ) բանկի անվճարունակությունը ճանաչելու մասին ԿԲ-ի խորհրդի որոշումը ենթակա է դատական կարգով բողոքարկման
- գ) բանկի ժամանակավոր ադմինիստրացիային նշանակում է ԿԲ-ն
- դ) ադմինիստրացիայի գործունեության ընթացքում բանկի խորհրդի լիազորություններն անցնում են ադմինիստրացիայի ղեկավարին:

Հ ա ր ց 2. Ներքոհիշյալ պնդումներից որ՞ն է սխալ.

- ա) մորատորիումի ընթացքում բանկը կարող է չմարել ավանդները
- բ) բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարին և անդամներին նշանակում է ԿԲ-ն
- գ) բանկի նկատմամբ ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու դեպքում ուժը կորցրած է ճանաչվում բանկային գործունեության լիցենզիան
- դ) ադմինիստրացիայի ղեկավարին են անցնում նաև բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությունները:

Հ ա ր ց 3. Ներքոհիշյալ պնդումներից որ՞ն է սխալ. Ադմինիստրացիայի նշանակման խնդիրն է.

- ա) բանկի լուծարումը
- բ) բանկի վերակազմակերպման միջոցով նրա ավանդատուների ու բանկային հաշվի անվանատերերի պահանջների բավարարում,
- գ) բանկի [ակտիվները](#) կամ բանկն ամբողջությամբ վաճառելու միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը
- դ) բանկի ակտիվները հնարավոր կարճ ժամկետում հավաքագրելու միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը:

Հ ա ր ց 4. Ներքոհիշյալ պնդումներից որ՞ն է ճիշտ.

- ա) ադմինիստրացիա նշանակելու դեպքում ԿԲ-ն իրավունք չունի սառեցնել բանկի պարտատերերի պահանջները
- բ) բանկի նկատմամբ ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու դեպքում բանկն իրավունք չունի ներգրավել ավանդներ
- գ) ադմինիստրացիայի ղեկավարն իրավունք չունի դիմել դատարան նախկինում կնքված գործարքներն անվավեր ճանաչելու համար
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

Հ ա ր ց 5. Ներքոհիշյալ պնդումներից որ՞ն է ճիշտ: Սնանկ ճանաչված բանկի լուծարման դեպքում առաջին հերթին բավարարվում են.

- ա) բյուջեի նկատմամբ բանկի պարտավորությունները
- բ) ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից կատարված հիմնավոր ծախսերը
- գ) քաղաքացիների ավանդները
- դ) ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ բանկի պարտավորությունները:

ՊԼՈՒԽ 22. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի նպատակն է՝ բացատրել ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական (փողային) փոխանցումներ, վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ, քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող, վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց մասնաճյուղերի գրանցման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը, ինչպես նաև օրենքներով ՀՀ կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված՝ վերոհիշյալ հարաբերությունների հետ առնչվող այլ հարցերը:

Ունակությունների և հնտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ուսանողները պետք է կարողանան՝

- ներկայացնել վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության լիցենզավորման իրավական հիմքը
- նկարագրել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց մասնաճյուղերի գրանցման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 16-ի
- նկարագրել վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց մասնաճյուղերի գրանցման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 17-ի
- նկարագրել քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց մասնաճյուղերի գրանցման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 18-ի
- նկարագրել վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների լիցենզավորման, դրանց մասնաճյուղերի գրանցման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը՝ համաձայն ԿԲ կանոնակարգ 19-ի

• ներկայացնել վերը նշված կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառումը: Առաջ անցնելով արձանագրենք, որ վերը նշված կազմակերպությունների լիցենզավորման, դրանց մասնաճյուղերի գրանցման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը գրեթե միատեսակ են, ուստի այսուհետ սույն թեմայի տեքստում ամենուրեք կօգտագործենք «լիցենզավորված անձինք» կամ «կազմակերպություններ» տերմինը, իսկ առանձնահատկությունները թվարկելիս՝ կնշենք կոնկրետ լիցենզավորվող անձի տեսակը:

22.1. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի՝ լիցենզավորման ենթակա գործունեություն են համարվում նաև գործունեության հետևյալ տեսակները.

- ⇒ դրամական (փողային) փոխանցումներ իրականացումը
- ⇒ վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկների իրականացումը
- ⇒ քարտային վճարումների պրոցեսինգ իրականացումը
- ⇒ վճարային քարտերի և այլ փաստաթղթերի թողարկումը և իրացումը:

Հարկ ենք համարում նշել, որ վերոհիշյալ բոլոր գործառնությունները, բացի երկրորդից, բանկերը կարող են իրականացնել բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա: Ինչ վերաբերում է վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկների իրականացմանը, ապա մինչև նոր իրավական հիմքի ստեղծումը, նման հաշվարկներ իրավունք ուներ իրականացնել միայն ՀՀ կենտրոնական բանկը:

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը 2002 թ. դեկտեմբերի 11-ին հաստատել է.

1. «*Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը*» կանոնակարգ 16-ը (որոշում N 389-Ն)
2. «*Վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը*» կանոնակարգ 17-ը (որոշում N 390-Ն)
3. «*Քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը*» կանոնակարգ 18-ը (որոշում N 391-Ն)
4. «*Վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը*» կանոնակարգ 19-ը (որոշում N 392-Ն):

Այսպիսով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումից և ՀՀ կենտրոնական բանկի թիվ 16, 17, 18 և 19 կանոնակարգերի ընդունումից հետո որոշ բանկային

գործառնությունների իրականացումը իրավական առումով դադարեց բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի մենաշնորը լինելուց:

22.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) լիցենզիա ստանալու մասին հայտ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով՝ նշելով իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության վայրերը

բ) իրավաբանական անձի կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները

գ) Կենտրոնական բանկի կողմից տրված՝ ղեկավարի (ղեկավարների) մասնագիտական որակավորման վկայականը (ները,

դ) տարածքի սեփականության իրավունքի վկայականի պատճենը կամ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն մեկ (դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա ստանալու համար՝ երեք), տարի ժամկետով կնքված, համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագիրը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը

ե) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը

զ) տեղեկանք ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից՝ հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) ստացման մասին

է) կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, որը ներառում է նրանց կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների տեսակները, կարգն ու պայմանները:

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա ստանալու համար, բացի վերը նշված փաստաթղթերից, Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև հետևյալ փաստաթղթերը.

1. հայտարարագիր՝ կանոնակարգ 16-ի 3-րդ գլխի դրույթներին տարածքի համապատասխանության վերաբերյալ

2. հայտարարագիր՝ կանոնակարգ 16-ի 3-րդ գլխի դրույթներին տեխնիկական պահանջների համապատասխանության վերաբերյալ (վերաբերում է միայն կանխիկ գործառնություններ իրականացնող կազմակերպություններին)

3. դրամապահոցի կամ չիրկիզվող պահարանների սենյակի բացակայության դեպքում՝ կանոնակարգ 16-ի 3-րդ գլխով նախատեսված պայմանագրերի պատճենները (վերաբերում է միայն կանխիկ գործառնություններ իրականացնող կազմակերպություններին):

Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ բաժնի, դրամական (փողային) փոխանցումների, վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկների, քարտային վճարումների պրոցեսինգի իրականացման, վճարային քարտերի և այլ փաստաթղթերի թողարկման և իրացման համար՝ տարեկան պետական տուրքը սահմանված է բազային դրույթի 250-ապատիկի, այսինքն՝ 250.000 դրամի չափով:

Սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում, Կենտրոնական բանկը տալիս է լիցենզիա՝ իր կողմից սահմանված ձևով, կամ որոշում է կայացնում լիցենզիա ստանալու հայտը մերժելու մասին: Եթե նշված ժամկետում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում, ապա հայտը համարվում է բավարարված, և դիմող անձն այդ օրվանից իրավունք ունի զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեությամբ՝ անկախ նրան լիցենզիա հանձնելու կամ չհանձնելու հանգամանքից: Լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու հայտի մերժման վերաբերյալ որոշումները կայացնում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Լիցենզավորված անձին լիցենզիա տրամադրելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունումից հետո մեկօրյա ժամկետում Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին տալիս է լիցենզիա, ինչպես նաև լիցենզիայով նախատեսված ղեկավարների լիցենզիայի ներդիրը՝ համաձայն իր կողմից սահմանված ձևի: Լիցենզիայի հետ տրամադրվում են նաև գործունեության ընթացքում պարտադիր պահպանման ենթակա նորմերի և կանոնների ու պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերի ցանկերը:

Կենտրոնական բանկը նշված ցանկերում կատարված փոփոխությունների մասին հայտնում է լիցենզավորված անձին ոչ ուշ, քան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում:

Մինչև սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելը, կանոնակարգով սահմանված ղեկավարների թեկնածուները պարտավոր են Կենտրոնական բանկում անցնել մասնագիտական համապատասխանության ստուգում կանոնակարգով սահմանված կարգով:

- Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է լիցենզիա ստանալու հայտը, եթե՝
- ⇒ ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված
- ⇒ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերի պահանջներին
- ⇒ դիմող անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել գործունեության տվյալ տեսակով
- ⇒ գործունեության տարածքը չի համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած պահանջներին:

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա ստանալու հայտը մերժվում է նաև այն դեպքում, երբ տեխնիկական պահանջները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած պահանջներին (վերաբերում է միայն կանխիկ գործառնություններ իրականացնող կազմակերպություններին):

Լիցենզիա ստանալու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության դեպքում Կենտրոնական բանկը հայտը կարող է բավարարել վերապահունով, որ լիցենզիան հայտատուին կտրվի դրանց վերացման դեպքում:

Փաստաթղթերի թերի լինելու հիմքով լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը Կենտրոնական բանկի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում հայտատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր: Ընդ որում, Կենտրոնական բանկը ներկայացված փաստաթղթերի թերի լինելու վերաբերյալ նախազգուշացումն ուղարկում է դրանք ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում: Հայտը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը:

22.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կազմակերպությունները (բացառությամբ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների) և դրանց մասնաճյուղերը պետք է ունենան սեփականության իրավունքով պատկանող կամ օգտագործման վերցված տարածք: Տարածքի վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրից բխող իրավունքները պետք է գրանցված լինեն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, և պայմանագիրը պետք է կնքված լինի Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն մեկ տարի ժամկետով:

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը պետք է ունենան սեփականության իրավունքով պատկանող կամ օգտագործման իրավունքով վերցված տարածք: Տարածքի վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրից բխող իրավունքները պետք է գրանցված լինեն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, և պայմանագիրը պետք է կնքված լինի Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից առնվազն երեք տարի ժամկետով: Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը նաև պետք է ունենան ցուցանակ, որտեղ նշվում են լիցենզավորված անձի անվանումը (անունը, ազգանունը), աշխատանքային օրերը և ժամերը:

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի գործունեության վայրը, եթե նրանք իրականացնում են կանխիկ գործառնություններ, պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- առանձնացված լինի հարակից տարածքներից
- օգտագործվի միայն լիցենզիայով նախատեսված գործունեություն իրականացնելու համար
- տարածքը պետք է ունենա դրամարկղային հանգույց՝ դրամով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար (դրամարկղային հանգույցը պետք է համապատասխանի ԿԲ կանոնակարգ 16-ով սահմանված պահանջներին):

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու համար անհրաժեշտ է հետևյալ տեխնիկական հագեցվածությունը, եթե նման գործառնություններ իրականացնող կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը գործառնություններն իրականացնում են կանխիկ՝

- չիրկիզվող պահարան
- դրամամիջի իսկությունը ստուգող սարք
- ցուցանակ, որտեղ նշվում են լիցենզավորված անձի անվանումը (անունը, ազգանունը), աշխատանքային օրերը և ժամերը:

22.3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՉԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՅՆ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՍ ԳՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ ԿԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ՓՈՓՈԽԵԼԸ

Լիցենզավորված անձի (բացառությամբ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների) կողմից այլ վայրում ևս գործառնություններ իրականացնելու կամ գործունեության վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- ա) լիցենզավորված անձի կողմից այլ վայրում ևս համապատասխան գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հայտ՝ նշելով նախկինում իր ստացած լիցենզիայի վավերապայմանները
- բ) գրավոր հայտարարություն՝ նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին
- գ) իրավաբանական անձը գրանցող պետական լիազորված մարմնի տեղեկանքը՝ իրավաբանական անձի կանոնադրությունում կատարված փոփոխությունների մասին և կանոնադրության փոփոխությունները
- դ) ԿԲ կանոնակարգով սահմանված պահանջվող փաստաթղթերը՝ տարածքի համար
- ե) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Լիցենզավորված անձի կողմից այլ վայրում ևս դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու կամ գործունեության վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը, բացի վերը նշված փաստաթղթերից, Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև հետևյալ փաստաթղթերը՝

- ❖ հայտարարագիր՝ ԿԲ կանոնակարգ 16-ով սահմանված տարածքի համապատասխանության մասին
- ❖ հայտարարագիր՝ ԿԲ կանոնակարգ 16-ով սահմանված տեխնիկական պահանջների համապատասխանության մասին (վերաբերում է միայն կանխիկ գործառնություններ իրականացնող կազմակերպություններին)
- ❖ դրամի անենոթյա տեղափոխման, հանձնման ու պահպանման վերաբերյալ ինկասացիոն ծառայության կամ դրամապահոց ունեցող որևէ բանկի հետ կնքված համապատասխան պայմանագրեր՝ չիրկիզվող պահպանման սենյակի և դրամապահոցի բացակայության դեպքում (վերաբերում է միայն կանխիկ գործառնություններ իրականացնող կազմակերպություններին):

Լիցենզավորված անձի կողմից այլ վայրում ևս դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու կամ գործունեության վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձի հայտը մերժվում է սույն թեմայի 22.2 կետում նշված դեպքերում:

Լիցենզավորված անձի կողմից այլ վայրում ևս դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու կամ գործունեության վայրի փոփոխման վերաբերյալ որոշումները կայացվում են հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում, և նախկինում տրված լիցենզիան փոխարինվում է նոր լիցենզիայով՝ գործունեության վայրի համապատասխան փոփոխություններով:

22.4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐՈՒՄՆԵՐԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի 16, 17, 18 և 19-րդ կանոնակարգերի, կազմակերպությունների ղեկավարների մասնագիտական որակավորման ստուգման կարգով, մասնավորապես, սահմանված են հետևյալ կանոնները.

Լիցենզավորված անձի լիցենզիայի ներդիրում նշված ղեկավարների, մասնավորապես, գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, գլխավոր հաշվապահի (այսուհետև՝ թեկնածուներ) թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը՝ դռնբաց եղանակով:

Թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումն անցկացվում է երկու ձևով՝

- գրավոր (տեստային) քննություն, որն իրականացվում է համակարգչով՝ Կենտրոնական բանկի մեկ համակարգչային մասնագետի մասնակցությամբ կամ
- բանավոր հարցազրույցի ձևով, որն անցկացվում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի նիստում:

Կազմակերպությունների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության գրավոր քննություն անցնում են բարձրագույն տնտեսագիտական, տեխնիկական կամ իրավաբանական կրթություն ունեցող անձինք:

Կազմակերպությունների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության բանավոր հարցազրույց անցնում են բարձրագույն տնտեսագիտական, տեխնիկական կամ իրավաբանական կրթություն ունեցող այն անձինք, ովքեր լիցենզավորման համար դիմելուն նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի աշխատել են վճարահաշվարկային ոլորտի ղեկավար պաշտոններում:

Կազմակերպության ղեկավարների վկայականները տրվում են դրանց տրամադրման պահից հաշված հինգ տարի ժամկետով: Որակավորման վկայականի գործողության ժամկետը լրանալուց անմիջապես հետո Կենտրոնական բանկը զրանցումից հանում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ղեկավարին, եթե վերջինս չի ստացել որակավորման նոր վկայական:

Կենտրոնական բանկը, հաշվի առնելով կազմակերպության գործադիր տնօրենի, նրա տեղակալի, գլխավոր հաշվապահի որակավորման վկայականի գործողության ընթացքում նման կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ և այլ իրավական ակտերի խախտումների, ինչպես նաև նշված ղեկավարների նկատմամբ կիրառված պատժամիջոցների բացակայությունը, կարող է ղեկավարի որակավորման վկայականի գործողության ժամկետը երկարաձգել հինգ տարով՝ առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման:

Ուսումնական առաջադրանք

Բացատրել լիցենզավորված անձանց ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության թեսթային ստուգման կարգը՝ համաձայն ԿԲ համապատասխան կանոնակարգերի:

- ՀՀ կենտրոնական բանկը վերը նշված կանոնակարգերով կանոնակարգել է նաև՝
- ⇒ կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանների վարումը և տեղեկատվության տրամադրումը
- ⇒ կազմակերպություններին լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակի տրամադրումը, լիցենզիայի վերածակերպումը

⇒ կազմակերպությունների լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումը:

Բացի դրանից, նա սահմանել է նաև հետևյալ փաստաթղթերի ձևերը՝

- լիցենզիա ստանալու հայտի
- լիցենզիայի
- գործառնություններ այլ վայրում ևս իրականացնելու կամ գործունեության վայրի փոփոխման թույլտվություն ստանալու հայտի
- որակավորման քննությանը նասնակցելու հայտի
- կազմակերպությունների ղեկավարների թեկնածուների կենսագրական տվյալների
- կազմակերպության ղեկավարի որակավորման վկայականի ձևը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման իրավական հիմքը:
2. Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում լիցենզիա ստանալու համար:
3. Ինչպե՞ս կարելի է նկարագրել լիցենզավորման ընթացակարգը:
4. Որո՞նք են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման առանձնահատկությունները:
5. Որո՞նք են լիցենզավորման պայմանները:
6. Որո՞նք են կազմակերպություններին ներկայացվող տարածքի և տեխնիկական պահանջները:
7. Ինչպիսի՞ն է լիցենզավորված անձի կողմից այլ վայրում ևս գործառնություններ իրականացնելու կամ գործունեության վայրի փոփոխման ընթացակարգը:
8. Ինչպե՞ս կարելի է նկարագրել կազմակերպությունների ղեկավարների մասնագիտական որակավորման ստուգման կարգը:

ԹԵՍԹ

Հ ա ր ց 1. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) բանկերը կարող են վճարային քարտեր թողարկել բանկային գործունեության հիման վրա
- բ) դրամական (փողային) փոխանցումներ կարող են իրականացնել միայն բանկերը
- գ) քարտային վճարումների պրոցեսինգի իրականացումը չի համարվում լիցենզավորման ենթակա գործունեություն
- դ) բոլոր պնդումներն էլ սխալ են:

Հ ա ր ց 2. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- ա) կազմակերպությունների գործունեության կանոնակարգը ներառում է նրանց կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների տեսակները, կարգն ու պայմանները
- բ) սահմանված փաստաթղթերը ԿԲ մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում, ԿԲ-ն տալիս է լիցենզիա կամ որոշում է կայացնում լիցենզիա ստանալու հայտը մերժելու մասին
- գ) կազմակերպությունը պետք է ունենա միայն սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածք
- դ) վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ղեկավարների մասնագիտական որակավորումը պետք է համապատասխանի 33 ԿԲ սահմանած չափանիշներին:

Հ ա ր ց 3. Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա ստանալու համար ԿԲ-ի կողմից սահմանված չեն տեխնիկական պահանջներ
- բ) վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ղեկավարների որակավորման վկայականը տրվում է երեք տարի ժամկետով
- գ) ԿԲ-ն չի կարող ղեկավարի որակավորման վկայականի գործողության ժամկետը երկարաձգել հինգ տարով՝ առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման
- դ) բոլոր պատասխաններն էլ ճիշտ չեն:

ՕԳՏԳԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
2. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»:
3. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին»:
4. ՀՀ օրենքը «Վարկային կազմակերպությունների մասին»:
5. ՀՀ օրենքը «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին»:
6. ՀՀ օրենքը «[Բանկային գաղտնիքի](#) մասին»:
7. ՀՀ օրենքը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին»:
8. ՀՀ օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին»:
9. ՀՀ օրենքը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»:
10. ՀՀ օրենքը «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին»:
11. ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին»:
12. ՀՀ օրենքը «Իրավական ակտերի մասին»:
13. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ը:
14. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության [հիմնական տնտեսական նորմատիվները](#)
15. » կանոնակարգ 2-ը:
16. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը:
17. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերում վերստուգումների իրականացումը» կանոնակարգ 4-ը:
18. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման մասին» կանոնակարգ 5-ը:
19. ՀՀ կենտրոնական բանկի «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ը:
20. ՀՀ կենտրոնական բանկի «Հայաստանի Հանրապետության տարածքում արժույթային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ը:
21. ՀՀ կենտրոնական բանկի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը:
22. ՀՀ կենտրոնական բանկի «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը:
23. ՀՀ կենտրոնական բանկի «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ը:
24. ՀՀ կենտրոնական բանկի «Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ը:
25. ՀՀ կենտրոնական բանկի «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման համար գործունեության վայրի և ներկայացվող տեխնիկական հագեցվածության պահանջները, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերումը» կանոնակարգ 13-ը:
26. ՀՀ կենտրոնական բանկի «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը:
27. ՀՀ կենտրոնական բանկի «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը:
28. ՀՀ կենտրոնական բանկի «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը:
29. ՀՀ կենտրոնական բանկի «Վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ը:
30. ՀՀ կենտրոնական բանկի «Քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 18-ը:
31. ՀՀ կենտրոնական բանկի «Վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 19-ը:
32. ՀՀ կենտրոնական բանկի «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման մասին» կանոնակարգ 20-ը:

33. ՀՀ կենտրոնական բանկի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման» կարգը:
34. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու» ուղեցույցը:
35. ՀՀ կենտրոնական բանկի «Իրավաբանական անձանց կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու կամ որոշումների վրա էապես ազդելու հնարավորություն ունեցող անձանց բացահայտման» մեթոդական ուղեցույցը:
36. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի» և «Բանկերի միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող միացման ծրագրում ընդգրկվող տեղեկությունների» ցանկերը:
37. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի մեթոդիկան (ՔԱՄԵԼՍ)»:
38. ՀՀ կենտրոնական բանկի «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեզիստորի ստեղծման և վարկային ռեզիստորին ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության» կարգը:
39. ՀՀ կենտրոնական բանկի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման» կարգը:
40. ՀՀ կենտրոնական բանկի «Հայաստանի Հանրապետության տարածքում տեղադրված բանկոմատների (ավտոմատ զանձման սարքերի) շահագործման անվտանգության պայմաններն ապահովելու վերաբերյալ» մեթոդական ուղեցույցը:
41. ՀՀ կենտրոնական բանկի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիններիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցների կողմից» կարգը:
42. ՀՀ կենտրոնական բանկի «Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման» կարգը:
43. ՀՀ կենտրոնական բանկի «Վարկային կազմակերպությունների գործունեության օրինակելի կանոնակարգը»:
44. ՀՀ կենտրոնական բանկի «Լուծարման ընթացակարգում գտնվող բանկերի և վարկային կազմակերպությունների լուծարային կառավարիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տեղեկությունների հրապարակման» կարգը:
45. ՀՀ կենտրոնական բանկի «Լուծարման ընթացակարգում գտնվող բանկերի և վարկային կազմակերպությունների լուծարային կառավարիչների կողմից լուծարային հաշվի բացման, վարման, ինչպես նաև այլ բանկերում հաշիվների փակման» կարգը:
46. ՀՀ կենտրոնական բանկի «Լուծարման ընթացակարգում գտնվող բանկերի և վարկային կազմակերպությունների լուծարային կառավարիչների կողմից բանկի, վարկային կազմակերպության գույքի իրացման» կարգը:
47. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին» կարգը:
48. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգը:
49. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգը:
50. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգը»:
51. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգը»:
52. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի [ակտիվների](#) և պարտավորությունների գույքագրման» կարգը:
53. «ՀՀ տարածքում գործող բանկերում բանկային հաշիվներ բացելիս ստորագրությունների նքուշների քարտերը հարկային մարմիններին հաշվառման ներկայացնելու վերաբերյալ» կարգը:
54. Բանկի բաժնետերերի և խորհրդի անդամների ուղեցույց /Եղիազարյան Ա.Ա. և ուրիշներ: Եր.: 2003:
55. «Банковская система России. Настольная книга банкира». В 3-х томах, - М., 1995.
56. Долан Э. Дж. и др. «Деньги, банковское дело и денежно-кредитная политика» /Пер. с англ. В. Лукашевича и др.; Под общ. ред. В. Лукашевича. - Л., 1991.
57. Роджер Лероу Миллер, Давид Д. Ван-Хуз. «Современные деньги и банковское дело»: Пер. с англ. - М., 2000.
58. Роуз П. «Банковский менеджмент» /Пер. с англ. со 2-го изд. М., 1995

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար 1. ՀՀ բանկային օրենսդրության կառուցվածքը 8

Նկար 2. ՀՀ կանոնակարգերի բաշխվածությունն ըստ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորվող անձանց: 12

Նկար 3. Կենտրոնական բանկի խնդիրները՝ համաձայն ՀՀ ԿԲՕ-ի 5-րդ հոդվածի 19

Նկար 4. ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքը 23

Նկար 5. Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները 24

Նկար 6. Երաշխավորված գումարի առավելագույն չափը 28

Նկար 7. Երաշխավորված գումարների հատուցման կարգը և ժամկետները 31

Նկար 8. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը 35

Նկար 9. Ֆինանսական հաշվետվությունների տարրերը 39

Նկար 10. Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները: 41

Նկար 11. Սկզբնական հաշվառման փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները 42

Նկար 12. Ֆինանսական հաշվետվությունների կազմը 43

Նկար 13. Բանկի կառավարման մարմինները 50

Նկար 14. Բանկային գործունեության լիցենզավորման ընթացակարգի փուլերը 57

Նկար 15. Բանկի գործունեության տնտեսական ծրագիրը 59

Նկար 16. Բանկի գործունեության տնտեսական ծրագիրը 70

Նկար 17. Իրավաբանական անձանց փոկապակցվածության դեպքերը 77

Նկար 18. Բանկի հետ կապված անձինք 78

Նկար 19. ՀՀ առևտրային բանկերին թույլատրվող ֆինանսական գործառնությունները 79

Նկար 20. Բանկի ընդհանուր կայսրության կազմը 83

Նկար 21. Բանկի հետանկարային զարգացման ծրագրի կառուցվածքը 87

22. ՀՀ առևտրային բանկերին թույլատրվող ֆինանսական գործառնությունները 91

Նկար 23. Վարկավորման փուլերը 93

Նկար 24. Բանկային ավանդների տեսակները 102

Նկար 25. Ֆակտորինգի կազմակերպման սխեման 107

Նկար 26. Լիզինգային գործարքի ընդհանուր սխեման 108

Նկար 27. հավատարմագրային կառավարման պայմանագրի էական պայմաններ 110

Նկար 28. Գրավի տեսակները 115

Նկար 29. Համապարտ պատասխանատվություն 119

Նկար 30. Սուբսիդիար պատասխանատվություն 120

Նկար 31. Օրենսդրության խախտումների համար բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները 139

Նկար 32. Պատժամիջոցների կիրառման ընթացակարգը 143

Նկար 33. Բանկերի միացման ընթացակարգը 168

Նկար 34. Լուծարվող բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը 172

Նկար 35. Բանկի ֆինանսական առողջացման ծրագրի կառուցվածքը 179

Նկար 36. Սնանկ ճանաչված բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը 183

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. ՀՀ կենտրոնական բանկի եկամուտների և ծախսերի կազմը 21

Աղյուսակ 2. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների չափման եղանակների համեմատական բնութագիրը 40

Աղյուսակ 3 Տարբեր կազմակերպական-իրավական ձևի բանկերի համեմատական բնութագիրը 47

Աղյուսակ 4 Բանկերի համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները 81

Աղյուսակ 5 Հիմնական տնտեսական նորմատիվները և դրանց սահմանաճակատները 94

Աղյուսակ 6. Բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններ 125

Աղյուսակ 7. Բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման ժամկետները 127

Աղյուսակ 8. Վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններ 134

Աղյուսակ 9. Վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման ժամկետները 136

Աղյուսակ 10. Օրենսդրության խախտումները 138

Աղյուսակ 11. Ակտիվների դասակարգման չափանիշները 147

Աղյուսակ 12. Ժամկետային արժեթղթերի պահուստին կատարվող մասհանումները չափերը 149

Աղյուսակ 13. Վարկային ռեզիստո ներկայացվող հիմնական տեղեկատվությունը վարկառուի վերաբերյալ 162

Աղյուսակ 14. Վարկային ռեզիստո ներկայացվող հիմնական տեղեկատվությունը վարկի վերաբերյալ 163

Աղյուսակ 15 Վարկային ռեզիստի կողմից տրամադրվող ելքային ընթացիկ տեղեկատվություն 164

Աղյուսակ 16. Վարկային ռեզիստի կողմից տրամադրվող ելքային պարբերական տեղեկատվություն 165

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ

<p>Ա Ակտիվ, 68 Անվճարունակություն, 323</p> <p>Բ Բանկ, 79 Բանկային ավանդ, 79 Բանկային ավանդի գումարի տոկոսներ, 182 Բանկային ավանդի պայմանագիր, 180 Բանկային գաղտնիք, 56</p> <p>Բանկային գաղտնիքի հրապարակում, 56</p> <p>Բանկային գաղտնիքի տրամադրում, 56</p> <p>Բանկային գործունեություն, 79</p> <p>Բանկային գործունեության լիցենզիա, 99 Բանկային գործունեության լիցենզիայի տրամադրում, 106 Բանկային գրքույկ, 181</p> <p>Բանկային հաշվի պայմանագիր, 184</p> <p>Բանկային օրենսդրություն, 12 Բանկերի աուդիտային ստուգում, 235 Բանկերի անվճարունակություն, 324 Բանկերի գրանցում, 104 Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողություն, 223 Բանկի գործունեության տնտեսական ծրագիր, 102 Բանկի ղեկավարության կապիտալ, 144 Բանկի ինքնալուծարում, 316 Բանկի լուծարային հանձնաժողով, 316 Բանկի խորհուրդ, 88 Բանկի կանոնադրական հիմնադրամ, 144 Բանկի կանոնադրություն, 101 Բանկի կառավարման մարմիններ, 87 Բանկի հետ կապված անձինք, 134 Բանկի ղեկավարներ, 90 Բանկի մասնակից, 84 Բանկի մասնաճյուղ, 86 Բանկի միացում, 311 Բանկի ներկայացուցչություն, 86 Բանկի վերակազմավորում, 313 Բանկի վերստուգիչ հանձնաժողով, 89 Բանկի ֆինանսական առողջացման ծրագիր, 331 Բաժանորդական գործունեություն, 134 Բաժնետիրական ընկերություններ (բաց կամ փակ), 81 Բաց շուկայական գործառնություններ, 34</p> <p>Խ Խնայողական միություններ, 120</p> <p>Ծ Ծախս, 68</p> <p>Կ Կազմակերպության լուծարում, 314</p>	<p>Գ Գրավ, 199 Գործադիր մարմին, 88 Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, 195</p> <p>Դ Դրամական զանգված, 34 Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր, 190 Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող ֆակտորինգային կազմակերպություններ , 120 Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ, 345 Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 33 Դրամավարկային կարգավորման մեթոդներ, 34</p> <p>Ե Եկամուտ, 68 Երաշխավորված գումարի առավելագույն չափ, 47 Երաշխավորված գումարի ստացման դեպք, 51 Երաշխավորություն, 213 Երաշխիք, 209 Երաշխիքային վճարումների վճարում, 49 Երրորդ անձինք, 56</p> <p>Ը Ընթացիկ տեղեկատվություն, 304</p> <p>Թ Թղթադրամներ և մետաղադրամներ, 290</p> <p>Ժ Ժամանակավոր ադմինիստրացիա, 326 Ժամկետային ավանդ, 181</p> <p>Ի Ինկասացիոն, 293 Ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն, 134 Իրավաբանական անձ, 29 Իրացվելիության նորմատիվ, 148</p> <p>Լ Լիցենզիա ստանալու նախնական հավանություն, 100 Լրացուցիչ կապիտալ, 145</p> <p>Ս Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, 81 Սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղ, 86 Սեփական կապիտալ, 68 Սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում, 159</p>
---	---

Կազմակերպության վերակազմակերպում, 310
 Կապիտալի համարժեքության նորմատիվներ, 147
 Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական
 ակտ, 30
 Կոոպերատիվներ, 81

Հ
 Համալիր վերաստուգումներ, 231
[Հաշվապահական հաշվառում](#), 67
 Հաշվարկային փոխարժեք, 34

Հաշվի վարկավորում, 185

[Հիմնական կապիտալ](#), 145
[Հիմնական տնտեսական նորմատիվ](#), 141
[Հիփոթեք](#), 207
 ՀՀ կենտրոնական բանկի իրավասություն, 29

Չ
 Ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության
 տրամադրում, 159

Մ
 Մասնակիցների ընդհանուր ժողով, 88
 Միացման պայմանագիր, 312

Ն
 Նշանակալից մասնակցություն, 85

Նպատակային վերստուգումներ, 232
 Նպատակային փոխառություն, 189

Պ
[Պարտադիր պահուստներ](#), 151
 Պարտադիր պահուստավորում, 34
[Պարտավորություն](#), 68

[Սնանկություն](#), 324

Վ

[Վարկ](#), 299
 Վարկային միություններ, 120
 վարկային կազմակերպության
 գործունեություն, 119
[Վարկային պայմանագիր](#), 188
 Վարկային ռեզիստոր, 299
 Վարկային ռեզիստորի տեղեկատվության
 օգտագործող, 302
 Վճարային քարտեր և այլ փաստաթղթեր
 իրացնող կազմակերպություններ, 345
 Վճարունակ, 290

Ց

[Ցպահանջ ավանդ](#), 181

Փ

Փոխանցման ակտ, 313
 Փոխառության պայմանագիր, 187
[Փոխկապակցված անձինք](#), 134

Ք

[ՔԱՄԵԼԱ համակարգ](#), 234
 Քարտային վճարումների պրոցեսինգ
 իրականացնող կազմակերպություններ, 345

Ֆ

«Ֆիզիկական անձանց ավանդների
 երաշխավորման ֆոնդ» հիմնարկ, 47
[Ֆինանսական հաշվետվություններ](#), 67
 Ֆինանսական վարձակալություն
 իրականացնող (լիզինգային
 կազմակերպություններ), 120
 Ֆինանսական վարձակալության (լիզինգի)
 պայմանագիր, 192

Ս ա մ վ ե լ Ն ա հ ա պ ե տ յ ա ն

Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Օ Ր Ե Ն Ս Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Խմբագիր՝

Լարիսա Նադարյան

Համակարգչային ձևավորում՝

Աննա Գևորգյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ